

ՑԵՂԱՄՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տարի 6, No 1, 2018

ՑԵՂԱՄՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տարի 6, No 1, 2018

**«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**

**ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
6 (1)**

Երևան 2018

Ցեղասպանագիտական հանդես

Գլխավոր խմբագիր

Հարություն Մարության, պ.գ.դ.,

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Գլխավոր խմբագրի տեղակալ

Էդիտա Գոյան, պ.գ.թ.,

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Խմբագրական խորհուրդ

Աննա Ալեքսանյան, Քլարկի համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Մելինե Անույան, պ.գ.թ., Արևմտահայոց հարցերի ուսումնասիրությունների կենտրոն,
Հայաստան

Արսեն Ավագյան, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

Ռայմոնդ Գևորգյան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ
արտասահմանյան անդամ, Ֆրանսիա

Անդրանիկ Դաքեայան, պատմագիտության դոկտոր, Հայկազյան համալսարան,
Լիբանան

Ռոբերտ Թաթոյան, պ.գ.թ., «Հուշամատյան» ծրագիր, Հայաստան

Վահե Թաշճյան, պատմագիտության դոկտոր, «Հուշամատյան» ծրագիր, Պիտեր
Պազմանի կաթոլիկ համալսարան, Գերմանիա

Վալերի Թունյան, պ.գ.դ., պրոֆեսոր, Ռուսաստանի տուրիզմի և սերվիսի պետական
համալսարանի երևանյան մասնաճյուղ, Հայաստան

Անահիտ Խոսրոնա, պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Հայաստան

Աշոտ Հայրունի, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

Էլկե Հարթման, պատմագիտության դոկտոր, Մյունխենի Լյուդվիգ-Մաքսիմիլիանս
համալսարան, Գերմանիա

Սևանե Ղարիբյան, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, Ժնևի համալսարան,
Շվեյցարիա

Նարինե Մարգարյան, պ.գ.թ., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»
հիմնադրամ, Հայաստան

Հայկ Մարտիրոսյան, պ.գ.թ., Լեփսիուսհաուս, Պոտսդամ, Գերմանիա

Պետրոս Տեր-Մաթոսյան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, Ներքասկա-Լինքոլնի
համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Ռուբինա Փիրումյան, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիայի
համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

***Ts'eghaspanagitakan handes* (“Journal of Genocide Studies”)**

Editor in Chief:

Dr. Harutyun Marutyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Associate Editor:

Dr. Edita Gzoyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Editorial Board

Anna Aleksanyan, Clark University, USA

Dr. Meline Anumyan, Research Center on Western Armenian Studies, Armenia

Dr., Prof. Arsen Avagyan, Yerevan State University, Armenia

Dr. Antranik Dakessian, Haigazian University, Lebanon

Dr. Elke Hartmann, Ludwig-Maximilians-Universität München, Germany

Dr., Prof. Ashot Hayruni, Yerevan State University, Armenia

Dr., Prof. Sévane Garibian, University of Geneva, Switzerland

Dr., Prof. Raymond Kevorkian, foreign member of National Academy of Sciences of the Republic of Armenia, France

Dr. Anahit Khosroeva, National Academy of Sciences of the Republic of Armenia-Institute of History, Armenia

Dr. Narine Margaryan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Dr. Hayk Martirosyan, Lepsiushaus, Potsdam, Germany

Dr., Prof. Bedross Der Matossian, University of Nebraska-Lincoln, USA

Dr., Prof. Rubina Peroomian, University of California, Los Angeles (UCLA), USA

Dr. Vahé Tachjian, Pázmány Péter Catholic University, Houshamadyan Project, Germany

Dr. Robert Tatoyan, Houshamadyan Project, Armenia

Dr. Valery Tunyan, Russian State University of Tourism and Services, Yerevan Branch, Armenia

Тсехаспанагитакан андес («Журнал исследований геноцида»)

Главный редактор

Арутюн Марутян, доктор ист. наук, фонд «Музей-институт Геноцида армян», Армения

Заместитель главного редактора

Эдита Гзоян, канд. ист. наук, фонд «Музей-институт Геноцида армян», Армения

Редакционная коллегия

Арсен Авагян, доктор ист. наук, профессор, Ереванский государственный университет, Армения

Ашот Айруни, доктор ист. наук, профессор, Ереванский государственный университет, Армения

Анна Алексанян, Кларкский университет, Соединённые Штаты Америки

Мелине Анумян, канд. ист. наук, Центр изучения западноармянских вопросов, Армения

Элке Артманн, доктор истории, Мюнхенский университет Людвиг-Максимилианс, Германия

Севанэ Гарибян, доктор права, профессор, Женевский университет, Швейцария

Раймонд Геворгян, доктор истории, профессор, иностранный член НАН РА, Франция

Андраник Дакесян, доктор истории, Айказян университет, Ливан

Айк Мартиросян, канд. ист. наук, дом-музей Лепсиуса (Лепсиусхаус), Потсдам, Германия

Нарине Маргарян, канд. ист. наук, фонд «Музей-институт Геноцида армян», Армения

Рубина Пирумян, доктор филологии, профессор, Калифорнийский университет в Лос-Анджелесе, Соединённые Штаты Америки

Роберт Татоян, канд. ист. наук, проект «Ушамадян», Армения

Ваге Ташчян, доктор истории, Католический университет Петера Пазмания, проект «Ушамадян», Германия

Петрос Тер-Матосян, доктор истории, профессор, Университет Небраски-Линкольна, Соединённые Штаты Америки

Валерий Тунян, доктор ист. наук, профессор, ереванский филиал Российского государственного университета туризма и сервиса, Армения

Анаит Хосроева, канд. ист. наук, Институт истории НАН РА, Армения

Ցեղասպանագիտական հանդեսը (ISSN 1829-3980) գրախոսվող պարբերական է և լույս է տեսնում տարին երկու անգամ՝ մայիսին և դեկտեմբերին, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի կողմից (Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0028, Ծիծեռնակաբերդի խճուղի 8/8, հեռ.՝ (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am): Հանդեսը Հայաստանում ցեղասպանագիտության ոլորտի հիմնական պարբերականն է, որի նպատակն է ցեղասպանությունների ուսումնասիրությունը՝ պատմական, սոցիալ-հոգեբանական, ժողովրդագրական, կրոնական, մարդաբանական, իրավական, սեռային, մշակութաբանական և այլ գիտակարգերի տեսանկյունից՝ Հայոց ցեղասպանության շեշտադրմամբ: *Ցեղասպանագիտական հանդեսում* տպագրված հոդվածները, գրախոսությունները և այլ նյութերն արտահայտում են հեղինակների մոտեցումները, որոնք կարող են չհամընկնել «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի մոտեցումներին: «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամը որևէ իրավական պատասխանատվություն չի կրում հեղինակների սխալների և բացթողումների համար: *Ցեղասպանագիտական հանդեսն* ինդեքսավորվում է Գիտական հոլման հայկական ցուցչի (ԳՀՀՑ) մատենագիտական շտեմարանում: Հոդվածները և գրախոսությունները կարելի է ներկայացնել տպագիր կամ ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ handes@genocide-museum.am:

Ts'eghaspanagitakan handes ("Journal of Genocide Studies") (ISSN 1829-3980) is a peer-reviewed journal and published twice a year in May and December by the Armenian Genocide Museum-Institute Foundation (8/8 Tstitsernakaberd highway, 0028 Yerevan, Republic of Armenia (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am). *Journal of Genocide Studies* is the main forum for scholarship in the field of genocide studies in Armenia and features articles, reviews and other relevant materials related to the study of genocides from historical, social-psychological, demographic, religious, anthropological, legal, gender, cultural and other scientific fields with a special emphasis on the Armenian Genocide.

Articles, reviews and other materials published in the *Journal of Genocide Studies* reflect the opinion of the authors and may not necessarily coincide with the approaches of the Armenian Genocide Museum-Institute Foundation. The Armenian Genocide Museum-Institute Foundation cannot accept any legal responsibility for the errors and omissions made by the authors.

Journal of Genocide Studies is indexed/abstracted in the Armenian Science Citation Index (ASCI).

Articles, reviews, and other relevant materials can be presented in print or sent to the following address: handes@genocide-museum.am.

Тсехаспанагитакан андес («Журнал исследований геноцида») (ISSN 1829-3980) – рецензируемое издание, выходит в свет два раза в год, в мае и декабре. Журнал издается фондом «Музей-институт Геноцида армян» (Республика Армения, г. Ереван, 0028, Цицернакабердское шоссе 8/8 (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am). Это единственное в Армении периодическое издание в области геноцидоведения, целью которого является научное изучение геноцидов с исторической, социально-психологической, социологической, этнографической, религиозной, антропологической, юридической, гендерной, культурной и других точек зрения с акцентированием на исследование Геноцида армян.

Статьи, обзоры и другие материалы, опубликованные в «Журнале исследований геноцида», отражают мнение авторов и могут не совпадать с подходами фонда «Музей-институт Геноцида армян». Фонд «Музей-институт Геноцида армян» не несет юридической ответственности за ошибки, допущенные авторами.

«Журнал исследований геноцида» индексируется в Армянском индексе научного цитирования (АИНЦ). Статьи, обзоры и другие материалы могут быть представлены в печатном виде или отправлены по следующему электронному адресу: handes@genocide-museum.am.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Շուշան Խաչատրյան

Ջիհադը և Հայոց ցեղասպանությունը. հրովարդական, հրահանգներ ու կոչեր 9

Ռոբերտ Սուքիասյան

Զյոթու խան. Սեբաստիայի տեղահանության ճանապարհի մի կայանի շուրջ..... 44

Միհրան Մինասեան

*Արամ Անտոնեանի վկայութիւնը Տէր Զօրի գաւառապետ Սալէի Զէքի
պէյի՝ էվերէկի մէջ կատարած ոճիրներուն մասին 61*

Սեդա Պարսամյան

*Հայկական մշակութային արժեքների յուրացման և ոչնչացման
երկրորդական քաղաքականությունը (1915-1918 թթ.)..... 71*

Հարություն Մարության

*Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա ձևավորումը,
զարգացումները, մերօրյա վիճակը (մաս 1) 105*

Էդիտա Գոդյան

*Սեռական բռնությունները միջազգային քրեական իրավունքում. բռնի
ամուսնությունները որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություններ..... 130*

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Արևիկ Ավետիսյան

*Երուանդ Քասունի, «Այաշի բանտը. տոբթ. Անեպիս Նազգաշեան եւ
մահապարտ արտոնեալները», Պէյրոս, 2018 թ., 400 էջ 143*

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 150

CONTENT

ARTICLES

Shushan Khachatryan

Jihad and the Armenian Genocide: Proclamations, Instructions and Calls..... 9

Robert Sukiasyan

Kötü Han. A Station on the Deportation Route of Sebastia..... 44

Mihran Minassian

The Testimony of Aram Andonian on the Crimes Committed in Everek by the Provincial Governor of Der Zor Saleh Zeki Bey.....61

Seda Parsamyan

Young Turks' Policy of Appropriation and Destruction of the Armenian Cultural Values (1915-1918).....71

Harutyun Marutyan

Formation, Development and Current State of the Armenian Genocide Victims Remembrance Day (Part 1)105

Edita Gzoyan

Sexual Violence in International Criminal Law: Forced Marriages as Crimes against Humanity..... 130

BOOK REVIEW

Arevik Avetisyan

Yervant Kassouny, "The Ayash Prison": Dr. Avedis Nakkashian and the Condemned Deportees, Beirut, 2018, p. 400..... 143

ABOUT THE AUTHORS 150

СОДЕРЖАНИЕ

СТАТЬИ

Шушан Хачатрян

Джихад и Геноцид армян: манифесты, инструкции и призывы..... 9

Роберт Сукиасян

Коту-Хан: об одной станции на пути депортации в провинции Себастья 44

Мигран Минасян

Свидетельство Арама Антоняна о преступлениях, совершенных в Эвереке губернатором провинции Дер Зор Салех Зеки Бейом..... 61

Седа Парсамян

Младотурецкая политика присвоения и уничтожения армянских культурных ценностей (1915-1918 гг.)..... 71

Арутюн Марутян

Формирование и трансформация Дня памяти жертв Геноцида армян (часть 1)..... 105

Эдита Гзоян

Сексуальное насилие в международном криминальном праве: насильственные браки как преступления против человечества..... 130

РЕЦЕНЗИЯ

Аревик Аветисян

Ерванд Кассуни, «Тюрьма Аяш»: доктор Аветис Наггашян и осужденные депортированные, Бейрут, 2018, 400 с. 143

ОБ АВТОРАХ..... 150

ԶԻՀԱԴԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐ, ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ՈՒ ԿՈՉԵՐ

Շուշան Խաչատրյան

Երիտթուրքերի ձեռքին կրոնը կարող գործիք դարձավ՝ ուրքի հանելու օսմանյան իսլամադավան խավին: Վերջինիս կոչ արեցին մասնակցել «անհավատ»-քրիստոնյաների դեմ ուղղված սրբազան պարտականության կատարմանը՝ ջիհադին կամ սրբազան պատերազմին: Այդ նպատակով գործադրվեցին կրոնական քարոզչության լծակներ՝ սրբազան պատերազմի, իսլամը «անհավատներից» պաշտպանելու հրատապության կոչեր, հրովարտականեր, թռուցիկներ ու պարսավագրեր՝ մշակված ու հրապարակված օսմանյան աշխարհիկ ու հոգևոր վերնախավի կողմից: Կիրառվեցին հատուկ կրոնական եզրաբանություն ու ենթատեքստ, որի պատճառով անթաքույց քրիստոնյաների, առաջին հերթին՝ հայերի, կոտորածներին մասնակցություն ունեցան կրոնասոցիալական բոլոր խավերը՝ և՛ մուսուլման հոգևորականները, և՛ զինուժը, և՛ ունևորները, և՛ շարքային քաղաքացիները:

Բանալի բառեր. ջիհադ, սրբազան պատերազմ, սուլթան, շեյխ ուլ-իսլամ, ֆեթվա, պամֆլետ-պարսավագիր, կոչեր, թռուցիկ, անհավատ-գյավուրներ:

1914 թ. նոյեմբերի 14-ին Օսմանյան կայսրությունն Առաջին համաշխարհային պատերազմ մուտք գործեց ջիհադի՝ իսլամական սրբազան պատերազմի կոչ-հայտարարությամբ: 1914 թ. նոյեմբերյան ջիհադի և նրանից ոգեշնչված ու հետագայում շրջանառված ջիհադի կոչերի շարքն աղետաբեր եղավ օսմանյան քրիստոնյաների, առաջին հերթին՝ հայերի համար: Ջիհադի գաղափարի անմիջական հեղինակը երիտթուրքական կառավարությունն էր՝ այդ հարցում ակտիվ աջակցություն ստանալով նաև Կայզերական Գերմանիայից¹: Սակայն ի վերջո օսմանյան ջիհադը՝ որպես ռազմավարական գեղեցիկ, չծառայեց գերմանական ծրագրերին ու շահերին, ներքին կիրառություն ու ավերիչ ներգործություն ունեցավ Օսմանյան կայսրությունում բնակվող քրիստոնյաների համար:

Ստորև մեկտեղված և քննարկված են օսմանյան ջիհադի քարոզչության համար տպագրված և օսմանյան ամենաազդեցիկ՝ աշխարհիկ ու հոգևոր առաջնորդների կողմից հեղինակված կամ հաստատված կոչերի տեքստերը և դրանց հայերեն թարգմանությունները: «Ցեղասպանագիտական հանդեսի» նախորդ երկու համարներում հոդվածի տեսքով արդեն հրապարակվել են ջիհադի կոչերին ուղեկցող պատմական հանգամանքները, հայտարարությունների կապը, ազդեցությունն ու

1 Որոշ գերմանացի մտավորականների ջանքերով տպագրված սրբազան պատերազմի գրքույկ-պարսավագրերի մասին տե՛ս հոլանդացի իսլամագետ Քրիստիան Ս. Հուրգրոնյեի հետևյալ աշխատությունը՝ Hurgronje C. S., *The Holy War Made in Germany*. New York & London, The Knickerbocker Press, 1915՝ էջ 34-ից սկսած, իսկ առհասարակ ջիհադի կոչի մշակման մեջ Գերմանիայի մասնակցության վերաբերյալ տե՛ս Lüdtke T., *Jihad Made in Germany: Ottoman and German Propaganda and Intelligence Operations in the First World War*, (Studien zur Zeitgeschichte des Nahen Ostens und Nordafrikas, 12). Münster: LIT Verlag, 2005:

հետագա կիրառումը հայերի դեմ իրականացված ցեղասպանության մեջ²։ Ներկա աշխատությամբ անդրադարձ է կատարվում օսմանյան վերջին ջիհադի սկզբնաղբյուրներին՝ իբրև քարոզչական ազդեցիկ նյութերի։

Օսմանյան կայսրության պատմության ընթացքում բազմիցս եղել են ջիհադի կոչեր ու արշավներ, սակայն 1914-ի ջիհադի կոչերը տարբերվում էին թե՛ ջիհադի գաղափարը հղացողների ինքնության ու զբաղեցրած դիրքի իմաստով, թե՛ վերջնական արդյունքով։ Իսլամադավանի համար պատերազմ մղելը միշտ ենթադրում է ջիհադի դուրս գալ, այն է՝ իսլամի դեմ ոտնձգություններ (հաճախ՝ թվացյալ) կատարած այլադավանների դեմ պայքար մղել կամ, որ նույնն է, որպեսզի իսլամադավանը պատերազմ մղի, անհրաժեշտ է, որ այն համապատասխանի ջիհադի վերաբերյալ դուրանյան սկզբունքներին³։ Օրինաչափ է, որ երիտթուրքերը, զանգվածային մասնակցություն ապահովելու և օրինական հիմքի վրա դնելու համար, պետք է օսմանյան իսլամադավանների հետ խոսեին իրենց իսկ լեզվով՝ արտոնելով կրոնական պատերազմ մղել, մտնել նոր պատերազմի թատերաբեմ՝ հաստատված բոլոր կանոնների համաձայն և օգտագործելով օսմանյան հոգևոր ու աշխարհիկ իշխանությունների հեղինակությունը։ Մինչև Գերմանիայի կողմն անցնելը Անտանտի երկրներն Օսմանյան կայսրությունից պահանջել էին չեզոք դիրք բռնել, մինչդեռ գերմանական կողմը հանդես էր եկել ոչ թե պահանջներով, այլ առաջարկներով ու խոստումներով, ինչպես նաև, գիտակցելով ջիհադի կոչի կարևորությունը, մասնակցել էր տեքստերի խմբագրմանը, իր ձեռքն էր վերցրել կայսրության պատերազմական գրաքննությունը⁴։ Պատմաբան Մեհմեդ Բեշիրքին ասում է. «Եթե սուլթան-խալիֆը պաշտոնապես չհայտարարեր «մեծ ջիհադը» 1914 թ. նոյեմբերի 14-ին, Օսմանյան պետությունը դրա կարիքը պիտի ունենար ու մղվեր դեպի ջիհադի հռետորաբանությունը, որպեսզի օրինականացներ մարդուծի ներքին կենտրոնացումը... ջիհադի այս հռետորաբանությունը չհայտնագործվեց Առաջին աշխարհամարտ մտնելու համար, այն արդեն գոյություն ուներ, գրեթե առօրյա ֆենոմեն էր, երբ պետությունը կրկին գործածում էր ջիհադը... Սակայն Առաջին աշխարհամարտում ուժի կենտրոնացման աստիճանը դրդեց Օսմանյան կայսրությանը ուժգնացնել ջիհադի հռետորաբանությունը՝ ներգրավելով նոր կրոնական քարոզչական մոտիվ-

2 Խաչատրյան Շ., «Կրոնի հիմնահարցը Մեծ եղեռնի վերաբերող ուսումնասիրություններում», *Ցեղասպանագիտական հանդես* 5 (1), 2017, էջ 111-127։ Նույնի, «Իթթիհատական ջիհադը և Հայոց ցեղասպանությունը. ջիհադի ունեցած հետևանքները քրիստոնյաների համար», *Ցեղասպանագիտական հանդես* 5 (2), 2017, էջ 7-17։

3 Տե՛ս օրինակ Гилезов И. А., «Священная война–джихад» как инструмент военно-политической стратегии Германии в годы Первой мировой войны», *Сборник статей участников Международной конференции «Тюрко-мусульманский мир: идентичность, наследие и перспективы изучения»* (Казань, 27-28 мая 2014г.), 2015, с. 317, էլ. տարբերակը տե՛ս http://dspace.kpfu.ru/xmlui/bitstream/handle/net/113189/Holy_War_and_jihad_as_part2014_310_321.pdf?sequence=1&isAllowed=y (դիտվել է 08.12.2017)։

4 Այս մասին տե՛ս օրինակ Миллер А. Ф., *Краткая история Турции*. М., Государственное издательство политической литературы, 1948, с. 150։

ներ ու գործիքներ և վերականգնանքներով նրանք, որոնք արդեն իսկ գոյություն ունեին»⁵:

Արդյունքում ջիհադը՝ որպես կարևոր լծակ, գործածելի եղավ երիտթուրքերի՝ պատերազմ մղելու ցանկության համար, ուղղվեց ողջ աշխարհի իսլամադավաններին, սակայն լսելի եղավ հիմնականում ու լայնորեն միայն Օսմանյան կայսրության տարածքում, և ջիհադի թիրախը եղան օսմանյան քրիստոնյաները:

Ջիհադի հրամայականով, բացի հանրահայտ հինգ ֆեթվաներից, կրոնական պատերազմ հայտարարելու առթիվ հրապարակվեց նաև պաշտոնական բրոշյուր, մի լայնածավալ արաբերեն պամֆլետ, ռուսալոստ մուսուլմանների համար թողարկվեցին երկլեզու թռուցիկներ՝ ռուսերեն և արաբատառ թուրքերեն, և այլ նյութեր: Քիչ թե շատ ամբողջական տեղեկություն ջիհադի վերաբերյալ տպագրված գրականության՝ գրքույկների, թռուցիկների և այլ քարոզչական նյութերի մասին, կարելի է քաղել Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերից. նա այդ մասին խոսում է իր հուշերի XIV գլխում՝ նվիրելով դրանց 6–7 էջ⁶: Ստորև հերթով անդրադարձ է կատարվելու ջիհադի կոչերի գրավոր արձանագրություններին՝ մի քանիսն առաջին անգամ թարգմանելով հայերեն, վեր հանելով դրանց բովանդակային նշանակությունը, անդրադառնալով այլ հայտնաբերված աղբյուրներում դրանց հիշատակումներին, կատարելով համապատասխան դիտարկումներ ու եզրակացություններ:

ա) Սուլթանի պատերազմական կոչերը.

հայտարարագիր-կոչը և հրովարտակը՝ ուղղված օսմանյան բանակին ու նավատորմին

1914 թ. նոյեմբերի 11-ին սուլթանի հատուկ հայտարարագրով Օսմանյան կայսրությունը պատերազմ հայտարարեց Ռուսական կայսրությանը. «Նոյեմբերի 11-ի սուլթանական հայտարարագիրը գալիս էր միայն հետին թվով հաստատելու պատերազմի սկսվելը... Դեռևս հոկտեմբերի 27-ին և 29-ին գերմանաթուրքական միացյալ նավատորմը Սև ծովում հարձակվել էր ռուսական նավերի, ինչպես նաև Օդեսա, Սևաստոպոլ, Թեոդոսիա և Նովոռոսիյսկ նավահանգիստների վրա: Նույն օրը միաժամանակ հրապարակվեց սուլթանի դիմումը բանակին և նավատորմին»⁷: Մեհմեդ V Ռեշադի այդ երկու կոչերն էլ առաջինն էին սրբազան պատերազմի կոչերի շարքում:

1914 թ. նոյեմբերի 14-ին սուլթանի ընդհանուր հայտարարագիր-կոչը հինգ ֆեթվաների հետ միասին ընթերցվեց Ֆաթիհ մզկիթի դիմաց Ալի Հայդար էֆենդիի կող-

5 Beşikçi M., “Domestic Aspects of Ottoman Jihad. The Role of Religious Motifs and Religious Agents in the Mobilization of the Ottoman Army,” *Jihad and Islam in World War I. Studies on the Ottoman Jihad on the Centenary of Snouck Hurgronje’s “Holy War Made in Germany”*, edited by Erik-Jan Zürcher, Leiden University Press, 2016, p. 96.

6 Տե՛ս Մորգենթաու Հ., *Դեսպան Հենրի Մորգենթաուի պատմությունը*, Երևան, 2012, էջ 127-133:

7 Միմոնյան Հր., *Թուրք ազգային բուրժուազիայի զաղափարաբանությունը և քաղաքականությունը*, Երևան, 1986, էջ 329:

մից, իսկ շատ տեքստերում նշվող նոյեմբերի 11-ը մեր կարծիքով *մեշիխաթի*⁸ կողմից ջիհադի հրապարակային հայտարարությունը պատրաստելու օրն է⁹: Քսանինը իսլամական աստվածաբանների ստորագրությունը կրող այդ կոչի արևմտահայերեն թարգմանության մի փորձ տեղադրել ենք այս հոդվածի վերջում¹⁰: Այս կոչի մեջ հստակ երևում են հակաքրիստոնեական տրամադրություններ բորբոքելու միտված մի քանի հատվածներ: Օրինակ՝ կոչի հենց սկզբում սուլթանի, Օսմանյան կայսրության իսլամական հոգևոր և երիտթուրք առաջնորդների կողմից ձևակերպված տեքստն սկսվում է հետևյալ խոստն արտահայտությամբ, որով ի սկզբանե ծայրահեղ թշնամական ու հատկապես կրոնի թշնամի են ներկայացվում հակառակորդ երկրները. «Կրօնակիցներ՝, այսօր անհաւատներու հետ մուհամեդականութինը վերջին անգամ լինելով դէմ դիմի եկած է, դարերէ ի վեր Անգղիո, Ռուսիո միալիմանները ճնշելու կրօնքի ազատութիւնը աշխարհէն վերցնելու համար բոլոր ուժով կ'աշխատին»¹¹:

Շեշտադրվում են ֆրանսիացիների ռազմական գործողություններն ընդդեմ տարբեր երկրներում բնակվող կրոնասեր ու երևելի մուսուլմանների, որոնք իսլամադավան լսարանին ներկայացվում են իբրև հատուկ մտածված արշավ ընդդեմ իսլամի: Իսկ մյուս թշնամու՝ Ռուսական կայսրության մասին ասվում է. «Ռուսները, ղխերիմ, Կակազը, Թուրքեստանը ու Պարսկաստանը իրար խառնեցին. իսլամի արիւնը երկու հարիւր տարիներէ ի վեր գետի նման հոսեցուցին. ուր որ մի լուսամիտ, իր ազգն ու հայրենիքը սիրող իսլամ մը տեսան, ճգմեցին, միլիոնատր իսլամներու մոլխը մարեցին»:

Ապա նշվում է, որ «անհավատների» ձեռքով մուսուլմանների սպանությունները մեծագույն հաճությամբ կատարվեցին, իսկ Մուհամեդ մարգարեի Ղուրանն ամեն տեղ ճնշված է ու անարգված, հետևաբար՝ հրաման է տրվում, որ յուրաքանչյուր մուսուլման «անհավատ» կոչվող հակառակորդի բռնությունները պետք է վերացնի: Եվ

8 *Մեշիխաթ* - շեյխ ուլ-իսլամի գրասենյակը:

9 Տե՛ս «Յենի Շաֆաթ» թերթի “Osmanli’yi savaşa sokan fetva” «Օսմանյան պատերազմը բռնկող ֆեթվան» վերնագրով հոդվածը նույն թերթի պաշտոնական կայքում՝ <http://www.yenisafak.com/gundem/osmanliyi-savasa-sokan-fetva-2027939> (դիտվել է 21.11.2017): Տե՛ս նաև հոդվածի վերջում կցված *Հավելվածում* պատկեր 1. Թուրքերեն այս և մյուս տեքստերի թարգմանության համար մեր շնորհակալությունն ենք հայտնում ՀՅԺԻ գիտաշխատող, թուրքագետ Էլինա Միրզոյանին:

10 Տե՛ս նույն հոդվածին կից *Հավելվածում*. Թարգմանություն 1: Արևմտահայերեն «*Թուրքիայում կրօնական պայքերազմ յայտարարելու առթիւ հրապարակուած պաշտօնական պրօշիւրի թարգմանութիւնը*» ընդհանուր վերնագրի ներքո կատարված այս թարգմանությունը տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 149, էջ 2-4, պատճենը՝ ՀՅԺԻ-ի ֆոնդեր, Բ-10, ֆ. 1097-1098: Հմմտ. հետևյալ կայքում տեղադրված ֆրանսերեն ավելի ընդարձակ մի տեքստի հետ. “Proclamation de la Guerre Sainte (Djihad) à Constantinople le 14 (23) novembre 1914”, <http://www.imprescriptible.fr/documents/djihad.htm> (դիտվել է 16.11.2017): Կոչի անգլերեն տարբերակը տե՛ս A “Jihad” Appeal to Moslems: Translation of a Recent Call Distributed to the Millions of Islams, *The Missionary Review of the World*, Vol. 38, New York-London, July, 1915, էջ 520:

11 Այս կոչի արևմտահայերեն «*Թուրքիայում կրօնական պայքերազմ յայտարարելու առթիւ հրապարակուած պաշտօնական պրօշիւրի թարգմանութիւնը*» վերնագրով այս և մյուս մեջբերումները տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 149, էջ 2-4, պատճենը՝ ՀՅԺԻ-ի ֆոնդեր, Բ-10, ֆ. 1097-1098:

ապա արվում է կոչի բանալի արտահայտությունը. «Ահաւասիկ ակնկալուած օրը հասաւ, մեր տէրն ու իսլամութեան վեհափառ խալիֆան Աստուծոյ հրամանին ու մեր սուրբ Մարգարէի բարոյական ցուցմունքներուն հպատակելով, միասիւմաններուն կրօնական պատերազմ մղելու կը հրաւիրէ»:

Անդրադարձ է կատարվում այդ սրբազան պատերազմից սպասվող արդյունքներին. մուսուլմանները գերությունից ու թշվառությունից կազատվեն, Ղուրանը պիտի պահպանվի, իսկ կրոնական պատերազմին չմասնակցողը նզովյալ է հայտարարվում՝ Ալլահի բարկությանն ու պատիժներին ենթակա: Իսկ նրանք, ովքեր իրենց սրբազան պարտականությունը կկատարեն՝ ռուսներին ու նրանց օգնող ժողովուրդներին ոչնչացնելով, հավիտենական երանության պիտի արժանանան. «.... դուք ալ ներքուստ մեր կրօնքի հիման համաձայն Ճիհադի (կրօնական պատերազմի) սկսեցէք, ... Աստուծոյ հրամանն, Մարգարէի կամբը, ու խալիֆայի բաղձանքը կատարեցէք... Ոչ մի ժամանակ վասն Աստուծոյ, մի մոռնաք որ դուք էք կրօնական պատերազմի վարիչները. վագեցէք յաիտենական երջանկութիւն վաստկելու օրերը հասած են»:

Հարկ է նշել, որ այս հայտարարագիր-կոչի մեկ այլ հայերեն թարգմանություն հնարավոր չեղավ գտնել մեր ուսումնասիրության ընթացքում: Կոչի ամենավերևում գրված է Մեհմեդ Ռեշադի անունը, որը ցուցիչ է այն բանի, թե ում անունից է եղել տվյալ կոչը, այն թողարկվել է 4 Մուհարրեմ [1]333 թվականին¹², այն է՝ 1914 թ. նոյեմբեր 22-ին:

Սուլթանի կոչի հրապարակման մասին տարբեր ամսաթվեր են շրջանառվում. դրանցից մեկը 1914 թ. նոյեմբերի 11-ն է, իսկ ըստ Հենրի Մորգենթաուի հաղորդման՝ սուլթանն այն հրապարակեց նոյեմբերի 13-ին¹³: Համեմատելով արևմտահայերեն ներկայացված թարգմանությունը, արաբերեն փաստաթուղթն ու նշված կայքի՝ ֆրանսերենով լույս տեսած՝ նոյեմբերի 14-ի ջիհադի կոչի թարգմանությունը, առաջարկում ենք հետևյալ նախնական կարծիքն առ այն, որ առաջինը հատված է շեյխ ուլ-իսլամ Հայրի էֆենդիի հեղինակությամբ տպագրված մի բրոշյուրից, որտեղ տեղադրվել են Մեհմեդ Ռեշադի այս կոչը, ինչպես նաև հինգ ֆեթվաները, իսկ բուն՝ նոյեմբերի 14-ին ընթերցված հայտարարության տեքստն ավելի ընդարձակ է եղել, սակայն դրանից մոտ 10 օր անց արդեն հրատարակված նույն տեքստերը, այդ թվում՝ «*Յենի Շաֆաք*»-ի կայքում տեղադրված կոչի արաբերեն տարբերակը, ավելի հակիրճ են եղել ու ավելի մշակված¹⁴:

Հենրի Մորգենթաուն ասում է, որ «Սուլթանի հռչակագիրը պաշտոնական հանրային փաստաթուղթ էր և առաջարկվող «սրբազան պատերազմի» մասին խոսում

12 Մուսուլմանական *հիշրի* թվականով են տրված այս տարեթիվը և ամսաթիվը:

13 Մորգենթաու Հ., նշվ. աշխ., էջ 127:

14 Այս մասին տե՛ս “Call for Holy War Issued to Moslems: Sultan and 28 Priests Sign Proclamation against the Triple Entente,” *The Brooklyn Daily Eagle*, November 27, 1914, էջ 2, նաև “Holy War Proclamation is Published in Turkey,” *Buffalo Morning Express and Illustrated Buffalo Express*, November 28, 1914, էջ 1: Ամսաթվերի վերաբերյալ նմանատիպ բացատրություն ունի պատմաբան Մուստաֆա Աքսաքալը. Aksakal M., “Holy War Made in Germany? Ottoman Origins of the 1914 Jihad,” *War in History* 18 (2), 2011, p. 186.

էր միայն ընդհանուր գծերով...»¹⁵: Սակայն մեր կարծիքով հրապարակումներին հետևած տպագրված տարբերակները որոշակի փոփոխությունների ենթարկվեցին, քանի որ շեյխ ուլ-իսլամ Հայրի էֆենդիի հուշերից երևում է, որ հրապարակումից հետո հետագա մշակումներ են կատարվել տեքստի վրա: Նա պատմում է սուլթանի հայտարարագրի տպագրության նախապատրաստական աշխատանքների մասին. մասնավորապես հետևյալ հատվածից երևում է, որ ջիհադի հայտարարությանը մեծ կարևորություն է տրվել, ինչպես նաև նոյեմբերի կեսերին հրապարակված հայտարարագրից հետո այն հավանաբար ենթարկվել է հետագա մշակման. «Այսօր (նոյեմբերի 21-ին, 1914) մի գիտական հավաք կազմակերպեցի. նախ՝ Մեշիխաթի կրոնավորներ Զիաթթին, Մուսա Քյազըմ և Էսադ էֆենդիներին հրավիրեցի, երեքն էլ եկան: Օսմանյան պատմության մեջ *Բյաթ-ի Ֆեթվայում*՝ նմանատիպ հավաք առաջին անգամ եղավ: *Քազասկերներից*¹⁶ և կայսերական *հոջաներից*¹⁷ ներկայացուցիչներ կային: Հրավիրյալներից Թիք Վելի Յուսուֆ էֆենդին (*քազասկերներից*) ներկա չէր...»¹⁸, որից հետո Հայրի էֆենդին պատմում է հայտարարագիրը սուլթանին ներկայացնելու որոշ մանրամասներ. «1914-ի նոյեմբերի 22-ին՝ երկուշաբթի օրը՝ կեսօրից հետո, կայսերական պալատ գնացի և հրամանագիրը Ալի Ֆուադ բեյի միջնորդությամբ Փադիշահին ներկայացրինք: Վրան գրված՝ «Ահալասիկ՝ սույն հայտարարագիրը՝ ամբողջ իսլամական տիրույթում տարածելու և լսելի դարձնելու հրաման եմ տալիս, թվով 4 Մուհարրեմ 333 թվական (1914 թ., նոյեմբերի 22)»¹⁹: Կայսերական հրամանագիրն իրենք իրենց իսկ ձեռքով են գրում՝ նշելով Մեհմեդ Ռեշադի անունը, և ապա հաղորդվում է, որ «Բաշքաթիյի բեյի կողմից (Ալի Ֆուադ բեյ) հայտարարագիրը գոհունակությամբ ընդունելուց հետո փադիշահն ինձ ընդունեց պատրաստակամությամբ: Փադիշահի առաջին խոսքն էր՝ «Հայտարարագիրը հրաշալի է ստացվել, հազա՛ր կեցցես»²⁰:

Հայրի էֆենդին իր հուշերում գրում է, որ այս հայտարարագրի համար սուլթանն իրեն՝ իբրև փադիշահի շնորհակալական նվիրատվություն՝ ուրիշներից ծածուկ, 1.000 լիրա է տալիս²¹:

Սուլթանի մյուս ուղղված օսմանյան բանակին ու նավատորմին, ևս շատ կարևոր է, քանի որ այնտեղ կրոնական շեշտադրումները նույնպես մեծ նշանակություն ունեն: Կոչի տեքստում նշվում է հրապարակման թվականը՝ 330 թվականի հոկտեմբերի

15 Մորգենթաու Հ., նշվ. աշխ., էջ 128:

16 *Քազասկեր*՝ բարձրաստիճան կրոնավոր:

17 *Հոջա*՝ մուսուլման ուսուցիչ:

18 *Şeyhülislam Ürgüplü Mustafa Hayri Efendi'nin Meşrutiyet, Büyük Harp ve Mütareke Günlükleri*. İstanbul, İş Bankası Kültür Yayınları, 2015, s. 361.

19 Նույն տեղում, էջ 365:

20 Նույն տեղում:

21 Նույն տեղում:

29-ը, որը օսմանյան *մալի* թվականով համապատասխանում է նույն 1914 թ. նոյեմբերի 11-ին: Այն արևմտահայերենով տպագրվել է «Ազատամարտ» օրաթերթում և ունի կարևոր կրոնական շեշտադրումներ²²: Ամենասկզբում, ինչպես մյուս կոչերի դեպքում, խոսվում է մուսուլմանական խալիֆայության դեմ այլադավանների հարձակումների մասին, որոնք, ըստ տեքստի, ուղղվում էին խալիֆայության փառքի ու վեհապետական իրավունքների դեմ: Օսմանյան բանակին ու նավատորմին ուղղված այս կոչի հանգուցային միտքը հետևյալն է. «Դիցազն զինուորներ՝, մեր նուիրական կրօնքին եւ մեր սիրելի հայրենիքին սպառնացող թշնամիներուն դէմ մեր բացած այս նուիրական ճիհատի ճանքուն վրայ... ձեր յաղթանակէն կախուած է թէ՛ մեր պետութեան եւ թէ՛ ֆեթվայի շերիով իմ կողմէ գերագոյն ճիհատի հրաւիրուած երեք հարիւր միլիոն Իսլամներուն կեանքն ու ապագան»²³:

Տեքստից երևում է, որ սուլթանի այս կոչը ևս ջիհադի կոչ է, օսմանյան զինվորների վրա այն նաև կրոնը պաշտպանելու պարտականություն է դնում, ընդ որում հակամարտությունը ներկայացվում է որպես քաղաքակրթական պատերազմ, քանի որ, ըստ կոչի, զինվորների վրա դրվում է պարտականություն՝ պաշտպանելու ոչ միայն Օսմանյան կայսրությունը, այլև ողջ աշխարհի իսլամադավաններին, քանի որ սուլթանի խոսքի մեջ նշվում է 300 միլիոն թիվը՝ XX դարի սկզբի իսլամադավանների մոտավոր թիվն ամբողջ աշխարհում: Հակառակորդը ներկայացվում է որպես իսլամի թշնամի. «.... որպէս զի մեր կրօնքին եւ տէրութեան թշնամին ջանդգնի ոտնձգութիւն ընել մեր երկրին մէջ»: Նշվում է, որ ողջ աշխարհի մուսուլմաններին պաշտպանելու հնարավորությունն ու պարտականությունը եզակի է, քանի որ ոչ մի այլ բանակի չի վիճակվել կատարել նման գործ. սա, իհարկե, մեծագույն կարևորության, ոգևորիչ ու բորբոքիչ խոսք էր օսմանյան զինվորականների համար, քանի որ արտահայտվել էր սուլթան-խալիֆի կողմից:

Զինվորականներին իբրև աջակցող ուժեր են ներկայացվում մզկիթներում, աղոթատեղիներում և ուխտատեղիներում աղոթող ողջ աշխարհի մուսուլմանները, իսկ իբրև գերբնական գորություններ նրանց թիկունքում կանգնած են պատկերվում Ալլահը և Մուհամեդը. «.... այդ թշնամիները ոչնչացնելու համար Բարձեալն Աստուծոյ շնորհքն ու Մարգարէին բարոյական օգնութիւնը մեզի օժանդակ պիտի հանդիսանան»:

Եվ վերջում օրհնության ձևով խոսվում է անցյալում հանուն կրոնի նահատակվածների հետ հետմահու հավիտենական երանությանն արժանանալու վերաբերյալ. «Ձեր նահատակները թող յաղթութեան ատեփսը տանին նախորդ նահատակներուն....»:

22 Ամբողջական տեքստը տե՛ս *Թարգմանություն 2*.

23 Այս կոչի այս և մյուս մեջբերումները հետևյալ օրաթերթից են. *Խմբագրական*, «Ազատամարտ» օրաթերթ (Կ.Պոլիս), 1914, 31 հոկտեմբեր/13 նոյեմբեր, թիւ 1665, էջ 1:

բ) Օսմանյան շեյխ ուլ-իսլամի հինգ ֆեթվաները

1914 թվականի նոյեմբերի 14-ին Կոստանդնուպոլսի Ֆաթիհ մզկիթի դիմաց պետական պաշտոնյաների ներկայությամբ և հավաքված ժողովրդի առջև ընթերցվեցին Օսմանյան կայսրության սուլնի հոգևոր առաջնորդ շեյխ ուլ-իսլամ Հայրի էֆենդիի և մի շարք հայտնի իսլամական աստվածաբանների կազմած հինգ ֆեթվաները²⁴։ Ֆեթվաներով հաստատվում էր Մեհմեդ V-ի սրբազան պատերազմի հայտարարագիրը, ինչպես նաև կոչ էր արվում աշխարհի բոլոր մուսուլմաններին ջիհադի դուրս գալ ընդդեմ Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի և նրանց զինակիցների՝ սեփական հավատը և իսլամական «խալիֆայությունը» պաշտպանելու համար։ 1914 թ. նոյեմբերի 14-ին թողարկված ֆեթվան գրվել էր հակիրճ՝ թվով հինգ հարց ու պատասխանի տեսքով։ Ֆեթվաների շեշտադրումը ևս կրոնական էր, որտեղ արդեն բոլոր իսլամադավաններին անկախ տարիքից ու պաշտոնական դիրքից իբրև պարտականություն կոչ էր արվում մասնակցել Ռուսաստանի, Ֆրանսիայի, Անգլիայի ու նրանց զինակցող երկրների դեմ հայտարարվող սրբազան պատերազմին։

Ֆեթվաների բնագիրը ևս սկսվում է թշնամիներին զատորոշելով։ Առաջին ֆեթվայում ներկայացվող թշնամիները միավորված են ընդդեմ իսլամի, այսինքն՝ վերջիններիս ցանկացած քայլ ու գործողություն պետք է դիտարկվեր իբրև իսլամի դեմ ուղղված։ Մուսուլման բնակչությունը, առաջին ֆեթվայի համաձայն, կոտորվում կամ գերեվարվում էր։ Այս ամենը նշելուց հետո ձևակերպվում է ֆեթվաներին բնորոշ բանաձևը. բարձրացվում է առաջին հարցը, որին տրվում է դրական պատասխան։ Առաջին ֆեթվայի հարցը հետևյալն էր. «..... արդյո՞ք բոլոր՝ թե՛ ծեր և երիտասարդ, թե՛ հեծելագորային և հետևակային մուսուլմանների մասնակցությունն այս պատերազմում պարտականություն է։ Արդյո՞ք պետք է, որ իսլամական բոլոր երկրների մահմեդականները շտապեն՝ անձնապես և կյուրապես ջաթի (իմա՝ ջիհադ, սրբազան պատերազմ-Շ. Իս.) մասնակցելու»²⁵։

24 Ֆեթվա (արաբ. թարգմ.՝ «որոշում») – իսլամական կրոնաիրավական որոշում՝ կայացված բարձրագույն հոգևոր հեղինակություն ունեցող անձի (մուֆթիի, դադիի, շեյխ ուլ-իսլամի) կողմից։ (Ֆեթվայի օսմաներեն տեքստը՝ ՀԱՄ, ֆ. 57, ց. 5, գ. 80, պատճենը՝ ՀՅԹԻ-ի ֆոնդեր, Բ-10, ֆի 1103, տե՛ս նաև *Großer Bilder-Atlas des Weltkrieges*, München, Bruckmann, 1915, S. 369, որտեղ ֆեթվայի տեքստը գրված է 4 լեզվով՝ օսմաներեն, արաբերեն, պարսկերեն և գերմաներեն, հմմտ.՝ ֆրանսերեն թարգմանության հետ՝ <http://www.imprescriptible.fr/documents/djihad.htm> (դիտվել է 16.11.2017)։ Ֆեթվայի արևմտահայերեն թարգմանության փորձ է ՀԱՄ, ֆ. 57, ց. 5, գ. 149, էջ 1-2 (պատճենը՝ ՀՅԹԻ-ի ֆոնդեր, Բ-10, ֆի 1097) համարի տակ՝ Մեհմեդ Ռեշադի վերը նշված կոչից առաջ գրված միևնույն թարգմանչի կողմից թարգմանված հինգ ֆեթվաների տեքստը։

25 Ֆեթվայի տեքստի անգլերենից թարգմանությունը կատարվել է մեր կողմից՝ Peters R., *Jihad in Classical and Modern Islam: A Reader* (Princeton Series on the Middle East). Princeton: Markus Wiener Publishers, 1996, pp. 56-57 գրքից՝ համեմատելով գերմաներեն տեքստի հետ՝ տե՛ս *Großer Bilder-Atlas des Weltkrieges*, München, Bruckmann, 1915, S. 369։ Հոդվածին կից ներկայացված են ֆեթվաների բնագիրը (տե՛ս *Պատկեր 2*), արևելահայերենով մեր թարգմանությունը (տե՛ս *Թարգմանություն 3*), սրբազան պատերազմ հայտարարելու օրվա՝ 1914 թ. նոյեմբերի 14-ի մեկ լուսանկար (տե՛ս *Պատկեր 3*) և փոստային բացիկներ (տե՛ս *Պատկեր 4* և *Պատկեր 5*)։

Երկրորդ ֆեթվայում կատարվում է կենտրոնացում թշնամու նպատակի վրա. Օսմանյան կայսրության թշնամիների՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի, Անգլիայի նպատակը ներկայացվում է իսլամը ոչնչացնելու տեսքով: Այս ֆեթվայի հարցադրումն առնչվում է նշված երկրների իսլամադավան բնակչությանը՝ արդյո՞ք նրանք ևս պետք է մասնակցեն սրբազան պատերազմին՝ իրենց երկրների համապատասխան կառավարությունների դեմ: Պատասխանն ինչպես նախորդ, այնպես էլ հաջորդ ֆեթվաներում անփոփոխ «այո՛»-ն է:

Երրորդ ֆեթվան իր բնույթով նախազգուշական է և վերաբերում է այն բոլոր իսլամադավաններին, ովքեր, չնայած կոչված լինելով հանուն իսլամի պայքարելուն, հրաժարվում են միանալ սրբազան պատերազմին: Բոլոր այդ իսլամադավանները, այս ֆեթվայի համաձայն, ենթակա են Ալլահի խիստ զայրույթին ու պատժին:

Չորրորդ ֆեթվան երրորդի տրամաբանական շարունակությունն է, որով հաստատվում է, որ եթե վերը նշված երկրների մուսուլմանները զենք վերցնեն այլ իսլամադավանների դեմ, աններելի մեղք կգործեն:

Հինգերորդ՝ եզրափակիչ ֆեթվան նախորդ երկու՝ նախազգուշացնող ու պատիժների լեզվով խոսող ֆեթվաների շարունակությունն է: Վերը նշված երեք տերությունների կողքին ավելանում է Սերբիայի, Մոնտենեգրոյի և նրանց հարած երկրների սահմաններում բնակվող մուսուլմաններին ուղղված կրոնական սպառնալիքը: Այս ֆեթվայի համաձայն՝ նրանք կդիտարկվեն իբրև պատերազմի ընթացքում իսլամի կրած անհաջողությունների պատճառ:

Ըստ թուրքական աղբյուրների՝ ֆեթվաներն ընթերցողը Ալի Հայդար էֆենդին²⁶ էր:

Տրապիզոնի թեմի հայ կաթողիկե առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոս Նազլյանը ֆեթվաների՝ մուսուլմանների վրա ունեցած ազդեցության վերաբերյալ համակարծիք է մյուս ականատեսների հետ առ այն, որ ջիհադի կոչերին լուրջ վերաբերվեցին միայն օսմանյան թուրքերը. «Այս պոռոտ «Այո՛»ները, թուրք բանակին և իրենց զինակիցներուն գրաւած սահմաններէն անդին չկրցան թափանցել և մի միայն Թուրքիոյ մէջ արձագանգ գտան....»²⁷: Ըստ նրա՝ ջիհադի կոչերը ծառայեցին օսմանյան քրիստոնյաներին ոչնչացնելուն. «Այս ճիհատը, ընդհակառակն, ծառայեց կատաղութեան աստիճան գրգռելու իսլամ Թուրքերու ատելութիւնը՝ ընդդէմ իրենց հայրենա-

26 Ալի Հայդար Քուչուկ էֆենդի (1853-1935), եղել է սուֆի՝ հավանաբար նաքշաւանդիների միաբանությունից: Ծնվել է 1853 թ. Բաթումում հոգևորականի ընտանիքում: Հայտնի է եղել «գյուրջի» վրացի, Ալի Հայդար էֆենդի անունով: 1902 թվականից Ֆաթիհ մզկիթում հոջայի պարտականություններն է կատարել, նաև այս է պատճառը, որ ինքն է ընթերցել ֆեթվաների տեքստը. տե՛ս Իսլամի հանրագիտարանի հետևյալ կայքը. <http://www.islamansiklopedisi.info/dia/ayrmetin.php?idno=020396&idno2=c020391> (դիտվել է 16.11.2017), տե՛ս նաև՝ Kasap M., *Osmanlı Gürcüleri*. İstanbul: Gürcistan Dostluk Derneği, 2010, s. 276, 277:

27 Նազլեան Յ. Եպս., *Տրապիզոնի թեմին վիճակադր Յովհաննէս արք. Նազլեանի յուշերը Մերձատր Արեւելքի 1914-1928 շրջանի քաղաքական-կրօնական դէպքերուն մասին*, Ա հատոր, թարգմ. ֆրանս.՝ Ստեփանեան Հ., Պէյրոթ, 1960, էջ 14:

կից քրիստոնեաներու, մասնատորապէս Հայերու: Անոր համար է, որ եթէ այս զինաթափ եղած ցեղին բնաջնջման ծրագրին դրդապատճառները, սկիզբէն միմիայն քաղաքական էին, անոր գործադրութիւնը, սակայն, տողորուած ու ոգետորուած էր ճիհատի ոգեկոչած գուտ կրօնական շարժառիթներով»²⁸:

Հայրի էֆենդին պատմում է այն մասին, որ հետագայում իր ջանքերով ֆէթվաները թարգմանվեցին այլ լեզուներով. 1914 թ. նոյեմբերի 20-ին՝ ուրբաթ օրը, ինքն էլ գնում է *Բյաթ-ի ֆէթվայա*՝ Էբուլուլու բեյին (նամակատար) է կանչում՝ ջիհադի ֆէթվաների թուրքերէն, արաբերէն, պարսկերէն, հնդկերէն և թաթարերէն լեզուներով հրատարակված օրինակն աչքի անցկացնելու համար²⁹:

գ) Էնվեր փաշայի կոչն օսմանյան բանակին

Ջիհադի կայսերական հայտարարագիր-կոչերի ու հինգ ֆէթվաների հետ միաժամանակ օսմանյան զորքին դիմելու անհրաժեշտություն զգաց նաև պատերազմական նախարար Էնվեր փաշան: Էնվերի կոչի մեջ նույնպես ակնառու է կրոնական ենթատեքստը: Նկատելի է, որ Էնվերի կոչի մեջ Ղուրանից մեջբերումներ չկան, սակայն երկու անգամ հղում է կատարվում Մուհամեդ մարգարէին, մեկ անգամ գործածված է Աստված՝ Ալլահ բառը. «...Օրինութեամբ Բարձեալն Աստուծոյ, նուիրական օգնութեամբը Մարգարէին եւ բարի աղօթներովը մեր թագաւորին, մեր բանակը թշնամին պիտի ոչնչացնէ»³⁰:

Ելնելով կոչի առաջին՝ «Մեր սիրելի ընդհանուր հրամանատար Ն. Խալիֆայական մեծափառութեան կայսերական իրատէն կը հաղորդեմ ձեզ» նախադասությունից՝ կարելի է անել հետևյալ երկու նախնական դիտարկումը. գուցե հենց Էնվերն է եղել Մեհմեդ Ռեշադի՝ օսմանյան բանակին ու նավատորմին ուղղված հրովարտակն ընթերցողը զանգվածների համար:

Էնվերի այս կոչի մեջ հատկապես ընդգծված է կրոնի համար նահատակությունը «... երանի՜ յառաջ ընթացողներուն, երանի՜ կրօնքի ու հայրենիքի սիրուն նահատակ եղողներուն...» և կրկին, ինչպես մյուս կոչերում, հատուկ նշվում են իսլամադավանին զորակցողները. «Ամէնքս մտածելու ենք որ մեր գլուխներուն վրայ մարգարէին եւ անոր ընկերներուն հոգիները կը սավառնին»:

Չինվորականներին պատասխանատու պարտականության իրականացմանը մղելու համար Էնվերը հիշատակում է ողջ աշխարհի իսլամադավաններին՝ սուլթանի

28 Նույն տեղում:

29 Sı'u Şeyhülislam Ürgüplü Mustafa Hayri Efendi'nin Meşrutiyet, էջ 360:

30 Էնվերի կոչի այս և մյուս մեջբերումներն արվում են ըստ հետևյալ հրապարակման. *Խմբագրական, «Ազատամարտ» օրաթերթ*, 1914, 31 հոկտեմբեր/13 նոյեմբեր, թիւ 1665, էջ 1: Ամբողջական տեքստը տե՛ս *Թարգմանություն 4: Հայտարարության հրապարակման մասին տե՛ս հետևյալ հաղորդագրությունը PROCLAMATION BY ENVER, Says Turks with Allah's Help Will Destroy Their Enemies, "The New York Times," 1914, November 15, p. 5:*

նշած թվով՝ երեք հարյուր միլիոն, ովքեր, ըստ նրա, հեծեծալով շղթաների տակ, օսմանյան զինվորների հաղթանակի համար մաղթանքներ են կարդում:

Փաստորեն ինչպես մյուս կոչերը, ռազմական կոչերը ևս կառուցված էին կրոնական քարոզչությամբ. «Ողջ օսմանյան պատերազմական քարոզչությունն իրականացվեց կրոնական մոտիվներով: Մահացածները համարվում էին «մարտիրոսներ»³¹:

դ) Զիհադի պամֆլետ/պարսավագիր

Սովորաբար պետության հրահանգները՝ հայերի տեղահանությունները, կրոնափոխության ենթարկելը և այլ ցուցումներ, տրվում էին մզկիթներում³²: Սակայն Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուն խոսում է մի գաղտնի պարսավագրից, որը հավատացյալներին ավելի հստակ ցուցումներ էր տալիս: Ըստ Հ. Մորգենթաուի՝ այն մզկիթներում չէր ընթերցվում և գաղտնի տարածվել էր մուսուլմանական բոլոր երկրներում, օրինակ՝ Եգիպտոսում, Մարոկկոյում, Սիրիայում և այլուր: Պարսավագիրը մանրակրկիտ ներկայացնում էր բոլոր քրիստոնյաների, բացառությամբ գերմանացիների, ֆիզիկական ոչնչացման ծրագիրը: Հ. Մորգենթաուն նաև ընդգծում է, որ այն արաբերեն՝ Ղուրանի լեզվով էր գրվել կանխամտածված: Դեսպան Մորգենթաուն նաև մեջբերումներ է անում այդ փաստաթղթից³³:

Համոզված կարող ենք ասել, որ այդ նույն պարսավագրի մասին է խոսում նաև Արամ Անտոնյանը: Անտոնյանի հաղորդած տեղեկության համաձայն՝ այն տպագրվել էր Գերմանիայում, բոլոր գերմանացիներն ու գերմանուհիները պարտավոր էին այն տարածել արաբների շրջանում³⁴: Նա կարծում է, որ պամֆլետը հատուկ էր գրվել արաբներնով՝ ոչ թե իր շուրջ սրբազան դաշտ ստեղծելու նպատակով (Ղուրանի լեզվով գրված լինելու պատճառով), այլ որպեսզի տարածվեր արաբների շրջանում ու գրգռեր նրանց ընդդեմ անգլիացիների, քանի որ հենց վերջիններս էին այն քրիստոնյաները, որ ապրում էին արաբների մեջ, ու հենց նրանց դեմ էր ուղղված այդ պարսավագիր-պամֆլետի «առնվազն չորս քրիստոնյա սպանելու» բացառիկ հրահանգը: Ըստ Անտոնյանի՝ այդ գրքի 10-րդ էջի վերջին պարբերության համաձայն (էջը լուսանկարված տպագրվել է Անտոնյանի գրքում)³⁵ մուսուլմանը կարող է իր կրոնական պարտքը կատարել և հարթել փրկության ճամփան առնվազն չորս քրիստոնյայի

31 Rogan E., *A War to End Jihad*, “The New York Times,” 2015, May 1 <https://www.nytimes.com/2015/05/02/opinion/a-war-to-end-jihad.html> (ղիտվել է 20.01.2018):

32 Տե՛ս օրինակ. «Այսօր բոլոր մզկիթներն կը յայտարարուէր թէ բոլոր հայերը պիտի արքորուէին: Հայերը չորս օր միայն ժամանակ ունէին իրենց ինչքերը ծախելու... »: Ճէյքըպսըն (Եագոպսըն) Մ., *Օրագրութիւն: 1907-1919: Խարբերդ*, դանիերէն ձեռագիր բնագրէն թարգմանեցին՝ Բախտիկեան Ն. եպս., Սիմոնեան Մ., Անթիլիաս, 1979, էջ 107:

33 Տե՛ս Մորգենթաու Հ., նշվ. աշխ., էջ 128:

34 Տե՛ս Անտոնեան Ա., *Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոլորադները և Թալեհադ փաշա*, Երևան, 1990, էջ 75:

35 Անտոնեան Ա., նշվ. աշխ., էջ 76-ում գետեղված է այդ բնագիրն արաբերենով, պատկեր թիվ 9:

(պամֆլետի արաբերեն տեքստում՝ անհավատի) սպանելով³⁶: Սակայն կարծում ենք, որ Անտոնյանը ոչ թե անհավատ-քրիստոնյա միտումնավոր փոփոխություն է կատարել իր գրքում, այլ ճշգրիտ իմաստային թարգմանությունն է տվել հրահանգի թիրախային հասցետիրոջ. երիտթուրքերի ծրագրած ջիհադն ուղղված էր քրիստոնյաների դեմ:

Պարսավագրից Արամ Անտոնյանն է օգտվել և, ինչպես վերը նշվեց, էջի լուսանկարը տեղադրել է իր գրքում: Պարսավագրի մասին մի հիշատակում տպագրված գտնում ենք Վուֆգանգ Գուստի հավաքած փաստաթղթերի ժողովածուում՝ Հալեպում Գերմանիայի նախկին հյուպատոս Վալտեր Ռյուպերի՝ Յոհաննես Լեփսիուսին ուղղված նամակում. «Սրբազան կովի կոչ անող արաբական գրքույկ իմ ձեռքով չի անցել, որից մի էջ լուսանկարված է Անտոնյանի գրքի 60-րդ էջում³⁷ (արևմտահայերեն տպագրված «Մեծ Ոճիրը» գրքի 76-րդ էջում-Շ. Խ.): Բայց կարող էր պատահել, որ այստեղ գերմանական կողմն անշնորհքություն է դրսևորել, և կարող էր պատահել, որ Հյուսիսային Աֆրիկայի համար նախատեսված մի բրոշյուր հայտնվել է Հալեպում»³⁸:

Այս պամֆլետ-պարսավագրի բնօրինակ տեքստն իր կարևոր ու լույս սփռող բովանդակությամբ շատ երկար ժամանակ, համեմայն դեպս մեզ համար, մնում էր անհայտ, սակայն երկար փնտրելուց հետո մենք այն հայտնաբերեցինք, ընդ որում պարսավագրի երկու օրինակների լուսապատճենները գրեթե միաժամանակ³⁹: Պարսավագրի մեկ օրինակ պահվում է Վաշինգտոնի ազգային արխիվում՝ RG 59, No. 867.00/762 ֆոնդային համարի տակ⁴⁰: Արաբերեն այդ պամֆլետ-գրքույկից բացի, առկա է Հենրի Մորգենթաուի ստորագրած նամակ-բացատրագիրը՝ ուղղված ԱՄՆ-ի պետքարտուղարին առ այն, որ Հալեպում ԱՄՆ-ի հյուպատոս Ջեսսի Բ. Ջեքսոնն⁴¹ է իրեն ուղարկել այդ գրքույկը, և ինքն էլ իր հերթին՝ պետքարտուղարին՝ նշելով, թե ինչ կտորներից է բաղկացած իր ուղարկած փաստաթղթային փաթեթը՝

36 Նույն տեղում, էջ 75-77: Արամ Անտոնյանը պատմում է, որ, անշուշտ, գերմանական այդ քայլն ուղղված էր հատուկ անգլիացիների դեմ, քանի որ արաբական միջավայրում գտնվող նրանց հակառակորդներն անգլիացիներն էին: Դրանից մեծ աղմուկ է բարձրանում, որի պատճառով թուրքական կառավարությունն առգրավում և ոչնչացնում է գրքի բոլոր օրինակները:

37 Նկատի ունի Արամ Անտոնյանի գրքի ֆրանսերեն թարգմանությունը:

38 Գուստ Վ., *Հայերի ցեղասպանությունը 1915-1916, Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի փաստաթղթերից*, Երևան, 2008, էջ 710-711:

39 Դրանց պատճենները մեզ տրամադրեց ՀՅԹ-ի ավագ գիտաշխատող պարոն Միհրան Միսալյանը, ում հայտնում ենք մեր խորին երախտագիտությունը:

40 “A Universal Proclamation to All the People of Islam,” published by the National Society of Defense, The Seat of the Caliphate, printed in the Mutba’at el-Haireyet (1333), *United States National Archives*, Washington D. C., Record Group 59, No. 867.00/762, Morgenthau to Secretary of State, May 11, 1915, encl., Jackson to Morgenthau, April 8, 1915. Պարսավագրի արաբերեն և անգլերեն տիտղոսաթերթերը տե՛ս համապատասխանաբար *Պարկեր 6 և Պարկեր 7*:

41 Ջեսսի Բենջամին Ջեքսոն (1871-1947), 1908-1923 թթ. ԱՄՆ-ի հյուպատոսը Հալեպում, Հայոց ցեղասպանության օտարերկրյա կարևոր ականատեսներից, որը հազարավոր հայերի է փրկել մահից: Նրա հայանապատ գործունեության մասին տե՛ս *SAVED BY AMERICAN CONSUL: Armenian Refugees Hope Others Will Be Saved from Slavery*, “The New York Times,” 1916, January 18, p. 4:

- 1) Միստր Ջեքսոնի նամակը Մորգենթաուին՝ ապրիլի 8, 1915 թ., 2) Պամֆլետը, 3) Պամֆլետի թարգմանությունը⁴²:

Ջեասի Ջեքսոնի կարծիքով պամֆլետը Հալեպում տարածվել էր գերմանացի տեր և տիկին Քոխերի⁴³ ու հնարավոր է նաև Օսկար Ֆլեխսիգի կողմից: Մորգենթաուն նշում է, որ արաբերենից անգլերեն թարգմանությունը կատարել էր ոմն Dr. C. F. Gates-ն իր խնդրանքով: Համոզված կարելի է ասել, որ խոսքը վերաբերում է դոկտոր Քալեր Ֆրենկ Գեյթսին⁴⁴՝ սկզբում Եփրատ քոլեջի և ապա Ռոբերտ քոլեջի նախագահին: Պամֆլետին մեծ ուշադրություն է հատկացվել՝ հաշվի առնելով այն, թե ինչ ողիսական է այն ունեցել մինչև ԱՄՆ հասնելը, ում ձեռքով է այն անցել. սկզբում Հալեպում ԱՄՆ-ի հյուպատոսի, ապա Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի դեսպանի, միաժամանակ պամֆլետի թարգմանչի, ամերիկյան կարևորագույն երկու քոլեջների նախագահի, և հասել է ԱՄՆ-ի պետքարտուղարություն:

Իր կցագիր նամակում Ջ. Ջեքսոնը գրեթե մարգարեական նախագգուշացում է անում պամֆլետի հետագա հնարավոր կործանարար ազդեցության մասին հետևյալ խոսքերով. «Անպայման ինչ-որ բան պետք է արվի՝ կանխելու համար այսպիսի քարոզչությունների շարունակությունն ապագայում, այլապես մի օր հետապնդվող արդյունքը կիրականանա, և այն կործանարար կլինի»⁴⁵:

ԱՄՆ-ի հյուպատոսի նամակից երևում է, որ նա պամֆլետն ուղարկել է 1915 թ. ապրիլի 8-ին: Մոտ մեկ ամիս անց՝ մայիսի 11-ին, Հ. Մորգենթաուն, արդեն իր գրած բացատրական նամակին կցելով հյուպատոսի նամակը, արաբերեն պամֆլետն ու դրա անգլերեն թարգմանությունը, այն ուղարկել է պետքարտուղարություն, վերջինս էլ այն ստացել կամ արխիվացրել է հունիսի սկզբին: Եվ հավանաբար հենց այդ թարգմանության հիման վրա էլ Հ. Մորգենթաուն արդեն իր հուշերում վերը նշված դիտարկումներին հավելում է. «Կանխամտածված այն տպագրված էր արաբերեն՝ Ղուրանի լեզվով: Դա մի երկարաշունչ փաստաթուղթ էր, որի անգլերեն տարբերակը

42 Հենրի Մորգենթաուի այս նամակի պատճենը տե՛ս Պարկեր 8:

43 Ջեասի Ջեքսոնը կարծում է, որ Հալեպում պամֆլետի տարածման մեջ ավելի հավանական մեղավորը տիկին Քոխն էր, իսկ նրա ամուսինը՝ Հալեպում գերմանական “Luticke” առևտրական տան ներկայացուցիչը, գուցե և որևէ կապ չունեի այդ ամենի հետ: Արամ Աստուկյանը հաղորդում է, որ տիկին Քոխը սկզբում զարհուրելի ասելություն էր տածում հայերի նկատմամբ, սակայն Եղեռնի ժամանակ նա, ազդված հայերի հանդեպ կիրառվող դաժանություններից, փոխում է իր վերաբերմունքը. «... միջոց մը ձեռքը խարազան մը առած Հալեպի փողոցներուն մեջ կը ծեծեր հայ խոշտանգող ոստիկանները»: Տե՛ս Աստուկեան Ա., նշվ. աշխ., էջ 75:

44 Քալեր Ֆրենկ Գեյթս (1857-1946), ամերիկացի այս միսիոները ճանաչված էր թե՛ միսիոներների, թե՛ տեղացիների շրջանում, տիրապետում էր հայերենին, արաբերենին ու թուրքերենին, 1883-ին Օտարերկրյա առաքելությունների լիազորների ամերիկյան խորհուրդը (անգլ. American Board of Commissioners for Foreign Missions) նրան ուղարկում է Մարդին՝ միսիոներություն անելու, իսկ 1894-ին նա Խարբերդ քաղաքի Եփրատ քոլեջի նախագահն էր: 1903-1932 թթ. նա ստանձնում է մեկ այլ՝ Կոստանդնուպոլսում գործող հանրահայտ Ռոբերտ քոլեջի նախագահի պաշտոնը: Լոզանի կոնֆերանսի ընթացքում նա եղել է ԱՄՆ-ի ներկայացուցչության խորհրդական. տե՛ս *An Appreciation: Dr. Caleb Frank Gates-President of Robert College 1903-1932*, Published by The Robert College, Herald Board of 1931-1932, Istanbul.

45 *A Universal Proclamation to All the People of Islam*, Jackson to Morgenthau, 1915, April 8, p. 2.

պարունակում էր տասը հազար բառ: Տեքստն առատորեն համեմված էր Ղուրանից բերված մեջբերումներով, որոնց *ոճն ամբողջովին միարված էր ռասայական ու կրոնական արելություն արթնացնելուն*: Այն մանրակրկիտ ներկայացնում էր *համայն քրիստոնյաների, բացառությամբ գերմանացի ազգի, սպանության ֆիզիկական ոչնչացման ծրագիրը*»⁴⁶ (ընդգծումները մերն են–Շ. Խ.):

Փաստաթուղթը գրվել է պաթետիկ կրոնական քարոզի ոճով, ներառում է կոչեր և ուղիղ հրամաններ:

Մուտքի անվերնագիր հատվածում մեջբերվում են երկու դուրանյան այսթ իսլամադավանների եղբայրության վերաբերյալ, հիշեցվում է, որ տարբեր լեզուներով խոսող ազգերը, որոնք միմյանց թշնամի էին մինչև իսլամի ի հայտ գալը, միավորվեցին Ալլահի կամքով մեկ հավատի շուրջ, և նրանց սրբազան պարտականությունն էր ատել դժվարությունները՝ ողջ ուժով նպաստելով եղբայրակիցների ազատագրմանը «անհավատների» իշխանությունից, որպեսզի նրանք ազատվեն ճնշումներից, և ով որ խախտում է այդ պարտականությունը, մեծ անիրավության մեջ կմեղադրվի և Ալլահից ենթակա կլինի գեհենի պատիժներին: Շեշտվում է խալիֆին (կոչելով Ալլահի առաքյալ) ու խալիֆայի կենտրոնը, այսինքն՝ Ստամբուլը, պաշտպանելու պարտավորությունը, պատրաստ լինել դիմակայելու թշնամուն, դառնալու զինվոր, անհրաժեշտության դեպքում մասնակցելու սրբազան պատերազմի՝ ժամանակավորապես դադարեցնելով ամեն գործ՝ բացի Ալլահի կրոնը փրկելու և սրբազան պատերազմ մղելու գործից:

Երկրորդ հատվածը վերնագրված է «*Անկման աստիճանը, որին հասել է իսլամական աշխարհը*», որտեղ խոսվում է, թե ինչ ողբերգական աստիճանի է հասել, ինչ օրհասական դրության մեջ է մահմեդական աշխարհը՝ թվարկելով ժամանակի մուսուլման տերություններն ու այնտեղ ապրող մահմեդականների ծանր վիճակը անհավատների լծի տակ, քանի որ դադարել էին հետևել Ղուրանի խոսքին՝ այդպիսով անցնելով մի տարաբախտությունից դեպի մյուսը: Վերջում կրկին ընդգծվում է ոտքի կանգնելու հրամայականը:

Երրորդ հատվածի վերնագիրն է «*Այսօր սրբազան պատերազմը սուրբ պարտականություն է դարձել յուրաքանչյուր մուսուլմանի համար*», որտեղ տրվում են այն հաջորդական քայլերը, որ իսլամադավանները պետք է անեն՝ հաջողության հասնելու համար. օրինակ՝ ստեղծեն գաղտնի միություններ՝ ընդդեմ այն կառավարությունների, որոնք դիմադարձում են իսլամական աշխարհին: Այստեղ նշվում է, որ բացառություն են կազմում այն անհավատները, որոնք զինակցում են իսլամադավաններին՝ ի նկատի ունենալով Գերմանական և Ավստրո-հունգարական կայսրությունները: Այս վերնագրի ներքո հրամայվում է սպանել առնվազն 3–4 անհավատի: Այս հատվածից մեջբերում է կատարում Հ. Մորգենթաուն. «...իսլամի վրա իշխող անհավատների սպանությունը դարձել է սրբազան պարտք՝ անկախ նրանից՝ դա կկատարվի բացահա՞յտ, թե՞ գաղտնի, ինչպես հրամայում է Ղուրանը. «Սպանե՛ք նրանց, որտեղ էլ գտնեք»:Աշխարհի ցանկացած վայրում գտնվող յու-

46 Մորգենթաուն Հ., նշվ. աշխ., էջ 128:

րաքանչյուր մահմեդական պիտի հանդիսավոր երդում տա, որ կսպանի առնվազն երեք կամ չորս անհավատի, ովքեր իշխում են իրենց վրա, քանզի այդպիսիք Ալլահի հավատքի թշնամիներն են... Այդպես վարվող ամեն մի մահմեդական կազատվի Ահեղ դատաստանի սարսափներից, երբ արթնանան հանգուցյալները: Ո՞ր մի անհատը կարող է նման պարգևը մերժել այդպիսի չնչին արարքի դիմաց»⁴⁷:

Չորրորդ հատվածը՝ «Մուսուլմանների իրավունքները» վերնագրով, շեշտադրում է «Պատերազմի տան»՝ դար ուլ-հարբի ու «Իսլամի տան»՝ դար ուլ-իսլամի գաղափարը՝ կապված ջիհադ մղելու պարտականության հետ:

Հինգերորդ հատվածը՝ «Սրբազան պատերազմի տեսակները», բաղկացած է հետևյալ մասերից.

ա. *սրբի պատերազմ*, որի ժամանակ մուսուլմանը պետք է հավատա իր սրտով, որ անհավատներն իր և իր կրոնի թշնամիներն են, և ողջ սրտով պետք է ցանկանա նրանց անհետանալն ու նրանց ուժի ոչնչանալը,

բ. *պատերազմ խոսքով*, երբ խոսքի ու գրչի իսլամադավան վարպետները պետք է պախարակեն անհավատների խավարամտությունն ու անհավատությունը: Այս ենթակետում հղում է կատարվում Կովկասի ու Ռուսաստանի իսլամադավաններին՝ շեշտելով, որ հատկապես նրանք պետք է մասնակցեն սրբազան պատերազմի այս ձևին,

գ. *իրական պատերազմ*՝ փոքր՝ տեղական կամ ներքին, և մեծ՝ արտաքին, բաղկացուցիչներով:

Վեցերորդ հատվածը՝ «Մարտիրոսություն» վերնագրով, ընդգծում է, որ նկարագրված պատերազմում մահացած ցանկացած իսլամադավան մարտիրոս կլինի:

Իսկ յոթերորդ հատվածում նկարագրվում են «Ջիհադի ձևերը»՝ ա. անձնապես, բ. խմբերով, գ. արշավներով:

Այս պամֆլետի բովանդակությանը կատարված անդրադարձների հանդիպել ենք շատ քիչ տեքստերում. դրանց թվում են Առաքել Պատրիկի կազմած «Պատմագիրք յուշամատենան Սեբաստիոյ եւ գաւառի հայութեան» Ա հատորը, Տրապիզոնի թեմի վիճակավոր Հովհաննես արքեպիսկոպոս Նազլյանի, Գառնիկ Ստեփանյանի և ինչպես նշեցինք, Հենրի Մորգենթաուի հուշերը:

Առաքել Պատրիկի կազմած «Պատմագիրք յուշամատենան Սեբաստիոյ եւ գաւառի հայութեան» Ա հատորում կարելի է գտնել հետևյալ մեկնաբանություններն ու մեջբերումները, «1914 թուականի Հոկտեմբերին «արդէն պատրաստուած էր *Ճիհադը*, հայասպանութեան գլխաւոր գործիքներէն մին, 5,000 բառերէ բաղկացած արինոտ վաւերաթուղթ մը, որուն արաբերէն բնագրին մէջ կան բառ առ բառ հետեւեալ քանի մը տողերը.

«Մաքրել երկիրը անբաղձալիներէն: Ասիկա միակ առիթն է» (Լեպասանու ավտանի հիմ մին: Ղայիլէթ էլ գելայ):

«Անհաւատներու արինը անարժէք է» (Վա էննէ տէմ էլքիֆար էսպահ հէտէրէն):

«Երդում տուէք սպաննելու առնուագն երեք կամ չորս անհատներ» (Ֆէյէն պըզի էնն ահետ քիլլի):

47 Նույն տեղում, էջ 127-128:

«Ատկէ ատկի բարի գործ չկայ» (Վա իի լեմիեքին լէհու մինն ամէլ էլ խայրը սիվա հատա)»⁴⁸:

Եվ հետագա կապ է արձանագրվում, թե ինչպես պատերազմի սկզբում հայտարարված ջիհադը 1914 թ. նոյեմբերից մինչև 1915 թ. գարունը պահեց իր նպատակայնությունն ու արտացոլվեց հայերի դեմ իրականացված ցեղասպանության մեջ. «Նման արհիւնուշտ հրահանգներուն զուգահեռ է, Փետրուար 2/15, 1915 Թալէաթի տեսակցութիւնը գերման դեսպան Վանկենհայմի հետ, հայերը բնաջնջելու մասին, ուր Թալէաթ «Ճիհատի բառերով, հայկական խնդիրը վերջացնելու մասին կ'ըսէր. «Միակ յարմար առիթն է հիմա». Ֆրանսերէն՝ իր բառերով. «Սէ լը սէօլ մոման փռփիս»: Էնվերի հեռագրին մէջ յիշուած *Ճիհայրը* և Թալէաթի տեսակցութիւնը ֆրանսերէնով նոյն արհիւնտ բառերը կը պարունակեն»⁴⁹:

Հովհաննես Նազլյանի հաղորդմամբ պամֆլետն իսկապես աղետալի նշանակություն ունեցավ օսմանյան քրիստոնյաների համար՝ հավելելով, որ այդ «տետրակով» երիտթուրքերը քրիստոնյաների հետ կապված իրենց գաղափարներն ու քաղաքական դիրքն էին արտահայտել. «Արաբերեն լեզուով գրուած և բովանդակ իսլամական աշխարհի մէջ ցրուած տետրակի մը մէջ, ջարդը և անոր հրամանակարգը սահմանող վարդապետութիւնը, բոլոր քրիստոնէաներու վրայ տարածուած էր, ուր մասնատրապէս կ'ըսուէր «Թշուառականներուն (քրիստոնէայ) փճացումը, ըստ Գուրանի պատուէրին, նուիրական գործ մ'է՝ կատարուի այն գաղտնի կամ հրապարակաւ, ուր ալ որ գտնէք, զանոնք սպաննեցէք, բացարձակ իշխանութիւն կուտանք ձեզ»⁵⁰:

Հավանաբար սուլթանի կոչի ու ֆեթվաների՝ դեղին թղթի մասին է նշել, ինչպես նաև այս պամֆլետի⁵¹ մասին է գրել Գառնիկ Ստեփանյանը «Մղձավանջային օրեր» գրքում: Նա փոխանցում է մի վերապրողի պատմությունն այն մասին, որ օսմանյան բանակ գորակոչվելուց հետո Հասան անունով մի թուրք տասնապետ Երզնկայից Դաբաղխանայում նրան ցույց է տալիս մի «դեղին թուրք»՝ իբրև շէյխ ուլ-իսլամի գաղտնի հրահանգ: Վերապրող հայն այն նկարագրում է իբրև մի ընդարձակ կոչ, որի սկզբում ներկայացվում էր, թե ինչպես են իսլամադավանները տառապում «անհավատների» իշխանության տակ, և այդ պատճառաբանությամբ հրահանգվում է անողոր լինել նրանց նկատմամբ. «... Սոսկումով լսեցի հատկապես հետևյալ բառերը. – Այս սրբազան պատերազմը նվիրական պարտականություն է յուրաքանչյուր մահմեդականի վրա՝ սպանել, անխնա սպանել անհավատներին: Անհավատների արյունը կարող է թափվել առանց պատժի: Բռնեցէք նրանց և սպանեցէք, որտեղ որ հանդիպէք, գաղտնաբար, թե հայտնապես: Դուք անսահման իրավունք ունեք նրանց վրա: Նա ով գոնե մի անհավատ է սպանում, լիովին վարձատրվում է աստծուց: Ո՞վ

48 *Պապունգիրք յուշամարեան Սեբաստիոյ եւ Գասառի հայութեան*, հատոր Ա, կազմեց՝ Պատրիկ Ա. Ն., Պէյրութ, 1974, էջ 727:

49 Նույն տեղում:

50 Նազլեան Յ. Եպս., նշվ. աշխ., էջ 15:

51 Այս եզրակացությանն ենք հանգել նրա կոչի ստորև մեջբերված բովանդակությունից. այն համապատասխանում է միայն պամֆլետ-պարսավագրին, որն արաբերենով է:

կարող է մերժել այդպիսի մի չնչին գործ կատարել, այդպիսի մի մեծ վարձատրությունով»⁵²:

Նրան հավելյալ զգուշացնում են նաև հետևյալը.

«–Արամ, լսե՛լ ես, հայերին կարող են սպանել:

–Ինչու՞:

–Շեյխ Ուլ Իսլամը սրբազան պատերազմ է հայտարարել և կարգադրել է, որ ամեն մի հավատացյալ գոնե մի անհավատ սպանի»⁵³:

Կարող ենք պնդել, որ պարսավագրի նշանակությունն իսկապես մեծ է եղել և՛ հրապարակումից ի վեր՝ ընդհուպ Հայոց ցեղասպանության ծրագրի իրագործումը՝ հաշվի առնելով դրա տարածվածությունը, գաղտնի փոխանցվելը, և՛ Թալեաթի կողմից հղումներ անելը պարսավագրին, ինչպես նաև այն հանգամանքը, որ արդեն 1915 թ. գարնանն այն ԱՄՆ-ում Հալեպի հյուպատոսի կողմից ձեռք բերվելուց հետո ուղարկվել է Հ. Մորգենթաուին, որն իր հուշերում բառացի, մի քանի էջ զբաղեցնող մեջբերումներ է անում այդ պարսավագրից: Արամ Անտոնյանի կողմից պարսավագրին ուշադրություն դարձնելը ևս վկայում է փաստաթղթի կարևորության մասին:

ե) Օսմաներեն և ռուսերեն թոռուցիկը⁵⁴

Թոռուցիկն սկսվում է Ռուսաստանի՝ Ավստրիայի ու Գերմանիայի դեմ պատերազմ հայտարարելու իրողությունը պատմելով և հիմնավորելով, թե ինչու Օսմանյան սուլթան Մեհմեդ V-ն իր հերթին պատերազմ հայտարարեց Ռուսաստանին ու նրա դաշնակիցներին՝ Ֆրանսիային ու Անգլիային: Հետագա նախադասություններում շրջադարձ է կատարվում օսմանյան զորքերի հաջողություններին ու Սև ծովում ռուսական նավատորմի շրջափակմանը, Կովկասում մուսուլմանների հաղթական մուտքին, և թե ինչպես են կովկասյան մուսուլմանները կոչվում իրենց օսմանյան եղբայրների կողմից: Տեքստի հեղինակը, հղում կատարելով Մեհմեդ V-ի՝ սրբազան պատերազմի ֆեթվային, որն ուղղված էր ընդդեմ ռուսների, անգլիացիների ու ֆրանսիացիների, ինչպես նաև մեկ այլ սրբազան պատերազմի կոչի, որտեղ ասվում էր, որ չի կարելի շարժել Ալլահի զայրույթն ու մասնակցել իսլամի բարեկամ երկրների դեմ հայտարարված պատերազմին, ասում է. «Հայտարարում եմ խալիֆի այդ հրամանը և ֆեթվայի բովանդակությունը ռուսական զորքերում գլխավոր մուսուլման սպաներին ու զինվորներին»:

Իբրև եզրափակիչ խոսք՝ նա հրամայում է իսլամադավաններին լքել ռուսական բանակի շարքերը: Նա Ռուսաստանը կոչում է իսլամի, խալիֆաթի և Օսմանյան կայսրության ամենադիմադրիչ և անհաշտ թշնամի ու հորդորում միանալ Ավստրիայի ու Գերմանիայի՝ օսմանյան «խալիֆի» բարեկամ երկրների զորքերին»⁵⁵:

52 Ստեփանյան Գ., *Մղձավանջային օրեր*, Երևան, 1945, էջ 20-21:

53 Նույն տեղում, էջ 22:

54 Ամբողջությամբ տե՛ս *Թարգմանություն 5: Թոռուցիկի ռուսերեն և օսմաներեն դարձերեսները տե՛ս համապատասխանաբար Պատկեր 9 և Պատկեր 10:*

55 Հայերեն թարգմանությունը կատարել ենք թոռուցիկի մի օրինակի ռուսերեն տեքստից, որի ֆոնդային համարը հետևյալն է՝ ՀՅԹԻ-ի ֆոնդեր, Բ-31, թպ 14, ֆի 26:

Օսմանյան ջիհադի կոչից ու ֆերվաններից ազդեցություն կրած այս անստորագիր թռուցիկի բովանդակությունից պարզ է դառնում, որ այն գրվել է Առաջին աշխարհամարտի մեջ Օսմանյան կայսրության մտնելուց հետո, սակայն վկայությունների, հետազոտությունների բացակայության պատճառով մեզ դեռևս անհայտ է մնում թռուցիկի հեղինակը: Այնուամենայնիվ, կարող ենք պնդել, որ նա եղել է բարձր հեղինակություն վայելող մուսուլման առաջնորդ, իսկ թռուցիկի պատրաստման թվականը 1914 թ. աշունն է⁵⁶, հասցեատերերը՝ ռուսական բանակում ծառայող իսլամադավանները: Հետաքրքիր է, որ թռուցիկի մի օրինակ⁵⁷ ինքնաթիռից դուրս է նետվել 1915 թ. փետրվարի 23-ին Սիբիրի 6-րդ բանակային կորպուսի 12-րդ հրետանային ջոկատի դիրքում: Նշված տարեթիվը խիստ կարևոր է՝ հասկանալու համար, որ 1914 թ. նոյեմբերյան ջիհադի կոչերը չմնացին միայն 1914 թ. մեջ, այլ շարունակեցին իրենց կիրառությունն ունենալ 1915 թ. ևս: Այսինքն՝ ջիհադի կոչերը կարևոր ռազմավարական նշանակություն ունեին, տվյալ դեպքում ռուսական բանակի կազմում մարտնչող մուսուլմանների վրա ազդեցություն գործելու նպատակ ունեին⁵⁸:

Ալեքսանդր Աստաշովի գրքի համաձայն՝ եղել են ևս երկու նմանատիպ թռուցիկներ՝ նույնպես կրոնական շեշտադրումներով, որոնցից մեկը ևս նետել են ինքնաթիռից⁵⁹:

Այսպիսով, ջիհադի տարբեր կոչերի տեքստերը մշակվեցին քրիստոնյա-«անհավատների» թիրախավորմամբ, նրանց դեմ պայքարն ու պատերազմը դիտարկվեցին որպես սրբազան կրոնական պարտականություն: Այդ կոչերի տեքստերը միտված էին ապահովելու մուսուլմանների զանգվածային արշավն ընդդեմ թիրախավորված խմբերի:

56 St'u http://propagandahistory.ru/books/Aleksandr-Astashov_Propaganda-na-Russkom-fronte-v-gody-Pervoy-mirovoy-voyny/228 (դիտվել է 28.11.2017) կայքը, որտեղ տեղադրված է Ալեքսանդր Աստաշովի ռուսերեն գիրքը. Астахов А. Б. *Пропганда на Русском фронте в годы Первой мировой войны*. М., 2012: Այստեղ ներկայացված է թռուցիկի ռուսերեն տեքստը, իսկ արխիվային տվյալներից պարզ է դառնում թռուցիկի պատրաստման թվականը:

57 Ֆոնդային համարը՝ РГВИА. Ф. 2110. Оп. 1. Д. 1431. Л. 101 (տե՛ս նույն կայքում):


58 Ռուսական կայսրության զորքերի զբաղեցրած դիրքերում հայտնաբերված են ևս երկու օրինակներ՝ երկուսն էլ 4-րդ բանակի (մեկը՝ Դադատանի 21-րդ հետևակային) դիվիզիայի դիրքում՝ 1914 թ. դեկտեմբերի 30-ին). տե՛ս նույն կայքում:

59 St'u http://propagandahistory.ru/books/Aleksandr-Astashov_Propaganda-na-Russkom-fronte-v-gody-Pervoy-mirovoy-voyny/230 (դիտվել է 28.11.2017) և http://propagandahistory.ru/books/Aleksandr-Astashov_Propaganda-na-Russkom-fronte-v-gody-Pervoy-mirovoy-voyny/229 (դիտվել է 28.11.2017):

ՀԱՎԵԼՎԱԾ

Պատկեր 1. Զախ մասի բնագիրը Մեհմեդ Ռեշադի ընդհանուր շիհադի հայտարարագիր-կոչն է, իսկ աջակողմյանը շեյխ ուլ-խլամի 5 ֆերվաներն են: Այս տեսքով այն թողարկվել է «4 Մուհարրեմ [1]333 թվականին, այն է՝ 22 նոյեմբեր, 1914-ին:

Աղբյուրը՝ «Յեհի Շաֆաթ» թերթի կայք⁶⁰:



60 Աղբյուրը՝ «Յեհի Շաֆաթ» թերթի կայքում տեղադրված լուսանկարը <http://www.yenisafak.com/gundem/osmanliyi-savasa-sokan-fetva-2027939> (դիտվել է 16.11.2017):

Թարգմանություն 1. Սուրբան Մեհմեդ V Ռեշադի ջիհադի հայտարարագրի արևմտահայերեն թարգմանությունը

«Կոչ իսլամներուն»

Կրօնակիցներ, այսօր անհաւարներու հետ մոռանալով իսլամը վերջին անգամ լինելով դէմ դիմի եկած է, դարեւ ի վեր Անգղիո, Ռուսիո միալիմանները ճնշելու կրօնի ազատութիւնը աշխարհէն վերցնելու համար բոլոր ուժով կ'աշխատին: Ֆրանսացիները Ճէզայիրի, Թունիսի, Ֆասի իսլամ կրօնասէրները ու երևելի անձնատուրութիւնները, թնդանօթի բերան կապելով կտոր կտոր ըրին: Միսիլմանի աղջիկներն զարճութեան հաւաքոյթներու մէջ խաղցուցին և իսլամներու պարհին կոխկրեցին: Ռուսները, ռիսերիմ, Կակազը, Թուրքեստանը ու Պարսկաստանը իրար խառնեցին. իսլամի արիւնը երկու հարիւր տարիներէ ի վեր գետի նման հոսեցուցին. ուր որ մի լուսամիտ, իր ազգն ու հայրենիքը սիրող իսլամ մը տեսան ճգմեցին, միլիոնաւոր իսլամներու մոլիւր մարեցին:

Կրօնակիցներ, ձեզմէ կը հարցնեմ. ո՞ր են Կակազի մեծաւորն պէյերը, ուր են Խրիմի համբաւաւոր խաները, ո՞ր գնացին Թուրքեստանի զօրաւոր կառավարութիւնները: Բոլոր ամէնքը Սոսրովի բռնակալ ու արիւնտուր ճիրաններու ներքո ոչնչացան: Ո՞ր են այն հազարաւոր միւսարէները որոնց վրայ օրական հինգ անգամ Աստուծոյ միտքեան մինչև երկինքներ կը բարձրացուէր: Նիւսիական ուխտարեւոյթներ կրօնական դպրանոցներ ո՞ր են. այս ամէնքը մի՞թէ անհաւարներու ուրքերի տակն չէ՞ն Միսիլման եղբայրներ, Անգղիացիները տարեկան մի միլիօն իսլամներու արիւնը կը քանեն, Եգիպտոսի մեծահարուստները այժմ մէյ մէկ մուրացկանի վիճակի հասած են: Հնդկաստանի զորաւոր նապապները (միլիօնաւորներ)՝ Անգղիոյ ձեռաց մէջ մէյ մէկ խաղալիք դարձեր են: Վերջապէս միսիլմանութիւնը ճգմելու, փչացնելու աշխատանքէն մի վայրկեան իսկ ետ չմնացին: Միսիլմանի պանութիւնը այս անգամ անհաւարներու համար ամէնամեծ հաճոյքի կարգը անցաւ: Այս վիճակով մեր Մարգարէի օրէնքը Գուրանը (կրօնագիրքը) ամէն տեղ կը ճնշուի ու կ'անարգուի, միսիլման եղող ամէն անհար ու ժողովուրդը, անհաւարներու այս բռնութիւններ վերացնելու պարտական է. հաւարացեալները այս անօրէններու թելերը կտրելու են:

Ահաւասիկ ակնկալուած օրը հասաւ, մեր տէրն ու իսլամութեան վեհափառ խալիֆան Աստուծոյ հրամանին ու մեր սուրբ Մարգարէի բարոյական ցուցմունքներուն հպարակելով, միսիլմաններուն կրօնական պարերազմ մղելու կը հրահրէ. Իսլամի այս վրանգաւոր օրերուն ամէն մէկ անհար, կյանքով ու սրտացուածքով կրօնական պարերազմի մասնակցելու կը հրամայուի: Այս պարերազմը կրօնական սուրբ պարերազմն է, աշխարհի բոլոր միսիլմանները գերութենէ ու թշուառութիւնէ պիտի ազատուին: Սրբազան Գուրանը պիտի պահպանուի, ուր որ լինենք, այս կրօնական պարերազմին կեանքով ու սրտացուածքով չ'մասնակցողը նզովուած է Բարձրեալ Ածոյ [պարիւ] նշանով է գրված-Շ. Խ.] բարկութեան ու պարիժներին արժանի:

Ահաւասիկ ո՞վ կրօնակիցներ, մեր խալիֆայի բանակները մինչև Կակազը և պարերազմական նաւերը մինչև Սեւաստապոլ հասած, դուք ալ ներքուստ մեր կրօնքի

հիման համաձայն Ճիհադի (կրոնական պատերազմի) սկսեցեք, Ռուսներին ու անոնց օգնող ժողովրդին ոչնչացրեք... իսլամ քանակներուն օգնության փութացեք... Աստուծոյ հրամանն, Մարգարէի կամբը, ու խալիֆայի բաղձանքը կատարեցեք... Ձեզ ու առհասարակ բոլոր միւսիւլմանների համար երջանկութեան դռները բացուած են, մի վախ՛նաք, որովհետեւ Աստուածը մեզ հետ է, որովհետեւ Գուրանը յափրենական է, և դրա համար ալ միւսիւլմանները միշտ յաղթող կը լինեն: Ոչ մի ժամանակ վասն Աստուծոյ, մի մոռնաք որ դուք էք կրոնական պատերազմի վարիչները վազեցեք յափրենական երջանկութիւն վաստակելու օրերը հասած են»⁶¹:

Տեքստի տակ՝ ի համաձայնություն և ի հաստատումն սուլթան-խալիֆի խոսքի՝ առկա են թվով 29 մուսուլման աստվածաբանների ու կրոնական հեղինակությունների ստորագրությունները.

1. Շէյխուլիսլամ (իսլամաց կրօնապետ) եւ միւֆթի (իսլամական օրէնքի վճռատու)՝ Իսայրի (Հայրի), 2. Նախկին շէյխուլիսլամ եւ միւֆթի՝ Զիաուտտին, 3. Նախկին շէյխուլիսլամ եւ միւֆթի՝ Մուսա Քազըմ, 4. Նախկին շէյխուլիսլամ եւ միւֆթի՝ Էսաատ, 5. Էմին Ֆէթվա (շէյխուլիսլամութեան մէջ ֆէթվան գրի առնող պաշտօնեայ)՝ Ալի Հայտար, 6. Գազաքէր (շէրիի դատաւոր)՝ Էօմէր Խուլուսի (Հուլուսի), 7. Գազաքէր՝ Աթաուլլահ էֆէնտիզատէ Մէհմէտ Շիքրի, 8. Գազաքէր՝ Իպրահիմ Էսաատ, 9. Գազաքէր՝ Մուսթաֆա Թէվֆիգ, 10. Գազաքէր՝ Ահմէտ Խուլուսի (Հուլուսի), 11. Գազաքէր՝ Մէհմէտ Էսաատ, 12. Գազաքէր՝ Նէճմէտտին, 13. Գազաքէր՝ Մահմուտ Էսաատ, 14. Նախկին գազաքէր եւ էմին ֆէտվա՝ Թէվֆիգ, 15. Գազաքէր՝ Իսմէթ, 16. Շէյխուլիսլամի խորհրդական՝ Էվլիազատէ Իպրահիմ Էվլիա, 17. Կ.Պոլսոյ շէրիի դատաւոր՝ Մուսթաֆա Բըզա, 18. Փոխանորդ դասի՝ Ալի, 19. Շէրիի քննչական ժողովի նախագահ՝ Հիւսէին Քամիլ, 20. Նորին վսեմութիւն սուլթանի մօտ ա. որոշող (գործակատար)՝ Մէհմէտ Էշրէֆ, 21. Նորին վսեմութիւն սուլթանի մօտ գ. որոշող (գործակատար)՝ Նասուհ Էֆէնտիզատէ Մուսթաֆա Ասըմ, 22. Նորին վսեմութիւն սուլթանի մօտ դ. որոշող (գործակատար)՝ Թուրնուպալը Մէհմէտ Հիլմի, 23. Նորին վսեմութիւն սուլթանի մօտ ե. որոշող (գործակատար)՝ Վէլտան, 24. Նորին վսեմութիւն սուլթանի մօտ գ. որոշող (գործակատար)՝ Այտոսլու Սաատահ, 25. Նորին վսեմութիւն սուլթանի մօտ ը. որոշող (գործակատար)՝ Էյիւպ, 26. Շէյխերու ժողովի նախագահ՝ Մէհմէտ Էսաատ, 27. Սեւագրութեանց նախագահ՝ Ահմէտ Էսաատ, 28. Շէրիի վճռագրերու տնօրէն՝ Ալի, 29. Շէյխուլիսլամութեան դիւանապետ՝ Մարտինի Յուսուֆ Սըտգը Էֆէնտիզատէ Էպ'իւ Ալա⁶²:

61 Արևմտահայերեն «Թուրքիայում կրօնական պատերազմ յայտարարելու առթիւ հրատարակուած պաշտօնական պրօշիւրի թարգմանութիւնը» ընդհանուր վերնագրի ներքո կատարված այս թարգմանությունը տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 149, էջ 2-4, պատճենը՝ ՀՅԺԻ-ի ֆոնդեր, Բ-10, ֆի. 1097-1098: Հմմտ. հետևյալ կայքում տեղադրված ֆրանսերեն ավելի ընդարձակ մի տեքստի հետ. “Proclamation de la Guerre Sainte (Djihad) à Constantinople le 14 (23) novembre 1914”, <http://www.imprescriptible.fr/documents/djihad.htm> (դիտվել է 16.11.2017): Կոչի անգլերեն տարբերակը տե՛ս A “Jihad” Appeal to Moslems: Translation of a Recent Call Distributed to the Millions of Islams, *The Missionary Review of the World*, Vol. 38, New York-London, July, 1915, p. 520:

62 Նշված իսլամական աստվածաբանների անունները նախընտրեցինք թողնել արևմտահայերենով՝

Թարգմանություն 2. Սուլթան Մեհմեդ V-ի հրովարտակի հայերեն թարգմանությունը՝ ուղղված օսմանյան բանակին ու նավատորմին

«ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ՝ ՌԵՂՂՈՒԱԾ ԲԱՆԱԿԻՆ ԵՒ ՆԱՎԱՏՈՐՄԻՆ

«Բանակ եւ նաւատորմ,

Համաւերոյական պարտերազմը ծագելուն վրայ, միշտ յանկարծակի եւ անիրաւ յարձակումներու ենթարկուող մեր հայրենիքին իրաւունքները եւ գոյութիւնը մեր դարանակալ թշնամիներուն հանդէպ ի հարկին պաշտպանել կարենալու համար, ձեզի զէնքի փակ կանչեցի: Այսպէսով զինեալ չէզոքութիւն մը պահպանած ժամանակ, Վոսփորի նեղուցին առջեւ ականներ դնելու նպատակով ճամբայ ելլող ռուս նաւատորմը յանկարծակի կերպով կրակ բացաւ մեր նաւատորմին վրայ, որ նոյն պահուն ռազմափորձերով զբաղած էր: Մինչդէռ կը սպասուէր որ Ռուսիա՝ միջազգային իրաւունքի հակառակ եղող իր այս քայլը ուղղէ, թէ՛ յիշեալ կառավարութիւնը եւ թէ՛ իր դաշնակիցներն եղող Անգլիա եւ Ֆրանսա եր կանչեցին իրենց դեսպանները եւ այսպէսով խզեցին իրենց դիւանագիտական յարաբերութիւնները մեր պետութեան հետ: Անկէ յետոյ ռուսական բանակը մեր արեւելեան սահմանը անցաւ եւ անգլեաֆրանսական միացեալ նաւատորմը Տարսանէլը եւ անգլիական մարտանաւերն ալ Ազապան ուժակոծեցին: Իրարու յաջորդող այսպիսի թշնամական ստոր արարքներու վրայ, սրիպունեցանք բաժնուիլ մեր այնքան փափաքած խաղաղութենէն եւ Գերմանիոյ ու Աւստրիոյ հետ միասին զէնքի փարիլ՝ մեր օրինական իրաւունքները պաշտպանելու համար:

Ռուսիա երեք դարէ ի վեր հողային տեսակէտով մեծամեծ վնասներ հասցուցած է ձեզի եւ պարտերազմով ու հազար տեսակ խաբէրայական միջոցներով աշխարհած է որ ամուլ անցնին վերազարթնումի այն փորձերը, որոնք նպատակ ունէին մեր փառքն ու ուժը աւելցնել:

Անգլիա, Ռուսիա եւ Ֆրանսա, որոնք իրենց բռնակալ ռէժիմին փակ հեծեծող եւ կրօնքով ու սրտով մեր մեծամիառ Խալիֆայութեան հետ կապուած միլիոնաւոր իլաւմ հպարակներ ունին, ոչ մէկ արեւն թշնամական զգացումներ սնուցանելէ եր չկեցան եւ դրդիչ ու պարճառ եղան ձեզի դէմ ուղղուած ամէն տեսակ փորձանքներուն:

Ահաւասիկ այս անգամ մեր բացած նուիրական ճիհաբով ինշալլահ մշտնջենասպէս վերջ մը պիտի փանք այն յարձակումներուն, որոնք շարունակ կ'ուղղուին մեր Խալիֆայութեան փառքին եւ վեհապետական իրաւունքներուն դէմ: Բարձեալն Աստուծոյ օրհնութեամբ եւ Մարգարէին նուիրական օգնութեամբ՝ մեր նաւատորմին Սեյ Ծովու մէջ ու մեր քաջարի բանակին՝ Տարսանէլի նեղուցին, Ազապայի եւ կովկասեան սահմանին վրայ թշնամիին զարկած առաջին հարուածները կ'աւելցնէին մեր այն հաւաքը թէ իրաւունքի համար մեր բացած այս պարտերազմը յաղթութեամբ պիտի պսակուի:

թարգմանական ճշգրտությունը պահպանելու խնդիրը ելնելով: Այս փաստաթղթի բովանդակությունն ընդհանուր գծերով հաղորդելու և նշված 29 մուսուլման աստվածաբանների անունները թարգմանելու համար մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում հալեպահայ օսմանագետ Գայանե Նալբանդյանին:

Այսօր մեր թշնամեաց երկիրներուն ու բանակներուն՝ մեր դաշնակիցներու յաղթական քայլերուն փակ ճգնաժամը մեր այս հաւաքը հասարակօրէն պարագայ մը կը կազմէ:

Դիւցազն զինուորներ, մեր նուիրական կրօնքին եւ մեր սիրելի հայրենիքին սպառնացող թշնամիներուն դէմ մեր բացած այս նուիրական ճիհարի ճանքուն վրայ վայրկեան մը իսկ չի թերանաք կորովի, հասարակամտութեան եւ զոհաբերութեան մէջ: Առիծի պէս գրոհ փութ թշնամիին դէմ, որովհետեւ ձեր յաղթանակէն կախում է թէ՛ մեր պետութեան եւ թէ՛ ֆեթվայի շերիով իմ կողմէ գերագոյն ճիհարի հրապարտած երեք հարիւր միլիոն Իսլամներուն կեանքն ու ապագան: Մզկիթներու, աղօթատեղիներու, եւ ուխտատեղիներու մէջ բարձեային աղերսող երեք հարիւր միլիոն անմեղ ու արդար հաւատացեալներուն սրտերուն աղօթքը ու մաղթանքները ձեզի հեպ են:

Զինուոր զաւակներ, այսօր ձեզի վիճակուած պարտականութիւնը ցայժմ աշխարհիս մէջ ոչ մէկ բանակի վիճակուած է: Այս պարտականութիւնը կատարած արեւննիդ ցոյց փութ որ արժանատի յաջողներն էք այն օսմանեան բանակներուն, որոնք արեւն մը աշխարհը դողացուցին. որպէս զի մեր կրօնքին եւ փրկութեան թշնամին չյանդգնի ոչնչութիւն ընել մեր երկրին մէջ եւ վրդովել հանգիստը Հիճազի նուիրական հողերուն որ իրենց մէջ կը պարունակեն նուիրական ուխտատեղիները եւ աղօթատեղիները, ազդու օրինակով մը ցոյց փութ թշնամիին թէ իր կրօնքը, հայրենիքը, զինուորական պարիսը զէնքով պաշտպանել եւ իր թագաւորին սիրուն մեռնիլը նախընտրել գիպցող օսմանեան բանակ մը եւ նաւարորմ մը գոյութիւն ունի: Քանի որ իրաւունքն ու արդարութիւնը մեր, իսկ անիրաւութիւնն ու անարդարութիւնը թշնամիին կողմն են, փարակոյս չի կա որ այդ թշնամիները ոչնչացնելու համար Բարձեայն Աստուծոյ շնորհքն ու Մարգարէին բարոյական օգնութիւնը մեզի օժանդակ պիտի հանդիսանան:


Վստահ եմ թէ այս պարտազմէն դուրս պիտի գանք իբրեւ փառաւոր եւ զօրաւոր փրկութիւն մը՝ որ դարմանած է անցեալի իր կորուստները: Մի մոռնաք որ այսօրուան պարտազմին մէջ աշխարհիս ամէնէն հզօր եւ փառապանծ երկու բանակներուն հեպ է որ կը գործակցին եւ ընկերակցութիւնը կ'ընեն: Ձեր նահապալները թող յաղթութեան աւերիսը փանին նախորդ նահապալներուն, եւ թող ողջերուն կոխը սուրբ եւ սուրբ կտրուկ ըլլայ:

Մեհմեդ Բեշար

330, հոկտ. 29»⁶³:

63 Այս թվականը տրված է օսմանյան պետության կողմից օգտագործվող մայի թվականով. 330 թվականի հոկտեմբերի 29-ը համապատասխանում է 1914 թ. նոյեմբերի 11-ին:

Պատկեր 2. Օսմանյան շեյխ ուլ-իսլամի՝ 1914 թ. նոյեմբերի 14-ի ջիհադի հինգ ֆեթվաները՝ օսմաներենով: Աղբյուրը՝ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կայք⁶⁴:



64 <http://genocide-museum.am/arm/14.11.2017.php> (դիտվել է 16.11.2017):

Թարգմանություն 3. Օսմանյան շեյխ ուլ-իսլամի հայտարարած ջիհադի հինգ ֆեթվաները

«Եթե մի քանի թշնամիներ միավորվել են ընդդեմ իսլամի, եթե իսլամի երկրները մեջբերվեց հեռացվում են, եթե մուսուլման բնակչությունը կորստիվում կամ գերեվարվում է, և եթե այս դեպքում Փաղիշահը Ղուրանի սուրբ խոսքերին համապատասխան կոչ է անում Սրբազան պարերազմի, արդյո՞ք բոլոր՝ թե՛ ծեր և երիտասարդ, թե՛ հեծելազորային և հեղհակային մուսուլմանների մասնակցությունն այս պարերազմում պարտականություն է: Արդյո՞ք պետք է, որ իսլամական բոլոր երկրների մուսուլմանները շրապեն՝ անձնապես և նյութապես ջաթի (Իմա՝ ջիհադ, սրբազան պարերազմ-Շ. Խ.) մասնակցելու:

Պատասխան. «Այո»:

Ռուսաստանի, Ֆրանսիայի, Անգլիայի և դրանց հետ ծովային կամ ցամաքային սահման ունեցող բոլոր երկրների մուսուլման հպարակներն առնչվեցին Խալիֆաթի դեմ ուղղված հարձակումներին, որոնց նպատակն իսլամը ոչնչացնելն էր: Արդյո՞ք պետք է, որ այդ հպարակները նույնպես մասնակցեն Սրբազան պարերազմին համապատասխան կառավարությունների դեմ, որոնցից նրանք կախյալ վիճակում են:

Պատասխան. «Այո»:

Նրանք, ովքեր այն ժամանակ, երբ բոլոր մուսուլմանները պայքարելու են կոչված, խոստովում են պայքարելուց և հրաժարվում են միանալ Սրբազան պարերազմին, արդյո՞ք ենթակա են Ալլահի խիստ զայրության, մեծ դժբախտությունների և իրենց արժանի պարժի:

Պատասխան. «Այո»:

Եթե նշված երկրների մուսուլման հպարակները զենք վերցնեն իսլամի իշխանության դեմ, արդյո՞ք նրանք աններելի մեղք գործած կլինեն, նույնիսկ այն դեպքում, երբ նրանք պարերազմի մեջ են ներքաշվել իրենց և իրենց ընտանիքների բնաջնջման սպառնալիքների հետևանքով:

Պատասխան. «Այո»:

Մուսուլմանները, որոնք այս պարերազմի ժամանակ Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Սերբիայի, Մոնթենեգրոյի և նրանց հարած երկրների կազմում գործակցում են նրանց՝ ընդդեմ Գերմանիայի և Ավստրիայի՝ Թուրքիայի դաշնակիցների, արդյո՞ք նրանք արժանի են Ալլահի բարկության պարժին՝ լինելով խալիֆայության և իսլամի դեմ ուղղված ֆուսսունների և կորուստների պարճառ:

Պատասխան. «Այո»⁶⁵:

65 Ֆեթվայի տեքստի անգլերենից թարգմանությունը կատարվել է մեր կողմից՝ Peters R., *Jihad in Classical and Modern Islam: A Reader* (Princeton Series on the Middle East). Princeton: Markus Wiener Publishers, 1996, pp. 56-57 գրքից՝ համեմատելով գերմաներեն տեքստի հետ՝ տե՛ս *Großer Bilder-Atlas des Weltkrieges*, München, Bruckmann, 1915, էջ 369:

Պատկեր 3. 1914 թ. նոյեմբերի 14-ին Կոստանդնուպոլսի Ֆաթիհ մզկիթի դիմաց պետական պաշտոնյաների ներկայությամբ և հավաքված ժողովրդի առջև ջիհադի կոչի ընթերցումը:
Աղբյուրը՝ *Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կայք*⁶⁶:



Պատկեր 4. Տեսարան Կոստանդնուպոլսում սրբազան պատերազմի հայտարարության հավաքից: Վիեննայում տպագրված փոստային բացիկ “Sultan Kriegsichauplaß Kriegsfundgebungen in Konstantinopel,”

Աղբյուրը՝ *Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հավաքածու*, Բ-13, թպ 952, ֆի 4469:



66 <http://genocide-museum.am/arm/14.11.2017.php> (նիսովել է 16.11.2017):

Պատկեր 5. Ֆեթվայի թողարկմանը նվիրված բացիկ՝ գերմաներեն հետևյալ գրություններով. «Օգնությունը գալիս է Աստծուց, և մեր հաղթանակը մոտ է», «ՖԵԹՎԱ», «Սուլթանը ջիհադ՝ մեծ, սրբազան պատերազմ է հայտարարում Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի դեմ»:

«Հանուն կարմիր մահիկի»:

Աղբյուրը՝ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հավաքածու, Բ-13, թպ 952, ֆհ 4572:



Թարգմանություն 4. Էնվեր փաշայի կոչն օսմանյան բանակին

«ԷՆՎԵՐ ՓԱՇԱՅԻ ԿՈՉԸ ՕՍՄ. ԲԱՆԱԿԻՆ»

Ընդհանուր հրամանատարի փոխանորդ Էնվեր փաշա հետևյալ շրջաբերականը ուղղած է բանակին.–

Ընկերներ,

Մեր սիրելի ընդհանուր հրամանատար Ն. Խալիֆայական մեծափառության կայսերական իրադրն կը հաղորդեն՝ ձեզ: Օրհնութեամբ Բարձեալն Աստուծոյ, նուիրական օգնութեամբը Մարգարէին եւ բարի աղօթներովը մեր թագաւորին, մեր բանակը թշնամին պիտի ոչնչացնէ: Մինչեւ այսօր ծովու եւ ցամաքի վրայ մեր եղբայր սպաներու ու զօրքերու ցոյց ցուած քաջագործութիւնները ամենամեծ ապացոյցներն են թէ մեր թշնամիները ցիրուցան պիտի ըլլան:

Միայն թէ իւրաքանչիւր սպայ եւ զինուոր մոռնալու չէ՞, որ պարերազմի դաշտը

անձնագրի տեսանկյունից վայր մըն է: Այնպէս ալ մենք աւելի առաջ ներդրող, եւ առանց թշնամիին շրափնելէն ու գնդակներէն վախնալու մինչեւ վերջը հասարակականութիւն ցոյց տուող զօրքը անպարճառ կը շահի յաղթանակը: Պարտութիւնը ցոյց կուտայ որ օտմ. Ջորքէն աւելի հասարակական եւ անձնագրի զօրք գոյութիւն չունի: Ամէնքս մտածելու ենք որ մեր գլուխներուն վրայ մարգարէին եւ անոր ընկերներուն հոգիները կը սափառնին: Մեր փառապանծ նախնիքը մեր գլուխներուն վրայ կանգնած կը դիտեն թէ ի՞նչ պիտի ընենք մենք: Եթէ կ'ուզենք ցոյց տալ որ մենք արժանի զաւակներն ենք անոնց, եթէ կ'ուզենք ապագայ սերունդին անէծքէն ազատիլ, պէտք է որ աշխատինք:

Շղթաներու տակ հեծեծող երեք հարիւր միլիոն մեր իսլամ եւ հին հայրենակիցները մեր յաղթութեան համար մաղթանքներ կը կարդան: Ոչ ոք մահէն չպիտի ազատի, երանի՜ յառաջ ընթացողներուն, երանի՜ կրօնքի ու հայրենիքի սիրուն նահապտակ եղողներուն...

Յառա՛ջ, մի՛շտ յառաջ, որովհետեւ հոն է յաղթութիւն, փառք, նահապտակութիւն, դրախտ, իսկ մահ ու սպողնութիւն երկին կը մնան: Օրհնեալ ըլլան մեր սուրբ ու նուիրական նահապտակներուն հոգիները:


Յաւեր կեցցէ՛ մեր թագաւորը:

Ընդհանուր հրամանաւարի փոխանորդ


ԷՆՎԷՐ»⁶⁷:

67 Խմբագրական, «Ազատամարտ» օրաթերթ, 1914, 31 հոկտեմբեր/13 նոյեմբեր, թիւ 1665, էջ 1:


Պատկեր 6. Ջիհադի պամֆլետ-պարսավագրի տիտղոսաթերթը՝ արաբերենով:
Աղբյուրը՝ ԱՄՆ ազգային արխիվի (Վաշինգտոն) հավաքածու, RG 59, No. 867.00/762:



Պատկեր 7. Ջիհադի պամֆլետ-պարսավագրի անգլերեն թարգմանության տիտղոսաթերթը:
Աղբյուրը՝ ԱՄՆ ազգային արխիվի (Վաշինգտոն) հավաքածու, RG 59, No. 867.00/762:



Պատկեր 8. ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուի՝ Ջեսսի Ջեքսոնի նամակին, արաբերեն պարսակագրին ու դրա անգլերեն թարգմանությանը կից ուղարկված նամակն ԱՄՆ պետ-
քարտուղար Վիլյամ Ջենինգս Բրայանին: Աղբյուրը՝ *ԱՄՆ ազգային արխիվի (Վաշինգտոն)*
հավաքածու, RG 59, No. 867.00/762:



Պատկեր 9. Կովկասի մուսուլմաններին ուղղված թռուցիկի ռուսերեն հատվածը: Աղբյուր՝
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հավաքածու, Բ-31, թա 14, ֆհ 26:



Պատկեր 10. Կովկասի մուսուլմաններին ուղղված թռուցիկի օմաններեն հատվածը: Աղբյուր՝ Հայոց ցեղասպանության թանգարան–ինստիտուտի հավաքածու, Բ-31, թա 14, ֆհ 26:



**Թարգմանություն 5. Կովկասի մուսուլմաններին ուղղված թուցիկի
թարգմանությունը⁶⁸**

«Ռուսիան պատերազմ է հայտարարել Ավստրիային ու Գերմանիային. նա հանգիստ չի թողել նաև Օսմանյան կայսրությանը՝ ներխուժելով մուսուլմանական հողեր: Դա հարկադրեց օսմանցիների կայսերը՝ բոլոր մուսուլմանների խալիֆին՝ Նորին Կայսերական Մեծություն սուլթան Մահմուդ V խանին, մեզ հետ համաձայնեցնելով, պատերազմ հայտարարել Ռուսիայի և նրա դաշնակիցների՝ Ֆրանսիայի ու Անգլիայի դեմ:

Եվ ահա մեր և օսմանյան զորքերն ամենուր ոչնչացնում են մեր ընդհանուր թշնամիներին:

Օսմանյան զորքերը մուրենում են Բաթումին, նրանք ներթափանցել են Կովկասյա լեռներ ուղղություններից: Կովկասի մուսուլման ցեղերը կոչվում են իրենց օսմանյան եղբայրների կողմից: Ռուսական ռազմական նախարարը շրջափակված է Սև ծովի նավահանգիստներում և ի վիճակի չէ այդ տեղերից դուրս գալու:

Սուլթան-խալիֆը ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ է հայտարարել ֆեթվա-ի շերիֆով՝ ընդդեմ ռուսների, անգլիացիների և ֆրանսիացիների:

Մեկ այլ ֆեթվայով ախոյան երկրներում գրավող մուսուլմաններին հիշեցվում է, որ չի կարելի իրենց վրա բերել Աստծու զայրույթը՝ մասնակցելով իսլամի բարեկամների՝ Ավստրիայի ու Գերմանիայի դեմ պայքարին, այսինքն՝ դրանով գործելով իսլամի շահերի դեմ:

Հայտարարում եմ խալիֆի այդ հրամանը և ֆեթվայի բովանդակությունը ռուսական զորքերում գրավող մուսուլման սպաներին ու զինվորներին:

Լքե՛ք ռուսական բանակի՝ իսլամի, խալիֆայթի և Օսմանյան կայսրության այդ ամենատիկերին և անհաշտ թշնամու շարքերը: Միացե՛ք Ավստրիայի ու Գերմանիայի՝ մեր խալիֆի բարեկամների զորքերին, որոնք ձեզ գրկաբաց կընդունեն»:

68 Հայերեն թարգմանությունը կատարել ենք ռուսերեն տեքստից:

**JIHAD AND THE ARMENIAN GENOCIDE:
PROCLAMATIONS, INSTRUCTIONS AND CALLS**

Shushan Khachatryan

SUMMARY

In the hands of the Young Turks religion became a tool to rise up Ottoman Muslim class for war. They urged them to take part in the *Jihad* – the holy war – a sacred duty against the infidel – *giaours*, i. e. the Christians of the Ottoman Empire. To this end, some levers of religious propaganda such as proclamations, calls, leaflets and pamphlets were issued stressing on urgency to protect Islam from “infidels”, designed and published by the Ottoman secular and spiritual elite. Specific religious terminology and subtext was implemented, as a result thereof the massacres of Christians, primarily Armenians, were widely attended by almost all strata of religious and social classes–Muslim clergy, the military, the wealthy and ordinary citizens.

Keywords: *Jihad*, holy war, sultan, sheikh ul-Islam, *fetwa*, pamphlet, calls, leaflet, infidel–*giaours*.

**ДЖИХАД И ГЕНОЦИД АРМЯН:
МАНИФЕСТЫ, ИНСТРУКЦИИ И ПРИЗЫВЫ**

Шушан Хачатрян

РЕЗЮМЕ

Религия стала в руках младотурков инструментом для вовлечения мусульманского населения Османской империи в войну. Они призывали мусульман принять участие в джихаде-священной войне против неверных-гявуров, т.е. против христиан Османской империи. С этой целью использовалась религиозная пропаганда, османской светской и духовной элитой разрабатывались и публиковались манифесты, призывы, листовки и памфлеты, в которых делался акцент на необходимость защитить ислам от «неверующих». Применялась специальная религиозная терминология и подтекст, результатом чего стали массовые убийства христиан, и в первую очередь армян, в которых приняли широкое участие почти все религиозные и социальные слои населения – мусульманское духовенство, военные, богатые и простые граждане.

Ключевые слова: *джихад*, священная война, султан, шейх-уль-ислам, *фетва*, памфлет, призывы, листовка, неверные-гявуры.

ՔՅՈԹՈՒ ԽԱՆ.

ՍԵՔԱՍՏԻԱՅԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՄԻ ԿԱՅԱՆԻ ՇՈՒՐՋ

Ռոբերտ Սուքիասյան

Հոդվածում ներկայացվում են 1915 թ. Սեբաստիա նահանգի տեղահանության ճանապարհին տեղակայված կայաններից մեկում՝ Քյոթու խանում, տեղի ունեցած իրադարձությունները, մասնավորապես կոտորածն ու թալանը: Ուսումնասիրությունը կատարվել է հայկական արխիվներում, տպագիր մամուլում, առանձին գրքերում, հավաքածուներում տեղ գտած ականատես-վերապրողների վկայությունների, երիտթուրքական դատավարությունների համատեքստում ի հայտ եկած փաստաթղթերի, ինչպես նաև թեմային նվիրված ուսումնասիրությունների համեմատական քննության հիման վրա: Հոդվածում քննարկվող նյութը ցույց է տալիս, որ «Ապահովագրական հանձնաժողով» անվանումը կրող խմբի կողմից կայանում իրականացված բռնությունները, կոտորածն ու թալանն իշխանությունների կողմից նախապես ծրագրված, համակարգված և իրենց բնույթով ոչ եզակի դեպքեր էին: Հատուկ ուշադրություն է դարձվել կայանի դեպքերին առնչություն ունեցած օտար ականատեսի, զոհ և ոճրագործ խմբերի միջև եղած կապերին ու դրանց փոխազդեցություններին:

Բանալի բառեր. Հայոց ցեղասպանություն, Սեբաստիա, Քյոթու խան, տեղահանություն, կոտորած, թալան, Ապահովագրական հանձնաժողով, գավառ, վեց վիլայեթներ, օտար ականատես:

Հայոց ցեղասպանության իրականացման էական մաս են կազմել բռնի տեղահանությունները: Տեղահանության ճանապարհին կանխամտածված և հատուկ մտադրությամբ բռնի տեղահանված հայերի խմբերը ենթարկվել են տարատեսակ բռնությունների, այդ թվում՝ կոտորածների և թալանի: Տարագրությունն ընդհանրապես իրականացվում էր հետիոտն կամ շոգեկառքերով: Այս նպատակին էին ծառայում ճանապարհին հիմնված անցումային կայանները, որտեղ տարագրված խմբերը ժամանակավորապես պահվում էին, ապա շարունակում իրենց ճանապարհը դեպի սիրիական անապատ: Կայանները սովորաբար տեղակայված էին մեծ բնակավայրերից հեռու՝ դաշտային կամ լեռնային վայրերում: Այսպիսի կայան էր նաև Քյոթու խանը¹ տեղակայված Սեբաստիայի և Խարբերդի վիլայեթների սահմանագլխին: Քյոթու խանը հանգուցային էր Սեբաստիայի տեղահանությունների երկու հիմնական ճանապարհների համար: Առաջինը սկսվում էր Սեբաստիա քաղաքով և շարունակվում դեպի Թեջիր խան, Մաղարա, Կանգալ, Ալաջա խան, Քյոթու խան՝ շարունակվելով դեպի Հասան Չեղբի, Հեքիմ խան, Հասան Պատրիկ և ձգվելով դեպի հարավ: Սա եղել է Սեբաստիա քաղաքի և շրջակա բնակավայրերի բնակչության տեղահանման հիմնական ճանապարհը: Երկրորդ ճանապարհի հիմնական կետերն անցել են Սամսոն, Մարգվան, Ամասիա, Եվդոկիա, Շարգըշլա՝ հասնելով մինչև Կանգալ և Քյոթու խան,

1 Խան – իջևանատուն:

որտեղից արդեն տարհանման երկու ճանապարհները միավորվել են և շարունակվել դեպի հարավ: Բոլոր վերոնշյալ կայաններն այս կամ այն կերպով նույնպես եղել են թալանի և կոտորածի կենտրոններ:

Ստորև վերլուծվել են Քյոթու խան կայանի գործունեությունն ապահովող խմբի կազմը, այնտեղ տեղ գտած թալանի և կոտորածների տրամաբանությունը՝ դրանց հաջորդականությունը, հիմնական մեթոդները և նպատակները: Իրողությունների վերաբերյալ առավել ընդհանրական պատկերացում կազմելու համար գուգահեռներ են անցկացվել նմանատիպ իրադարձությունների միջև հայկական և օտար աղբյուրների համադրությամբ ներկայացվել է օտար ականատեսի ազդեցությունն ու գործոնը ցեղասպանական գործողությունների վրա:

Աղբյուրներ

Տեղահանության իրադարձությունների հիմնական ականատեսը վերապրողն է, նա միակ սուբյեկտն է, որը կարող է մանրամասնորեն վկայել գործընթացում սկզբից մինչև ավարտը տեղ գտած իրադարձությունների մասին, քանի որ միայն նա է, որ անցել է տեղահանության ողջ ճանապարհը: Անմիջական ոճրագործները գործընթացի միայն հատվածական իրադարձողներն ու ականատեսներն են: Ոչ անմիջական ոճրագործները՝ ընդհանուր գործընթացի կազմակերպիչները, գիտեն միայն իրենց կողմից արձակված հրամանների, դրանցով պայմանավորված հանցանքների տրամաբանությունն ու ակնկալվող արդյունքները: Այսպիսով, կայանում տեղ գտած իրադարձությունները բացահայտող բացառիկ աղբյուրներ են վերապրողների հուշերը, որոնք ստեղծվել են բուն գործընթացների գուգահեռ և անմիջապես դրանց ավարտից հետո կամ հետագայում: Աշխատանքը լայնորեն հիմնվում է հայկական սկզբնաղբյուրների վրա: Հիմնարար նշանակություն ունեն Նուբարյան գրադարանի Սեբաստիա թղթածրարում պահվող փաստաթղթերը², Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ) Համասեբաստահայերի վերաշինաց միության³ և Գևորգ Մեսրոպի անձնական ֆոնդի⁴, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում պահվող հուշագրությունները⁵: Որպես աղբյուր օգտագործվում են նաև Սեբաստիայի տարբեր

2 http://www.bnulibrary.org/images/archives/fonds_andonian_new_pdf/Andonian49_Sebastia.pdf, BNU/Fonds A. Andonian, - *Matériaux pour l'histoire du génocide, Dossier 49 Massacres et déportations à Sébaste*, «Ամբաստանագիր-դեղնկազիր Սեբաստիոյ կուսակալութեան», էջ 0177-0190 հրատարակված (աշխատասիրությամբ Վ. Լ. (Վարդան Լեոն), *Հայկազեան հայագիտական հանդես* (Պէրյոթ), համար ԺԵ, 1995, էջ 499-519): Գաբրիելեան Կարապետ, *Տեղեկագիր Սեբաստիոյ և շրջակայից հայոց տարագրութեան եւ քննաշնչումի*, էջ 0051-0112, 0022-0049, *Սվազ-Շար-Գըշլա*, էջ 0127-0128, Զառացյան Հայկանույշ, *Սրվազ*, էջ 0113-0116:

3 Օհաննէս Ալեքսանդրեանի հուշերը 1915 թ. եղեռնի մասին (ձեռագիր), ՀԱԱ ֆ. 439, ց. 3, գ. 115:

4 Հայկազուն, *Սեբաստիայի եղեռնագործությունը 1915-ի ջարդերու արդեն* (ձեռագիր), ՀԱԱ ֆ. 1388, ց. 1, գ. 77:

5 Լուսարարյան Սեպուհ, *Մի կյանքի պատմություն*, պատճեն, ՀՅԺԻ, Ձեռագիր հուշագրությունների բաժին, գ. 127, գ. 128, գ. 129:

քնակավայրերի շուրջ ստեղծված հուշամատյանի ժանրի գրքերից⁶, առանձին հուշերի հավաքածուներից⁷ և գիտական հանդեսներից⁸ քաղված նյութեր: Գրքային աղբյուրներից, անշուշտ, կենտրոնականը Կարապետ Գաբրիկյանի «Եղեռնապատում» է, հեղինակը ոչ միայն հայտնում է իր տեսածների մասին, այլև ամփոփ ներկայացնում է ուրիշ վերապրողների պատմածները և վերլուծում Սեբաստիայի կոտորածների ցեղասպանական ողջ ընթացքը: Գրքային ձևաչափով իրադարձությունների մանրամասն նկարագրություն կարելի է գտնել Փայլածու Ա. Գաբրուսյանի «Ցաւակը»⁹ հատորի մեջ: Հետազոտական են նաև սփյուռքյան տպագիր մամուլում՝ «Արև»¹⁰ (Ալեքսանդրիա), «Երիտասարդ Հայաստան»¹¹ (Զիկագո), «Հայրենիք»¹² (Բոստոն) տեղ գտած նյութերը: Ուսումնասիրության պատկերն ամբողջացրել ենք երիտթուրքական դատավարությունների համատեքստում ի հայտ եկած նյութերով, որոնք կարելի է գտնել հայր Գրիգոր Կերկերյանի արխիվում (թվայնացված տարբերակով¹³): Armenian Film Foundation-ի հավաքածուից ուշագրավ տեղեկություններ է հաղորդում միսիոներուի Մերի Գրեֆեմի զարմիկն իր տեսածայնագրված վկայության մեջ¹⁴: Հետազոտության համար օգտագործվել են վերապրողների հուշերի վրա հիմնվող ուսումնասիրությունները, ինչպիսիք են Սեպուհ Ակունիի «Միլիոն մը հայերու ջարդի ամբողջական պատմությունը (1914-1918)»¹⁵ և Ռայմոնդ Գևորգյանի «Հայոց ցեղասպանություն. ամբողջական պատմություն»¹⁶ աշխատությունները:

6 Համբարձումյան Վահան, *Գիւղաշխարհ. Պարմական, ազգագրական ուսումնասիրութիւն*, Փարիզ, տպարան «Տարօն», 1927: Գաբրիել Սիմոնեան, *Յուշամարեան պոնտական Ամասիոյ, Վենետիկ, ա.հ, 1966: Զարդարեան Երուանդ, Պարմագիրք Տիվրիկ քաղաքի*, Պէյրոթ, Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան, 1972:

7 ՀՃՈԻ հիմնադրամի գիտական ուսումնասիրություններ, հատոր 14, *Հուշագրական ժառանգություն*, Երևան, «Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ», 2011:

8 Քոսեան Յակոբ, «Գանտիտա Գույումճեան. Աքսորի ճամբան (1915)», աշխատասիրութեամբ Հ. Պօղոս Վրդ. Գոճանեանի, Մերութան Կարապետեանի, *Հանդէս անսօրեայ* (Վիեննա-Երեւան), 2015, թիւ 1-12, էջ 345-483:

9 Գաբրուսեան Փայլածու, *Ցաւակ*, Նիւ Եօրք, «Արմենիա» տպարան, 1922:

10 Կարապետեան Էլիզա, «Զուլումի երկրէն: Սեբաստացի աղջկան մը նամակը», «Արեւ» թերթ (Ադեքսանդրիա), 1917, թիւ 94 (404) - թիւ 97 (407):

11 Գաբրիկեան Կարապետ, *Եղեռնապատում Փոքուն Հայոց եւ Նորին Մեծի Մայրաքաղաքին Սեբաստիոյ (Գուժկան Սեբաստիոյ)*, «Երիտասարդ Հայաստան» թերթ (Զիքակո), սկսված 1919, թիւ 54, նոյեմբեր 8, մինչև 1921, թիւ 48, օգոստոս 22:

12 Շահէն Տէրտէրեան, «Արիւնի ճամբէս. Դէպի Գողգոթան», «Հայրենիք» ամսագիր (Պոսթըն), սկսված՝ 1950 թիւ 11 (298) մինչև 1953 թիւ 1 (323):

13 <http://commons.clarku.edu/guerguerian-archive/>:

14 George Partridge, <http://vhaonline.usc.edu/viewingPage?testimonyID=56557&returnIndex=0#>:

15 Ակունի Սեպուհ, *Միլիոն մը հայերու ջարդի ամբողջական պատմութիւնը (1914-1918)*, Կ.Պոլիս, «Հայաստան» գրատան հրատ., 1921:

16 Kévorkian Raymond, *The Armenian Genocide. A Complete history*. London, New York, I.B. TAURIS, 2011:

Ապահովագրական հանձնախումբը

Սեբաստիայի առաջին քարավանի մեկնման օրը՝ հունիսի 22-ի առավոտյան, Քյոթու խան է ուղարկվում չեթենների¹⁷ մի խումբ, որը կրում էր «Էմնիթ գոմիսիոնիէ»¹⁸ անվանումը¹⁹։ Հանձնախումբը ղեկավարում էր Էմիր բեկի տղան՝ չեթեբաշի²⁰ Համիդ բեկը, որը Սեբաստիա վիլայեթի կուսակալ Մուամմերի յավերն²¹ էր, հանձնախմբի անդամ էին նաև «արունկզակ դասակարգեն խումբ մը չեթաներ»՝ Խալիս բեկը, Բաջանաղ զադե Էդիեմ բեկը, Թյությունջի հաջի Խալիլը, Քյությունկի տղա Հյուսեյնը և այլք²²։

Հայերի կասկածները փարատելու նպատակով Մուամմերը հանձնախմբի ուղարկվելը ներկայացնում է իբրև իր և Էմիր բեկի միջև հայերին տարագրելու խնդրին առնչվող տարաձայնություն, ինչի արդյունքում Էմիր բեկն իր տղային՝ Համիդին, մի խումբ չերքեզների գլուխ անցած, ուղարկում է հայերին տարագրության ճանապարհից հետ դարձնելու, որին ժողովուրդը հավատում է²³։ Արդեն տեղում հանձնախմբի գործունեությունը ներկայացվում էր որպես կառավարության կողմից տեղահանվող հայերի անվտանգությունն ապահովող նախաձեռնություն²⁴։ Նշվում էր՝ իբրև կառավարության կողմից ձեռնարկված միջոցներն անբավարար էին՝ ապահովելու խմբերի անվտանգ տեղահանությունը և քրդերի կողմից թալանի և խոշտանգումների կանխարգելումը²⁵։ Ուստի նշված խնդրի լուծումն ապահովելու համար կառավարությունն ուղարկել էր այդ հանձնախումբը²⁶։

Համառոտակի ներկայացնենք խմբի անդամների կենսագրությունները և նախկինում ունեցած առնչությունները հայկական կոտորածներին։

Յորյուկջյուլի Իբրահիմ կամ Իբր²⁷՝ հանձնախմբի նախագահ²⁸։

Էմիր բեկի տղա Համիդ չեթեապետն ուներ հայկական, թուրքական և չերքեզական արմատներ²⁹։ Եղել է Էրզրումի վիլայեթի Երզնկա գավառակի Կամարիկ

17 Չեթե – հրոսակ։

18 Էմնիթ գոմիսիոնիէ – անվտանգության հանձնախումբ։

19 Գաբիկեան Կարապետ, *Եղեռնապատում, մաս Դ*, 24, «Երիտասարդ Հայաստան», 1920, 6 մարտ, թիւ 88։

20 Չեթե բաշի – հրոսակապետ։

21 Յավեր – թիկնապահ։ Մուամմերը Սեբաստիայի նահանգապետն էր։

22 Գաբիկեան Կարապետ, *Եղեռնապատում, մաս Դ*, 24, «Երիտասարդ Հայաստան», 1920, 6 մարտ, թիւ 88։

23 Նույն տեղում։

24 Ակունի Սեպուհ, *նշվ. աշխ.*, էջ 94։

25 Տերտրեան Շահէն, *նշվ. աշխ.*, «Հայրենիք», 1951, թիւ 4 (303), էջ 64։

26 Գաբիկեան Կարապետ, *Եղեռնապատում. Փոքուն հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ*, Պոսթըն, «Հայրենիք», 1924, էջ 140։

27 Նույն տեղում, էջ 142։ Ակունի Սեպուհ, *նշվ. աշխ.*, էջ 94։

28 Գաբիկեան Կարապետ, *Եղեռնապատում*, 1924, էջ 140։

29 Նույն տեղում, էջ 142։ Ակունի Սեպուհ, *նշվ. աշխ.*, էջ 94։

գյուղի գյուղապետ³⁰, Սեբաստիայի վիլայեթի կուսակալի թիկնապահ և մասնակցել է Սահակ վարդապետ Օդաբաշյանի քաղաքական սպանությանը³¹: Ըստ 1915 թ. տվյալների՝ դեռևս գտնվել է Սեբաստիայում կամ Ուզուն Յայլայում՝ չերքեզների մոտ³²:

Էմին քեչյա-գադե Խալիս բեկը՝ եկած Կովկասից, չեթե³³, «չեթե րեխի»³⁴ «Թեշքիլաթ Մահսուտի» մյուդիր, Իթթիհադի «րեխա»³⁵, ցեղասպանությունից հետո գտնվել է Սեբաստիայում: Հանցակից է 1914 թվականի դեկտեմբերի 18/31-ին Սահակ վարդապետ Օդաբաշյանի և նրա կառապան՝ զառացի Առաքել Կտրիճյանի սպանություններին³⁶: Թոնուս-Շար-Գըշլայի ճանապարհով անցնող Սամսունի, Ամասիայի, Մարզվանի, Թոքատի քարավանների կողոպտիչ, տղամարդկանց ջարդարար, աղջիկ-հարսների զանգվածային վաճառող³⁷:

Բաջանաղ գադե Էդհեմ բեկը (չեթե)՝ Իբնե (իզացյալ-պոռնկացյալ³⁸) մականունով, եղել է Սեբաստիա քաղաքի քաղաքապետարանի պաշտոնյա, ջարդերի կազմակերպիչ, Բաջանաղ գադե Համդիի եղբորորդին էր³⁹:

Թյությունջի հաջի Խալիլ (չեթե)⁴⁰, հանձնախմբում կատարել է գրագրի պաշտոն⁴¹:

Քյուրուկ-Մեհմեդի որդի Հյուսեյնը (չեթե)⁴² սերտ հարաբերություններ է ունեցել հայերի հետ, տիրապետել է հայոց լեզվին⁴³: Մուամմերը Հյուսեյնի հոր 200 ոսկի պարտքի դիմաց առաջարկել է դառնալ չեթե⁴⁴: Ուներ քաղաքական հակումներ, սուլթան Աբդուլ Համիդին պախարակողներից էր, իթթիհադական⁴⁵: Եղել է Սահակ վարդապետ Օդաբաշյանի սպանության⁴⁶ մասնակիցներից, վարդապետի սպանու-

30 Guerguerian K., “Military 08” (2018). Military Tribunals / Muhtelif Konular. 8. <https://commons.clarku.edu/military/8>:

31 Հայկազուն, նշվ. աշխ., էջ 10-11:

32 Նույն տեղում:

33 Ակունի Սեպուհ, նշվ. աշխ., էջ 94:

34 Րեխի – պետ:

35 Գաբիկեան Կարապետ, *Եղեռնապարտում*, 1924, էջ 592:

36 Հայկազուն, նշվ. աշխ., էջ 10-11:

37 Գաբիկեան Կարապետ, *Եղեռնապարտում*, 1924, էջ 142:

38 Գաբիկեան Կարապետ, *Եղեռնապարտում*, մաս Դ, 31, «Երիտասարդ Հայաստան», 1920, մարտ 31, թիվ 95: Ակունի Սեպուհ, *նշվ. աշխ.*, էջ 94:

39 Հայկազուն, նշվ. աշխ., էջ 2:

40 Գաբիկեան Կարապետ, *Եղեռնապարտում*, 1924, էջ 142: Ակունի Սեպուհ, նշվ. աշխ., էջ 94:

41 Գաբիկեան Կարապետ, *Եղեռնապարտում*, 1924, էջ 142:

42 Հայկազուն, նշվ. աշխ., էջ 11: Ակունի Սեպուհ, *նշվ. աշխ.*, էջ 94:

43 Գաբիկեան Կարապետ, *Եղեռնապարտում*, 1924, էջ 160:

44 Նույն տեղում:

45 Նույն տեղում:

46 Նույն տեղում, էջ 160:

թյունից հետո՝ Ալիսի հովտի գյուղերի ջարդարար⁴⁷, թուրք զինվորների թունավորման սադրանքի⁴⁸ հեղինակներից: Քյոթու խանի գործողություններից կարճ ժամանակ անց ազատվել է բանտից: 1919-ի ամռանը հայտարարվել է սպանված⁴⁹:

Ահմեդ Չավուշ⁵⁰ հանձնախմբի անդամ:

Սահակ վարդապետ Օդաբաշյանը համաձայնություն էր հայտնել առաջնորդելու Երզնկայի թեմը և Պոլսո պատրիարքարանի կողմից նշանակվել էր այնտեղ ծառայության⁵¹: Աղվանիս գյուղի շրջակայքում Սերաստիայի կուսակալ Մուամմերի և կայսրության ներքին գործերի նախարար Թալեաթի գաղտնի հեռագրական նամակագրությամբ որոշում է կայացվել սպանել Սահակ վարդապետ Օդաբաշյանին՝ նրան կասկածելով հեղափոխական գործունեության մեջ⁵²: Հետագայում նշանակված հետաքննությունից պարզ դարձավ, որ վարդապետի իրերից վերցվել էին միայն փաստաթղթերը, իսկ հարստությունները թողնվել էին տեղում, ինչը ևս մեկ անգամ հաստատում է սպանության քաղաքական բնույթը:

Քարավանի դիմավորումը

Ինչպես նշվեց նախաբանում, Սերաստիայի տարբեր բնակավայրերից տարագրված գրեթե բոլոր խմբերն իրենց ուղեկցող ժանդարմների կողմից ուղղորդվել են դեպի Քյոթու խան՝ Սերաստիայի տեղահանության ճանապարհի հանգուցային կետերից մեկի միջով անցնելու: Կայսրության կողմից խմբերին տեղահանության ճանապարհին ուղեկցելու համար յուրաքանչյուր քարավանի կցվում էին ժանդարմներ: Քյոթու խանի հետ կապված թալանի և բռնությունների շարքը սկսվում էր նույնիսկ մինչև կայանին հասնելը. ժանդարմները սպառնում էին առջևում գտնվող սպանդարանով կամ 2-10 ոսկու⁵³ դիմաց առաջարկում պաշտպանություն: Քյոթու խանում, վերոնշյալ հանձնախմբից բացի, տեղակայված էին մեծ քանակությամբ չեթեններ՝ քրդեր՝ զինված բիրերով, կացիններով և դանակներով⁵⁴, որոնք կապված էին *Թեշվիլաթ-ը մահսուսե*-ի հետ և ցեղասպանության իրականացման մեխանիզմի կարևոր մասն էին:

47 Նույն տեղում:

48 Նույն տեղում, էջ 592: Kévorkian Raymond, նշվ. աշխ., էջ 431-432:

49 Լուսարարյան Սեպուհ, նշվ. աշխ., էջ 162: Գաբիկեան Կարապետ, *Եղեռնապայտում*, 1924, էջ 592:

50 Լուսարարյան Սեպուհ, նշվ. աշխ., էջ 159:

51 Գաբիկեան Կարապետ, *Եղեռնապայտում*, 1924, էջ 45:

52 Սպանության մանրամասն պատմությունը հիմնված օսմանյան գաղտնի հեռագրերի վրա տե՛ս Գրիգոր Գերգերյանի անտիպ հոդվածում՝ Guerguerian, Krikor, “41 Courts Martial - Telegrams” (2018). *Adana Confiscation (Courts Martial)*. 38. https://commons.clarku.edu/adana_court_martial/38:

53 Լուսարարյան Սեպուհ, նշվ. աշխ., էջ 159:

54 Սիմոնեան Գաբրիել, նշվ. աշխ., էջ 669:

Քյոթու խանի շրջակայք հասնելուն պես հանձնախմբից որևէ մեկը (Խալիս⁵⁵, Համիդ⁵⁶, Հյուսեյն⁵⁷) կամ մի խումբ⁵⁸ դիմավորում էր մոտեցող քարավանը՝ ներկայացնելով հանձնախմբի գործառույթները: Հանձնախմբի մոտեցումները, ժամանակի և տարիանվոդների կազմով պայմանավորված, փոփոխվում էին: Սկզբնական շրջանում, երբ տարագրվում էին Սեբաստիա քաղաքի հարուստ և մտավորական խավերը, փորձեր էին կատարվում՝ ներկայացնելու տարագրության քաղաքական հիմնավորումներ, ցուցաբերվում էր փոքրիշատե սիրալիի վերաբերմունք: Այսպես, առաջին քարավաններից մեկը դիմավորելիս Էմիր բեկի տղա Համիդը սիրալիի բարևել է իրեն ծանոթ հայերին և փորձել է ներկայացնել տեղահանության քաղաքական հիմնավորումները՝ ափսոսանք հայտնելով, որ հայերը «դավաճանել են Օսմանյան կայսրությանը», ու չնայած դրան՝ «բարեխնամ» կառավարությունը փորձել է ապահովել տեղահանվողների անվտանգությունը⁵⁹:

Գույքի հանձնման հրահանգը տալուց հետո ճշտում էին, թե արդյոք տարագրյալները համաձայն են իրենց գույքերը տալ⁶⁰: Հանձնումից հետո քարավանի ծանոթ հայերին մատուցվել է պատշաճ ճաշ⁶¹: Հաջորդող քարավանների հանդեպ վերաբերմունքը վատթարացել է: Ըստ մի վկայության՝ 20 քրդեր կրակով սպառնացել են քարավանի անդամներին և անուն-ազգանունները գրանցելուց հետո առանձնացրել են 10-11 տարեկան երեխաներին, այնուհետև 5 ոսկի փրկագին պահանջել յուրաքանչյուր տղայի համար՝ սպառնալով մայրերի աչքի առջև սպանել, իսկ զավակ չունեցողներին ուղղակիորեն կողոպտել են⁶²:

Քարավանը կայանին մոտենալիս տեղահանվածների կառքերը մի քանի շարքով շարել են իրար հետևից⁶³, հաշվել և ցուցակագրել մարդկանց ու սայլերը⁶⁴: Հանձնախումբը տարագրվածներին դիմավորել է զինված, փամփշտակալները ձգած, հարձակվել է սայլերի վրա՝ սարսափի մթնոլորտ տարածելով: Խանի դիմաց վառված է եղել խարույկ՝ նախորդ քարավաններից սպանվածների դիակների հոտը չեզոքացնելու համար⁶⁵:

55 Գաբրիելեան Կարապետ, *Եղեռնապատում*, 1924, էջ 149: *Հուշագրական ժառանգություն*, էջ 190:

56 Գաբրիելեան Կարապետ, *Եղեռնապատում*, 1924, էջ 139-140: Ալեքսանդրեան Օհաննես, նշվ. աշխ., էջ 20 շրջ.: Լուսարարյան Սեպուհ, նշվ. աշխ., էջ 160:

57 Գաբրիելեան Կարապետ, *Եղեռնապատում*, 1924, էջ 138:

58 Համբարձումյան Վահան, նշվ. աշխ., էջ 222:

59 Լուսարարյան Սեպուհ, նշվ. աշխ., էջ 160-161:

60 Նույն տեղում:

61 Նույն տեղում:

62 Կարապետեան Էլիզա, *Զուլումի երկրէն: Սեբաստացի աղջկան մը նամակը*, «Արեւ» (Աղեքսանդրիա) 1917, Գ. տարի, թ. 94 (404), դեկտեմբեր 14, էջ 1-2:

63 *Հուշագրական ժառանգություն*, էջ 190:

64 Համբարձումյան Վահան, նշվ. աշխ., էջ 222: Լուսարարյան Սեպուհ, նշվ. աշխ., էջ 159:

65 Գաբրիելեան Կարապետ, *Եղեռնապատում*, 1924, էջ 139:

Գործառնությունների ներկայացման հայտարարությունը

Սկզբնական շրջանում հանձնախմբի գործառնությունների և դրանից ենթադրվող գործողությունների մասին հայտարարությունը հաղորդելու համար տղամարդիկ կանչվում էին ըստ սայլերի կայանման ժամանակ կազմված ցուցակի⁶⁶: Տեղահանվածներին ունեցվածքից զրկելու զանազան տարբերակներ էին կիրառվում: Ըստ դրանցից մեկի՝ ուղեկցող ժանդարմները մտնում էին քարավանի մեջ, հավաքում տղամարդկանց և տանում հանձնախմբի մոտ⁶⁷: Այլ դեպքում մունետիկը գոռալով հաղորդում էր, որ տասը տարեկանից բարձր բոլոր տղամարդիկ պետք է հավաքվեին խանի դիմաց՝ կարևոր հայտարարություն լսելու, այլապես սպառնում էին գնդակահարությամբ⁶⁸: Ըստ որոշ վկայությունների՝ գլխավոր չեթեի հրամանով տղամարդկանց բանտարկում էին վրանի մոտ գտնվող փսոռում կամ խանի ուրիշ հատվածում՝ հանձնախմբի զինված անդամների հսկողությամբ՝ հայտարարության բովանդակությանը ծանոթանալու համար⁶⁹: Կառավարության հրամանով Մալաթիայի ճանապարհին քրդական կողոպուտից խուսափելու համար նրանք պետք է առգրավեին քարավանի անդամների մոտ գտնվող գումարները, ոսկյա, արծաթյա զարդերը և այլ թանկարժեք առարկաներ⁷⁰: Տղամարդկանց հանձնարարվում էր գնալ և թանկարժեք իրերը հանձնելու մասին հայտնել իրենց մայրերին, քույրերին, նաև այն ընտանիքներին, որոնցում տղամարդ չկար⁷¹: Հայտնի են իրերի վերադարձման խոստումների մի քանի տարբերակներ: Դրանցից մեկն այն էր, որ գրավված իրերը պետք է ցուցակագրվեին և Մալաթիա հասնելուն պես՝ վտանգն անցնելուց հետո⁷², նույնությամբ վերադարձվեին⁷³: Ըստ մի վկայության՝ առգրավված իրերը առանձին թղթատարով պետք է ուղարկվեին Մալաթիա⁷⁴ կամ փոստով ուղարկվեին Սեբաստիայից⁷⁵: Մեկ այլ վկայության համաձայն՝ Խալիս բեկը տղամարդկանց հավաքելուց հետո ներկայացնում է իր մոտ գտնվող մի ֆերման (հրամանագիր)՝ հայտնելով, որ գործողությունը կատարվել է սուլթանի հրամանով, և ումից ինչ չափով առգրավում կատարվել է, պետք է ամեն ամիս հավասարաչափ

66 Լուսարարյան Սեպուհ, նշվ. աշխ., էջ 162:

67 Համբարձումյան Վահան, նշվ. աշխ., էջ 222:

68 Ալեքսանդրեան Օհանես, նշվ. աշխ., էջ 20 շրջ:

69 BNU/Fonds A. Andonian - *Massacres et déportations à Sébaste, Սվազ-Շար-Գըշա*, էջ 0127: ՀԱԱ ֆ. 439, ց. 3, գ. 115, էջ 22 շրջ: Սիմոնեան Գ., նշվ. աշխ., էջ 669:

70 Սիմոնեան Գաբրիել, նշվ. աշխ., էջ 669:

71 Գաբրիելյան Կարապետ, *Եղեռնասպարում*, էջ 140: BNU/Fonds A. Andonian, *Massacres et déportations à Sébaste*, Զառացյան Հայկանույշ, *Սվազ*, էջ 0114 շրջ.:

72 Տերտրեան Շահէն, նշվ. աշխ., «Հայրենիք» ամսագիր, 1951, թիւ 4 (303), ապրիլ, 1951, էջ 64:

73 Զառացյան Հայկանույշ, *նույն տեղում*, էջ 0114: Լ. Վ., նշվ. աշխ., էջ 502: Լուսարարյան Սեպուհ, նշվ. աշխ., էջ 161: Ակունի Սեպուհ, նշվ. աշխ., էջ 94:

74 Գաբտանեան Փայլածու, նշվ. աշխ., էջ 61:

75 Ալեքսանդրեան Օհանես, նշվ. աշխ.:

հետ բաշխվի⁷⁶: Հայտնի է փողերի վերադարձի մեկ այլ տարբերակ ևս, ըստ որի՝ առգրավված գումարը պետք է վերադարձվեր սննդի տեսքով⁷⁷, կամ առգրավված գումարը կվերադարձնեին, երբ քարավանը վերադառնար⁷⁸: Միևնույն ժամանակ սպառնում էին, որ եթե հանձնումից հետո խուզարկության արդյունքում հայտնաբերվեր հարստություն, այն թաքցնողները կսպանվեին⁷⁹: Իսկ քարավանի այն անդամներին, որոնց մոտ ունեցվածք չէր հայտնաբերվում, միևնույն է, սպասվում էր նույն ճակատագիրը⁸⁰: Բոլոր աղբյուրները հայտնում են, որ նրանք այդչափ միամիտ չէին և չէին վստահում հարստությունների վերադարձման խոստմանը, սակայն այնչափ բարոյալքված էին, որ ուրիշ ելք չկար⁸¹: Քարավաններին գույքը հանձնելու համար գործադրվում էր նաև վախի և շանտաժի սխեմա՝ ընդհուպ մինչև բեմականացում: Քարավաններից մեկին (որի մեջ էր Կարապետ Գաբիկյանը) գույքի հանձնման լուրը հայտնելուց անմիջապես հետո խանի հետևից դուրս է գալիս մի ժանդարմ՝ տեղեկացնելով, որ առավոտ խանից դուրս բերված սամսոնցիների քարավանի վրա քրդերի կողմից կատարվել է հարձակում, տեղի են ունեցել թալան և սպանություններ⁸², ինչից հետո հանձնախմբի անդամ Համիդն իրեն շրջապատող չեթեներին հրամայել է խմբին պաշտպանելու համար արագ ձիավորներ հասցնել քարավանի մոտ⁸³: Այս բեմադրությունը նախատեսված էր տարագրյալներին խրախուսելու համար՝ ավելի մեծ ծավալներով հանձնելու գույքը: Իթթիհադի ներկայացուցիչները, այնուամենայնիվ, պետք է պահպանեին պետական ծառայողների որոշակի պահելաձև, ինչով և բացատրվում են կայանում տեղ գտած ձևական գործողությունները⁸⁴: Հրահանգը հայտնելուց հետո ժամանակ էր տրվում գույքը բերելու և հանձնելու խանի դիմաց տեղակայված տաղավարների վրա: Ոմանք վախենալով ամբողջ ունեցածը հանձնում էին, ոմանք էլ՝ կեսը կամ քառորդը պահում⁸⁵: Կանայք և աղջիկները կույ էին տալիս ոսկիները, թաքցնում իրենց կամ մանուկների մոտ, հողի ու կառքերի տակ⁸⁶ կամ խանի շրջակայքում⁸⁷: Տեսնելով հանձնվող հարստությունների ծավալները՝ քարավաններին ուղեկցող ժանդարմները, որոնք «անվճար» էին կատարում իրենց ծառայությունը, զայրանում էին և նույնպես մասնակցում

76 Հուշագրական ժառանգություն, էջ 190:

77 Նույն տեղում, էջ 212:

78 Համբարձումյան Վահան, նշվ. աշխ., էջ 222:

79 Զառացյան Հայկանույշ, նշվ. աշխ., էջ 0114: Հուշագրական ժառանգություն, էջ 191: Համբարձումյան Վահան, նշվ. աշխ., էջ 222: Լուսարարյան Սեպուհ, նշվ. աշխ., էջ 162:

80 Զառացյան Հայկանույշ, նշվ. աշխ., էջ 0114:

81 Գաբտանեան Փայլածու, նշվ. աշխ., էջ 61: Ալեքսանդրեան Օհաննես, նշվ. աշխ., էջ 20 շրջ.:

82 Գաբիկեան Կարապետ, *Եղևնապարտում*, էջ 140-141:

83 Նույն տեղում:

84 Kévorkian Raymond, նշվ. աշխ., էջ 439-440:

85 Հուշագրական ժառանգություն, էջ 190:

86 Նույն տեղում:

87 Լուսարարյան Սեպուհ, նշվ. աշխ., էջ 164:

թալանին⁸⁸: Հայտնի է դեպք, երբ ժանդարմների մատուցած «ծառայությունների» համար առաջարկվել է, որ ամեն մարդ վճարի երկու ոսկի⁸⁹:

Խանի դիմաց բացվել են երկու տաղավարներ, որոնց շուրջ հանձնախումբը, բաժանվելով երկու մասի, սկսել է գանձերի ընդունումը: Քարավանների կարևոր անձանցից մի քանիսը ներգրավվել են հանձնախմբի մեջ⁹⁰: Հանձնախմբի անդամները զինված էին հրացաններով, խարազաններով, կրծքներին կախված էին դատարկ փամփուշտներ⁹¹: Հանձնման ժամանակ հանձնախումբն անուն-ազգանուններով⁹² դասակարգված⁹³ գրանցել է ստացած թանկարժեք իրերը⁹⁴: Հանձնախմբի անդամները, լինելով Սեբաստիայի հայտնի հանցագործներ և առնչություն ունենալով հայերի հետ, քաջատեղյակ էին հայերի կարողություններին: Այն դեպքերում, երբ հանձնվող ավարն ակնկալվածից ավելի քիչ էր լինում, կատարվում էին բռնություններ, ինչից հետո քարավանի անդամների մոտ եղած մնացած ունեցվածքը բռնագրավվում էր⁹⁵: Ռ. Գևորգյանի դիպուկ բնորոշմամբ տեղահանվածներից՝ «հանուն իրենց ապահովության» կարողություն առգրավող «փրկիչները» նրանց զրկում էին գոյատևման միջոցներից⁹⁶: Կատարվում էին ցուցադրական ահաբեկումներ՝ ևս մեկ անգամ խրախուսելու հարստությունների ամբողջական հանձնումը: Տարագրյալները, բռնություններից վախենալով, նույնիսկ ուրիշներից էին փող վերցնում և հանձնում⁹⁷: Հանձնախմբի անդամներին ծանոթ մարդկանց տրվում էր մեկ ժամ ժամանակ՝ հանձնումը լրացնելու համար⁹⁸: Իրերի հանձնման գործընթացի ավարտից հետո կատարվում էին բանտարկություններ, և շարունակվում էին բռնությունները¹⁰⁰: Բանտարկությունից ոսկի տալու խոստմամբ ազատված մի տղայի՝ ոսկին չտալու պատճառով ենթարկել են սաստիկ ծեծի, տեսարանի ականատեսները հավաքել և հանձնել են գումարը, սակայն չեն կարողացել փրկել նրա կյանքը. նա մի քանի

88 Նույն տեղում:

89 Տերտերեան Շահէն, նշվ. աշխ., 1951, թիւ 4 (303) ապրիլ:

90 Նույն տեղում: Ալեքսանդրեան Օհաննես, նշվ. աշխ., էջ 20 շրջ.-21:

91 Գաբրիկեան Կարապետ, *Եղեռնապայտում, մաս Ե, 32*, «Երիտասարդ Հայաստան», 1920, թիւ 96, ապրիլ 3: Գաբրիկեան Կարապետ, *Տեղեկագիր Սեբաստիոյ և շրջակայից հայոց տարագրութեան և բնակչոյնի*, էջ 106:

92 Գաբրիկեան Կարապետ, *Եղեռնապայտում*, 1924, էջ 143: Գաբրիկեան Կարապետ, *Տեղեկագիր Սեբաստիոյ*, էջ 106:

93 *Հուշագրական ժառանգություն*, էջ 212:

94 Գաբրիկեան Կարապետ, *Տեղեկագիր Սեբաստիոյ*, էջ 106:

95 *Հուշագրական ժառանգություն*, էջ 191:

96 Գաբրիկեան Կարապետ, *Եղեռնապայտում*, 1924, էջ 143-146: *Հուշագրական ժառանգություն*, էջ 212:

97 Kévorkian Raymond, նշվ. աշխ., էջ 439:

98 *Հուշագրական ժառանգություն*, էջ 191:

99 Լուսարարյան Սեպուհ, նշվ. աշխ., էջ 162:

100 *Հուշագրական ժառանգություն*, էջ 191:

Ժամ անց մահացել է¹⁰¹: Հայտնի է դեպք, երբ ախոռում բանտարկված տղամարդկանց հարդի կրակի ծխով սպանել են¹⁰²: Կայանը դարձել էր սպանդարան աչքի ընկնող տղամարդկանց, երիտասարդների և մտավորականների համար¹⁰³: Առանձին անհատներ ցուցակով կանչվել և ուղարկվել են սպանդի¹⁰⁴: Այստեղ են իրենց մահկանացուն կնքել Սեբաստիայի ավագ սերնդի մտավորականներից 70-ամյա Աստուրյան Հարությունը, Պասկալ էֆենդին, ով երկար տարիներ աշխատել է որպես հեռագրատան պաշտոնյա և Կյուրինի կայմակամի փոխատոր: Կայանում Քյուրուկի տղայի ցուցումով ամեն քարավանից 40-50-ական մարդ է սպանվել¹⁰⁵: Եղել են նաև բացառություններ, ինչպես օրինակ՝ Կարապետ Գաբիկյանի քարավանը, որը փրկվել է Հյուսեյնի հետ ունեցած խնամիական կապի շնորհիվ¹⁰⁶: Սպանություններից խուսափել է նաև Օհաննես Ալեքսանդրյանի քարավանը¹⁰⁷: Սեբաստիայի յոթերորդ քարավանի զինվորագրության տարիքի տղամարդկանց հավաքել են և նույն գիշերը բոլորին սպանել¹⁰⁸: Ըստ Հայկանույշ Զառացյանի հաղորդած տվյալների՝ իր քարավանի երիտասարդներին բանտարկել են, իսկ ծերերին՝ բաց թողել¹⁰⁹: «Գիւղաշխարհ»-ում տպագրված անունն անհայտ մի կնոջ վկայության համաձայն՝ Սեբաստիայից տեղահանված չորրորդ քարավանի աչքի առջև սպանել են տարագրված տղամարդկանց մի մասին¹¹⁰: Ըստ Նուբարյան մատենադարանի Սեբաստիայի թղթածրարի մեջ գետեղված «Սկսւգ-Շար-գըշլա» վերնագիրը կրող փաստաթղթի՝ նույնիսկ փրկագին վճարելուց հետո բոլորին բաց չեն թողել, և փրկվել են միայն կանանց հագուստով ծալոված տղամարդիկ¹¹¹:

Հատուկ թիրախավորման խմբեր էին առևտրականները, արհեստավորները, պետական աշխատողները, կուսակցականները, հոգևորականները և նրանց ընտանիքները: Այս խմբերից պահանջվում էր առավել մեծ քանակի հարստություն: Օրինակ՝ կոշկակար Կեզուրենց Գրիգոր վարպետից պահանջել են 300 ոսկի, հայտնի մսագործ Ղասապ-Պողիկ Էմինի կնոջը՝ Անթառամին, ենթարկել են խոշտանգումների և միայն հանձնախմբի հայ անդամների միջնորդությամբ դադարեցրել են ծեծը և երկրորդ հնարավորություն տվել՝ հանձնելու թաքցրած հարստությունը¹¹²: Մի այլ վկայության համաձայն՝ հարուստ վաճառականի կնոջից պահանջել են մեծ քանակի

101 Տերտրեան Շահէն, նշվ. աշխ., «Հայրենիք», 1951, ապրիլ, թիւ 4 (303), էջ 65:

102 Գաբիկեան Կարապետ, *Եղեռնապարտում*, 1924, էջ 151:

103 Համբարձումյան Վահան, նշվ. աշխ., էջ 222: Լ.Վ., նշվ. աշխ., էջ 502:

104 Լուսարարյան Սեպուհ, նշվ. աշխ., էջ 164:

105 Գաբիկեան Կարապետ, *Եղեռնապարտում*, 1924, էջ 149:

106 Նույն տեղում, էջ 159:

107 Ալեքսանդրեան Օհաննես, նշվ. աշխ., էջ 21 շրջ.:

108 Գաբիկեան Կարապետ, *Եղեռնապարտում*, 1924, էջ 151:

109 Զառացյան Հայկանույշ, նույն տեղում, էջ 0114:

110 Համբարձումյան Վահան, նշվ. աշխ., էջ 222:

111 BNU/Fonds A. Andonian, *Massacres et deportations à Sébaste*, *Սկսւգ-Շար-գըշլա*, էջ 0127:

112 Գաբիկեան Կարապետ, *Եղեռնապարտում*, 1924, էջ 144-145:

հարստություն, երբ նրա կինն ասել է, թե ունի ընդամենը 10 ոսկի, որից 8-ն է պատրաստ տալ, ենթարկվել է խոշտանգումների. նրան կապել են ձիու պոչից և խարազանով բազմաթիվ հարվածներ հասցրել, ինչից հետո սկզբում զավակին են սպանել նրա աչքի առաջ, այնուհետև՝ նրան¹¹³: Մի հայտնի դրամափոխի էլ սպանել են իր երեխաների աչքի առջև¹¹⁴: Տարապապոնց խանի սենեկապետ Տերտերյան Նշանին գանակոծել և բանտարկել են: Հաճի Կարոն, ով դանակագործներին քար էր մատակարարում և տարիներով գումար էր հավաքել, ստիպված հանձնախմբին մի պարկ, այն է՝ 800 ոսկի է հանձնել¹¹⁵: Հարություն Անսուրյանից պահանջել են 500 ոսկի և այլ հարստություններ, նրան ծեծելով սպանել են՝ ասելով, թե 50 տարուց ավելի պետական պաշտոն ստանձնելով՝ թալանել է կայսրությունը¹¹⁶: Սուրբ Սարգիս եկեղեցու քահանաներ Տ. Իրավափառ և Տ. Եփրեմ քահանաներին ենթարկել են սուկալի գանակոծությունների, մերկացրել և ենթարկել են անարգանքների, պահանջել եկեղեցական գանձեր և երկուսին էլ տանջահար անելով՝ սպանել՝ պնդելով, թե ողջ ազգի հարստությունը քահանաների մոտ է¹¹⁷: Քյուրթուկի տղա Համիդը սաստիկ ծեծի է ենթարկել հայտնի հնչակյան գործիչ Տյույուկյան Նազարեթին՝ նրանից պահանջելով կազմակերպության գանձերը¹¹⁸:

Հանձնումներից հետո հայտնի են դեպքեր, երբ վերադարձվել են մի քանի մանրադրամներ՝ առաջիկա մի քանի օրերին ծախսելու համար¹¹⁹:

Տաղավարներում հանձնման գործողությունն ավարտելուց հետո հանձնախմբի անդամները մտել են քարավանների մեջ և տակնուվրա արել սայլերի բեռները, սննդի պարկերը, պատառոտել են տոպրակները, պարունակությունները լցրել գետնին, բզկտել են անկողինները, բարձերը և գտել թաքցված հարստություններ: Այդ գործողություններն ուղեկցվել են բռնություններով: Քարավաններից մեկի 80-100 կանանց առանձնացրել են խանի առջև, ամբողջությամբ մերկացրել և մանրակրկիտ խուզարկել են մարմինները և որոշ դեպքերում գտել թաքցված հարստություններ¹²⁰: Քարավանի թալանն ավարտելուց հետո խուզարկել են խանում բանտարկված տղամարդկանց¹²¹:

Այսքանից հետո, ըստ Կ. Գաբիկյանի, պաշտոնական գողերը, առգրավված իրերը լցնելով խուրջիների մեջ, վերցրել և տեղափոխել են մեկ այլ վայր¹²²: Ամբաս-

113 Կարապետեան Էլիզա, նշվ. աշխ., էջ 1-2:

114 Լուսարարյան Սեպուհ, նշվ. աշխ., էջ 163:

115 Գաբիկեան Կարապետ, *Եղեռնապատում*, 1924, էջ 146:

116 Նույն տեղում, էջ 149:

117 Նույն տեղում, էջ 150: Զառացյան Հայկանույշ, նշվ. աշխ., էջ 0114:

118 Նույն տեղում, էջ 150:

119 Լուսարարյան Սեպուհ, նշվ. աշխ., էջ 162:

120 Գաբիկեան Կարապետ, *Եղեռնապատում*, 1924, էջ 149: Գաբուանեան Փայլածու, նշվ. աշխ., էջ 61:

121 Ալեքսանդրեան Օհանես, նշվ. աշխ., էջ 21 շրջ: Գաբիկեան Կարապետ, *Եղեռնապատում*, 1924, էջ 142: *Հուշագրական ժառանգություն*, էջ 191, 212:

122 Գաբիկեան Կարապետ, *Եղեռնապատում*, 1924, էջ 150:

տանազրի տվյալներով յուրաքանչյուր քարավանից 6-10 հեյալե¹²³ ոսկի և այլ թանկագին զարդեր են կողոպտվել, ըստ մեկ այլ վկայության՝ 10 բակեղեթ¹²⁴։ Ըստ վկաներից մեկի պատմածի՝ մեկ օրվա ընթացքում հավաքվել է 22 հեկ հարստություն¹²⁵։ Թալանված հարստությունները տեսակավորվել և լցվել են առանձին կողովների մեջ՝ ոսկի-ոսկեղեն, արծաթ-արծաթեղեն¹²⁶, մատանիներ, ապարանջաններ, ժամացույցներ, աղամաններ, զմրուխտներ, մարգարիտներ, արծաթապատ մագաղաթներ, ոսկյա խաչեր և տարվել Սեբաստիա¹²⁷։ Այդտեղ տարվելու տեղեկությունը հաստատվել է նաև օսմանյան փաստաթղթերով և ըստ դրանցից մեկի՝ գանձերը Խալիս և Համիդ բեկերի կողմից տարվել են Խալիլ բեկի տուն¹²⁸՝ ժանդարմների հրամանատար, աշխատանքային ջոկատների կոտորածի պատասխանատուներից¹²⁹։

Կողոպուտը շարունակվել է նույնիսկ կայանից դուրս գալուց հետո։ Հայտնի է դեպք, երբ քարավանները ճանապարհելուց հետո հասել են նրանց հետևից և պատճառաբանելով բանակի հացի մատակարարման անհրաժեշտությամբ՝ առգրավել են սայլեր¹³⁰։

Կայանում տեղ գտած թալանի նախավերջին արարը տեղի է ունեցել հետևյալ կերպ։ Նույն երեկոյան քարավանին ուղեկցող ժանդարմները՝ տեսնելով, թե ինչ քանակությամբ հարստություն թալանվեց ժողովրդից, կրկին գնդակահարության սպառնալիքով տարագրյալներից մեկ անգամ ևս պահանջել են գումար։ Քարավանը հարկադրված մինչև առավոտ հավաքել է գումարը և ճամփա դուրս գալուց առաջ հանձնել ժանդարմներին։ Ըստ Գաբրիկյանի՝ թալանի այս փուլում նույն սխեմայով նախորդ քարավաններից 60-70 տղամարդ, հիմնականում երիտասարդներ, սպանվել են¹³¹։

Քանի որ խանը գտնվում էր Սեբաստիայի և Խարբերդի վիլայեթների սահմանագլխին, քարավաններին ուղեկցող ժանդարմներն այդտեղից պետք է փոխվելին¹³²։ Նշված հանգամանքը հաշվի առնելով՝ նրանք մի վերջին անգամ թալանել են աքսորյալներին հետևյալ կերպ. ժանդարմները հաջորդ կայան հասնելիս կանանց առաջարկել են Քյոթո խանում բանտարկված ամուսիններին ազատելու համար վճարել 5-ական ոսկի, սակայն գումարը վերցնելուց հետո էլ նրանց չեն վերադարձրել¹³³։

123 Թերքի հեյալե – խուրջինով լի։

124 Գաբրիկեան Կարապետ, *Եղեռնապարտում*, 1924, էջ 148։

125 Համբարձումյան Վահան, նշվ. աշխ., էջ 222։

126 Գաբրիկեան Կարապետ, *Եղեռնապարտում*, 1924, էջ 144, 146, 150։

127 Լուսարարյան Սեպուհ, նշվ. աշխ., էջ 163։

128 Guerguerian K., “Sivas 18” (2018). *Sivas*. 18. <https://commons.clarku.edu/sivas/18>։

129 Գաբրիկեան Կարապետ, *Եղեռնապարտում*, 1924, էջ 591։

130 Համբարձումյան Վահան, նշվ. աշխ., էջ 222։

131 Գաբրիկեան Կարապետ, *Տեղեկագիր Սեբաստիոյ*, էջ 108։

132 Գաբրիկեան Կարապետ, *Եղեռնապարտում*, 1924, էջ 161։

133 Գաբրիկեան Կարապետ, *Եղեռնապարտում*, մաս Դ, 33, «Երիտասարդ Հայաստան», 1920, թիվ 97, ապրիլ 7։

Զուգահեռներ

Քյոթո խանում տեղ գտած կողոպուտի այս սխեմային զուգահեռներ կարելի է գտնել Սեբաստիայի և հարակից վիլայեթների տեղահանության պատմության մեջ: Դրանց թվում էր Ջիլե գյուղի դեպքը, երբ կազմվել է ատյան-հանձնաժողով, որն արձանագրել է աքսորականների անուն-ազգանունները և թանկարժեք իրերն առգրավել՝ պատճառաբանելով ճանապարհին անվտանգության երաշխիքների բացակայությամբ, և խոստացել նույնությամբ հանձնել տարագրյալներին, երբ նրանք վերադառնան¹³⁴:

Մեզ հանդիպած ամենամոտ նմանությունը դեպքերին արձանագրված է Թոնուս քաղաքից ոչ հեռու գտնվող վայրում՝ Սամսոնի տարագրյալ քարավաններից մեկում: Աղբյուրը հայտնել է, որ քաղաքացիական հազուստներով մի խումբ մարդիկ, իրենց ներկայանալով որպես պետական պաշտոնյաներ, կանգնեցրել են քարավանը և նստելով մի սեղանի շուրջ՝ նույն մոտեցմամբ հրամայել հանձնել թանկարժեք իրերը, որոնք արձանագրել են անուն-ազգանուններով, և կրկին նույն՝ Մալաթիա հասնելուն պես ամբողջությամբ վերադարձնելու խոստումով թալանել են քարավանը¹³⁵: Այստեղ նույնպես կատարվել է երեխաների և կանանց մարմինների մանրակրկիտ խուզարկություն¹³⁶:

Նմանօրինակ պատկեր կարելի է տեսնել Տիվրիկ քաղաքի քարավանների ճանապարհին: Տիվրիկի շրջակայքում մի մունետիկ բարձրացել է տանիքի վրա և հայերեն բղավելով՝ զգուշացրել, որ իրենց վաղվա ճանապարհը վտանգավոր է, և մեծ քանակությամբ քողեր են հարձակվելու և թալանելու քարավանը, իսկ ուղեկցող ժանդարմները չեն կարողանալու ապահովել անվտանգությունը: Ուստի վերը նկարագրված դեպքերի նմանությամբ այստեղ նույնպես հրամայվել է հանձնել թանկարժեք իրերը, որոնք Արաբկիր հասնելուն պես պետք է նույնությամբ վերադարձվեն, իսկ չհանձնելու պարագայում պետք է մարմինների վրա խուզարկություն իրականացվեր՝ ընդհուպ մինչև ինտիմ հատվածներ¹³⁷:

Մերի Գրեֆեմի հանգամանքը

Սեբաստիայի տեղահանությունը նկարագրող վկայությունների մեջ հանդիպում է առաջին հայացքից տարօրինակ և վերը նկարագրված փաստերի հետ չհամադրվող մի հուշագրություն: Խոսքը կաթոլիկ հոգևորական հայր Հակոբ Վրդ. Քոսյանի՝ Գանտիտա Գույումջյանից գրառած վերապրումի պատմության մասին է: Ըստ հուշագրության, երբ քարավանը, որի մեջ էր քույր Գանտիտա Գույումջյանը, մոտեցել է խանին, իրեն անհասկանալի պատճառով քարավանը 15 րոպե հեռավորության վրա կանգնեցրել են դաշտի մեջ՝ գիշերելու¹³⁸: Երբ քարավանի անդամները պատրաստվել

134 Մեսրոպ Լեոն, *Աղէտը և վերածնունդ*, Փարիզ, տպագր. «Արաքս», 1952, էջ 399-400:

135 Հեքիմեան Օթոն, *Սամսոնի հայության պիստոլ բաժինը 1915-1918-ի Մեծ եղեռնին*, Փարիզ, ա.հ., 1961, էջ 113:

136 Նույն տեղում, էջ 114:

137 Զարդարեան Երուանդ, նշվ. աշխ., էջ 130:

138 Քոսեան Յակոբ, նշվ. աշխ., էջ 392:

են սայլերը կանգնեցնել և իջնել, Քյոթու խանի բարյացակամ մի չերքեզ՝ մյուդիրը, տեսնելով ոչ հեռու տարածքի վրա գտնվող քարավանը, մարդ է ուղարկել և քարավանի կառապաններին ստիպել սայլերը տանել մինչև խան՝ դրա դիմաց գիշերելու։ Մյուդիրը ճանաչում էր քարավանի որոշ անդամների և սկսել է նրանց կարիքները հոգալ. հրահանգել է բերել ուտելիք՝ մածուն, պանիր։ Քարավանում եղած փախստականներին թև թևի կապած առաջնորդել են խանի խցերից մեկը։ Հետաքրքրական են այս ընթացքում տեղ գտած գողության դեպքը և դրա լուծումը։ Քարավանին ուղեկցող ժանդարմները գողացել են տարագրյալների կապոցներից մեկը, ինչի մասին իմանալուց հետո մյուդիրն այն վերադարձնում է տերերին և ձերբակալելով գողություն կատարած ժանդարմներին՝ ուղարկում Մալաթիա։ Դրանից հետո արգելել է քարավանին շարունակել ճամփան¹³⁹։ Վերապրողը նշված դեպքը բացատրում է չձերբակալված ժանդարմներից վտանգի տակ լինելու հանգամանքով։

Գողոնը վերադարձնելուց հետո, ի նշան երախտագիտության, գողության հանգամանքը վեր հանած խումբն այն նվիրել է մյուդիրին։ Վերը նկարագրված իրադարձությունների հետ այս դրվագը նույնիսկ որևէ հեռավոր առնչություն չունի, սակայն այս արտասովոր գործելաոճի պատճառը բացահայտվում է վկայության հաջորդող տողերում։ Թալանի դրվագից մի քանի ժամ անց կայանին է մոտեցել Սեբաստիայի տարագրյալների մեծ քարավան՝ շուրջ 1.500 սայլերով։ Այս մեծ խմբում էր նաև ամերիկացի միսիոներուհի Մերի Գրեֆենը։ Նա 1902 թվականից տնօրինել է Սեբաստիայի աղջկանց վարժարանը¹⁴⁰։ Դոկտոր Քլարքի հետ 1914 թ. օգնել է Կարինի բնակիչներին պալքարելու տիֆի դեմ¹⁴¹, վերադառնալով Սեբաստիա՝ Մերի Գրեֆենը դոկտոր Քլարքի հետ փորձել է պահպանել հայերի հարստությունը, դրանք իր մոտ է թաքցրել՝ վերադարձնելու նպատակով¹⁴²։ Տեսնելով դպրոցի ուսուցիչների և աշակերտների բռնազաղթը՝ դիմել է կուսակալ Մուամմերին և ստացել նրանց ուղեկցելու և խնամելու թույլտվություն¹⁴³։ Մերի Գրեֆենը շրջում էր բազմահազարանոց քարավանի միջով և փորձում էր հոգալ աքսորյալների կարիքները¹⁴⁴։ Գրեֆենի՝ որպես օտար վկայի ներկայությունը զսպում է ռճրագործների գործողությունները։ Նրա ներկայությամբ փորձ է կատարվում հնարավորինս քաղաքակիրթ տեսք տալու բռնի տարագրությանը։ Մերի Գրեֆենը, գիտակցելով նշված հանգամանքը, հենց այդ նպատակով էր ուղեկցում քարավաններին¹⁴⁵։ Կաշկանդվածությունից ազատվելու համար մի քանի կայաններ անցնելուց հետո Մալաթիայում թուրք պաշտոնյաները հարկադրել են նրան

139 Գաբրիելան Կարապետ, *Եղեռնապատում*, 1924, էջ 394։

140 Քասունի Երուանդ, *Քննական ակնարկ «Միշրների հերոլդ»-ի 1815-1918 թթ. հայ ժողովուրդի ցեղասպանության և վերածնունդի մասին արձանագրած վկայագրություններուն*, Պեյրուք, «Մ.Ա.Հ.Ա.Ե. միութեան հրատարակչական գրասենեակ», 2012, էջ 208։

141 Նույն տեղում, էջ 208-209։

142 Նույն տեղում, էջ 100։

143 Նույն տեղում, էջ 209։

144 Նույն տեղում, էջ 398։

145 Partridge George, <http://vhaonline.usc.edu/viewingPage?testimonyID=56557&returnIndex=0#> վեցերորդ րոպե։

վերադառնալ Սերաստիա: Գրեֆեմը, մնալով Սերաստիայում, շարունակել է իր մարդասիրական գործունեությունը՝ հետցեղասպանական փուլում իր գործուն մասնակցությունը բերելով որբահավաքման և որբերի կրթական գործին¹⁴⁶: Այս և այլ ձևերով մինչև իր կյանքի վերջը նա իր նպաստն է բերել հայությանը¹⁴⁷:

Վերջաբան

Քյոթու խանի իրադարձությունների քննությունը հանգեցնում է մի շարք եզրակացությունների:

1. Ապահովագրական հանձնախմբի անվան տակ ծալված հանցավոր խումբը կազմված էր պետական համակարգի ներկայացուցիչներից՝ կուսակցականներ, *Թեշքի-լաթ-ը մահաուսե*-ի անդամներ, բանտերից հատուկ նպատակով տարբեր ժամանակահատվածներում բաց թողնված հանցագործներ, տեղական ինքնակառավարման օղակներում գտնվող կամ դրանց առնչակից անձինք: Նրանց ներգրավվածությունը ցույց է տալիս թալանի և կոտորածի՝ պետության կողմից ուղիղ կազմակերպված լինելը:

2. Տղամարդիկ, որոնց ցեղասպանության նախնական փուլերում հաջողվել էր խուսափել զորակոչից (աշխատանքային ջոկատներում սպանվելուց), հետագա բռնություններից և հասնել տարագրության փուլին, այս փուլում արդեն սեռական տարանջատման սկզբունքով դառնում էին քաղաքականության զոհ՝ խմբերին պաշտպանվելու հնարավորությունից զրկելու, առաջին հերթին՝ տղամարդկանց թիրախավորելու և ոչնչացնելու ծրագրով:

3. Կայանում տեղ գտած իրադարձությունների համակարգվածությունը, գործելաոճի կրկնողությունը և ծավալները, խմբի կողմից ներկայացվող փաստաթղթերի գոյությունը փաստում են, որ հանցագործությունները եղել են նախօրոք ծրագրված և համակարգված: Իսկ հարող շրջաններում հայտնաբերված զուգահեռներն ապացուցում են, որ կայանի դեպքերը չեն եղել իրենց տեսակի մեջ եզակի և կրկին հիմք են տալիս եզրակացնելու, որ այդ կոտորածները մաս կամ փուլ են կազմել ավելի մեծ ծրագրի:

4. Ցեղասպանության այս դրվագը «տեղահանությունը հավասար է կոտորածի» բանաձևի իսկությունն ապացուցող օրինակ է, որը վառ կերպով արտացոլում է տեղահանության իրական պատկերը և կառավարության կողմից ձեռնարկված միջոցների (ուղեկցող ժանդարմների նշանակում, «Ապահովագրական հանձնախումբ») իրական գործառնությունները:

5. Մերի Գրեֆեմի օրինակով կարելի է տեսնել օտար ականատեսի գործուն ոչ միայն որպես վկայող, այլև որպես զսպող գործոն, կոտորածները կանխարգելող հանգամանք, ինչը նաև գիտակցվում էր հենց ականատեսի կողմից:

146 Պատրիկ Առաքել, *Պապրմագիրք յուշամարեան Սերաստիոյ և գաւառի հայութեան*, հատոր Ա, տպ. «Մշակ», 1974, էջ 563-564:

147 Նույն տեղում, էջ 565:

**KÖTÜ HAN.
A STATION ON THE DEPORTATION ROUTE OF SEBASTIA**

Robert Sukiasyan

SUMMARY

The article presents the massacres and robberies which took place in the summer of 1915 in Kötü Han; one of the stations on deportation route of Sebastia province. The study is based on the compilation of testimonies of eyewitness survivors from the Armenian archives, print media, memoir books, collections of testimonies, the documents emerging from the Turkish courts-martial of 1919–1920, as well as on the studies on the topic. The material discussed in the article shows that the violence, massacre and robbery committed by the “Insurance Commission” were planned, systematic and coordinated by the authorities. Particular attention is paid to the relationships between the foreign witnesses, victim and perpetrator groups and their interactions.

Key words: Armenian Genocide, Sebastia, Kötü Han, insurance commission, Emniyet Komisioni, deportation, massacre, looting, province, six vilayets, foreign witnesses.

**КОТУ-ХАН.
ОБ ОДНОЙ СТАНЦИИ НА ПУТИ ДЕПОРТАЦИИ В ПРОВИНЦИИ СЕБАСТИЯ**

Роберт Сукиасян

РЕЗЮМЕ

В статье представлены события в Коту-хане, где при депортации армян провинции Себастья в 1915 году произошли массовые убийства и грабежи. Исследование основано на свидетельствах выживших очевидцев, которые сохранились в армянских архивах, были опубликованы в СМИ, в отдельных книгах и сборниках свидетельства выживших, в документах о судебных разбирательствах над младотурками, а также в других исследованиях по этой теме. Всесторонне рассмотренный материал показывает, что насилие, массовые убийства и грабежи, совершенные группой «Страховая комиссия», координировались властями и по своей природе не являлись беспрецедентными. Особое внимание уделяется отношениям и взаимодействию между связанными с событиями на станции иностранными свидетелями, жертвами и преступными группами.

Ключевые слова: Геноцид армян, Себастья, Коту-хан, депортация, убийство, мародерство, страховая комиссия, провинция, шесть вилайетов, иностранные свидетели.

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՏԵՐ ԶՕՐԻ ԳԱԽԱՌ-ԱՊԵՏ ՍԱԼԷՃ ԶԷՔԻ ՊԵՅԻ՝ ԷՎԵՐԷԿԻ ՄԷՋ ԿԱՏԱՐԱԾ ՈՃԻՐՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Միհրան Մինասեան

Այս յօդուածով հրատարակութեան տրուած են ծանօթ գրող, խմբագիր, պատմաբան, կրթական և մշակութային գործիչ Արամ Անտոնեանի (Կ.Պոլիս, 1879 – Բարիզ, 1951) անտիպ վկայութիւնը Կեսարիոյ մօտակայ Էվերէկ քաղաքի կառավարիչ Սալէի Զէքի պէյի՝ Էվերէկի մէջ կատարած ոճիրներուն մասին: Զէքի պէյ Էվերէկէն ետք նշանակուած է Տէր Զօրի գաւառապետ ու դարձած սուրիական անապատ արքայութեան բազմահազար հայերու գլխաւոր դահիճը:

Ծօղուածի սկիզբի բաժինով վկայութիւնը հրատարակողը խօսած է այն մասին թէ ինչպէս հակառակ Էվերէկի մէջ գործած ոճիրներուն, եւ հակառակ իր դէմ Կ.Պոլսոյ Հայոց պատրիարքարանի բողոքներուն, Զէքի պէյի նշանակուած է կառավարիչ Տէր Զօրի նման կարեւոր վայրի մը որ հաւաքավայրը դարձած էր կայսրութեան զանազան շրջաններէն արքայութեան հարիւր հազարաւոր հայերու: Այդ նշանակումը պատահական չի թուիր, այլ լաւապէս մտածուած ու ծրագրուած որոշում մըն էր, որովհետեւ նոյն ձեռով նախապէս պաշտօնանկ եղած էին նաեւ Հալէպի գոյգ նահանգապետերը որոնք մերժած էին ուղղակիօրէն մասնակցիլ հայոց կոտորածներուն եւ փոխարինուած էին Բաղէշի հայերը կոտորած Մուսթաֆա Ապտուլ Հալիգ պէյով (Բէնտա): Զէքի եւս, կոտորածները սկսելէ առաջ, շրջանի կարեւոր պաշտօններուն նշանակած էր իրեն համախոհներ որոնք լաւագոյնս գործակցած էին իրեն հայոց կոտորածներու ժամանակ:

Հրատարակուող փաստաթուղթին կցուած են նաեւ համապատասխան ծանօթագրութիւններ:

Բանալի բառեր. Արամ Անտոնեան, Սալէի Զէքի Պէյ, Մուսթաֆա Ապտուլ Հալիգ պէյը (Բէնտա), Էվերէկ, Տէր Զօր, հայկական կոտորածներ, հայոց տեղահանութիւններ:

Մուտք

Ծանօթ գրող, խմբագիր, պատմաբան, կրթական եւ մշակութային գործիչ Արամ Անտոնեան (Կ.Պոլիս, 1879 – Բարիզ, 1951) ցեղասպանութենէ հրաշքով փրկուելէ եւ Հալէպ, ապա Բարիզ ապաստանելէ ետք, լծուած է ցեղասպանութիւնը վաւերագրելու աշխատանքին, եւ առ այդ լոյս ընծայած է ոչ միայն Հայոց ցեղասպանութեան պատմութեան համար բացառիկ նշանակութիւն ունեցող իր *Մեծ Ոճիրը* փաստագրական եզակի հատորը¹, այլ նաեւ պարբերական մամուլի էջերուն հրատարակած է յուշագրական բնոյթի բազմաթիւ յօդուածներ, նուիրուած՝ ցեղասպանութեան զոհուած կամ վերապրած անհատներու կամ դէպքերու:

Ցեղասպանութեան թեմայով Անտոնեան ձգած է նաեւ պատկառելի ծաւալով յուշագրական անտիպ գործեր, որոնք այժմ կը պահուին Հ. Բ. Ը. Միութեան Բարիզի Նուպարեան մատենադարանի իր անունը կրող թղթածրարներուն մէջ:

1 Արամ Անտոնեան, *Մեծ Ոճիրը. Հայկական Վերջին Կոտորածները եւ Թալէադ Փաշա: Պաշտօնական Հեռագիրներ Բազմաթիւն Ստորագրութեանը եւ Բազմաթիւ Պարկերներով, «Պահակ»-ի մատենաշար թիւ 1, Պոսթրն, տպարան «Պահակ»-ի, 1921, 304, 1 չի. էջ: Նախապէս լոյս տեսած էին գիրքին ֆրանսերէն (Բարիզ, 1920) եւ անգլերէն (Լոնտոն, 1920) ամփոփ տարբերակները:*

Անտոնեանի այդ անտիպներէն, հետագայ էջերով, հրատարակութեան կու տանք Էվերէկի գաւառապետ Սալէի Զէքի պէյի կողմէ տեղոյն հայութիւնը կոտորելու մասին վկայութիւն մը: Զէքի պէյ՝ Էվերէկէն ետք նշանակուած է Տէր Զօրի գաւառապետ ու դարձած սուրիական անապատ աքսորուած բազմահազար հայերու գլխաւոր դահիճը:

Անտոնեանի այս վկայութիւնը կարելոր է այն իմաստով, որ ցոյց կու տայ, թէ ինչպէս ամբողջ քաղաքի մը հայութիւնը կոտորած անձ մը, հակառակ Կ.Պոլսոյ հայոց պատրիարքարանի կողմէ իր դէմ Ներքին գործոց նախարարութեան յղուած բողոքագրերուն, կարճ ժամանակ անց կը նշանակուի գաւառապետ Տէր Զօրի նման կարելոր շրջանի մը, որ այդ օրերուն հաւաքավայրը դարձած էր Կայսրութեան բոլոր կողմերէն աքսորուած հարիւր հազարաւոր հայերու:

Զէքիի այս պաշտօնին վերանշանակումը պատահական չէր անշուշտ, այլ ծրագրուած եւ լուսպէս սերտուած գործընթացի մը առաջին քայլն էր միայն: Նոյն ձեւով, իրմէ առաջ, Հալէպի երկու իրերայաջորդ նահանգապետեր՝ Ճէլալ եւ Պէքիր Սամի պէյերը, որոնք մերժած էին հետեւիլ հայերը կոտորելու կառավարութեան քաղաքականութեան, պաշտօնանկ ըլլալով, զիրենք փոխարինած էր Թալէպի փեսան՝ Մուսթաֆա Ապտուլ Հալիզ պէյը (Բէնտա), որ իր կարգին կոտորած էր Բաղէշի ամբողջ հայութիւնը ու անով ծանօթ էր հանրութեան: Պիտի չմոռնալ նաեւ, որ Հալէպը եւս, այդ օրերուն, ունէր բացառիկ դիրք, անոր համար որ ան գլխաւոր հաւաքավայրն էր աքսորականներուն, ուրկէ պիտի դրկուէին իրենց վերջին հանգրուանը՝ սուրիական անապատ, եւ տեղոյն վրայ պէտք էր ունենալ համախոհ գործակից մը, որ ապահովէր անխտիր բոլոր աքսորականներուն առաքումը, բացառելով ռեւէ մէկուն փախուստը կամ կաշառքով ու այլ միջոցներով աքսորէ խուսափումը: Սալէի Զէքի եւս, իր կարգին, Տէր Զօր հասնելէ ետք, նոյն օրինակով, տեղոյն քանի մը գաւառակապետներն ու գիւղախումբերու մեծաւորները պիտի փոխարինէր իր ծրագիրներուն ու իրեն վստահուած առաքելութեան աւելի հաւատաւոր մարդոցմով, որպէս նախապատրաստութիւն գալիք կոտորածներուն:

Անտոնեանի հետագայ վկայութիւնը հրատարակութեան կու տանք նոյնութեամբ, առանց որեւէ միջամտութեան: Կցած ենք միայն անհրաժեշտ ծանօթագրութիւններ²:

Սալէի Զէքի պէյի կենսագրականը զանց առած ենք, որովհետեւ այլ առիթով գրած ենք իր մասին³:

2 Բնագիրը՝ Նուպարեան մատենադարան, Բարիզ. BNu/Fonds A. Andonian, Matériaux pour l'histoire du génocide, P. J. 1/3, liasse 26, Déportation des Arméniens de Césarée/Կեսարիա, P. J. 1/3, liasse 26, ff. 29-31, 40:

3 Միհրան Մինասեան, «Արամ Անտոնեանի Անտիպ Գրառումները Տէր Զօրի Կոտորածներուն Մասին», *Հայկազեան Հայագիտական Հանդէս* (Պէյրութ), ԼԵ, 2015, էջ 700-701:

ԶԷՔԻ ՊԷՅ ԷՎԷՐԵԿԻ ՄԵՋ

Ինձե՛, Սուի⁴ շարդը ընել է ետք, ուր իր հրամանով 15-20 մարդ խողխողում էին, Զէքի պէ՛լ Էվերէկ⁵ կը դառնար իր հետևորդներով, որոնց մէջ կը գտնուէին երկու ծանօթ մատնիչ հայեր, մէկը Տօնիկեան Սարգիս⁶, հնչակեան, դասատու Էվերէկի վարժա-րանին մէջ և միւսն ալ Կիլպէնկ Քէօր Պետրոսեան⁷՝ Տարսնի Գոլէճին ուսանողնե-

4 Կեսարիա քաղաքին մօտակայքը գտնուած են «Ինձե՛ Սու» անունով երկու տարբեր բնակավայրեր. առաջինը՝ Կեսարիայէն հարաւ-արեւմուտք, անկէ 20-25 քմ. հեռավորութեան վրայ, որ թրքական Ինձե՛ Սուն էր եւ կեդրոնը՝ Կեսարիա անկախ գաւառի Ինձե՛ Սու գաւառակին, իսկ երկրորդը՝ Կեսարիայէն արեւելք եւ Էվերէկէն երկու ժամ հեռավորութեան վրայ, Արգէոս լեւան հարաւը գտնուող Հայ Ինձե՛ Սուն, որ իր բնակիչներու քաջագործութիւններուն համար թուրքերու կողմէ անուանուած էր «Կիչկիլ Զէյթուն»՝ «Փոքր Զէյթուն»:

Հոս Աստուծան բնականաբար նկատի ունի Հայ Ինձե՛ Սուն: Բնակավայրը ունեցած է Սր. Թորոս եկեղեցին եւ Ստեփանեան վարժարանը՝ 120 աշակերտներով: Աւանը 1915-ին ունեցած է անելի քան 200 հայու եւ 50 թուրքի տուն: Տե՛ն Ալայօյաճեան Արշակ, Պալամութիւն Հայ Կեսարիոյ, Գահիրէ, հրատարակութիւն Կեսարիոյ եւ Շրջակայից Հայրենակցական Միութեան Գահիրէի Վարչութեան, տպարան Յակոբ Փափագեան, Ա., 1937, էջ 847: Տե՛ն նաեւ Գալֆաեան Կարապետ Ա. քնյ., *Գիրք Ելից Հայոց*, Պէյրութ, տպարան «Տօնիկեան», 1955, էջ 292-293: Ըստ այլ աղբիւրի, ան ունեցած է 350 հայ եւ 50 թուրք ընտանիք: Տե՛ն Մատաղճեան Թորոս Մ., *Յուշանկարեան Թումարգայի*, վերամշակող խմբագիր Հրանդ Գանգրունի, Պէյրութ, տպարան Կ. Տօնիկեան, 1959, էջ 211-214:

5 Էվերէկ կամ Աւերակ: Համեայ հայաբնակ գիւղաքաղաք, Կեսարիա անկախ գաւառի Էվերէկ գաւառակի կեդրոնը, Կեսարիա քաղաքէն հարաւ-արեւելք, անկէ 20-25 քմ. հեռավորութեան վրայ, Կիլիկիոյ սահմանագծին մօտ, որմէ բաժնուած է Զամանթը գետով: Կառուցուած է Արգէոս լեւան հարաւային փեշերուն վրայ:

Էվերէկի անմիջական մօտակայքն էր Ֆէնէսէ գիւղաքաղաքը, գրեթէ միացած անոր, որուն համար ալ անոնք յաճախ յիշուած են միասնաբար՝ «Էվերէկ-Ֆէնէսէ» ձեւով: Էվերէկը ունեցած է Սր. Թորոս եկեղեցին, քանի մը դպրոցներ, որոնցմէ նշանաւոր է մանաւանդ Ազգային Մեսրոպեան բարձրագոյն վարժարանը, որ 1905-ին ունեցած է 440 ուսանող: Յեղասպանութեան նախօրեակին, քաղաքը ունեցած է 1.000 տուն հայութիւն: Տե՛ն Գլլըճեան Խորէն Յ., *Ալպոյ-Յուշանկարեան Էվերէկ-Ֆէնէսէի*, հրատարակութիւն Էվերէկ-Ֆէնէսէի Մեսրոպեան-Ռուբինեան Հայրենակցական միութեան Լիբանանի մասնաճիւղի, Պէյրութ, տպարան Այթափրես, 1984, էջ 17: Ըստ այլ աղբիւրի՝ Էվերէկը ունեցած է 750 տուն, որուն փոքր մասը անտարանական համայնքի պատկանողներ էին: Տե՛ն Թէոդիկ, *Գողգոթա Հայ Հոգեւորականութեան եւ իր Հօրին Աղէտայի 1915 Տարիին*, խմբագրեց Արայ Գալպճեան, Նիւ Եորք, St. Vartan Press հրատ., 1985, էջ 327:

6 Ծնած է Էվերէկ 1863-ին: 1880-ականներուն, արարտելով ծննդավայրի վարժարանը, անցած է Զմիւռնիա եւ դարձած հայ վաճառատան մը գրագիրը: 1890-էն վարած է ուսուցիչի եւ տնօրէնի պաշ-տօններ Էվերէկի, Ֆէնէսէի, Տարսնի, Եոզկատի եւ Կեսարիոյ մէջ: Տօնիկեան նախ եղած է հնչակեան, ապա դաշնակցական եւ Էվերէկի կոմիտէի անդամ: Մեծ Եղեռնի շրջանին իր ըրած մատնութիւններով դարձած է կառավարիչ Սալէի Զէքի պէլի մտերիմն ու գլխաւոր գործակիցներէն մէկը, եւ թրքանալով՝ ստացած է Հաճի Եւսուֆ Քէնան անունը: 1937-ին «Փաթթոցատու միւլեզգին» էր: Տե՛ն Ալայօյաճեան Ա., նշ. աշխ., Ա., էջ 1244-1245, Բ., էջ 1411, 2267-2268. նաեւ՝ Գալֆաեան Կ., նշ. աշխ., էջ 177 եւ 181, ուր կան իր արարքներուն մասին այլ մանրամասնութիւններ եւս: 1947-ին, խոր ծերութեան հասած այս «այլատեղեցի ճիւղը» մեկնած է Կ.Պոլիս գաւառներուն մօտ, եւ հոն «զգալով իր վերահաս սատակումը, կը կարծէ խիղճը հանդարտեցնել, իր անքաւելի ոճիրները խոստովանելով, Ֆերի-գիլի քահանային»։ Տե՛ն Թագուրեան Գաբրիէլ, *Գորշ Գայլը Կապողէր Էր*, Գահիրէ, տպարան «Յուսաբեր», 1953, էջ 189:

7 Էվերէկի Ֆէնէսէ թաղէն: Եղած է տեղւոյն հնչակեան կոմիտէի անդամ: Առաջին աշխարհամարտի սկզբնաւորութեան Տարսնի Սենթ Բոլ ամերիկեան գոլէճի վերջին կարգի ուսանող էր, հազիւ 18-19 տարեկան: Թրքանալով՝ ստացած է Շէհապէտտին Զէքի անունը եւ ըրած է բազմաթիւ մատնութիւններ: Տե՛ն Գալֆաեան Կ., նշ. աշխ., էջ 177 եւ 181, ուր իր արարքներուն մասին տրուած են շատ մանրամասնութիւններ: Իր վախճանին մասին Թագուրեան տուած է այսպիսի ծանօթութիւն մը. «...Կը պատուհաստի անբուժելի ախտով մը, որուն դարմանը կարենալ գտնելու համար, զինա-դադարէն ետք, կ'ուղեւորի մայրաքաղաք եւ հոն կը սատկի գարշահոտութեամբ պլշկուած եւ գլխէն մինչեւ ոտք նեխած»։ Տե՛ն Թագուրեան Գ., նշ. աշխ., էջ 189:

րէն: Ասոնք Էվերէկի մէջ մատնած էին կուսակցականները, պահուած պոմպաները, զէնքերը: Ձէքի պէյ զանոնք թրքացոց և խոստացաւ փրկել ընդհանուր հայութեան վիճակուած մահէն, պայման դնելով որ արիւնի մկրտութեամբ մը ապացուցանեն թէ համոզմամբ ընդգրկած են թրքութիւնը, որուն մէկ հատիկ հաւատամբը այդ սև օրերուն մէջ՝ հայոյ արիւն թափելն էր:

– Որպէսզի համոզուիմ թէ իրօք թրքացած էք, անպատճառ պէտք է որ հայ մեռցնէք, ըսած էր անոնց:

Մկրտութիւնը – իր բառով – կատարուած էր Իսճէ Սուի մէջ, ուր Ձէքի պէյ անոնց մեռցնել տուաւ վերոյիշեալ 15-20 անձերը, ‘նոյնիսկ’ մեռցնելէն ետք՝ հրամայեց որ իրենց ձիերով կոխտուն զանոնք: Այդպէս ալ ըրին, մինչև որ խեղճերուն դիակները այլևս անճանաչելի մսակոյտներ դարձան:

Այս երկու սրիկաները միշտ Էվերէկ մնացին: Տօնիկեանի համար կը հաւաստեն թէ աւելորդ չարութիւն չըրաւ, այսինքն մատնութենէ անդին չանցաւ: Մինչդէռ Կիւլպէնկ՝ ‘նոյնիսկ առանց գայմագամ Ձէքի պէյի ներկայութեան, իրեն տրուած արտօնութիւնը չարաչար գործածելու առիթ կը փնտռէր, և ինք իր գլխուն մարդ կը ծածէր: Այս կերպով խոշտանգուած ու չարչարուած հայոց մէջ կը յիշուի Թթոյեան Կարապետ անուն բողոքականը:

Մինչդէռ Իսճէ Սուին կը դառնար, ճամբան հանդիպեցաւ եէնիճէցի⁸ Կարապետ ...⁹ անուն զինուորի մը որ Կեսարիա գտնուած ատենը իմանալով թէ հայերը տեղահան

Հետաքրքրական է որ պոլսական երգարանի մը մէջ կայ Տարսոն Գոլէճի իր ուսանողութեան տարիներուն յօրինած «Իմ ուխտը» խորագրով բանաստեղծութիւնը, ուր կը կարդանք հետեւեալ տողերը. «Թէ՛ զնտանի մէջ բանտարկուած, մսամ նօթի ու ծարաւ, / Ըմպեմ ցաւոց լլկումներու սեւ բաժակէն անխնայ, / Եւ ընկճեն զիս վայրագ ձեռքեր յօշոտանքով չարադաւ, / Երդում ունիմ, պիտի պահեմ Հնչակեան ուխտս աներկբայ...»: Երգին բառերուն կցուած է նաեւ անոր երաժշտութիւնը: Տե՛ս *Դայլայլիկ. Պարկերագարդը եւ ճայնագրուած յիսկալար երգարան*, Կ.Պոլիս, 1912, էջ 122:

8 Եէնիճէ՛ գոտ հայաբնակ գիւղ Կեսարիա անկախ գաւառի Տէվլեո գաւառակի Թոմարգա գիւղախումբին մէջ, Թոմարգա գիւղաքաղաքէն հարաւ-արեւմուտք, անկէ՛ 25-30 քմ. հեռաւորութեան վրայ եւ Կեսարիա քաղաքէն հարաւ-արեւելք: Ունեցած է Սբ. Թորոս եկեղեցին եւ Լեռնեան Վարժարանը՝ 60 աշակերտներով: Գիւղը ցեղասպանութեան նախօրեակին ունեցած է 473 բնակիչ: Տե՛ս Kévorkian Raymond H., Paboudjian Paul B., *Les Arméniens Dans L'empire Ottoman a la Veille du Génocide*, Փարիզ, ARHIS, 1992, p. 230:

9 Բնագրին մէջ մականունին տեղը ձգուած է պարապ: Այլ աղբիւրէ կ’իմանանք որ անունն էր Կարապետ Թագթագեան (Թախթախեան)-Ճարլախեան: Առկայ է Կարապետի սպանութեան մասին ականատեսի վկայութիւն մը. Կարապետ Թախթախեան համագիտացի երիտասարդներու հետ, աշխատաւորական գումղերու որպէս անդամ, կ’երթայ Կեսարիա, ապա երեք ընկերներով հինգ օրուայ համար կը վերադառնայ գիւղ եւ կրկին Կեսարիա մեկնումի ճանապարհին, Սէտըրէմէքէ կոչուած թուրք գիւղին մօտ կը ձերբակալուի Ձէքի կողմէ՛ ու կը տարուի Էվերէկի բանտը, ուր իր ընկերներուն հետ տանջանքներու կ’ենթարկուի: Բանտի բակին մէջ գտնուող ոստիկաններ Կարապետին գլուխը կը դնեն հեծանի մը տակ ու հեծանին երկու կողմերը նստելով՝ կը սկսին կոտորուի խաղալ, մինչեւ որ կը ջախջախուի անոր գլուխը: Ականատես վկան եղած է Կարապետի դին հայոց գերեզմանատուն տանող ու թաղողներէն մէկը (Կարապետ Թամուզեանի վկայութիւնը հետեւեալ հատորին մէջ. Յովհաննէս աագ սարկ. Տոմարձացի (Յովհաննէս Թորոսեան), *Պարմութիւն Հայ Տոմարձայի*, Պէրթոյ, տպարան «Սեւան», հրատարակութիւն Տոմարձայի պատմութեան հրատարակչական Կեդր. Յանձնախումբի, Գ., 1969, էջ 2392:

պիտի ընեն, հրաման առեր և իր գիտը կը դառնար՝ գործերը կարգի դնելու համար: Խեղճ մարդը, աւելի շուտ հասնելու համար, լերան ճամբան ընտրած էր, և ճիշդ այդ ճամբուն վրայ Չէքի պէյ կեցուց զինքը և հարցուց թէ ուրկէ՝ կու գայ: Կարապետ կը պատասխանէ թէ ինք զինուոր է, կանոնաւոր արտօնութիւն և անցագիր ունի ձեռքը, և թէ իր գիտը կ'երթայ արձակուրդով՝ ապրանքները ծախելու: Չէքի սակայն առանց կարևորութիւն ընծայելու մարդուն քով գտնուած պաշտօնաթուղթերուն, կ'ըսէ.

– Դուն փախստական զինուոր ես, և հրոսակութեան համար այս լեռները կը շրջիս:

Եւ առանց մարդուն բողոքներուն ականջ կախելու, ձերբակալելով կ'առնէ Էվէրէկ կը բերէ, կը նետէ բանտը, եւ կը սկսի հարցաքննել: Մէկ անգամէն 1500 գաւազան զարնէլ կու տայ, եւ երեք օր իրարու վրայ անխնայ կը ծեծէ, առանց ընդհատելու: Խեղճ մարդուն ոտուրները բզիկ բզիկ կ'ըլլան, բայց նորէն Չէքիի կատաղութիւնը չի մեղմանար, կը պնդէ թէ իրօք հրոսակ մըն է, եւ անպատճառ կ'ուզէ հասկնալ թէ որո՞նք են իր ընկերները եւ ո՞ր կը գտնուին: Մարդը բան չէր գիտեր որ ըսէր, արդէն խօսելու կարողութիւնն ալ կորսնցուցած էր այդ չարչարանքներէն վերջ: Չէքի բոլորովին մերկացնել կու տայ զայն եւ մարմինն վրայ տաք մոխրի հետ կրակ կը թափէ, բայց դարձեալ չի կրնար տեղեկութիւն մը քաղել:

Ժանտարմա գօմանտանի Թէֆիք պէյ¹⁰ (հարիւրապետ) օր մը Չէքիի կը գանգատի թէ աւելորդ տեղը կը կատարուին այդ անխիղճ խոշտանգումները, քանի որ գաղթի հրամանը եկած է և բոլոր հայերն ալ պիտի ճամբուին անանկ պայմաններու մէջ որ գրեթէ ոչ մէկը ողջ պիտի մնայ, և մասնաւոր կերպով կը յիշատակէ Կարապետի պարագան, ըսելով որ զինուոր է վերջապէս և իրո՞ք արտօնութեամբ իր գիտը կը դառնար, ինչպէս յայտնի եղած էր պաշտօնական քննութեամբ:

Չէքի պէյ՝ Թէֆիք պէյի խօսքերէն կ'առնուի և կը վիճին իրարու հետ: Թէֆիք պէյ կը սպառնայ բողոքել, աւելցնելով որ մինակ Կարապետը կը բաւէ իրեն իբր փաստ: Այս անխորհուրդ սպառնալիքը խեղճ մարդուն դատավճիռը կը դառնայ: Չէքի՝ իսկոյն բանտ կը վազէ և կը կանչէ բանտարկեալներէն Լաֆճեան Տիգրանը¹¹, թօմար-զացի¹² շատ ուժեղ մարդ մը որ ծեծ ուտելէն ու չարչարուելէն այլևս քալելու անկարող

10 «Ժանտարմա գօմանտանը հազարապետ Լուֆֆի Թէվֆիք» ձեռով յիշուած է 1919-ին, Հալէպի մէջ պատրաստուած Կեսարիոյ կոտորածներու պատասխանատուներու ցուցակի մը մէջ (BNu/Fonds A. Andonian, նոյն տեղը, թերթ 2): Նոյնանուն այլ անձ մը յիշատակուած է նաեւ Կեսարիոյ ոճրագործ ոստիկաններու անուանացանկին մէջ՝ այսպէս. «Ժանտարմա միլիազըմը Արնավուտ Թէվֆիք», որուն համար ըսուած է որ Էվերէկի ու շրջակայքի մէջ «անլուր չարիքներ» գործած է: Տե՛ս Մելքոն Ասատուր, *Մահաշունչ Խորշակն, Բ'նչ Ուղղութեամբ է Փշեր եւ Բ'նչ Աւեր է Գործեր. Կեսարիոյ Սպանդը՝ Անուններով Միայն*, «Ազգ» (Պոսթոն), 1921, 27 օգոստոս, թիւ 199 (1833), էջ 3:

11 Զինուորական դասալիք, որ ձերբակալուելով դրկուած է Էվերէկ եւ միացած մատնիչներ՝ Սարգիս Տօնիկեանի եւ Կիւպէնկ Բէօր Պետրոսեանի: Եղած է կառավարիչ Սալէի Չէքի պէյի առաջին խորհրդատուն ու բարեկամը: Անոր հրամանով մեկնած է Թոմարգա եւ մասնակցած տեղւոյն խուզարկութիւններուն: Տե՛ս Ալպօյաճեան Ա., նշ. աշխ., Բ., էջ 2269: Մատաղճեան անոր մականունը տուած է «Լաֆճեան» ձեռով: Տե՛ս Մատաղճեան Թ., նշ. աշխ., էջ 274:

12 Թոմարգա՝ գիւղաքաղաք Կեսարիա անկախ գաւառին մէջ, Կեսարիա քաղաքէն հարաւ-արեւելք, անկէ մօտ 40 քմ. հեռաւորութեան վրայ, Արգէոս լերան մօտերը: Տեղւոյն հայերը ունեցած են Սր. Պօղոս-Պետրոս փառաւոր եկեղեցին, իսկ քաղաքին արեւելքը, բարձրունքի մը վրայ գտնուած է Չարխափան Սր. Աստուածածին հնամեայ վանքը: Հայեր ունեցած են նաեւ Սահակեան վարժարանը՝

բանտարկեալները տանջանքի խուցերը տանելու պաշտօնը ունէր, և այդ պատճառաւ «վարձրայի նագլիյէ»¹³ կը կոչուէր: Երբ Լաֆնեան կու գայ՝ Չէքի կը հրամայէ որ երթայ Կարապետը տանջանքի խուցը բերէ:

– Բայց մեռնելու վրայ է, կը պտախսանէ Լաֆնեան, ոչ կը խօսի, ոչ ալ լսելու վիճակին մէջն է:

– Բե՛ր, կը հրամայէ նորէն Չէքի:

Լաֆնեան՝ ստիպուած՝ կը հնազանդի: Երբ Կարապետը տանջանքի խուցը կը տանին, իրօք այլեւս մեռնելու մօտ բան մըն էր: Կը սկսին ծեծել, բայց ա՛լ անզգացածի պէս էր, կարծես չէր իմանար անգամ տրուած հարուածները:

– Չարկէ՛ք, լա՛ւ զարկէք, կը հրամայէ Չէքի:

Ու տեսնելով որ ծեծի տակ այդ հոգիի քաշքշուքը երկար կը տեւէ, սեղանի մը երկայնքը կոնակի վրայ տարածել կու տայ Կարապետը, յետոյ երկար տափակ տախտակի շերտ մը (փալաս) փորին վրայ գետեղելով, տախտակին երկու ծայրերը մէյ մէկ յաղթանդամ ժանտարմա կը նստեցնէ եւ կը հրամայէ որ սկսին օրօրուիլ: Այդպիսով կը մեռնի Կարապետ:

Բանտարկեալները այլեւս չեն տեսներ զայն: Միայն, յաջորդ օրը կը տեսնեն Չէքին, որ հեգնելով կ'ըսէր Տօնիկեանի.

– Այս ձերինները որքա՛ն կը սիրեն կոր մահը... երէկ նորէն մէկը ինքզինքը կախեր է...

Տարաբախտ Կարապետի դամբանականն էր որ կ'արտասանէր: Սովորաբար՝ երբ տրուած չարչարանքներուն տակ մէկը մեռնէր՝ կ'ըսէին թէ ինքզինքը կախեց բանտին մէջ որպէսզի իր ոճիրները չխոստովանի եւ ընկերները ձեռք չտայ:

Կարապետ՝ Էվերէկի մէջ Չէքիի վերջին գոհը եղաւ: Անկէ ետք ուրիշ հինգ թոմար-զացիներ ալ ձեռք անցուց եւ բանտ նետեց, բայց ատեն չունեցաւ զանոնք չարչարելու, որովհետեւ Թէֆիք պէյ բանտ երթալով հինգն ալ արձակեց եւ իրենց տեղերը դրկեց, առանց կարեւորութիւն ընծայելու Չէքի պէյի բողոքներուն եւ պողտութիւններուն: Արդէն տեղահանութիւնը պիտի սկսէր մօտ օրէն, անանկ որ Չէքի պէյ առիթ չունեցաւ այդ մասին ատելի բարձր տեղուանք բողոքելու:

Չէքի պէյ սովորաբար գինով կու գար բանտ՝ երբ տանջուելիք մէկը ըլլար, միշտ ներհակ գտնուած է բանտարկեալներու տրուած չարչարանքներուն, որոնք իրեն մեծ հաճոյք կը պատճառէին: Վայրի ծիծաղներ կ'արձակէր երբ անոնց ցաւի աղաղակները կ'իմանար և այդպէս ծիծաղելով՝ շատ անգամ ինք իր ձեռքով կը ծեծէր ու կը տանջէր, յանդիմանելով ժանտարմաները թէ գութ ցոյց կու տան թուրք պետութեան ու ազգին այդ ուխտեալ թշնամիներուն նկատմամբ:

տողը եւ աղջկանց առանձին բաժիններով: Աւանի երեք հայկական վարժարաններուն մէջ միասնաբար ուսանած են 520 աշակերտ: 1915-ին Թոմարզան ունեցած է մօտաւորապէս 1.000 տուն՝ 14.000 բնակիչ, որուն 25 տունը կազմած են տեղոյն թուրքերը: Տե՛ս Արգումանեան Յակոբ Ա., *Էվերէկի Պալատները*, Ա., Գափիթէ, տպարան Սահակ-Մեսրոպ, 1935, էջ 25: Ալպոյանեան Ա., նշ. աշխ., Ա., էջ 852-864:

13 Արաբերէն արմատով թրքերէն՝ փոխադրամիջոց:

Կը յիշատակէր Բումէլիի¹⁴ մէջ՝ պալքանեան պատերազմին ընթացքին՝ պուլկարներու կողմէ թուրքերու վրայ ի գործ դրուած խժոժութիւնները¹⁵ և կը հրամայէր որ աւելի խստացնեն տանջանքները...

Խեղճ հայերը ի գո՛ւր կը բողոքէին թէ իրենք պուլկար չեն և թէ արդար չէ որ պուլկարներուն ոճիրը քաւեն հայեր, որոնք ո՛չ միայն պուլկարներուն համամիտ չէին, այլ նոյնիսկ անոնց դէմ կռուեցան օսմանեան բանակին հետ:

– Ամէնքդ ալ նոյն շուներն էք կը պոռար Զէքի պէյ:

Ու ժանտարմաներուն դառնալով՝

– Զարկէ՛ք, զարկէ՛ք... օ՛խ... օ՛խ... աւելի՛ ոյժով, աւելի՛ ոյժով... օ՛խ... օ՛խ... կը գոռար, առանց երբեք ընդհատելու իր դիպիւն խնդուրը:

Թէ՛ֆիք պէյէն գատ՝ Զէքիի դէմ միջոց մը մաքառեցաւ նաև ֆրըզա գօմանտանի¹⁶ ալպանացի միրալայ¹⁷ մը՝ Շէհապէտտին պէյ, տեղահանութիւնը վաղուց կատարուելով մնցել էր, Կեսարիոյ շրջականները և քաղաքին մէջ մնացած էին միայն թրքացող ընտանիքներ և զինուորի ընտանիքներ: Զէքի պէյ որոշեց զանոնք ալ Զօր դրկել: Այն ատեն Շէհապէտտին պէյ միջամտեց և արգիլեց: Զէքի՛ կատողած, շունչը Պոլիս առաւ: Վերադարձին՝ կեղդոնէն արտօնութիւն մը բերած էր հետը: Այս անգամ՝ Շէհապէտտին պէյ չկրցաւ արգելք ըլլալ, և Զէքի աքսորեց այդ բոլոր ընտանիքները որոնք արդէն կարօտ՝ մեծ թշուառութեան մէջ հասան Մէսքէն և մասամբ ալ ճամբան մնացին: Ասոնց մէջ կը գտնուէին Թալասի¹⁸ Ամերիկեան Գոլէճի¹⁹ ուսուցչուհիները,

14 Օսմանեան կայսրութեան երոպական բաժնին տրուած ընդհանուր անուանում, որ մօտաւորապէս կը համապատասխանէ Պալքանեան երկիրներու տարածքին:

15 Ըստ Գալֆանեանի, պուլկար յեղափոխականներ՝ Զէքիի աչքերուն առջեւ մորթած են իր ծնողները, որոն հիման վրայ ան ուխտած է վրէժ լուծել քրիստոնեաներէն: Տե՛ս Գալֆանեան Կ., նշ. աշխ., էջ 173: Նոյնը կրկնած է նաեւ Ուղուրեան, ըստ որուն, Զէքի չէ թաքցուցած իր վրէժխնդրութեան պատճառը. մակեդոնացի յեղափոխականներ մօրը ստիկքը կտրելէ ետք՝ չարաչար սպաննած են իր հայրն ու մայրը: Զարչարած են նաեւ եղբայրներն ու ազգականները, որոն համար ան յաճախ կրկնած է թէ՛ «ազգի մը իմ ընտանիքիս հասցուցած չարիքներուն վրէժը պիտի լուծեմ ուրիշ քրիստոնեայ ազգէ՛ հայերէն»: Ուղուրեանի վկայութիւնը տես՝ Գըլըճեան Խ., նշ. աշխ., էջ 180:

16 Ֆրըզա թրքերէն՝ զօրագունդ, գօմանտանի՝ հրամանատար: Ֆրըզա գօմանտանի՝ զօրագունդի հրամանատար:

17 Թրքերէն՝ գնդապետ:

18 Գիւղաքաղաք՝ Կեսարիա անկախ գաւառին մէջ, Կեսարիա քաղաքէն հարաւ-արեւելք, անկէ ընդամենը 5 քլմ. հեռաւորութեան վրայ: Տեղույն հայերը մարդկային եւ նիւթական կորուստներ ունեցած են համիտեան կոտորածներու ժամանակ: Քաղաքին մէջ զարգացած էր գորգագործութիւնը: Թալասի առաքելական հայերը ունեցած են չորս եկեղեցի: Անտարանական հայերը եւս ունեցած են իրենց եկեղեցին: Հայեր ունեցած են նաեւ բազմաթիւ վարժարաններ, որոնցմէ առաւել ծանօթ է Վարդ-Պատրիկեանը: Քաղաքը ունեցած է նաեւ հիւանդանոց եւ Գոլէճ: 1913-ին ան ունեցած է մօտ 3.000 տուն, 1.300-ը՝ յոյն, 900-ը՝ հայ, 600-ը՝ թուրք: Հոն գտնուած են նաեւ փոքրաթիւ երոպացիներ եւ ամերիկացիներ: Տե՛ս Աշոտ քնյ, Երկաթ, «Թալաս». – Թէոդիկ, *Ամէնուն Տարեցոյցը*, ԺԷ, Կ. Պոլիս, 1923, էջ 360: Այլ աղբիւրի մը համաձայն, 20-րդ դարասկզբին, քաղաքի բնակչութեան 42 առ հարիւրը կազմած են հայերը՝ 1.894 անձով եւ 2.000 պանդուխտներով: Տե՛ս Kévorkian Raymond H., Paboudjian Paul B., նշ. աշխ., էջ 220:

19 Թալասի Աղջկանց Գիշերօթիկ բարձրագոյն վարժարանը հիմնուած է ամերիկացի միսիոնարներու

տասնի մօտ, բոլորն ալ լեզուագէտ ու զարգացած աղջիկներ: Ճամբան՝ իրենցմէ ամէնէն գեղանիները յափշտակուել էին միւս ընտանիքներուն պատկանող աղջիկներուն հետ: Մենք Մէսթէնէ²⁰ կը գտնուէինք երբ հոն հասան թշուառ, առանց հագուստի, առանց ծածկոցի: Իրենց վրան մը տրուեցաւ, և աշխատեցան Հալէպ դառնալ, գրեցին, թղթակցեցան բաւական բայց ապարդիւն մնացին իրենց ջանքերը:

Այդ միջոցին գերմանացի սպաներ կ'անցնէին Մէսթէնէն Պաղտատ իջնելու համար: Այս ուսուցչուհիներէն մէկ քանին զանոնք խստօրէն յանդիմանեցին թէ ինչպէ՞ս իրենք՝ քաղաքակիրթ ժողովուրդ մը՝ թուրքերուն պէս բարբարոսներու հետ կը դաշնակցին, ձեռք ձեռքի կու տան, եւ անոնց պատմեցին կատարուած բարբարոսութենէն զանազան դրուագներ: Գերմանացիները սկսան կակազել: Հազիւ կէս բերան կրցան կմկմալ որ իրենք թէեւ տեղեկութիւն ունէին թէ հայերը տեղահան կ'ըլլան, բայց երբեք չէին գիտեր որ տեղահանութիւնը կը կատարուէր այս աստիճան զարհուրելի պայմաններու մէջ:

Այդ սպաներէն մէկը որ Հալէպ կ'երթար, քանիցս խոստացաւ ուսուցչուհիներուն թէ Հալէպի մէջ ազդու դիմումներ պիտի ընէ զիրենք անապատէն Հալէպ փոխադրելու համար, բայց կ'երևայ շուտով մոռցաւ իր խոստումը, որովհետև բան մըն ալ չեղաւ:

Վերջէն՝ այդ ուսուցչուհիները Տէր Զօր սէվք²¹ եղան: Հալէպի անկումէն վերջ՝ Տէր Զօրէն եկողներէ իմացանք որ անոնցմէ մաս մը տակաւին ողջ կը մնայ Տէր Զօր:

կողմէ 1881-ին: Գլխաւոր առաքելութիւնը եղած է ուսուցչուհիներու պատրաստութիւնը: Վարժարանի կողքին գտնուած է Տօթք. Տաւի հիւանդանոցը: Հաստատութիւնը իր գոյութիւնը պահած է մինչև Փետրուար 1916 եւ ապաստան տուած է 150 աշակերտուհիներու, բայց երբ իշխանութիւնները աղջիկներէն պահանջած են կրօնափոխ ըլլալով ամուսնանալ թուրքերու հետ, անոնք մերժած են եղած առաջարկը եւ խմբովին թոյն խմելով՝ վերջ տուած են իրենց կեանքին: Տե՛ս Raymond Kévorkian, *The Armenian Genocide A Complete History*, London-New York, I. B. Tauris, 2011, p. 520:

20 Փոքրիկ գիւղ տուրիական անապատին մէջ, Եփրատի աջ ափին, Հալէպէն հարաւ-արեւելք, անկէ 90 քմ. հեռավորութեան վրայ: Տեղասպանութեան տարիներուն դարձած է հայ արքայականներու համակեդրոնացման գլխաւոր կայքերէն մէկը, ուր ստեղծուած դժուարագոյն պայմաններուն հետեւանքով՝ լեցուած է արքայական հայերու հազարաւոր դիակներով: Իշխանութիւնները սպաննած են հոն հաւաքուած որբերը՝ ձիւերու սմբակներուն տակ կոխկոտելով, ձմրան ցուրտին կիսամերկ ու բոկոտն անապատ քշելով, Եփրատի ջուրերուն մէջ նետելով, նաֆթով այրելով կամ շնչահեղձ ընելով: Տե՛ս *Հայկական հարց* հանրագիտարան, Հայկական Հանրագիտարանի գլխաւոր խմբագրութիւն, Երեւան, 1996, էջ 328: Ըստ Աստոնեանի, ցեղասպանութեան տարիներուն Մէսթէնէի մէջ թիֆուսի զոհ զացած են 100 հազար հայեր: Իր հոն գտնուած միջոցին՝ 1916-ի առաջին կիսուն, օրական մահացած է 300-500 հոգի: Տե՛ս Աստոնեան Ա., *Մեծ Ոճիրը*, էջ 18-19: Այլ աղիթով, Աստոնեան նշած է թէ՛ պատահած է որ մէկ օրուայ ընթացքին Մէսթէնէի մէջ մահանան 663 արքայականներ: Տե՛ս Աստոնեան Ա., *Մարտահին*, «Վերածնունդ» (Փարիզ), 1919, 15 մայիս, թիւ 9-10, էջ 131: Մէսթէնէի հայ արքայականներու դաժան առօրեայէն վերցուած բազմաթիւ դրուագներ տեղ գտած են Աստոնեանի *Այն Սեւ Օրերուն... (Պարկերներ)* գեղարուեստական հատորին մէջ (հրատարակութիւն «Հայրենիք»-ի, Պոսթըն, 1919):

21 Արաբերէնէ փոխառեալ թրքերէն՝ առաքում, արքայ:

THE TESTIMONY OF ARAM ANDONIAN ON THE CRIMES
COMMITTED BY THE PROVINCIAL GOVERNOR OF DER ZOR
SALEH ZEKI BEY IN EVEREK

Mihran Minassian

SUMMARY

The article presents unpublished testimonies of famous writer, editor, historian, and cultural figure Aram Andonian (Constantinople, 1879 – Paris, 1951) on the atrocities committed by Saleh Zeki Bey in Everek, a city near Caesarea. Zeki Bey was appointed the provincial governor of Der Zor after Everek and became the chief executioner of thousands of Armenians, who were deported to the Syrian deserts.

In the first chapter the author of the testimony describes how Zeki Bey was appointed as a governor of an important place like Der Zor, which was a station for thousands of Armenians who were deported here from different parts of the empire. This was done in contrast to the atrocities committed by him in Everek and contrary to the complaints of the Armenian Patriarchate of Constantinople against his appointment. This appointment was rather well-thought and preplanned, because like this the two governors of Aleppo who had refused to participate in the massacres of Armenians had been officially dismissed and were replaced by Mustafa Abdull Halik Bey (Renda), the executioner of Armenians of Baghesh. Prior to the massacres, Zeki too, had appointed people, who were his supporters and cooperated perfectly with him in the Armenian massacres in the important positions.

Relevant notes are also attached to the published document.

Key words: Aram Andonian, Zeki Bey, Mustafa Abdull Halik Bey, Everek, Der Zor, Armenian massacres, Armenian deportations.

**СВИДЕТЕЛЬСТВО АРАМА АНТОНЯНА О ПРЕСТУПЛЕНИЯХ,
СОВЕРШЕННЫХ В ЭВЕРЕКЕ ГУБЕРНАТОРОМ ПРОВИНЦИИ ДЕР ЗОР
САЛЕХ ЗЕКИ БЕЕМ**

Мигран Минасян

РЕЗЮМЕ

В статье представлены неопубликованные свидетельства известного писателя, редактора, историка и деятеля просвещения и культуры Арама Антоняна (Константинополь, 1879 – Париж, 1951) о зверствах, совершенных Салехом Зеки-беем в Эвереке, городе близ Кесарии. После Эверека Зеки Бей был назначен губернатором провинции Дер Зор и стал главным палачом тысяч армян, которые были депортированы в сирийские пустыни.

Автор свидетельства в первой главе описывает, как Зеки бей был назначен правителем такого важного района, как Дер Зор, где находились тысячи армян, депортированных сюда из разных частей империи. Это было сделано, не принимая во внимание зверств, совершенных им в Эвереке, и жалобы Армянского патриархата Константинополя против него. Это назначение кажется не случайным, а скорее продуманным и спланированным решением, так как два губернатора Алеппо, которые отказались участвовать непосредственно в массовых убийствах армян, были официально уволены и заменены Мустафой Абдул Халик Беем (Ренда), палачом армян Багеша. До массовых убийств Зеки также назначил на важные должности людей, которые были его сторонниками и сотрудничали с ним во время массовой резни армян. К опубликованному документу прилагаются также соответствующие примечания.

Ключевые слова: Арам Антонян, Зеки Бей, Мустафа Абдул Халик Бей, Эверек, Дер Зор, массовые убийства армян, депортация армян.

**ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԵՎ
ՈՉՆՉԱՑՄԱՆ ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
(1915-1918 ԹԹ.)**

Սեդա Պարսամյան

Հոդվածում ներկայացվում է 1915-1918 թվականներին հայկական մշակութային արժեքների յուրացման և ոչնչացման երիտթուրքական քաղաքականությունը՝ որպես ցեղասպանական ծրագրի բաղկացուցիչ մաս՝ հետևյալ դիտարկումներով.

- ա) Ցույց է տրվում մինչև ցեղասպանությունը հայկական ազգապատկան կալվածքների հետագա յուրացմանն ուղղված մեխանիզմների մշակումը կառավարության կողմից: Նման կանխամտածված քայլ ենք դիտարկել օրինակ հայկական եկեղեցական կալվածքներն անժառանգ ճանաչելուն ուղղված երիտթուրքական հետևողական քաղաքականությունը:
- բ) Ներկայացված են ցեղասպանության ընթացքում հայերի մասնավոր և ազգային ունեցվածքի յուրացմանը միտված կառավարության որոշումները, ապա և դրանց հետևողական գործադրումը:
- գ) Ուսումնասիրված է հայկական մշակութային արժեքների յուրացման և ոչնչացման գործում հասարակության լայն զանգվածների ներգրավվածության ու գործառույթների հարցը:

Բանալի բառեր. մշակութային արժեք, ազգային հարստություն, երիտթուրքական կառավարություն, կառավարական որոշումներ, ոչնչացում, բռնագրավում, յուրացում, պետական քաղաքականություն, ցեղասպանություն, դիտավորություն:

1890-ականներից Օսմանյան կայսրությունում հայկական մշակութային արժեքների՝ յուրացման և ոչնչացման համատարած քաղաքականությունն առավել համակարգված և հետևողական բնույթ կրեց երիտթուրքերի կառավարման տարիներին: Եթե նախկինում կոտորածներն ու դրանց ընթացքում իրագործված ոչնչացումներն ու ավերածությունները «պատժիչ» գործողությունների նպատակ ունեին՝ միաժամանակ ձգտելով շեղել հայ ժողովրդին ազգային զարթոնքի ուղուց, ապա այժմ նպատակը հայերի բնաջնջումն ու նրանց հետ կապված յուրաքանչյուր հետքի ոչնչացումն

1 Մշակութային արժեք հասկացությունը կիրառելիս առաջնորդվել ենք իրավագետ Ռաֆայել Լեմկինի առաջարկած մշակույթի սահմանմամբ՝ որպես ցեղասպանության բաղադրիչ: Նա մշակութային արժեքների ոչնչացման կամ մշակութային ցեղասպանության (*Cultural Genocide*) գործընթաց ներառեց խմբի ազգային ավանդույթների, լեզվի արգելքը, հուշարձանների, արխիվների, գրադարանների ոչնչացումը, ինչպես նաև խմբի մշակույթն ու արվեստը կտրղ մարդկանց բնաջնջումը: Չնայած քննարկումներին՝ մշակութային ցեղասպանությունը բնորոշող և դատապարտող սահմանումները չներառվեցին ՄԱԿ-ի «Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի վերջնական տեքստ: Սակայն ժամանակակից միջազգային իրավունքում այդ դրույթները հաստատագրվեցին որպես միջազգային իրավական պարտավորություններ՝ մշակութային ժառանգության պահպանման ու դրանց ոչնչացման համար պատասխանատվության ենթարկելու համար: Մանրամասն տե՛ս Պարսամյան Ս., «Մշակութային ցեղասպանությունը միջազգային իրավունքի համատեքստում. տեսական հիմնադրույթներ», *Ցեղասպանագիտական հանդես*, 2(2), 2014, էջ 164-175:

էր: Երիտթուրքական վարչակարգը հարձակում գործեց սոցիալական այն բնութագրիչների վրա, այն է՝ ազգ, մշակույթ, լեզու, որոնք, իրենց խորին համոզմամբ, լուրջ վտանգ էին ներկայացնում օսմանյան ինքնիշխանությանը, միասնությանն ու առավելապես միատարրությանը:

Երիտթուրքական իշխանությունների կողմից հայերի բնաջնջմանը վերաբերող՝ առ այսօր հայտնի փաստաթղթերի կամ որոշումների ուսումնասիրությունը հիմք է տալիս պնդելու, որ հայերի մշակութային ցեղասպանությունը կամ հայկական հետքի ոչնչացումը, թեև ոչ այնքան առաջնային խնդիր, ինչպես ֆիզիկական բնաջնջումը, եղել է երիտթուրքերի ցեղասպանական ծրագրի բաղկացուցիչ մաս: Ստորև բերված փաստարկներն ուղղակի և անուղղակի վկայում են երիտթուրքական կառավարության կողմից հայկական մշակութային արժեքների կամ հայկականություն հիշեցնող բոլոր հետքերի ոչնչացման կանխամտածվածությունն ու դիտավորությունը:

Մեր կարծիքով, երիտթուրքական կառավարությունը կայսրության հայերի բնաջնջումը ծրագրել էր դեռ մինչև Առաջին աշխարհամարտը²: Կայսրության Ներքին գործերի նախարարության հանձնարարությամբ 1912-1913 թթ. Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից կազմվել և Թուրքիայի արդարադատության ու դավանանքների նախարարությանն է ներկայացվել պաշտոնական ցուցակագրություն՝ կայսրության տարածքում գործող հայկական եկեղեցիների և վանքերի թվաքանակի, գտնվելու վայրի վերաբերյալ և այլ մանրամասներ³: Մեր ուսումնասիրությունները թույլ են տալիս պնդելու, որ հայկական վանքերի ու եկեղեցիների նկատմամբ ոչ օսմանյան սուլթանների և ոչ էլ երիտթուրքական իշխանությունների կողմից նախկինում երբեք նման հետաքրքրություն չի ցուցաբերվել, և ոչ Հայոց պատրիարքարանի և ոչ էլ առաջնորդարանների կողմից նախկինում նման ցուցակներ չեն ուղարկվել կառավարական մարմիններին: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ երիտթուրքական կառավարության ցուցաբերած նման հետաքրքրությունն Առաջին աշխարհամարտի նախօրեին որոշակի նպատակ է հետապնդել:

Որպեսզի ապացուցենք վերոնշյալը, փորձենք հերքել երիտթուրքական կառավարության ցուցաբերած նման հետաքրքրության հնարավոր բացատրությունը՝ դիտար-

2 Այս հարցի վերաբերյալ ցեղասպանագիտության մեջ գոյություն ունի երկու հակադիր տեսակետ. մի խումբ ցեղասպանագետների պնդմամբ՝ Հայոց ցեղասպանությունը կանխորոշված, շարունակական գործընթացի հետևանք էր (այս տեսակետի գլխավոր պաշտպանը Վահագն Դադրյանն է): Գիտնականների մյուս խումբը, չբացառելով Հայոց ցեղասպանության՝ շարունակականությամբ բացատրվող փաստերը, շրջանառում է՝ վերջինիս չկանխորոշված, նախապես չծրագրված լինելու տեսակետը՝ պնդելով, որ այն ավելի շուտ կործանման եզրին կանգնած կայսրության նախաձեռնած դիպվածային իրադարձություն էր (այս տեսակետի գլխավոր պաշտպանը Ռոնալդ Սյունին է): Գիտական բանավեճի մասին մանրամասն տե՛ս Akçam T., *The Young Turks' Crime against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire*, Princeton: Princeton University Press, 2012, pp. 126-129. Հայոց ցեղասպանության՝ երկարատև, շարունակական գործընթաց լինելու հիմնավորումները տե՛ս Սաֆրաստյան Ռ., *Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.)*, Երևան, «Լուսակն» հրատ., 2009:

3 Սաֆրաստյան Ա. Խ., «Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքարանի կողմից Թուրքիայի Արդարադատության և Դավանանքների մինիստրությանը ներկայացված հայկական եկեղեցիների և վանքերի ցուցակներն ու թաքրիրները (1912-1913 թթ.)», *Էջմիածին*, 1965, Ա (յոնուար), էջ 40-42:

կելով լոկ վերջինիս կողմից իրականացվող ժողովրդագրական քաղաքականության համատեքստում: 1912-1913 թթ. Բալկանյան պատերազմներում Թուրքիայի կրած ծանր կորուստներից հետո Միություն և առաջադիմություն կոմիտեի համար ազգային անվտանգության խնդիր դարձավ Անատոլիայի ազգային-կրոնական միատարրացումը, որը դրվեց բնակեցման ու վերաբնակեցման քաղաքականության հիմքում: Այս քաղաքականությունն իրագործելու համար ամենից առաջ հարկավոր էր վերաձևել օսմանյան բյուրոկրատիան, ստույգ տվյալներ ձեռք բերել Անատոլիայի ազգային-կրոնական համայնքների՝ ինչպես բնակչության, այնպես էլ գույքի վերաբերյալ: Առանձնահատուկ տեղ է հատկացվել շարժական ու անշարժ գույքին: Նահանգներ ուղարկված հույժ գաղտնի հեռագրերում Ներքին գործերի նախարարությունը տեղական պաշտոնյաներին հրահանգում էր «խիստ գաղտնի կերպով» ցուցակներ լրացնել քրիստոնյաների հարստության, կրթության, հասարակական կարգավիճակի և իրենց համայնքների նշանավոր ու ազդեցիկ անդամների մասին և ուղարկել նախարարություն⁴: Հրահանգների հույժ գաղտնիությունն ինքնին ենթադրում է որոշակի կանխամտածվածություն՝ քրիստոնյաների ունեցվածքի հետագա յուրացման հարցում:

Պատմաբան Թաներ Աքչամի համոզմամբ՝ հավաքված տեղեկությունները դրվեցին կայսրության քրիստոնյա բնակչության բռնի տեղահանման և նրանց փոխարեն մահմեդականներ բնակեցնելու՝ ինչպես նախապատերազմյան, այնպես էլ պատերազմական շրջանի քաղաքականության հիմքում⁵: Այլ ձևակերպմամբ՝ ժողովրդագրական այս քաղաքականությունը հնարավոր դարձրեց Հայոց ցեղասպանությունը:

Դեռ մինչև Առաջին աշխարհամարտը երիտթուրքական կառավարության կողմից հայերի գույքերի հետագա յուրացման համար մեխանիզմների մշակման կանխամտածվածության թեզն ապացուցելու հարցում կարևոր ուղենիշ է նաև հայապատկան ազգային կալվածքներն անժառանգ ճանաչելուն միտված թուրքական քաղաքականությունը: Այն ժամանակին անհանգստություն է առաջացրել հայ մտավորական-քաղաքական շրջանակներում: Դրա լավագույն վկայությունը 1911 թ. նոյեմբերի 28-ին Գրիգոր Զոհրապի⁶ մեծ վեճիր Քյուչուկ Մեհմեդ Սաիդին ուղղված խնդրագիրն է⁷: Ընդարձակ խնդրագրում Գ. Զոհրապը, ելնելով պատգամավորական իրավունքից և փաստերի վրա հիմնվելով, մանրամասն ներկայացնում է արևմտահայության ծանր կացությունը, տեղական իշխանությունների, դատարանների կամայականություններն

4 Տե՛ս Akçam T., նշվ. աշխ., էջ 36-40:

5 Նույն տեղում:

6 Գրիգոր Զոհրապ (1861-1915) – գրող, հրապարակախոս, փաստաբան-իրավագետ, հասարակական-քաղաքական գործիչ, 1908-1915 թթ. Օսմանյան խորհրդարանի պատգամավոր:

7 Խնդրագիրը հայերեն թարգմանությամբ առաջին անգամ լույս է տեսել «Ազատամարտ» օրաթերթի՝ 1911 թ. դեկտեմբերի 21-22 (թիվ 776-777) համարներում: Տե՛ս «Պ. Զոհրապի յիշատակագիրը ուղղուած վարչապետ Սաիտ փաշային», «Ազատամարտ» (Կ.Պոլիս), 1911, 21 դեկտեմբեր, թիվ 776, 22 դեկտեմբեր, թիվ 777, 1911, էջ 1: Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում պահվող թուրքերեն բնագրից խնդրագրի ամբողջական թարգմանությունը Ա. Շ. Փափազյանի կողմից տե՛ս նաև՝ Վավերագրական նյութեր արևմտահայերի մասին, *Հայագիտությունը արդարասահմանում*, գիտա-ինֆորմացիոն բյուլետեն, Գ. մատենաշար, թիվ 2 (56), Երևան, 1983, էջ 5-12:

ու զեղծումները, այդ թվում՝ ազգապատկան գույքի ու կալվածքների հափշտակումները⁸։ Հայկական վանքերի, եկեղեցիների ու դպրոցների եկամուտը հանդիսացող կալվածքներն անժառանգ ճանաչելու գործում կարևոր դերակատարություն ունեն *Վաքրֆային* տեսչությունը⁹՝ արտոնված կառավարության կողմից։ Վերջինս ինչ-որ երևակայական արձանագրություններ կազմելու միջոցով պարբերաբար դատական գործեր է հարուցել հիշյալ կալվածքների անժառանգականության խնդրով՝ միննույն ժամանակ խափանելով այդ հաստատությունների գործունեությունը¹⁰։ Հայկական ազգապատկան կալվածքներն անժառանգ են ճանաչվել ու յուրացվել հիմնականում շարիաթական դատարանների¹¹ կայացրած վճիռներով՝ մեկ-երկու սուտ վկայությունների հիման վրա։ Արևմտյան Հայաստանի տարածքում մեծ չափերի հասնող այդօրինակ յուրացումները, անկասկած, *Վաքրֆային* տեսչության կամ դատարանների ինքնագործունեության հետևանք չէին, այլ իրականացվում էին կառավարության անմիջական թողտվությամբ և ցուցումներով։ Այս առումով հատկանշական է վերոնշյալ խնդրագրում Գ. Զոհրապի՝ որպես իրավաբանի հիշեցումը մեծ վեզիրին՝ առ այն, որ *շարիաթական* դատարանը միայն կառավարության ցուցումով կարող է հողային դատեր լսել¹²։ Վերոնշյալ խնդրի վերաբերյալ Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանը նույնպես դիմումներ է հղել կառավարությանը, որոնց ի պատասխան ստացվել է հետևյալ անհիմն պատճառաբանությունը՝ «օրենքի դրվածքը այդպես է»¹³։ Խնդրագրի «Խաղաղության և կարգ ու կանոնի հաստատումը» խորագրի ներքո Զոհրապը կետ առ կետ արևմտահայությանը վերաբերող խնդիրների լուծման հավանական տարբերակներ է առաջարկում։ Մասնավորապես ազգային կալվածքների հարցում նա պնդում է, որ հայկական դպրոցներին, եկեղեցիներին ու վանքերին կից հողերի և կալվածքների անժառանգության վերաբերյալ հարցապնդումներն արգելվեն, իսկ *նիզամիե* դատարաններին հանձնված դատերի առնչությամբ կառավարական խորհուրդը որոշում կայացնի *շարիաթական* դատարանների կայացրած վճիռները չեղյալ համարելու մասին¹⁴։ Բանն այն է, որ *շարիաթական* դատարանների միջոցով հողերի յուրացումներն այնպիսի մեծ չափերի էին հասել, որ կառավարությունը որոշում ընդունեց հողային բողոքները վճռել *նիզամիե* դատարաններում։ Սակայն կառավարության այդ «զիջումը» ևս որևէ արդյունք չտվեց, քանի որ «օրինական» դարձած

8 Տե՛ս Վավերագրական նյութեր արևմտահայերի մասին, էջ 5-12։

9 Հիմնվելով շարիաթի սկզբունքների վրա՝ տնօրինում էր կրոնապատկան և սեփականատիրական այլ կալվածքներ։

10 Վավերագրական նյութեր արևմտահայերի մասին, էջ 8։

11 Օսմանյան կայսրությունում գոյություն ունեն երկու տիպի դատարան՝ *շարիաթական* և *նիզամական*։ Շարիաթական դատարանը գործում էր զուտ Ղուրանի դրոմանների հիման վրա, և նրա իրավասությանն էին ենթակա անշարժ գույքի, ամուսնության, ժառանգության, դավանանքի վերաբերյալ հարցերը, իսկ *նիզամական*ը գործում էր պետության կողմից ընդունված քաղաքացիական օրենքների՝ «դյուսթուր»-ի հիման վրա։

12 Վավերագրական նյութեր արևմտահայերի մասին, էջ 8։

13 Նույն տեղում։

14 Նույն տեղում, էջ 11։

այդ յուրացումները պետական քաղաքականության մաս էին կազմում և այս կամ այն դատական մարմնի կամայական որոշումները չէին: Ազգապատկան կալվածքների յուրացման այս քաղաքականությունը հետագայում դրվեց տեղահանված հայության ունեցվածքը յուրացնելու քաղաքականության հիմքում և արտացոլվեց դրան ուղղված որոշումներում:

Պատկերն առավել պարզ է դառնում, երբ դիտարկում ենք երիտթուրքական կառավարության հետագա որոշումներն ու գործողությունները՝ ուղղված հայկական ազգային-մշակութային հաստատությունների դեմ:

Հայոց ցեղասպանության տարիներին հայկական պատմամշակութային հուշարձանների հետ մեկտեղ կողոպտվել ու ավերվել են նաև Հայոց առաջնորդարանները, այդ թվում և Կիլիկյայի կաթողիկոսարանը¹⁵: 1916 թ. հոկտեմբերի 7-ին Ահմեդ Ջեմալին¹⁶ հղած իր հեռագրերից մեկում Թալեաթը բացատրելով, թե ինչու է Սսի հայկական կաթողիկոսարանի գույքը բռնագրավվել, և ինչ պատճառով է կաթողիկոսն արքային Սսից, հետևյալն է գրում. «...նպատակն ուղղված է այդ վայրի գոյությունը լիովին վերացնելուն, վայր, որտեղ հայերը ենթադրում են, թե Կիլիկիայում շատ մեծ պատմական և ազգային հարստություններ կան, և որը իբրև թե եղել է հայկական կառավարության ամենավերջին արքայանիստ կենտրոնը»¹⁷: Թալեաթն այնուհետև խոսում է այս շրջանի բոլոր հայերին արքային հետո Սսում մնացած հայկական գոյությունը մեջտեղից վերացնելու անհրաժեշտության մասին¹⁸: Իր տեսակի մեջ բացառիկ այս վավերագիրը լիովին հաստատում է մեր կողմից առաջ քաշված այն թեզը, որ հայկական հետքերի վերացումն անկասկած երիտթուրքների ցեղասպանական ծրագրի բաղկացուցիչ մաս է կազմել:

Թալեաթի հրահանգն անմիջապես գործի է դրվել Ջեմալ փաշայի զինակից և փոխանորդ Օմեր Ֆահրեդդինի¹⁹ կողմից²⁰: Վերջինս Կիլիկիայի հայկական հուշարձաններն ավերակների վերածելուց հետո հայտարարել է. «Անտարանը ձեր ձեռքն պիտի առնենք»²¹: Սսի մայրավանքը հայերի տեղահանությունից հետո վերածվել է մզկիթի²²:

15 *Խմբագրական. Համաշխարհային պարերազմ*, «Մշակ» (Թիֆլիս), 1915, 21 օգոստոս, թիվ 183, էջ 1:

16 1914 թ. նշանակվել է կայսրության ռազմածովային նախարար, 1914-1918 թթ. Սիրիայում գործող 4-րդ բանակի հրամանատար, 1915-1917 թթ. Սիրիայի կառավարիչ, 1915 թ. կիլիկիահայության տեղահանության ու կոտորածների կազմակերպիչներից:

17 Աքչամ Թ., «Դա ցեղասպանություն է, պարոն վարչապետ», թարգմանությունը՝ Մ. Անումյանի [<http://akunq.net/am/?p=20598>, դիտվել է՝ 01.09.2018]:

18 Նույն տեղում:

19 Օմեր Ֆահրեդդին (1868-1948) – Հայտնի «Անապատի վագր» մականվամբ, 1914 թ. նշանակվել է 4-րդ բանակին առընթեր, Մոսուլում տեղակայված 12-րդ ջոկատի հրամանատար, 1915 թ. գործուն մասնակցություն է ունեցել Ուրֆայի, Չեյթունի, Մուսա լեռան, Հաճնի հայերի ինքնապաշտպանության ճնշմանը:

20 Տոնապետեան Պ., *Չայն փառապելոց*, Փարիզ, տպ.՝ Յակոբ Բ. Թիւրապեան, 1922, էջ 289-290:

21 Նույն տեղում:

22 Քելեշեան Մ., *Միւ-մարեան*, Պէյրոթ, տպ. «Հայ ճեմարանի», 1949, էջ 200:

ա) Որոշումներ՝ միտված հայերի մասնավոր և ազգային ունեցվածքի յուրացմանը

Չնայած այն հանգամանքին, որ հայերի տեղահանության մասին որոշումն օսմանյան կառավարության կողմից ընդունվել է 1915 թ. մայիսի 27-ին և գործադրության մեջ մտել 1915 թ. հունիսի 1-ին, երբ «Թ-աքվիմ-ի վեքայի» (Takvîm-i Vekâyi) պաշտոնաթերթում հրապարակվեց «Տեղահանության մասին ժամանակավոր օրենք»-ի տեքստը²³, առաջին զանգվածային տեղահանությունները, թալանն ու բռնագրավումները սկսվել էին դեռ ավելի վաղ²⁴։ Մասնավորապես, հայերին պարբերաբար թալանելու գործընթացը սկսվել էր դեռ 1914 թ. աշնան ընդհանուր գորակոչի հետ միաժամանակ, իսկ նոյեմբերին սրբազան պատերազմի հայտարարումը, նոր թափ հաղորդեց դրան²⁵։ Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուի հավաստմամբ թուրքական բանակի մոբիլիզացիային ուղեկցող բռնագրավումներն իրականում վերածվեցին քաղաքային բնակչության լայնածավալ կոլոպուտի²⁶։

Այսպիսով, ամենաթողության պայմաններում մուսուլման լայն զանգվածների կողմից հայերի ունեցվածքի հետ մեկտեղ բռնագրավվել, կոլոպուտվել ու յուրացվել են նաև հայկական ազգային-մշակութային հաստատությունները։ Պետության համար առավել քան հրատապ էր դառնում զանգվածային թալանը զսպելու և պետական գանձարանը հարստացնելու ուղղությամբ միջոցառումների իրականացումը։ Երիտթուրքական կառավարությունն այս խնդիրը լուծեց ստորև ներկայացված իրավական երեք հիմնական ակտերի գործադրմամբ՝ այդպիսով փորձելով «օրինականացնել» հայերի ունեցվածքի թալանը։

Երիտթուրքական կառավարության կողմից ընդունվել և 1915 թ. մայիսի 28/հունիսի 10-ին հրապարակվել է 34 հոդվածներից բաղկացած հրահանգ (talimat-name, այսուհետև հունիսի 10-ի հրահանգ), որը ցուցումներ է պարունակել տեղահանվածների ունեցվածքի, ազգային կալվածքների գրանցման կարգի, տնօրինման և պատերազմի ավարտից հետո դրանք իրենց տերերին վերադարձնելու մասին²⁷։ Այս

23 Akçam T., *A Shameful Act. The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility*, N. Y., Henry Holt and Company, 2006, p. 194. Տե՛ս նաև Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 187։

24 Авакян А., *Геноцид армян: механизмы принятия и исполнения решений*, Ереван, МИГА, 2013, с. 7. Տե՛ս նաև Ինճիկյան Հ. Գ., *Օսմանյան կայսրության անկումը. սոցիալ-տնտեսական ակնարկ*, Երևան, «Հայաստան» հրատ., 1984, էջ 296-297։

25 Տե՛ս Morgenthau H., *Ambassador Morgenthau's story*, New York, Doubleday, Page and Company, 1918, էջ 169-170, ինչպես նաև Հոմմեր Է., *Ճշմարտությունը Աշխարհամարտի ժամանակ Թուրքիայում հայ ժողովրդի կրած տառապանքների մասին*, գերմաներենից թարգմանեց Էվելինա Մակարյանը, Երևան, ԵՊՀ հրատ., 2002, էջ 16։

26 Morgenthau H., նշվ. աշխ., էջ 64։

27 Հրահանգի ամբողջական տեքստը հայերեն թարգմանությամբ առաջին անգամ շրջանառության մեջ է դրել Հայկազն Ղազարյանը, սակայն հրահանգի ընդունման ամսաթիվը նշելով «մայիս 16, ի զօրո՝ գործադրութեան համար մայիս 26, 1331 (1915)» (տե՛ս Ղազարեան Հ., *Տեղապահ թուրքը*, Պէրոյթ, տպ. Համազգային, 1968, էջ 227-235), ինչին հանդիպում ենք նաև հետագայում հրատարակված ցեղասպանագիտական գրականության մեջ։ Տե՛ս Վարդան Լ., *Հայկական տրանսիլիզը և հայերու լքեալ գոյքերը*, Պէրոյթ, տպ. «Ատլաս», 1970, էջ 93-100։ Ինճիկյան Հ. Գ.,

հրահանգի՝ հայտնի նաև որպես «լքյալ գույքերի օրենք» անվամբ, 2-րդ, 3-րդ, 6-րդ հոդվածներն անմիջականորեն առնչվում են ազգային-մշակութային հաստատություններին: Համաձայն 2-րդ հոդվածի՝ գյուղերի և ավանների բնակչության տարագրումից հետո վերջիններիս պատկանող տները և բոլոր շենքերը (խոսքը վերաբերում է նաև ազգային-մշակութային հաստատություններին)՝ ներսում գտնվող ապրանքներով, արտոնված հատուկ հանձնախմբերի կողմից պետք է փակվեին, դռները կնքվեին և պահպանության տակ առնվեին²⁸: Համաձայն 3-րդ հոդվածի՝ եկեղեցիներն ու դպրոցները վերածվելու էին պահեստավայրերի, որտեղ պետք է փոխադրվեին տեղահանվածների՝ «պահպանության» տակ առնված գույքերը՝ արձանագրվելուց հետո միայն²⁹: Ինչ վերաբերում է եկեղեցապատկան ունեցվածքին, ապա 6-րդ հոդվածով սահմանված է, որ եկեղեցիներում առկա գույքը, պատկերները, սուրբ գրքերը «տոմարի» (գրանցամատյան) մեջ պետք է արձանագրվեն և կից տեղեկագրով պահվեն տեղերում: Ապա տարագրված բնակչության՝ որոշակի վայրում հաստատվելուց հետո յուրաքանչյուր գյուղին պատկանող եկեղեցական գույքը նրանց պետք է ուղարկվի³⁰:

1915 թ. սեպտեմբերի 13/26-ին հրապարակվել է 11 հոդվածներից բաղկացած ժամանակավոր օրենք՝ հայտնի նաև որպես լուծարման օրենք (Tasfiye Kanunu), որի գլխավոր նպատակը հայերի ունեցվածքի լուծարումն էր³¹: Այն կոչված էր նաև լրացնելու նախորդի բացթողումները, մասնավորապես հստակեցնելու սեփականատերերի իրավունքները, հանձնաժողովների և ենթահանձնախմբերի կազմության ձևն ու գործելակերպը³²: Այս օրենքի 2-րդ հոդվածով հստակեցվել է մինչև անգամ «խնդրո առարկա անձերու [հայերի] շենքերի և եկեղեցապատկան հողերի» արձանագրության վայրը, այն է՝ Բարեսիրական հաստատությունների նախարարության (Evkaf) անունով, իսկ 9-րդ հոդվածով՝ վարձակալության ենթակա (icari tayinli) շենքերը, եկեղեցապատկան հողերը և Էվքաֆի ու տնտեսական նախարարությունների

Օսմանյան կայսրության անկումը. սոցիալ-տնտեսական ակնարկ, Երևան, «Հայաստան», 1984, էջ 300 և այլն: Ցեղասպանագետ Վահագն Դադրյանը, ավելի ուշ խոսելով սույն հրահանգի, կամ ինչպես ինքն է նշում, հավելյալ օրենքի ընդունման ու գործադրման մասին, ինչը փաստորեն հաջորդել է մայիսի 27-ին ընդունված տեղահանության օրենքին, նշում է հունիսի 10 (սոր տոմարով) ամսաթիվը, որը հետագայում տեղ է գտել նաև ցեղասպանագետներ Թաներ Աքչամի, Ուդուր Ումիթ Ունգորի և այլոց ուսումնասիրություններում: Տե՛ս Dadrian V., *The History of the Armenian Genocide. Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus*, Oxford, Berghahn books, 1995, p. 222, ինչպես նաև Akçam T., *A Shameful Act*, p. 188; Uğur Ümit Üngör and Mehmet Polatel, *Confiscation and Destruction: The Young Turk Seizure of Armenian Property*, London, 2011, p. 44. Հրահանգի անգլերեն թարգմանությունը տե՛ս Baghdjian K. K., *The Confiscation of Armenian Properties by the Turkish Government said to be abandoned*, Antelias, “Khatchig Babikian Literary Fund”-N-3, Printing House of the Armenian Catholicosate of Cilicia, 2010, pp. 480-487.

28 Ղազարեան Հ., նշվ. աշխ., էջ 227:

29 Նույն տեղում, էջ 228:

30 Նույն տեղում, էջ 229:

31 Dadrian V., *The History of the Armenian Genocide*, p. 222, տե՛ս նաև Akçam T., *A Shameful Act*, էջ 188: Այս օրենքի հայերեն ամբողջական թարգմանությունը տե՛ս Վարդան Լ., նշվ. աշխ., էջ 153-155:

32 Վարդան Լ., նշվ. աշխ., էջ 153-155:

մոտ արձանագրված այլ հոդեր ներգաղթի օրենքի համաձայն թույլատրվում էր հատկացնել մուսուլման ներգաղթողներին՝ «մուհաջիրներին»³³:

Սեպտեմբերի 26-ի օրենքն ուժի մեջ մնաց մինչև 1918 թ. նոյեմբերի 4-ը³⁴: Այն ևս բավարար չեղավ հայերի ունեցվածքի և ազգային կալվածքների բռնագրավումն ու թալանն «օրինականացնելու» համար: Վերջինիս 8-րդ հոդվածի համաձայն՝ մշակվել և 1915 թ. հոկտեմբերի 26-ին «Թաքվիմ-ի վաքայի»-ում հրապարակվել է 25 հոդվածներից կազմված մեկ այլ կանոնադրություն՝ «13 սեպտեմբեր 1331 [1915]-ին տրված ժամանակավոր օրենքի գործադրումը հատկեցնող կանոնագիր» խորագրով³⁵: Վերջինիս 16-րդ հոդվածի համաձայն՝ եկեղեցիներում գտնվող գույքերը, պատկերները, սուրբ գրքերը պետք է արձանագրվելին տոմարի մեջ և վերցվելին պահպանության ներքո, իսկ դպրոցների, վանքերի և ընդհանրապես դպրոցական պիտույքների ու կահկարասու օգտագործման իրավունքը պետք է փոխանցվեր կրթական տեսչություններին³⁶:

Հատկանշական է, որ ինչպես տեղահանության, այնպես էլ տեղահանվածների ունեցվածքին վերաբերող վերոնշյալ իրավական ակտերում ձևակերպումները, որպես կանոն, ընդհանուր են եղել՝ չնշելով ո՛չ հայերի և ո՛չ էլ որևէ այլ ազգի անվանում: Ավելի ուշ պարզ է դարձել, որ դա արվել է օրենքի իրական նպատակները հայերից թաքցնելու համար³⁷:

33 Դեռևս XIX դարի կեսերից սուլթան Աբդուլ Համիդ II-ի կողմից Օսմանյան կայսրությունը, մասնավորապես Արևմտյան Հայաստանը «մուհաջիրներով»՝ մուսուլման վերաբնակիչներով բնակեցնելու ժողովրդագրական քաղաքականությունն ուներ նաև ընդգծված հակահայկական ուղղվածություն: Դրանով սուլթանական կառավարությունը ձգտում էր Արևմտյան Հայաստանում բարձրացնել մահմեդական ազգաբնակչության թվաքանակը՝ միաժամանակ խրախուսելով հայերի արտագաղթը: 1913 թ. Բալկանյան պատերազմների ավարտից հետո հիմնականում Բալկաններից դեպի կայսրություն սկսվեց «մուհաջիրների» նոր հոսք, որոնց մի մասը վերաբնակեցվեց Արևմտյան Հայաստանում: Այս մասին մանրամասն տե՛ս Авакян А., *Черкесский фактор в Османской империи и Турции (вторая половина XIX – первая четверть XX вв.)*, Ереван, МИГА, 2001, с. 134-136, 222-223. Վարդան Լևոն, նշվ. աշխ., էջ 153, 155:

34 Հովհաննիսյան Ա., *Հայերի ունեղրկման գործընթացը Օսմանյան կայսրությունում և քեմալական Թուրքիայում*, Երևան, «Գիտություն», 2016, էջ 18:

35 Ստորագրված սուլթան Մեհմեդ Ռեշադի, Շեյխ ուլ-իսլամ և կայսերական վաքըֆների նախարար Հայրիի, Մեծ վեզիր Մեհմեդ Սայիդի, Ներքին գործերի նախարար և ֆինանսական գործերի նախարարի տեղակալ Թալեթի, Ռազմական նախարար և Ծովային նախարարի տեղակալ Էնվերի, Արդարադատության նախարար և պետական խորհրդի տեղակալ Իբրահիմի, Արտաքին գործերի նախարար Խալիլի, Լուսավորության նախարար և կապի նախարարի տեղակալ Ահմեդ Շյուքրիի, Հասարակական աշխատանքների նախարար Աբբասի, Առևտրի և գյուղատնտեսության նախարար Ահմեդ Նեսիմի կողմից: Այս փաստաթղթի օսմաներեն բնագրի առաջին և վերջին էջերի լուսապատճենը տե՛ս *Հավելված*, պատկեր 1:

36 1915 թ. հոկտեմբերի 26-ի կանոնադրության 16-րդ հոդվածի օսմաներեն բնագրի լուսապատճենը տե՛ս *Հավելված*, պատկեր 2: Թարգմանությունն օսմաներեն բնագրից՝ բանասեր, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտաշխատող Միհրան Մինասյանի: 1915 թ. հոկտեմբերի 26-ի կանոնադրության ամբողջական թարգմանությունը տե՛ս նաև Փափազյան Ա., *Թուրքական վավերագրական նյութեր Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների մասին (1839-1915 թթ.)*, Երևան, «Զանգակ-97», 2002, էջ 214-222:

37 Dadrian V., *The History of the Armenian Genocide*, p. 224.

Այսպիսով, համաձայն վերոնշյալ հիմնական ակտերի, հայերի հոգևոր և ազգային-մշակութային հաստատությունները, մասնավորապես վանքերը, եկեղեցիները, դպրոցները՝ կից շինություններով ու կալվածքներով, արտոնված հանձնաժողովների կողմից գույքագրվելուց հետո պետք է փակվեին, դռները կնքվեին և հանձնվեին մուսուլման ներգաղթողներին: Վերջիններս իբրև պետք է «պահպանեին» և «պատասխանատվություն կրեին» այդ շինությունների համար և հնարավոր ավերածությունների դեպքում «փոխհատուցեին վնասը»: Ինչ վերաբերում է վանքերում ու եկեղեցիներում պահվող մշակութային և կրոնական արժեք ներկայացնող առարկաներին՝ ձեռագրերին, պաշտամունքային գրքերին, սրբապատկերներին և այլ արժեքների, ապա դրանք նույնպես պետք է մանրամասն արձանագրվեին և պահպանության տակ առնվեին՝ ավելի ուշ իրենց օրինական տերերին վերադարձնելու պայմանով: Չնայած գույքագրման և պահպանության մասին մանրամասն ձևակերպումներին՝ ակնհայտ էր, որ այդ փաստաթղթերը ձևական բնույթ էին կրում, քանի որ դրանց հեղինակները լավ գիտեին, թե իրականում ինչ ճակատագիր էր սպասվում այդ ունեցվածքի իրական տերերին՝ կայսրության հայ բնակչությանը: Հետևաբար, այդ ակտերը կոչված էին միայն «իրավական» ուղի հարթելու հայերի ինչպես մասնավոր, այնպես էլ ազգապատկան ժառանգության հետագա բռնագրավման ու թալանի համար:

Վերոնշյալ երեք հիմնական ակտերից բացի, երիտթուրքական կառավարությունը տեղական իշխանություններին է ուղարկել նաև միջանկյալ այլ հրահանգներ ու շրջաբերականներ՝ մասնավորապես տեղահանվածների ունեցվածքի վաճառքին³⁸, անշարժ գույքի տնօրինմանը³⁹, այդ թվում՝ ազգային հաստատություններին և դրանցում առկա գույքի տնօրինման, յուրացման եղանակներին վերաբերող, որոնց մասին կխոսենք ստորև:

բ) Եկեղեցական գույքի լուծարում և յուրացում

Ընդհանուր առմամբ ձևավորվել և մայրաքաղաքից գավառներ են գործուղվել թվով 33 «Լքյալ գույքերը լուծարող հանձնաժողովներ» (Emvâl-i Metruke Tesviye Komisyonu)⁴⁰: Վերջիններս, իրենց ենթակայության տակ ունենալով հատուկ արտոնված ենթահանձնախմբեր, գտնվել են Ներքին գործերի նախարարության անմիջական վերահսկողության ներքո և յուրաքանչյուր 15 օրվա ընթացքում զեկուցագրերի միջոցով տեղեկացրել են իրենց գործունեության ընթացքի մասին⁴¹: Այս հանձնաժո-

38 1915 թ. հուլիսի 7-ի հրահանգով, օրինակ, թույլատրվել է տեղահանված հայերի ունեցվածքը վաճառել մուսուլմաններին: Տե՛ս Авакян А., *Геноцид армян*, էջ 73:

39 1915 թ. դեկտեմբերի 2 (15)-ին ընդունված հավելյալ օրենքը վերաբերվել է տեղահանվածների «լքյալ» անշարժ գույքի տնօրինման հարցերին, որին կցվել է գույքագրման ձևաթղթի օրինակ: Ձևաթղթի օմաներեն բնագրի լուսապատճենը տե՛ս Հավելված, պատկեր 3:

40 Տե՛ս Uğur Ümit Üngör and Mehmet Polatel, *Նշվ. աշխ.*, էջ 66, տե՛ս նաև Վարդան Լ., *Նշվ. աշխ.*, էջ 104: Հայկազն Ղազարյանը նշում է՝ «Լքյալ գույքերի վարչական հանձնաժողովներ» (Emvâl-i Metruke Idare Komisyonu), տե՛ս Ղազարեան Հ., *Նշվ. աշխ.*, էջ 227-228:

41 Ղազարեան Հ., նույն տեղում, տե՛ս նաև՝ Աստոյան Ա., *Դարի կողոպույր. հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում*, Երևան, «Նաիրի», 2013, էջ 47:

ղովները պետք է գույքագրեին, ապա համաձայն հունիսի 10-ի հրահանգի 5-րդ հոդվածի արտոնված ենթահանձնախմբերի միջոցով հրապարակային աճուրդով վաճառեին հայերի մասնավոր շարժական ունեցվածքը՝ այդպիսով լուծարելով այն⁴²։ Խոսքը, սակայն, հայերի մասնավոր շարժական ունեցվածքի, այլ ոչ ազգապատկան կալվածքների ու մշակութային արժեքների մասին է։ Մինչդեռ իրականում տեղի ունեցավ հետևյալը. հայկական եկեղեցիները վերածվեցին պահեստավայրի, ապա նաև վաճառատեղերի, որտեղ կենտրոնացվեց տեղահանված հայերին պատկանող շարժական ողջ ունեցվածքը՝ չնչին գներով աճուրդի միջոցով վաճառքի հանելու կամ հետագա թալանի համար⁴³։

Ազգությամբ արաբ փաստաբան Ֆայեզ ալ-Ղուսեյնը, Դիարբեքիրում ականատես լինելով թուրքերի գործողություններին, իր հուշերում գրում է. «Ես հետևում էի, թե ինչպես խաչերը հանվում էին եկեղեցիների գմբեթներից, իսկ եկեղեցիներն օգտագործվում որպես պահեստ և շուկա՝ սպանվածների ունեցվածքը ամբարելու և վաճառելու համար»⁴⁴։

Հայերի տեղահանությունից հետո այդպիսի պահեստավայրեր դարձան Սեբաստիա քաղաքի Ս. Աստվածածին Մայր տաճարը⁴⁵, Մուշի Ս. Մարինե, Ս. Գևորգ, Շեկ-Ավետարան⁴⁶, Էրզրումի առաքելական և կաթոլիկ եկեղեցիները⁴⁷, Սամսոնի հայ կաթոլիկ Առաջնորդարանն ու եկեղեցին⁴⁸, Տրապիզոնի Ս. Ստեփանոս⁴⁹ և բազմաթիվ այլ եկեղեցիներ։ Սեբաստիայի նշված եկեղեցու մասին ականատեսներից մեկը գրում է. «Մայր եկեղեցին մթերանոցի վերածելով տեղահան եղողներու թողած ինչք ու ստացուածք, գոյքեր, կահկարասի և այլ հարստութիւն կառքերով կը փոխադրեն, կը մթերեն հոն. տարի մը և ավելի եկեղեցիին բակը, շրջակայքը մեծ պազար կը լարուի»⁵⁰։

Զբավարարվելով հայերի մասնավոր ունեցվածքի վաճառքից ստացված հասույթով՝ չնչին գներով վաճառքի է հանվել նաև վանական ու եկեղեցական թանկարժեք

42 Ղազարեան Հ., նշվ. աշխ., էջ 228-229։

43 *The treatment of Armenians in the Ottoman Empire. 1915-1916, Documents presented to Viscount Grey of Fallodon, Secretary of State for Foreign Affairs by Viscount Bryce, with a preface by Viscount Bryce*, London, Stationery Office by Sir Joseph Causton and Sons, 1916, p. 403։

44 Faiz El-Ghusein *Martyred Armenia*, New York, 1918, p. 27.

45 Եկեղեցու գմբեթից խաչն իջեցնելու փորձը չի հաջողվել։ Տե՛ս Գաբրիելյան Կ., *Եղեռնապայտում փորձն հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ*, Պոսթըն, «Հայրենիք», 1924, էջ 154, 562։

46 Կարապետյան Ե., *Տարուն և Սասուն. հուշեր, վկայություններ*. անտիպ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի ֆոնդեր, ֆ. 8, թ. 3, տ. 4, էջ 578։

47 *Ամերիկայի Միացյալ Նահանգների պաշտոնական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին*, կազմեց՝ Արա Սարաֆյան, Երևան, 2004, էջ 186։

48 *Տրապիզոնի թեմին վիճակադր Յովհաննէս Արք. Նազլեանի յուշերը Մերձադոր Արեւելքի 1914-1928 շրջանի քաղաքական-կրօնական դէպքերուն մասին*, Ա հատոր, ֆրանսերենից թարգմանեց՝ դոկտ. Հ. Ստեփանեան, Պէլրոյթ-Լիքաճան, 1960, էջ 221։

49 Kévorkian R. H., Paboudjian P. B., *Les Arméniens Dans L'Empire Ottoman Ala Veille Du Genocide*, Paris, 1992, p. 186.

50 Գաբրիելյան Կ., նշվ. աշխ., էջ 563։

գույքը: Հայոց ցեղասպանության ականատես հայ կաթոլիկ արքեպիսկոպոս գերապայծառ Հ. Յովհաննես Շինիարան⁵¹, 1916 թ. սեպտեմբերից երկու տարի արքոպի մեջ գտնվելով Թոքատում, իր տեսածի մասին հետևյալն է գրում. «Օր մըն ալ լսեցի մունետիկ մը, որ կը ծանուցանէր՝ թէ հրապարակային աճուրդ տեղի պիտի ունենար հայ-կաթողիկէ եկեղեցւոյ շէնքերէն մէկուն մէջ... Հոն կ' երթամ... կը տեսնեմ ջարդ ու փշուր եղած արձաններու դէզ մը. կոտորած խաչեր՝ ծոմրտկած ու ճգմուած աշտանակներու հետ խառն ի խոտն, կանթեղներ՝ կտոր-կտոր, և բզքտուած եկեղեցական գրքեր...: Աճուրդի ատեն՝ կը տեսնեմ քահանայական զգեստներ՝ դեռ բոլորովին խոնկ կը բուրեն»⁵²:

Կողոպտվել ու յուրացվել են անգամ սպանված հոգևորականների կրած եկեղեցական թանկարժեք զարդերը: 1915 թ. օգոստոսի 6-ին Յոզղաթի հոգևոր առաջնորդ Ներսես եպիսկոպոս Դանիելյանին արքոպիլոց, այնուհետև Գարտաշլարի ձորում սպանելուց հետո ոճրագործները կողոպտել էին նրա վրայի զարդերը, այդ թվում՝ եպիսկոպոսական մատանին⁵³: Կ. Պոլսի Պատերազմական արտակարգ առյա-նի նախագահը, խիստ հետաքրքրված լինելով արժեքավոր այդ մատանու ճակատագրով, 1919 թ. փետրվար-մարտ ամիսներին հետևողականորեն հանձնարարել է Յոզղաթի կառավարչին հետաքննություն անցկացնել և պատասխանել, թե ով է հանել եպիսկոպոսի մատանին, արդյո՞ք հանձնվել է լուծարքի հանձնախմբերին ու վաճառվել⁵⁴: Հարցմանն ի պատասխան՝ 1919 թ. մարտի 3-ին Յոզղաթի կառավարիչը հաղորդել է, որ լուծարքի հանձնախմբի կազմակերպած աճուրդի ժամանակ Ֆեյազ բեյի պատասխանատվությամբ եպիսկոպոսական մատանին վաճառվել է 2350 դահեկանով: Ավելի ուշ, սակայն, պարզ է դարձել, որ, չնայած լուծարքի հանձնախմբերի ղեկավարներին տրված՝ աճուրդին չմասնակցելու հրահանգին, Ֆեյազ բեյն անձամբ է գնել մատանին⁵⁵:

Չնայած նրան, որ հոկտեմբերի 26-ի կանոնադրության 18-րդ հոդվածով նախատեսվում էր «լքյալ գույքերի» վաճառքն իրականացնել հնարավորինս գույքի համապատասխան արժեքով⁵⁶, հարկ է ընդգծել հանձնախմբերի գործելակերպի կամայականությունն ու շտապողականությունը: Մասնավորապես բացահայտ անտեսվել կամ չնչին են արժևորվել եկեղեցական թանկարժեք իրերը, սուրբ գրքերը, մագաղաթ-ձեռագրերը և այլ առարկաներ: 1915 թ. նման սկզբունքով են արժևորվել և վաճառվել Այնթափի Մայր տաճարում պահվող երեք միավոր արծաթապատ կազմով սուրբ

51 Ընդհանուր փոխանորդ, Լիբանանի հույն կաթոլիկ եպիսկոպոս գրպծ. Յովսեփ Տումանի արքոպիկից ընկերը:

52 Տե՛ս *Տրապիզոնի թեմին վիճակագր. Յովհաննէս Արք. Նազլեանի յուշերը*, էջ 280:

53 Գրիկեր (Գրիգոր վարդապետ Կերկերյան), *Յոզղաթի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը*, Նիւ Եորք, 1980, էջ 193-195:

54 Նույն տեղում:

55 Նույն տեղում, էջ 196-197:

56 Փափագյան Ա., նշվ. աշխ., էջ 220-221:

գրքերը, արծաթե խաչերը, քշոցները⁵⁷, սրբապատկերները և այլ արժեքավոր իրեր⁵⁸:

2012 թ. քրդական «Ֆրդաթ» լրատվական գործակալությունը, անդրադառնալով Հայոց ցեղասպանության ընթացքում հայկական գույքի բռնագրավման խնդրին և հղում կատարելով նշված ժամանակաշրջանի պարբերականներում հրապարակված նահանգային ֆինանսական վարչության (defterdarlik) և դատարանների հայտարարություններին, գրում է, որ եկեղեցական գույքն անգամ դատական որոշմամբ վաճառքի է հանվել թերթում հրապարակված հայտարարության միջոցով⁵⁹:

Հայկական վանական ու եկեղեցական գույքի մյուս մասը՝ հիմնականում մետաղե անօթներ ու զանգեր, «Լքյալ գույքերը լուծարող հանձնաժողովներն» ուղարկել են Կ.Պոլիս, երբեմն նաև Գերմանիա՝ տեղի ձուլարաններում ձուլելու և պատերազմական նկատառումներով կիրառելու նպատակով⁶⁰: Այս առումով եզակի է Յոզդաթի ժանդարմերիայի հարյուրապետ, Հայոց ցեղասպանության ռճրագործներից Շյուքրի բեյի խոստովանությունը, որում մասնավորապես ասվում է. «...Ասկե զատ լքուած և կողոպտուած հարիւրաւոր եկեղեցիներու ու վանքերու բոլոր մեծ ու փոքր զանգակները Գերմանիա դրկեցինք՝ Քռուփի (Krupp) գործարանին մէջ թնդանօթ ձուլելու համար...»⁶¹: Բեռլին են ուղարկվել նաև Անկարայի (Էնկյուրիո) հայկական եկեղեցիներից ու վանքերից կողոպտված գույքը⁶²: 1916 թ. մայիսի 9-ին 7 սնդուկների մեջ ամփոփված՝ Կ.Պոլիս են ուղարկվել Բուրսայի Ս. Աստվածածին մայր տաճարի եկեղեցական սպասքն ու այլ թանկարժեք իրեր (ընդհանուր արժեքը կազմել է 650.000 օսմանյան ոսկեդրամ), որոնց ոսկյա և արծաթյա մասը ձուլվել և մեջիդիե կոչվող ոսկեդրամի է վերածվել⁶³: Եկեղեցական գույքը հաճախ եկամտի աղբյուր է դարձել գերմանացի զինվորականների համար. լավագույն օրինակը Դերջանի Հոդիկ գյուղի հայկական եկեղեցու՝ 20-30 օխա կշռող զանգն է, որը գերմանացի զինվորներից գնել և Կ.Պոլսի «Գալֆայան» որբանոցին է նվիրել Հակոբ Անդրեասյան անունով մի հայ՝ որբանոցի Ս. Աստվածածին նորակառույց մատուռի զանգակատանը կախելու նպատակով⁶⁴:

Ակնհայտ է, որ «Լքյալ գույքերը լուծարող հանձնաժողովներ»-ի և ենթահանձնախմբերի անդամները, որոնք աշխատում էին գործողությունների բացարձակ ազա-

57 Եկեղեցական բոժոժավոր հովահար:

58 Կուրկեն, *Ի՛նչ եղան Այնթապի եկեղեցիին գույքերը*, «Հայ Անթեպ» (Պէյրութ) 1966, թիւ 2 (22), էջ 40-41:

59 *Ցեղասպանությունը «թուրք»ացրել է նաև հայերի ունեցվածքը*. [<http://akunq.net/am/?p=20765>, դիտվել է՝ 12.06.2017 թ.]:

60 Տե՛ս, *Խմբագրական. Միա եկեր են, բայց ի՛նչ կը գտնեն...*, «Արիամարտ» (Կ.Պոլիս) օրաթերթ, 1918, 25 դեկտեմբեր, թիւ 31 (1846), էջ 1: Պալաքեան ծ. Վարդ. Գ., *Հայ գողգողթան. դրուագներ հայ մարտիրոսագրութենէն*, հատ. Ա, Վիեննա, Մխիթարեան տպ., 1922, էջ 229:

61 Պալաքեան ծ. Վարդ. Գ., նշվ. աշխ., էջ 229:

62 Ակունի Մեպոս, *Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը*, Բ. տպագր., Կ.Պոլիս, 1920, էջ 189:

63 Աստույան Ա., *Բուրսայի նահանգի հայության ցեղասպանական վիճակը և նյութական կորուստները հայոց ցեղասպանության փառիներին*, Երևան, «Գիտություն», 2017, էջ 239-240:

64 «Հայրենիք» օրաթերթ (Կ.Պոլիս), 1918, 2/15 նոյեմբեր, թիւ 194:

տության ու անպատժելիության պայմաններում, միայն պետական գանձարանը լցնելու օգտին չէ, որ ծառայելու էին: Նրանցից շատերը գրպանել ու հարստացել են հայերի ինչպես մասնավոր, այնպես էլ ազգապատկան կարողության վաճառքից ստացված հասույթի թալանից: Յոզդաթի թուրքական որբանոցների նախկին տնօրեն Շէվգիի վկայությամբ տեղի «Լքյալ գույքերի լուծարող հանձնաժողովի» անդամ Նազըֆ բեյը, որ մեծ հարստություն էր կուտակել հայերին պատկանող ունեցվածքի հափշտակումից, Յոզդաթի փոստատան միջոցով 36.000 օսմանյան ոսկի է ուղարկել մայրաքաղաքում ապրող իր ընտանիքին ու Միություն և առաջադիմություն կուսակցության ընդհանուր քարտուղար Միդհատ Շյուքրի բեյի անունով, իսկ Կ.Պոլիս ուղևորվելով՝ իր հետ տարել է 50.000-60.000 օսմանյան ոսկու արժողությամբ գոհարեղեն, ադամանդակոտ խաչեր, եկեղեցական թանկարժեք անոթներ և իբր իր հետ ամուսնացած տասնչորս տարեկան մի հայ աղջկա⁶⁵: Հատկանշական է, որ Յոզդաթի «Լքյալ գույքերի լուծարող հանձնաժողովի» անդամ Նազըֆ բեյի անունը հիշատակվում է նաև Առաքել Չաքրյանի⁶⁶ Չավեն պատրիարքին ուղղված անտիպ նամակում (Բերա, 16 մարտ, 1919 թ.)⁶⁷: Իր որբահավաք գործունեության ընթացքում Ա. Չաքրյանը բրիտանական դեսպանատան աջակցությամբ թուրքերի տներից հավաքագրել և Կ.Պոլսի պատրիարքարանին է հանձնել զգալի թվով կողոպտված եկեղեցական իրեր: Այս կերպ Չաքրյանը նշում է, որ չնայած վերոնշյալ անձը՝ Նազըֆը, նախկինում հերքել է իր մոտ հայերի իրեր պահելու մեղադրանքը, Կ.Պոլսի Այա-Սոֆիա թաղամասի նրա տան խոհանոցի գետնափոր գաղտնի պահեստից, ինչպես նաև Բանգալթը թաղամասի Ջաբեր փաշայի հարեմից, բրիտանացի և թուրք ոստիկանների ներկայությամբ խուզարկության միջոցով հայտնաբերվել են եկեղեցական մեծարժեք իրեր⁶⁸:

Լայնածավալ կողոպուտի գործընթաց ներգրավված են եղել նաև պետական այլ պաշտոնյաներ, տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, ոստիկաններ ու զինվորներ, որոնք հատուկ հանձնախմբերի գործունեությանն օժանդակելուց զատ, կուտակել են մեծ հարստություն: Այսպես, 1915 թ. օգոստոսին Արմաշի հոգևորականությանը մեկուսացնելուց հետո Կ.Պոլսի Կենտրոնական բանտի տնօրեն Իբրահիմ Խայրին, տեղի մյուդիր Ֆահրեդդին Ահմեդը և վերջինիս եղբայր Օսման Սուդին ամբողջովին թալանել են դպրեվանքի մոտ. 80.000 օսմանյան ոսկուն համարժեք ունեցվածքը (բրիտոնեական հնություններ, մասունքներ, եկեղեցական թանկարժեք անոթներ, կահույք, յուղաներկ սրբապատկերներ, ձեռագիր մագաղաթներ և այլն),

65 Շէվգը, *Եոզկապիի սարափները (թուրք մըն է, որ կը պապուէ, լսեցէ՛ք)*, «Ճակատամարտ» օրաթերթ (Կ.Պոլիս), 1919, 4 հունվար, թիվ 41 (1855), էջ 2:

66 Առաքել Չաքրյան (1885-1954) – փարիզաբնակ մեծանուն գիտնական, ակադեմիկոս, 1919-1922 թթ. ընթացքում բրիտանական կառավարության աջակցությամբ զբաղվել է որբահավաք գործունեությամբ հատուկ այս նպատակով ստեղծված մարմնի շրջանակներում: Ա. Չաքրյանի որբահավաք գործունեության մասին մանրամասն տե՛ս Գզոյան Է., «Փրկություն հայ որբերին. Առաքել Չաքրյանի հուշերը», *Յեղասպանագիտական հանդես*, 4(2), 2016, էջ 161-175:

67 *Երուսաղեմի Հայոց պապրիարքարանի արխիվ*, անմշակ ֆոնդ, Ա. Չաքրյանի նամակը՝ ուղղված Չավեն արք. Եղիայանին. նամակի լուսապատճենը տե՛ս *Հավելված*, պատկեր 4:

68 Իրերի ամբողջական ցուցակը տե՛ս նույն տեղում:

որի մի մասը փոխադրվել է Ադաբազարում գործող «Լքյալ գույքերը լուծարող հանձնաժողովի» անդամներին, իսկ պղնձե անոթները, աշտանակներն ու այլ իրեր՝ Կ.Պոլիս՝ բրիտանական «Բոն» ընկերության գրավված գործարանում ձուլելու համար⁶⁹:

1916 թ. օգոստոսին Ջեմալ փաշայի կողմից «Հայ տեղահանվածների տեսուչ» նշանակված Հասան Ամջայի (Հասան Վասֆի) վկայությունների համաձայն՝ Սվազի նախկին վալի Մուամմեր բեյի գործընկեր և օգնական Մերզիֆոնի նախկին քայմաքամ Ֆայիքը և նրա հանցավոր գործընկեր, ժանդարմերիայի կապիտան Մահիր բեյը, հայերի տեղահանության ընթացքում բազմաթիվ օջախներ և հոգևոր շենքեր թալանելով, 30-40 հազար լիրայի հարստություն են կուտակել և այժմ հաճելի ժամանակ են անցկացնում Ստամբուլում⁷⁰: Կեսարիայի Ս. Կարապետ վանքի թանկարժեք իրերի մի մասը յուրացրել է Էսքիշեհիրի կառավարիչ Ջեքայի բեյը⁷¹:

Որոշ վայրերում առավել արժեքավոր իրերն ապահով պահելու պատրվակով տարվել են տեղական ոստիկանատներ, ապա բաժանվել ոստիկանների միջև⁷²: Կեսարիայի 15-րդ գորագնդի հրամանատարի փոխստորդ Շեհաբեդդինի՝ Անկարայի գորաբանակի հրամանատարությանն ուղղված 14 հուլիս 1915 թվակիր ծածկագիր-տեղեկագրում մասնավորապես ասվում է. «... այս գաւառակի [Պողազլյանի] հայաբնակ գիւղերը կարելի է ըսել թէ բոլորովին մաքրագործուած են... ցաւալի երևոյթներեն մին սաստիկ թալանն է գոր կը գործեն հայ գիւղերու մէջ ոստիկանութեան լրացուցիչ մարդերը, չէրքեզ ձիաւորները...»⁷³:

1915 թ. թուրք զինվորներն ամբողջովին թալանել են Սեբաստիա քաղաքի Ս. Աստվածածին, Ս. Սարգիս, Ս. Փրկիչ, Ս. Մինաս եկեղեցիները և հարակից Ս. Նշան վանքը⁷⁴: Ակնատեսներից մեկը, նկարագրելով վերջինիս կողոպտման տեսարանը, գրում է. «900-ամեայ հնամենի այս վանքին գաղտնի պահարանի բանալին չէին գտած... քանի մը զինուորներով, լծակներով, մուրճերով կղպանքը կտորած եւ պատի մէջ ծեփուած երկաթեայ դուռը բացած էին: Հոն գտան չաթալ-թագեր, գրքեր, անգին ձեռագիրներ, ոսկի և արծաթ իրեղէններ, հնութիւններ, ինչ որ կար, մօտ 3. 000 կտոր արժեքաւոր առարկաներ, 293 ձեռագիրներ»⁷⁵:

Բուրսայում թուրքական զորքը զենք փնտրելու պատրվակով պաշարել է հայկական եկեղեցին, քանդել խորանի հետնապատը, սակայն ոչինչ չգտնելով, թալանել է գույքը⁷⁶: 1915 թ. օգոստոսի 2/15-ին Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Զավեն

69 Թեոդիկ, *Գողգոթա հայ հոգևորականութեան եւ իր հօտին աղէտալի 1915 տարին*, խմբ.՝ Գալպյան Ա., Նիւ Եորք, 1985, էջ 360:

70 Ամջա Հ., *Տեղահանություն և ոչնչացում. տեղահանության իրական պատկերը*, օսմաներենից թարգմանությունը՝ Արսեն Ավագյանի, Երևան, 2007, էջ 42:

71 «Հայրենիք» օրաթերթ, 1918, 26 հոկտեմբեր / 8 նոյեմբեր, թիւ 187:

72 Morgenthau H., նշվ. աշխ., էջ 311:

73 Գրիկէր, նշվ. աշխ., էջ 149-150:

74 «Ալիս» (Նյու Յորք), 1929, մարտ-ապրիլ-մայիս, թիւ 6, էջ 13:

75 Նույն տեղում:

76 Ակունի Սեպուհ, նշվ. աշխ., էջ 267:

Եղիայանի՝ Բուլղարիայի առաջնորդ Ղևոնդ Եպս. Դուրյանին հղված նամակում մասնավորապես ասվում է. «...Եկեղեցիները արդեն կողոպտուած և մզկիթի, ախոռի կամ ուրիշ բաներու վերածուած են: Արդեն Պոլսոյ հրապարակին վրայ սկսած են ծախսիլ հայ եկեղեցիներու անօթները և այլ գոյքերը...»⁷⁷:

1915-1918 թթ. ընթացքում հայկական վանական ու եկեղեցական գույքի մի մասը թալանվել է նաև հայերի թողած ունեցվածքը հնարավորինս արագ յուրացնելու մոլուցքով տարված տեղի մուսուլման ազգաբնակչության կողմից⁷⁸: Յեղասպանության ընթացքում բռնի իսլամացված և բալուեցի մի թուրքի կողմից կնության առնված Ազնիվ Տեր Գուրգենյանի վկայությամբ՝ ամուսինը Բալուի Ս. Աստվածածին եկեղեցու կողոպտիչներից է եղել՝ իր հետ տուն բերելով հաղորդության ժամանակ կիրառվող հայերեն արձանագրությամբ ու Աստվածամոր դիմապատկերով սկիհը, եկեղեցական սպասք ու անոթներ, որոնք մի որոշ ժամանակ օգտագործվել են կենցաղում⁷⁹: Հետագայում փախչելով գերությունից՝ Ազնիվն այդ անոթներն ու սպասքը հանձնել է Խարբերդի Ս. Աստվածամոր եկեղեցուն⁸⁰: 1919 թ. սերաստահայության ազգային-մշակութային արժեքները փնտրելու նպատակով Սերաստիա գործողված Երուսաղեմի միաբաններից վարդապետ Աճեմյանի՝ 26 մայիս 1919 թվակիր տեղեկագրում՝ ուղղված «Սենեքերիմյան Միությանը»⁸¹, հաղորդվում է, որ քաղաքի եկեղեցական անոթների մի մասն Իմդատ անունով թուրքի մոտ է, Ս. Աստվածածին Մայր եկեղեցու գույքի մի մասը՝ տեղի առողջապահական բաժանմունքի պահեստի տնօրեն, հարյուրապետ Ֆեհմի էֆենդիի մոտ, իսկ Ս. Նշան վանքի ջահը՝ Մասուդիե գյուղի մեղրեսեում (թուրքական դպրոց) Ղալիբ բեյի աշխատասենյակում է կախված եղել⁸²:

Այսպիսով, երիտթուրքական կառավարությունը «լքյալ գույքերի» մասին վերոնշյալ իրավական ակտերի ընդունման միջոցով «օրինականացրեց» կայսրությունում մինչ այդ արդեն իրականացվող զանգվածային թալանը՝ մասամբ զսպելով այն և հարստացնելով պետական գանձարանը: Արդյունքում տեղահանված հայերի շարժական ու անշարժ ողջ ունեցվածքի հետ մեկտեղ բռնագրավվեցին, թալանվեցին ու լուծարվեցին նաև ազգապատկան կալվածքներն⁸³ ու նրանցում առկա մշակութային արժեքները:

77 Զալին Արքեպս., *Պատրիարքական յուշերս. վստերագիրներ եւ վկայութիւններ*, Գահիրե, 1947, էջ 140:

78 *Տրապիզոնի թեմին վիճակաւոր Յովհաննէս Արք. Նազլեանի յուշերը*, էջ 221, 227:

79 Տեր Գուրգենեան Ա., *Կեանքիս սեւ էջը*, Անթիլիաս-Լիբանան, 1960, էջ 34:

80 Տե՛ս նույն տեղում:

81 Առաջին աշխարհամարտի ավարտից հետո՝ 1918 թ. դեկտեմբերի 29-ին, մի խումբ սերաստահայեր Կ.Պոլսում վերահաստատել են «Սենեքերիմեան Միությունը», որի գլխավոր նպատակն է եղել Սերաստիա քաղաքի և շրջակա գյուղերի՝ ցեղասպանության հետևանքով ցիրուցան եղած փոքրաթիվ բնակչության փնտրտուքը, համախմբումը, նրանց կորուստների արձանագրումը, ազգային-կրթական գործերի վերակազմավորումը: Տե՛ս «Ալիս», 1929, մարտ-ապրիլ-մայիս, թիվ 6, էջ 35:

82 Նույն տեղում, էջ 36:

83 Ազգապատկան կալվածքների բռնագրավման վերաբերյալ որոշում ավելի ուշ կայացվել է նաև հույների նկատմամբ. մասնավորապես, 1916 թ. մի որոշման համաձայն՝ վանքերի անշարժ գույք է համարվել այն, ինչը պարունակել է նրանց պատերի ներսում, մնացածն անցնելու էր պետությանը: Տե՛ս Ակցոլլու Յ. Զ., *Անիծված առյուծի քնաջնջումը*, թարգմանությունը՝ Վարդանյան Լ., Երևան, 2007, էջ 78-79:

գ) Կրթական հաստատություններ. բռնագրավում, յուրացում, ոչնչացում

Հայոց ցեղասպանության ընթացքում երիտթուրքական կառավարությունը բռնագրավել ու յուրացրել է նաև կայսրության հայկական կրթական հաստատությունները:

Ինչպես արդեն նշվել է, վերոնշյալ հիմնական իրավական ակտերից բացի երիտթուրքական կառավարությունն ընդունել է միջանկյալ մի շարք որոշումներ, որոնք վերաբերում են նաև հայկական կրթական հաստատությունների և դրանցում առկա գույքի բռնագրավման ու տնօրինման հարցերին: Այսպես, Ներքին գործերի նախարարությանն առընթեր Աշիրեթների բնակեցման և մուհաջիրների վարչությունը (*İşkân-i Aşair ve Muhacirîn Mûdürîyeti*) 1915 թ. հունիսի 9/22-ին⁸⁴ ծածկագիր հեռագրեր է հղել նահանգային իշխանություններին, որոնցից մեկում մասնավորապես ասվում է. «Անհրաժեշտ է, որպեսզի մուսուլման գաղթականներին հաստատեն քաղաքների ու գյուղերի այն դպրոցներում, որտեղից հեռացրել են հայերին: Այդուհանդերձ, այդ կառույցներում առկա ուսումնական գույքի քանակն ու արժեքը պետք է գրանցվի և ուղարկվի ընդհանուր գրանցող հանձնախմբերին»⁸⁵: Հատկանշական է, որ այս որոշումը հայերի տեղահանության, գույքերի տնօրինման հարցերին վերաբերող գաղտնի այլ հեռագրերի ու ծածկագրերի հետ միասին 25 օգոստոս 1915 թվականի 20 կետից կազմված ամփոփագրով (6-րդ կետով) Ներքին գործերի նախարարությունն ուղարկել է «Լքյալ Գոյքերու Բ. Հանձնախմբի Բարձր Նախագահութեանը»՝ ի գործադրություն ⁸⁶:

Ստորև բերված վավերագրերից երևում է, թե Ներքին գործերի նախարարությունը որքան հետևողականորեն է վերահսկել վերոնշյալ կարգադրությունների գործադրման ընթացքը:

Աշիրեթների բնակեցման և մուհաջիրների վարչության՝ Կեսարիայի «լքյալ գույքերի» հանձնաժողովի նախագահությանն ուղղված 1915 թ. սեպտեմբերի 8-ի հրահանգում⁸⁷ ասվում է. «Ինչպես 24 օգոստոս [1]331 [1915] թվականի և թիվ 529 ընդհանուր շրջաբերականով տեղեկացրել էինք, որ հեռացված հայերի լքյալ գույքերից՝ դպրոցներին անհրաժեշտ իրերն ու դպրոցական շենքերը պետք է հանձնել կրթական տեսչություններին իսկամ երեխաների օգտին: Սակայն պատվարժան Կրթության նախարարությունից տեղեկացանք, որ որոշ վայրերում Լքյալ գույքերի հանձնաժողովները չեն հանձնել շենքերն ու գույքերը: Հետևաբար, վերստին տեղեկացնում ենք նշվածի համաձայն դպրոցներին [իսկամական] անհրաժեշտ նմանատիպ գույ-

84 Գրականության մեջ հանդիպող հունիսի 24 ամսաթիվը վրիպակ է: Տե՛ս Աստոյան Ա., *Դարի կողոպուտը*, էջ 93-94:

85 Uğur Ümit Üngör and Mehmet Polatel, *նշվ. աշխ.*, էջ 70:

86 Փաստաթղթի օմաներեն բնագրի լուսապատճենն արևմտահայերեն թարգմանությամբ տե՛ս Գալֆանեան Ա., *Զօմախյու*, Նիւ Եորք, հրատ. Զօմախյուի նպաստամատոյց ընկերութեան, «Կոչնակ» տպարան, 1930, էջ 111-117, 131-133: Տե՛ս նաև Սահակյան Վ., «Մատենադարանի՝ Հայոց ցեղասպանության մասին արխիվային վավերագրերը», *Բանբեր Մարտենադարանի*, Հ. 25, «Նաիրի» հրատ., 2018, էջ 295-301, 305-307:

87 Կրում է Ներքին գործերի նախարարի փոխխորհրդական Մեմեդ Սուբիիի ստորագրությունը: Այս փաստաթղթի օմաներեն բնագրի լուսապատճենն ու թարգմանությունը տե՛ս *Հավելված*, պատկեր 5:

քերն ու շենքերը կրթական տեսչություններին հանձնելու մասին, էֆենդիս⁸⁸,⁸⁹: Չորս օր անց՝ սեպտեմբերի 12-ին, Կեսարիայի «լքյալ գույքերի» հանձնաժողովը գրությամբ կարգադրել է տեղի կրթական տեսչությանը գավառի դպրոցների գրավման, արձանագրման և դրանց ցանկն իրենց ուղարկելու մասին: Նույն օրը՝ սեպտեմբերի 12-ին, Կեսարիայի կրթական տեսուչը, պատասխան գրությամբ⁹⁰ արագ արձագանքելով վերոնշյալին, տեղի «լքյալ գույքերի» հանձնաժողովի նախագահությանը տեղեկացնում է հետևյալը. «Կեսարիա գավառից, [շրջակա] գյուղերից և Դևելուի գավառակից տեղափոխված հայերի լքյալ վարժարաններից ցարդ գրավված քսանչորս դպրոցների մեկ կտոր ցանկը կից ուղարկում ենք Ձեզ՝ ի պատասխան 12 սեպտեմբեր [1]331 [1915] թվակիր Ձեր գրության, էֆենդիս»⁹¹: Վերոնշյալ վավերագրերին հավելենք նաև արդեն նշված 1915 թ. հոկտեմբերի 26-ի կանոնադրության 16-րդ հոդվածը, որով փաստորեն ամրագրվում էր կայսրության հայկական դպրոցների, վանքերի և ընդհանրապես դպրոցական պիտույքների ու կահկարասու օգտագործման իրավունքը՝ լուսավորության մարմիններին հանձնելու մասին:

Տարաբնույթ փաստերը վկայում են, որ վերոնշյալ հրահանգներն անմիջապես գործի են դրվել: Դեռևս 1915 թ. մայիսի 30-ին Կ.Պոլսում Գերմանիայի դեսպան Հանս Վանգենհայմը Բեռլինի արտգործնախարարությանն ուղղված իր զեկուցագրում հաղորդում է. «...Էնվեր փաշան, օգտվելով պատերազմական իրավիճակից, մտադրած է փակել մեծ թվով հայկական դպրոցներ, թերթեր, արգելել հայերի փոստային նամակագրությունները... Նա համառորեն խնդրում է մեզ չխանգարել իրեն այդ գործում»⁹²: Հենրի Մորգենթաուն, երիտթուրքերի այս քաղաքականությունը, իրավացիորեն բնորոշելով որպես համաթուրքականության ծրագրի բաղկացուցիչ մաս, գրում է. «Արդեն նկարագրել եմ այն դժվարությունները, որոնց բախվում էի թուրքերի հետ քրիստոնեական դպրոցների շուրջ հարցերը քննարկելիս: Դրանք արմատախիլ անելու կամ առնվազն թուրքական հաստատությունների վերածելու նրանց վճռականությունը, ընդամենը, մեկ այլ առաջընթաց քայլ էր ազգայնա-

88 Օսմանյան պաշտոնական նամակագրություններում հարգանքի արտահայտության դիմելաձև:

89 Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարանի արխիվ, Կաթողիկոսական դիվան, ց. 29ա, թղթ. 3, վավ. 142: Թարգմանությունը՝ Միհրան Մինասյանի: Այս փաստաթղթի օսմաներեն բնագիրը արևմտահայերեն ու անգլերեն թարգմանություններով տե՛ս նաև Գալֆաեան Ա., նշվ. աշխ., էջ 128, 140; Kalfaian A., Chomaklou. *The history of an Armenian village*, New York, 1982, pp. 168-169, սակայն անգլերեն տարբերակում կայսրության Ներքին գործերի նախարարության փոխխորհրդական Մեհմեդ Մուքիիի ստորագրության հատվածում սխալմամբ նշվում է Կրթության նախարարության փոխխորհրդական պաշտոնը, տե՛ս Kalfaian A., նշվ. աշխ., էջ 169: Այս վավերագրի մեկ այլ թարգմանություն տե՛ս նաև Աստոյան Ա., *Դարի կողոպույրը*, էջ 220:

90 Վավերագիրը կրում է Կեսարիայի կրթական տեսուչ Մեհմեդ Թևֆիզ բեյի ստորագրությունը: Այս փաստաթղթի, ինչպես նաև կից ուղարկված բռնագրավված 24 դպրոցների ցանկի օսմաներեն բնագրի լուսապատճենն ու թարգմանությունը տե՛ս Հավելված, պատկեր 6:

91 Տե՛ս Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարանի արխիվ, *Կաթողիկոսական դիվան*, ց. 29ա, թղթ. 3, վավ. 148: Թարգմանությունը՝ Միհրան Մինասյանի: Այս փաստաթղթի մեկ այլ թարգմանություն տե՛ս նաև Աստոյան Ա., *Դարի կողոպույրը*, էջ 223-225:

92 Барсегов Ю., *Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества*, документы и комментарий, том 1, М., Гардарики, 2002, с. 239.

կան այդ ծրագրում»⁹³: Համաթուրքականության ծրագրի համատեքստում հայկական դպրոցներն արմատախիլ անելու առումով եզակի է երիտթուրքական կառավարության ընդունած մեկ այլ ծածկագիր որոշում (թվագրվում է 10 հունիս, 1915)⁹⁴: Համաձայն դրա՝ տեղահանության ընթացքում միևնույն գավառի և գավառակների հայ բնակչությունը պետք է տեղաբաշխվեր առանձին-առանձին և թույլ չտրվեր, որպեսզի վերջիններս կարողանան դպրոց բացել, միևնույն ժամանակ ստիպել, որպեսզի հայերն իրենց գավակներին ուղարկեն պետական (թուրքական) դպրոց⁹⁵: Այս որոշումը ևս ներառվել է վերոնշյալ 20 կետից բաղկացած ամփոփագրում (7-րդ կետով) և Ներքին գործերի նախարարության կողմից ուղարկվել «լքյալ գույքեր»-ի հանձնաժողովների նախագահությանը՝ ի գործադրություն⁹⁶:

1915-1918 թթ. հայկական կրթական հաստատությունները բռնագրավվել և օգտագործվել են ամենատարբեր նպատակներով: 1915 թ. Կ.Պոլսում զինվորական իշխանության կողմից գրավվել և գորակայանների են վերածվել «Էստեան», «Ս. Ներսեսեան», «Լևոնեան-Վարդուհեան», «Տատեան», «Ս. խաչ», «Սէմէրճեան-Ճեմարան», «Արամեան-Ունճեան», «Պէզճեան», «Պէրպէրեան», «Տայեան Հայ Օրիորդաց» վարժարանները⁹⁷: Հուլիսին «Մշակ» թերթը գրում է. «...Կ. Պոլսի հայկական բոլոր հաստատությունների գոյքը գրաված է թիրքաց կառավարութիւնից: Հայ կեանքը մեռել է այնտեղ բառիս բուն նշանակութեամբ»⁹⁸:

Իրավիճակը նույնն էր նաև նահանգներում: Հայերի տեղահանությունից հետո Մալաթիայի ազգային բոլոր հաստատություններն ու կալվածքները բռնագրավվել են կառավարության կողմից⁹⁹: 1916 թ. դրությամբ Երզնկայի հայկական վարժարանների («Ընկերական», «Եզնիկյան», «Կենտրոնական», «Արամյան» և «Քրիստինյան» իգական վարժարանը՝ կից համանուն մանկապարտեզով) մի մասը հատկացված է եղել մուսուլման գաղթականներին՝ որպես կացարաններ, իսկ մյուսները թեն կանգուն, բայց զուրկ դռներից ու պատուհաններից¹⁰⁰: Ռոդոսթոյում վարժարաններից մեկը վերածվել է պահեստավայրի, մյուսը՝ թուրքական որբանոցի¹⁰¹, մեկ այլ դեպքում՝ բանտի (ինչպես Սերաստիայի «Արամյան» վարժարանը, լուսանկարը տե՛ս հավելվածում, Կեմերեկի ներքին թաղի վարժարանը և այլն)՝ հայ տարագրյալների

93 Morgenthau H., նշվ. աշխ., p. 285.

94 Հեղինակը, ժամանակագրորեն մեջբերելով հայերի տեղահանության և «լքյալ գույքերի» վերաբերյալ մի շարք պաշտոնական փաստաթղթեր, չի մանրամասնում, թե դրանցից յուրաքանչյուրը երիտթուրքական կառավարության հատկապես որ մարմնի կողմից և ում է ուղղված եղել: Տե՛ս Գալֆաեան Ա., նշվ. աշխ., էջ 111- 117:

95 Տե՛ս Գալֆաեան Ա., նշվ. աշխ., էջ 112, տե՛ս նաև Սահակյան Վ., նշվ. աշխ., էջ 296-297:

96 Նույն տեղում:

97 Թեֆդիկ, *Ամէսուն փարեցոյցը*, ԺԶ տարի, Կ.Պոլիս, 1922, էջ 376-381:

98 *Լրագիրներից, Թիրքական պարեռագմի շուրջը*, «Մշակ», 1915, 26 յուլիս, թիւ 162, էջ 2:

99 Ալաօյանճեան Ա., *Պարսմոթիւն Մալաթիոյ Հայոց*, Պէյրոյթ, «Սեւան», 1961, էջ 959:

100 ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 166, թ. 24:

101 *Խմբագրական. Կեանքը Ռօփոսթոյի մէջ*, «Արդարամարտ» (Կ.Պոլիս) օրաթերթ, 1918, 23 նոյեմբեր, թիւ 4 (1819), էջ 2:

այնտեղ արգելափակելու համար¹⁰²: Բռնագրավվել ու յուրացվել են նաև միսիոներական կրթական հաստատությունները: 1915 թ. հուլիսի 19-ին «Եփրատ» քոլեջի նախագահ Էռնստ Ռիգզը Հայ-սիրիական օգնության ամերիկյան կոմիտեի նախագահությանն ուղղված նամակում նշում է, որ առաքելության մեծ շենքերից 7-ը կառավարության ձեռքում են, միայն մեկն է մնացել իրենց իրավասության տակ¹⁰³, իսկ Խարբերդում ԱՄՆ-ի հյուպատոս Լեալի Դեյվիսը 1915 թ. հուլիսի 11-ի իր տեղեկագրում հավելում է, որ այդ շենքերից մեկը վերածված է գորանոցի, իսկ մյուսներն առայժմ փակ են, սակայն կողոպտված ու ավերված, աշակերտության մեծ մասը տարագրուած է, մի մասը՝ սպանված կամ հարեմներում արգելափակված, ուսուցիչներից չորսը սպանված են, երեքն՝ առայժմ ողջ¹⁰⁴:

1915-1916 թթ. ընթացքում մերձճակատային բնակավայրերի, մասնավորապես Վանի և Էրզրումի կրթօջախների մեծ մասը կողոպտվել, հրկիզվել ու ավերվել է թուրքական զորքերի կողմից: Մասնավորապես 1915 թ. ապրիլին թուրքական կանոնավոր զորքը պատմամշակութային, ազգային բազմաթիվ շինությունների հետ մեկտեղ կողոպտել, հրկիզել ու ավերել է Վանի գավառի Կուռուպաշ, Ատեր, Գոմս, Էրերին, Մարմետ, Ջանիկ, Քյոչանի, Քերծ, Առեղ, Կեմ, Կոզի, Հնդստան, Մաշտակ, Մարգս, Գործոթ, Խաչան, Բլուրմակ, Սոսկուն գյուղերի, ինչպես նաև Ականց-Արճեշ գյուղաքաղաքի առաքելական ու բողոքական հայերին պատկանող դպրոցները, «Երկաթեան» կոչված գրադարան-ընթերցատունը¹⁰⁵ և այլ հաստատություններ: 1915 թ. հիմնովին ավերվել են նաև Վան քաղաքի «Երեմյան» վարժարանը (լուսանկարը տե՛ս հավելվածում), «Ավետիսյան» գրադարան-ընթերցարանը, «Վան-Տոսպ» թերթի տպագրատունը¹⁰⁶, Քղի-Գասապա գյուղաքաղաքի (Էրզրումի գավառ) երկու վարժարանները, բողոքական հայերի նախակրթարանը¹⁰⁷, Սեբաստիա քաղաքի Ս. Փրկիչ եկեղեցուն կից վարժարանը և բազմաթիվ այլ կրթօջախներ¹⁰⁸: 1916 թ. փետրվարի 15-ին Էրզրումում թուրքական զորքերը ռմբակոծությամբ քանդել են առաջնորդարանը, շուկան՝ հրկիզելով հայերին պատկանող բոլոր վարժարանները¹⁰⁹:

102 Սեբաստիայի «Արամյան» վարժարանը թուրքերը բռնագրավել են դեռևս 1914 թ. դեկտեմբերի 12/25-ին և վերածել գինվորական արհեստանոցի, ապա՝ բանտի: Տե՛ս «Ալիս», 1929, մարտ-ապրիլ-մայիս, թիւ 6, էջ 31, ինչպես նաև Գալֆաեան Ա., նշվ. աշխ., էջ 108:

103 *The treatment of Armenians in the Ottoman Empire*, p. 278.

104 *Հայկական ջարդերը. Տոքթ. Եռհանես Լեփսիուսի փնտելագիրը*, Պէյրութ, 1965, էջ 85:

105 *Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. վերապրածների վկայություններ, փաստաթղթերի ժողովածու*, հատ. Ա, Վանի նահանգ, Երևան, 2012, Հայաստանի ազգային արխիվ, վկայություններ N 12, 69, 71, 74, 81, 83, 85-86, 87, 90, 98, 100, 104, 107, 108, 128, 129, 134, 142, 149, 161, էջ 42-43, 123-124, 125, 131, 138, 142, 145-147, 148, 153, 165, 168, 174, 180, 183, 211-214, 219, 229, 241, 255:

106 *Լրագիրներից. Թիւրքական պատերազմի շուրջը*, «Մշակ», 1915, 11 սեպտեմբեր, թիւ 199, էջ 1:

107 *Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. վերապրածների վկայություններ, փաստաթղթերի ժողովածու*, հատ. Գ, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքի, Սեբաստիայի, Տրապիզոնի նահանգներ Պարսկահայք, Երևան, ՀԱԱ, 2012, վկայություն N 32, էջ 127:

108 Գաբիկեան Կ., նշվ. աշխ., էջ 562: Տե՛ս նաև «Ալիս», 1929, մարտ-ապրիլ-մայիս, թիւ 6, էջ 36: Ծոցիկեան Ս. Մ., նշվ. աշխ., էջ 59:

109 Ակունի Սեպուհ, նշվ. աշխ., Կ.Պոլիս, 1920, էջ 144:

Այսպիսով, Հայոց ցեղասպանության տարիներին Ներքին գործերի նախարարության կարգադրությամբ և անմիջական վերահսկողությամբ բռնագրավվել, յուրացվել կամ ոչնչացվել են նաև հայկական կրթական հաստատությունները: 1915-1918 թթ. ընթացքում այդ հաստատություններն օգտագործվել են հետևյալ հիմնական նպատակներով.


- Դպրոցական շենքերի մի մասի և գույքի մեծ մասի տնօրինման իրավունքը հանձնվել է կրթական տեսչություններին ու լուսավորության մարմիններին՝ իսլամական դպրոցների օգտին օգտագործելու համար:
- Պատերազմական նկատառումներով վերածվելով գորանոցների՝ մի կողմից ռազմագերիների, մյուս կողմից՝ թուրքական բանակի զինվորների համար:
- Ծառայել են որպես բանտեր՝ հայ տարագրյալներին այնտեղ արգելափակելու համար, պահեստավայրեր՝ տեղահանվածների ունեցվածքի կուտակման համար, կացարաններ՝ մուսուլման գաղթականների համար և այլն:
- Ավերվել են, քարերն օգտագործվել որպես շինանյութ:

Այսպիսով, Հայոց ցեղասպանության տարիներին ֆիզիկական բնաջնջումն ուղեկցվեց հայկական մշակութային արժեքների զանգվածային յուրացման ու ոչնչացման հետևողական քաղաքականությամբ, որը, մեր խորին համոզմամբ, հայերի բնաջնջման երիտթուրքական ծրագրի մաս է կազմել: Այդ քաղաքականության մեջ ներգրավված են եղել հասարակության լայն զանգվածներ՝ բանակ, տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, պետական պաշտոնյաներ, մուսուլման ազգաբնակչություն, այդ թվում և «մուհաջիրներ», որոնք գործել են ոչ միայն բացարձակ անպատժելիության ու ամենաթողության մթնոլորտում, այլև հաճախ վերևից հրահանգավորված ու արտոնված են եղել: Այս հանգամանքն ինքնին խոսում է հայության ունեցվածքի, այդ թվում և ազգապատկան հարստության յուրացման ու ոչնչացման դիտավորության մասին:

ՀԱՎԵԼՎԱԾ

Պատկեր 1. 1915 թ. հոկտեմբերի 26-ին հրապարակված 25 հոդվածներից կազմված կանոնադրության օսմաներեն բնագրի առաջին և վերջին էջերը: Կրում է «13 սեպտեմբեր 1331 [1915]-ին տրված ժամանակավոր օրենքի գործադրումը հստակեցնող կանոնագիր» խորագիրը:

Միհրան Մինասյանի հավաքածու



ماده : ۲۱ قانون مخصوص ایله اشبو نظامنامه ده تعین
ایدیلن وظائفک تأمین وتسریع اجراسی ایچون رئیس طرفندن
کوستریله چک لزوم اوزرینه قومیسون معیتده حکومتجه مقدار
کافی پولیس وزاندارمه ترفیق اولتور .

ماده : ۲۲ قومیسونلرک معاملاتی حکومت مرکزیه تک
تحت تفتیش ومراقبه سنده بولدیریلیر .

ماده : ۲۳ قانون مخصوص ایله نظامنامه ده معین وظائفک
قصداً ویاهمال و تراخی نتیجه سی اوله رق عدم ایفاسندن متولد
ضررلردن رئیس واعضا مالاً دخی مسئول طوتیلورلر .

ماده : ۲۴ اشبو نظامنامه تاریخ نشرندن معتبردر .

ماده : ۲۵ بو نظامنامه تک اجرای احکامته داخلیه ،
عدلیه ومالیه ناظرلری مأمورددر .

اشبو لایحه نظامیه تک موقع مرعیتده وضعی ونظامات دولته
علاوه سنی اراده ایلدم .


۳۰ ذی الحجه ۱۳۳۳ ۲۶ تشرین اول ۱۳۳۱

مهر و نشانی

شیخ الاسلام و اوقاف هاپون ناظری صدر اعظم
خیری محمد سعید
داخلیه ناظری ومالیه ناظر وکیل حربیه ناظری و بحریه ناظری وکیل
طلعت انور
عدلیه ناظری وشورای دولت رئیس وکیل خارجه ناظری
ابراهیم خلیل
معارف ناظری و پوسته وتلفون ناظر وکیل نافع ناظری
احمد شکری عباس
تجارت وزراعت ناظری
احمد نسیمی

Պատկեր 2. 1915 թ. հոկտեմբերի 26-ի կանոնադրության օմաներեն բնագրի 8 և 9-րդ էջերը և 16-րդ հոդվածը. «եկեղեցիներում գտնվող գույքերը, պատկերները, սուրբ գրքերը պետք է արձանագրվեն տոմարի մեջ և վերցվեն պահպանության ներքո, իսկ դպրոցների, վանքերի և ընդհանրապես դպրոցական պիտույքների ու կահկարասու օգտագործման իրավունքը փոխանցել կրթական տեսչություններին»:

Միհրան Մինասյանի հավաքածու



— 8 —
 Երբ զեղեքները և զգույքները, զպատկերները, զսուրբ գրքերը պետք է արձանագրվեն տոմարի մեջ և վերցվեն պահպանության ներքո, իսկ դպրոցների, վանքերի և ընդհանրապես դպրոցական պիտույքների ու կահկարասու օգտագործման իրավունքը փոխանցել կրթական տեսչություններին»:

մադ: 14. Դուռն ու մասնաճիւղները և զպահպանող անձնակազմը մինչև 1915 թ. հոկտեմբերի 26-ի կանոնադրության օմաներեն բնագրի 8 և 9-րդ էջերը և 16-րդ հոդվածը. «եկեղեցիներում գտնվող գույքերը, պատկերները, սուրբ գրքերը պետք է արձանագրվեն տոմարի մեջ և վերցվեն պահպանության ներքո, իսկ դպրոցների, վանքերի և ընդհանրապես դպրոցական պիտույքների ու կահկարասու օգտագործման իրավունքը փոխանցել կրթական տեսչություններին»:

մադ: 15. Դուռն ու մասնաճիւղները և զպահպանող անձնակազմը մինչև 1915 թ. հոկտեմբերի 26-ի կանոնադրության օմաներեն բնագրի 8 և 9-րդ էջերը և 16-րդ հոդվածը. «եկեղեցիներում գտնվող գույքերը, պատկերները, սուրբ գրքերը պետք է արձանագրվեն տոմարի մեջ և վերցվեն պահպանության ներքո, իսկ դպրոցների, վանքերի և ընդհանրապես դպրոցական պիտույքների ու կահկարասու օգտագործման իրավունքը փոխանցել կրթական տեսչություններին»:

մադ: 16. Դուռն ու մասնաճիւղները և զպահպանող անձնակազմը մինչև 1915 թ. հոկտեմբերի 26-ի կանոնադրության օմաներեն բնագրի 8 և 9-րդ էջերը և 16-րդ հոդվածը. «եկեղեցիներում գտնվող գույքերը, պատկերները, սուրբ գրքերը պետք է արձանագրվեն տոմարի մեջ և վերցվեն պահպանության ներքո, իսկ դպրոցների, վանքերի և ընդհանրապես դպրոցական պիտույքների ու կահկարասու օգտագործման իրավունքը փոխանցել կրթական տեսչություններին»:

— ۹ —

مناسبتلرک وبالعموم مکتب لوازمک حق استعماللری معارف اداره لرینه دور اولتور .

ماده : ۱۷ احصای معلوم اولیان اموال ائمانی اشیاک بولندینی کوی ویا محله نامنه قید ایدیه جک وبالاخره حکومت معرفتیه مذکور کوی و محله اهالیسنک اسکان ایدلیکی محله کوندریه جکدر .

ماده : ۱۸ قومیسینلر اموال منقوله نك بالمزایده فروختنده مناسب اولان زمان و مکانی نظره آلق صورتیه اموال مذکورده نك ممکن اولدینی مرتبه قیمت حقیقیه لریه صائلسنه غیرت ایده جکلردر .

ماده : ۱۹ قومیسینلرجه طوتیه جق دفاتر حسابیه بر اساس دفتریله برده اموال متروکه حساب جاری دفاترندن عبارت اولوب بو ایکی دفترک نمونه لری وصورت استعماللرینی مین تعریفنامه اشبو نظامنامه یه ربط ایدلشدر . قومیسینلر لزوم و احتیاج کوره بیله جکلری دفاتر معاونه یه ده استعمال ایدرلر حساباتک منتظماً و تعریفنامه ده مندرج قواعد دائره سنده طوتلسنی تأمیناً قومیسینون رئیس قیود دفاتری متادباً تحت تفتیش و مراقبه ده بولندیره جق و حسابک عدم انتظامندن تولد ایده بیله جک بالعموم نواقص و سوء استعمالاتک مسؤولیتی رئیس راجع اوله جقدر .

ماده : ۲۰ قومیسینلرک قانون مخصوص ایله اشبو نظامنامه احکامی دائره سنده وقوع بوله جق اشعارات و تبلیغاتی مأمورین عایده سی طرفندن مجبوری ایفادر .

Պատկեր 3. Գույքագրման ձևաթղթի օրինակ յուրաքանչյուր հայ ընտանիքի գույքի գրանցման համար՝ կցված տեղահանված հայերի «լքյալ» անշարժ գույքի տնօրինման վերաբերյալ 1915 թ. դեկտեմբերի 2(15)-ին ընդունված հավելյալ օրենքին:

Միհրան Մինասյանի հավաքածու

[illegible]

Պատկեր 4. Առաքել Չաքրյանի 'նամակը' ուղղված Զավեն արք. Եղիայանին,
Բերա, 1919 թ., 16 մարտ:

Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի արխիվ, անմշակ ֆոնդ

W. P. H. in 1870

Uffingme Cymmerford Llan.

G. G. G.

U¹⁴ zur Prüfung der aufgeführten Personen
2. zur Prüfung der aufgeführten Personen

Grand Lodge.

[illegible]

Gezeichnet von selbsth. f.

2. Լավագույն, ցածր Խճու պաշտը ընդերս նույն պայմանների. Ծայրյա ժամերի
ցածր Ծայրյա Բաղնիքի ժամեր:

1 June. 1 July 1892. 1 July 1892. D. 1892. 1892. 1892.

Երբ չունենաւ արձանագրութիւն, ինքն իր շնորհիւ ծախսէր փողովքը:

Մի հայ ժողովուրդի նկատմամբ. Մի սեղանի շուրջ. Մի քաղ. գոյնի պարտիզան
գլխավոր. Մի անհայտ զոյնի ծնա-թշծ. Մի պահպան, ես. Մի ճակատագիր

[illegible]

Д 4/10/1872. Д 1/11/1872. Д 1/12/1872. Д 1/1/1873. Д 1/2/1873. Д 1/3/1873. Д 1/4/1873. Д 1/5/1873. Д 1/6/1873. Д 1/7/1873. Д 1/8/1873. Д 1/9/1873. Д 1/10/1873. Д 1/11/1873. Д 1/12/1873. Д 1/1/1874. Д 1/2/1874. Д 1/3/1874. Д 1/4/1874. Д 1/5/1874. Д 1/6/1874. Д 1/7/1874. Д 1/8/1874. Д 1/9/1874. Д 1/10/1874. Д 1/11/1874. Д 1/12/1874. Д 1/1/1875. Д 1/2/1875. Д 1/3/1875. Д 1/4/1875. Д 1/5/1875. Д 1/6/1875. Д 1/7/1875. Д 1/8/1875. Д 1/9/1875. Д 1/10/1875. Д 1/11/1875. Д 1/12/1875. Д 1/1/1876. Д 1/2/1876. Д 1/3/1876. Д 1/4/1876. Д 1/5/1876. Д 1/6/1876. Д 1/7/1876. Д 1/8/1876. Д 1/9/1876. Д 1/10/1876. Д 1/11/1876. Д 1/12/1876. Д 1/1/1877. Д 1/2/1877. Д 1/3/1877. Д 1/4/1877. Д 1/5/1877. Д 1/6/1877. Д 1/7/1877. Д 1/8/1877. Д 1/9/1877. Д 1/10/1877. Д 1/11/1877. Д 1/12/1877. Д 1/1/1878. Д 1/2/1878. Д 1/3/1878. Д 1/4/1878. Д 1/5/1878. Д 1/6/1878. Д 1/7/1878. Д 1/8/1878. Д 1/9/1878. Д 1/10/1878. Д 1/11/1878. Д 1/12/1878. Д 1/1/1879. Д 1/2/1879. Д 1/3/1879. Д 1/4/1879. Д 1/5/1879. Д 1/6/1879. Д 1/7/1879. Д 1/8/1879. Д 1/9/1879. Д 1/10/1879. Д 1/11/1879. Д 1/12/1879. Д 1/1/1880. Д 1/2/1880. Д 1/3/1880. Д 1/4/1880. Д 1/5/1880. Д 1/6/1880. Д 1/7/1880. Д 1/8/1880. Д 1/9/1880. Д 1/10/1880. Д 1/11/1880. Д 1/12/1880. Д 1/1/1881. Д 1/2/1881. Д 1/3/1881. Д 1/4/1881. Д 1/5/1881. Д 1/6/1881. Д 1/7/1881. Д 1/8/1881. Д 1/9/1881. Д 1/10/1881. Д 1/11/1881. Д 1/12/1881. Д 1/1/1882. Д 1/2/1882. Д 1/3/1882. Д 1/4/1882. Д 1/5/1882. Д 1/6/1882. Д 1/7/1882. Д 1/8/1882. Д 1/9/1882. Д 1/10/1882. Д 1/11/1882. Д 1/12/1882. Д 1/1/1883. Д 1/2/1883. Д 1/3/1883. Д 1/4/1883. Д 1/5/1883. Д 1/6/1883. Д 1/7/1883. Д 1/8/1883. Д 1/9/1883. Д 1/10/1883. Д 1/11/1883. Д 1/12/1883. Д 1/1/1884. Д 1/2/1884. Д 1/3/1884. Д 1/4/1884. Д 1/5/1884. Д 1/6/1884. Д 1/7/1884. Д 1/8/1884. Д 1/9/1884. Д 1/10/1884. Д 1/11/1884. Д 1/12/1884. Д 1/1/1885. Д 1/2/1885. Д 1/3/1885. Д 1/4/1885. Д 1/5/1885. Д 1/6/1885. Д 1/7/1885. Д 1/8/1885. Д 1/9/1885. Д 1/10/1885. Д 1/11/1885. Д 1/12/1885. Д 1/1/1886. Д 1/2/1886. Д 1/3/1886. Д 1/4/1886. Д 1/5/1886. Д 1/6/1886. Д 1/7/1886. Д 1/8/1886. Д 1/9/1886. Д 1/10/1886. Д 1/11/1886. Д 1/12/1886. Д 1/1/1887. Д 1/2/1887. Д 1/3/1887. Д 1/4/1887. Д 1/5/1887. Д 1/6/1887. Д 1/7/1887. Д 1/8/1887. Д 1/9/1887. Д 1/10/1887. Д 1/11/1887. Д 1/12/1887. Д 1/1/1888. Д 1/2/1888. Д 1/3/1888. Д 1/4/1888. Д 1/5/1888. Д 1/6/1888. Д 1/7/1888. Д 1/8/1888. Д 1/9/1888. Д 1/10/1888. Д 1/11/1888. Д 1/12/1888. Д 1/1/1889. Д 1/2/1889. Д 1/3/1889. Д 1/4/1889. Д 1/5/1889. Д 1/6/1889. Д 1/7/1889. Д 1/8/1889. Д 1/9/1889. Д 1/10/1889. Д 1/11/1889. Д 1/12/1889. Д 1/1/1890. Д 1/2/1890. Д 1/3/1890. Д 1/4/1890. Д 1/5/1890. Д 1/6/1890. Д 1/7/1890. Д 1/8/1890. Д 1/9/1890. Д 1/10/1890. Д 1/11/1890. Д 1/12/1890. Д 1/1/1891. Д 1/2/1891. Д 1/3/1891. Д 1/4/1891. Д 1/5/1891. Д 1/6/1891. Д 1/7/1891. Д 1/8/1891. Д 1/9/1891. Д 1/10/1891. Д 1/11/1891. Д 1/12/1891. Д 1/1/1892. Д 1/2/1892. Д 1/3/1892. Д 1/4/1892. Д 1/5/1892. Д 1/6/1892. Д

francos anualmente y en adelante, en adelante.

3.° 4124-1 is young of Hydrangea leaves of open new for young leaves.


$H=0$. Wegen Randbedingung 24. April Randwertproblem Einheitskreis Stromfunktion zuerst

Name of the person *John Doe* *2* *Logan* *for the Lord* *and* *in* *the*

[illegible]

in the sp. of: *Hydrophorus* *Hydrophorus* *Hydrophorus*

Հարձ



Այս անգամ առաջ հիշ խոսքում է. զանգված էր շուրջ Ցույն - պարտք վերա-
հանդիման, վերջ շուրջ խոսքում հիշ պարտքից խոսելու շարժումներ
հանդիման, աջակցություն և թույլ պահանջներ. որոշակիություն թույլատրելի է:
Պատժ թույլ պահանջներ անօրինակ խոսքում - թույլ չտալ ինչ Եկանդից
չտալ խոսքում:

Կրթ: 1-ին հարց խոսքում. 8-րդ. 2-ին հարց խոսքում. 12.

3-ին հարց 11-րդ. (Երկու առաջին հարցեր). 4-ին հարց (խոսքում) խոսքում
առաջին հարցում խոսքում է:

Խոսքում: Խոսքում խոսքում. խոսքում խոսքում. Խոսքում խոսքում:

Խոսքում խոսքում խոսքում. Խոսքում խոսքում խոսքում խոսքում:

Խոսքում խոսքում խոսքում: Խոսքում խոսքում: Խոսքում խոսքում:

Խոսքում խոսքում է:

Խոսքում խոսքում խոսքում. Խոսքում խոսքում խոսքում խոսքում:

Խոսքում խոսքում խոսքում է:

- Խոսքում խոսքում. Խոսքում խոսքում խոսքում խոսքում:

Խոսքում խոսքում խոսքում. Խոսքում խոսքում խոսքում է:

Խոսքում 16 հունիս 1919

Խոսքում խոսքում

Պատկեր 5-ի թարգմանությունը.

«Հանուն ամենակարող Աստծո

Բաբը Ալի մուհաջիրների տնօրինություն թիվ ընդհ. 583 մասն. -

Կեսարիայի Լքյալ գույքերի հանձնաժողովի նախագահությանը

Ինչպես 24 օգոստոս [1]331 [1915] թվակիր և թիվ 529 ընդհանուր շրջաբերականով տեղեկացրել էինք, որ հեռացված հայերի լքյալ գույքերից՝ դպրոցներին անհրաժեշտ իրերն ու դպրոցական շենքերը պետք է հանձնել կրթական տեսչություններին իսլամ երեխաների օգտին: Սակայն պատվարժան Կրթության նախարարությունից տեղեկացանք, որ որոշ վայրերում Լքյալ գույքերի հանձնաժողովները չեն հանձնել շենքերն ու գույքերը: Հետևաբար, վերստին տեղեկացնում ենք նշվածի համաձայն դպրոցներին [իսլամական] անհրաժեշտ նմանատիպ գույքերն ու շենքերը կրթական տեսչություններին հանձնելու մասին, էֆենդիս:

19 Zilkade [1]333


8 սեպտեմբեր [1]331

Ներքին գործերի նախարարության
փոխխորհրդական Մեհմեդ Սուրհի»¹¹⁰:

110 Օսմաներեն բնագրից թարգմանությունը՝ բանասեր, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտաշխատող Միհրան Մինասյանի:

Պատկեր 6. Կեսարիայի կրթական տեսուչի՝ Կեսարիայի «լքյալ գույքերի» հանձնաժողովի նախագահությանն ուղղված պատասխան-գրությունը՝ կից ուղարկված բռնագրավված 24 դպրոցների ցանկով, 1915 թ. սեպտեմբերի 12

Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-Մարենադարան, Կաթողիկոսական դիվան, ցուցակ 29ա, թղթ. 3, վավ. 148:



[illegible]

Պատկեր 6-ի թարգմանությունը

Հանուն ամենակարող Աստծո
Կեսարիայի կրթական տեսչություն
թիվ 52 (կնիք)

Կեսարիայի Լքյալ գույքերի հանձնաժողովի պատվարժան նախագահություն

Կեսարիա գավառից, [շրջակա] գյուղերից և Դնելուի գավառակից տեղափոխված հայերի լքյալ վարժարաններից ցարդ գրավված քսանչորս դպրոցների մեկ կտոր ցանկը կից ուղարկում ենք Ձեզ՝ ի պատասխան 12 սեպտեմբեր [1]331 [1915] թվակիր Ձեր գրության, էֆենդիս:

12 սեպտեմբեր [1]331
Կեսարիայի կրթական տեսուչ
Մեհմեդ Թ-նֆիզ¹¹¹

Սանջակի կենտրոն Կեսարիայից, գյուղերից և Դնելուի գավառակից այլ վայրեր տեղափոխված հայերի լքյալ դպրոցների՝ Կրթական տեսչության համար գրավված 24 դպրոցների ցանկը

12 սեպտեմբեր [1]331

Սանջակ (գավառ)	կազա (գավառակ)	նահիյե (գյուղախումբ)	գյուղ	թաղ	թիվ	ծանոթություններ
Կեսարիա	Կեսարիա	-	-	Բահչե բաշը	1	Ընդունված է որպես վարժա- պետանոց
=	=	-	-	Գեչիգափու	1	
=	=	-	-	Ջաֆեր բեյ	1	Ընդունված է «Դար Ալ-Ադաբ» նախակրթա- րանի կողմից

111 Օսմաներեն բնագրից թարգմանությունը՝ Միհրան Մինասյանի:

Սանջակ (գավառ)	Կազա (գավառակ)	Նահիյե (գյուղախումբ)	գյուղ	թաղ	թիվ	ծանոթություններ
=	=	-	-	Սինանօյու	1	տուն լինելով՝ տրվել է որբա- նոցի
=	=	-	Կերմիր	-	1	
=	=	Թալաս	Թավլուսուն	-	1	
=	=	Էֆքերե	Էֆքերե	-	1	
=	Դնելու	-	Էվերեկ	-	2	
=	=	-	Ֆենեսե	-	2	
=	=	Թոմարգա	Թոմարգա	-	2	
=	=	-	Չոմախլու	-	2	
=	=	-	Իսջեսու	-	1	
=	=	-	Ջյուջյուն	-	1	
=	=	-	Սեդյութլու	-	1	
=	=	-	Յադթը	-	1	
=	=	-	Քազլը Գեոմեթի	-	1	
=	=	-	Յենիջե	-	1	
=	=	-	Թաշխան	-	1	
=	=	-	Սազագ	-	1	
=	=	-	Գարաջա վերան	-	1	
				Ընդհանուր գումար	24	

YOUNG TURK'S POLICY OF APPROPRIATION AND DESTRUCTION OF THE ARMENIAN CULTURAL VALUES (1915-1918)

Seda Parsamyan

SUMMARY

The article presents the Young Turks' policy of appropriation and destruction of the Armenian cultural values during 1915-1918 as part of a genocidal program with the following observations:

1. The paper shows the development of mechanisms for the further appropriation of the Armenian estate before the Genocide by the government. The Young Turks' consistent policy of recognizing the Armenian church property as unclaimed/without legal heir is considered to be an example of such a deliberate step.
2. The paper presents the decisions of the government aimed at confiscation of the Armenians' private and national property during the genocide, and their consistent application.
3. The paper discusses the issue of the involvement of masses and their role in the appropriation and confiscation of the Armenian cultural values.

Keywords: cultural value, national property, Young Turks government, governmental decisions, destruction, confiscation, appropriation, state policy, genocide, intent.

МЛАДОТУРЕЦКАЯ ПОЛИТИКА ПРИСВОЕНИЯ И УНИЧТОЖЕНИЯ АРМЯНСКИХ КУЛЬТУРНЫХ ЦЕННОСТЕЙ (1915-1918 гг.)

Седя Парсамян

РЕЗЮМЕ

В статье представлена политика присвоения и уничтожения армянских культурных ценностей в 1915-1918 гг., как составная часть младотурецкой геноцидальной программы, с помощью следующих наблюдений:

1. До геноцида правительство разработало механизм для дальнейшего присвоения армянского национального имущества. Таким преднамеренным шагом являлась, например, последовательная политика младотурок, направленная на признание отсутствия наследников имущества Армянской церкви.
2. Правительственные решения, направленные на конфискацию личного и национального имущества армян в период геноцида, и их последовательное применение.
3. Участие и функции широких слоев турецкого общества в присвоении и уничтожении армянских культурных ценностей.

Ключевые слова: культурная ценность, национальное имущество, младотурецкое правительство, правительственные решения, уничтожение, конфискация, присвоение, государственная политика, геноцид, преднамеренность.

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐՎԱ
ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ, ՄԵՐՕՐՅԱ ՎԻՃԱԿԸ
(ՄԱՍ 1)**

Հարություն Մարության

Ապրիլի 24-ը սոսկ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր չէ: Այդ օրը հայ ժողովրդի ինքնության այն կարևորագույն ու եզակի տարրերից է, որն անտեսանելի թելերով միավորում է բոլոր հայերին: Հիշատակի օրվա ձևավորումն անցել է քաղաքական բազմաթիվ զարգացումների միջով, և անգամ հարյուր տարի անց օրվա խորհուրդի նրբությունները շարունակվում են քննարկվել հանրության լայն շերտերի մեջ և մասնագիտական շրջանակներում: Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա նշումը մեկօրյա իրադարձության մեջ ցեղասպանության հիշողության՝ հասարակության մեջ տվյալ պահին առկա վիճակի մարմնավորումն է, այսինքն՝ այդ օրվա վիճակով առկա իրողությունների ու պատկերացումների, տարվող քաղաքականության ու քարոզչության հանրագումարը: Միևնույն ժամանակ ցեղասպանության զոհերի հիշատակի նշումը չի սահմանափակվել ու չի պայմանավորվել միայն մեկ օրվա նշելու կամ չնշելու փաստով: Մեծ եղեռնի հիշողությունը տարաբնույթ ձևերով գոյատևել է վերապրողների ու նրանց ժառանգների, պարզապես այդ մասին իմացողների հոգիներում, դրսևորվել խոսք ու գրույցում, վարվելակերպում, պահվածքում, գործողություններում նրանց կյանքի ողջ ընթացքում: Այսինքն՝ հիշատակի օրվա խորհրդին անդրադառնալը նշանակում է ցեղասպանության հիշողության դրսևորումների ողջ սպեկտրի (հաշվի առնելով թեմայի և հոդվածի ծավալները՝ միայն որոշակի շեշտադրումներով) վերլուծության իրականացում: Քանի որ հարցը խիստ տարողունակ է, հոդվածում անդրադարձ է արվում խնդրո առարկա հարցերի միայն մեկ մասին, որոնք, սակայն, մեր համոզմամբ բնութագրական են խնդիրը լուսաբանելու համար:

Բանալի բաներ. Հայոց ցեղասպանություն, ցեղասպանության զոհերի հիշատակի օր, սուգ, սգահանդես:

Մեծ եղեռնի զոհերի հիշատակի առաջին նշումները

Հայագիտության մեջ ընդունված է այն կարծիքը, որ Մեծ եղեռնի զոհերին նվիրված ապրիլի 24-ի առաջին նշումը տեղի է ունեցել Կ.Պոլսում 1919 թ.: Դա իրոք այդպես է: Սակայն զոհերին նվիրված առաջին ոգեկոչումները՝ սգահանդեսների տեսքով, հայ իրականության մեջ տեղ են գտել ավելի վաղ: Այսպես՝ 1918 թ. հոկտեմբերի 28-ին Դամասկոսի առաջնորդանիստ վանքում արաբական իշխանության ներկայացուցիչների (կուսակալ և ոստիկանապետ) գիտությամբ և կուսակալի ներկայությամբ, հունաց պատրիարքի, անգլիացի և ֆրանսիացի սպաների, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի մասնակցությամբ, տեղի են ունենում ազգային սգահանդես «վասն հոգւոց նահատակաց» և հոգեհանգստի կարգ: Դրանից հետո 4-5 հազ. հայությունը հանդիսավոր թափորով գնում է գերեզմանատուն, որտեղ հնչում են վեց-յոթ ելույթներ¹:

1919 թ. հունվարի 20-ին ազգային իշխանությունները «ի յիշատակ Ազգ. Նահա-

1 Տե՛ս Զիլինկիրեան Եղիշէ եպս., *Յուշեր և նօթեր Ս. Երուսաղէմէն, Պոլսէն և Դամասկոսէն (1916-1920)*, Աղեքսանդրիա, 1923, էջ 48-49:

տակեալներու և Արի Մարտիրոսացեալներու հոգւոյն ի հանգիստ»² կազմակերպում են «ընդհանուր նահատակաց» սգահանդես Հալեայում՝ քաղաքում և շրջակայքում հավաքված տասնյակ հազարավոր տարագիրների մասնակցությամբ: Նախ՝ «ծովածառայ թափօր մը խիստ կարգապահութեամբ» Քառասուն Մանկանց եկեղեցուց ճանապարհ է ընկնում դեպի հայկական գերեզմանատուն: Բնութագրական էր թափօրի կառուցվածքը. այն առաջնորդում էին Հայկական լեգեոնի ավելի քան երեք տասնյակ մարտիկներ՝ հայկական և արաբական դրոշներով, «հայ եռագոյն դրոշակը կը կրէր Արեւելեան Լեգեոնի յիսնապետ Պ. Եղուարդ Կիւլպէնկեան»: Տիգրանակերտցիների նորակազմ նվազախումբը կատարում էր Շոպենի մահերգը, գավառների ներկայացուցիչները մասնակցում էին առանձին խմբերով. ծաղկեպսակներ կային կարինցիների, եղեսացիների, տիգրանակերտցիների, խարբերդցիների կողմից, ինչպես նաև «ընդհ. Հայութեան կողմէ»: Ծաղկեպսակներով իրենց ներկայությունն էին հավաստում հայ կաթոլիկ և բողոքական համայնքները, հնչակյանները, ռամկավարները, դաշնակցականները, գաղթականների հանձնաժողովը, տիկնանց միությունը, Հալեայի հասարակությունը: Թափօրին մասնակցում էին սպիտակագգեստ օրիորդների և սևագգեստ այրիների խմբեր. վերջիններս տանում էին «սև շղարշով դրօշ մը ... որուն վրայ գրուած էր «Արցունք չունինք... Ձեր յիշատակին, Մատաղ մեր հոգին»: Թափօրում ներկա էին նաև «զանազան զուարթ գոյներով հագնուած կիներու և աղջիկներու դասը, որ ցեղին կենսունակութիւնը ցոյց կուտար»: Թափօրին «ամբողջ երկայնքին, երկու կողմը կերթային որբերն ու այրիները, Ազգին այսօրուան և ապագայ ցաւերն ու յոյսերը միանգամայն...», «Ճամբան երգեցիկ խումբի կողմէ երգուեցան «թէ հայրենեաց պսակադիր», «... Լոնց ամպերը», «Ազատութեան սիրոյն համար» երգերը»: Թափօրը եզրափակում էր Ֆոնուզի վանահայր, Չեյթունի 1895 թ. ինքնապաշտպանության ղեկավարներից Բարդուղիմեոս վարդապետը³, ով առաջինն է խոսք ասում գերեզմանատանը և «սգակիրներու աչքերէն արին արցունք կը հոսէր: Լացինք բոլորս...»: Այստեղ հնչում են նահատակների հիշատակի ոգեկոչմանը նվիրված շուրջ մեկ տասնյակ ելույթներ, արտասանություններ: Սգահանդեսի ավարտին Բարդուղիմեոս վարդապետը «կարծես երիտասարդացած, կորովի ձայնով մը օրհնեց իր գլխուն վրայ ծածանող և հայ յիսնապետի մը վեր բռնած Հայկական դրօշը և աչքերուն քսեց զայն, որուն հետևեցան շատեր: Հայկական դրօշակը ամէնուն զմայլանքին և պաշտումին առարկայ դարձաւ»:

Տերեկը սգահանդեսը շարունակվում է եկեղեցու սրահում՝ բարձրաստիճան զինվորականների, զանազան պետությունների դիվանագիտական ներկայացուցիչների, հյուպատոսների, օտարազգի կղերական պետերի, լրագրողների մասնակցությամբ և այլն, Բարդուղիմեոս վարդապետի ղեկավարությամբ: Հնչում են ցավակցա-

2 «Հայ Զայն. Ազգային, քաղաքական, գրական օրաթերթ» (Հալեյ), 1919, 13 յունվար:

3 Նրա մասին մանրամասն տե՛ս Կոստանդյան Է. Ա., «Հայ հոգևորականության դիրքորոշումը Չեյթունի 1895 թ. ապստամբության նկատմամբ», ԼՀԳ, 1997, թիվ 1, էջ 68-70:

կան խոսքեր, հարգվում է նահատակների հիշատակը: Ինչպես վկայում է ականատեսը. «հիրերը և ներկայ ազգայիններ մեկնեցան խիստ գոհ տպաւորութեան տակ: Սոյն սգահանդէսը, օտարներուն գնահատումը ոգի և կարեկցութիւն ներշնչեց, իսկ ազգայիններուն ինքնամփոփումի անհրաժեշտութիւնը զգացուց զօրեղապէս»⁴: Մեկ այլ ժամանակակցի գնահատմամբ. «Յունվար 20ին Հալէպի հայութիւնը ապրեցաւ յաւետ յիշատակելի պատմական օր մը: Կարծես ամբողջ հայութեան սիրտն էր որ կը բաբախէր սուգի և յուսադրանքի խառն զգացումներով: Չորս տարիէ ի վեր լուռ մխալոյ հոգիներ, աղիտահար հայորդիք անասելի կտտանքներէ խշխշացող սրտեր ահա վերջապէս գէթ մի օր ըմպեցին մխիթարութեան և սփոփանքի կաթումները: Հալէպ քաղաքը իր դարաւոր կէանքին մէջ չէր պարզած մի այնքան վեհաշուք տեսարան, որ իր հրաշալի հանդիսութեամբ ամէնուն սրտին խորքը յուզէր ազնուագոյն և վեհիմաստ զգացումներ...»⁵:

1919 թ. մայիսի 25-ին սգահանդես է տեղի ունենում Միջին Արևելքի մեկ այլ հայաշատ քաղաքում՝ Բաղդադում՝ Թարգմանչաց վարժարանի սրահում: Այն նվիրվում է ոչ միայն Եղեռնի նահատակների, այլ նաև պատերազմի տարիներին ռազմաճակատներում զոհված զինվորների հիշատակին: Հանդեսը նախագահում են հայ կղերականներ, բեմից ներկաներին է դիմում հայ որբ տղա, որը «յիշեցուց ժողովրդին՝ երբէք չմոռնալ թրքական կատարածները»: Բանախոսություններից զատ կատարվում են սգերգեր. շատերը հուզվում են⁶:

Երվանդ Օտյանը և Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օրվա առաջին նշումը Կոստանդնուպոլսում

Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունից և մասնավորապես Մուդրոսի զինադադարից (1918 թ. հոկտեմբերի 30) հետո զանգվածային ջարդերը վերապրած պոլսահայ մտավորականության բազմաթիվ ներկա-

4 Մանրամասն տե՛ս *Հայ կեանք. Համազգային սգահանդէս*, «Տարագիր. օրաթերթ քաղաքական, գրական ընկերային» (Հալէպ), 1919, 22 յունվար, թիւ 24: Դիտող, *Համազգային սգահանդէսը. 1919 յունվար 20*, «Հայ Ձայն. Ազգային, քաղաքական, գրական օրաթերթ», 1919, 22 յունվար, թիւ 62: Նաճարեան Միհրան, *Յուշագիրք 1918-1948. երեսնամեայ ազգային իրադարձութիւններ Սուրիոյ և Լիբանանի հայ կեանքէն առնուած*, Պէյրոյթ, 1949, էջ 16-19: Այլ հուշագրության համաձայն՝ ջարդարված նկարագրվող իրադարձություններից տասնամյակներ անց սգատողը Հալէպում կայացել է 1918 թ. դեկտեմբերի 11-ին: Տե՛ս Զեպեճեան Ռ-ոպերտ, *Ինքնակենսագրութիւն, յուշեր և գործունէութիւններ*, Հալէպ, 1999, էջ 86-87:

5 Մանրամասն տե՛ս Արամեան Հայկազուն, *Սգահանդէսին պատմական օրը*, «Հայ ձայն», 1919, 25 յունվար, թիւ 63:

6 Մանրամասն տե՛ս Ֆարշեան Սարգիս, *Նամակ Պաղտարէն. Սգահանդէս ի յիշարակ ընդհանուր հայ տարագրեալ նահապաղներուն և յարգանքի ծանօթ կոչներու ճակարկ ինկող քաջարի մարտիկներուն*, «Երիտասարդ Հայաստան. Կիսաշաբաթաթերթ Սօցիալ Դեմօկրատ Հնչակեան կուսակցութեան» (Զիքակո), 1919, 30 հուլիսի, թիւ 24: Վերոբերյալ հրապարակումները մեզ տրամադրելու համար հայտնում են իմ շնորհակալությունը Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի աշխատակիցներ, խնդրո առարկա ժամանակաշրջանի բազմահմուտ գիտակներ Միհրան Մինասյանին և Նարինե Մարգարյանին:

յացուցիչներ աստիճանաբար վերադառնում են իրենց բնակության նախկին վայրը՝ մայրաքաղաք։ Իրենց գործունեությունը վերսկսում են հայկական պարբերականները, զանազան միություններ ու կազմակերպություններ։ Վերադարձողների մեջ էր նաև 1915 թ. ապրիլի 24-ին արքայապետ, Դեր-Զորում և այլուր բազմաթիվ դաժան տեսարանների ականատես, ականավոր երգիծաբան Երվանդ Օտյանը (1869-1926)⁷։ 1919 թ. փետրվարից սկսած՝ նա Պոլսի «Ժամանակ» օրաթերթում⁸ սկսում է հրատարակել իր «Անիծյալ տարիներ» վեպ-հուշագրությունը⁹։ 1918 թ. դեկտեմբերին՝ դամասկոսյան սգահանդեսից հետո, նա հրատարակում է «Ազգային նոր տոնը» վերտառությամբ մի հոդված¹⁰, որը դարձավ հիշատակի օրվա անհրաժեշտությունը մատնացույց անող առաջին հրապարակումը։ Օտյանն այստեղ բարձրացնում է մի շարք հարցադրումներ ու առաջարկում լուծումներ, որոնք փաստորեն դրվեցին հիշատակի օրվա խորհրդի հիմքում և դարձան ուղենշային հետագա տասնամյակների համար ու այս կամ այն տարրի որոշակի շեշտադրումներով գոյատևում են մինչև մեր օրերը։ Այդ իսկ պատճառով նպատակահարմար է հոդվածից ընդարձակ մեջբերումներ անել։

Օտյանն իր խոսքը կառուցում է Վարդանանց պատերազմի հետ համեմատության ճանապարհով՝ նկատելով, որ 1500 տարի շարունակ հայերը որպես *«ազգային-կրօնական մեծ յիշարակ»* [ընդգծումն իմն է-Հ.Մ.] տոնում են Վարդանանց նահատակությունը, որը «մեզի համար երկու վեհ իտեալներ կը ներկայացնէ. ազգային անկախութեան իտեալը եւ խղճի ազատութեան իտեալը։ Վարդանանք երկու բանին համար ինկան Աւարայրի դաշտին մէջ, քրիստոնէութիւնը եւ ազատութիւնը պահպանելու համար։ Արդարեւ մինչև հիմա ազգային մեծագոյն տօնը պէտք էր համարել զայն։ Բայց հիմա՞, երբ մէկ ու կէս միլիոն Հայեր յանուն այդ քրիստոնէութեան և յանուն այդ ազգային ազատութեան մեռան ո՛չ թէ Աւարայրի մը դաշտին վրայ կամ Տղմուտի մը եզերքը, այլ բովանդակ Հայաստանի, Սուրիոյ ու Միջագետքի դաշտերը, անապատները, լեռներն ու ձորերը իրենց դիակներով ծածկեցին, երբ բոլոր գետերը՝ Եփրատն ու Տիգրիսն սկսեալ մինչեւ Ալիս ու Քուպար իրենց դիակներով լեցուցին, մի՞թէ այլեւս չնսեմանար Վարդանանցը»։ Եվ որպես լուծում Օտյանն առաջարկում է Վարդանանց տոնի փոխարեն հաստատել «ազգային-կրօնական մեծ տօնը ի

7 *Երուանդ Օրեան մեր մէջ*, «Ժողովուրդ. քաղաքական և հասարակական օրաթերթ», 1918, 8/21 նոյեմբերի, թիւ 19։

8 «Ժամանակ»-ի «սինականերուն մէջ կը տողանցէին այն բոլոր հսկաները, որոնք կը կերտէին հայ ժողովուրդի հաւաքական միտքը եւ կ'իրականացնէին անոր լուսաւորութիւնը։ ... 1915-ին նահատակուած, տարագրուած մտաւորականներուն պատկառելի տոկոսը կ'աշխատակցէր «Ժամանակ»-ին»։ Մանրամասն տե՛ս <http://www.jamanak.com/մեր-մասին>։

9 Հուշագրությունը հետագայում լույս է տեսել առանձին գրքով։ Տե՛ս Օտեան Երուանդ, *Անիծեալ տարիներ. 1914-1919 (անձնական յիշարակներ)*, աշխատասիրութեամբ Գրիգոր Յակոբեանի, խմբ.՝ Գորգէն Գասպարեան, Երևան, 2004։

10 «Ժողովուրդ» (Կ.Պոլիս), 1918, 23 նոյեմբերի/6 դեկտեմբերի, թիւ 34։ Հոդվածը հայաստանյան լայն հանրությանը ներկայացվեց շնորհիվ Հայաստանի ազգային գրադարանի մատենագետ Սուսաննա Գալստյանի հրապարակման։ Տե՛ս Գալստյան Սուսաննա, *Երվանդ Օրյանը և ազգային տոնը*, «Ազգ օրաթերթ-Մշակույթ», 2010, 24 ապրիլի, թիւ 5։ Օտյանի հոդվածը, Ս. Գալստյանի գնահատմամբ, «դարձավ 1915 թ. ապրիլի 24-ը ազդարարող օր»։

յիշատակ մեր նոր ու գերագոյն մարտիրոսութեան», այդ որոշումը պետք է ընդունի Ամենայն Հայոց կաթողիկոսը, և այս «Մեծ Տօնը» պետք է հանդիսավոր արարողությամբ «հոչակի աշխարհի ամէն կողմերը գտնող հայերուն», այսինքն՝ լինի համահայկական, անկախ հայ մարդկանց գտնվելու վայրից: Օտյանը մանրամասնում է հիշատակի օրվա նշման ձևը. «Ու այսպէս ամէն տարի բոլոր եկեղեցիները, բոլոր դպրոցները, բոլոր ազգային հաստատութիւնները հայկական մեծ նահատակութեան յիշատակը կատարեն, անէծքի անաթեմաներ կարդալով Վիլիէմներու, Ֆրանց Եոզեֆներու, Էնվերներու, Թալէպներու և Ճեմալներու ու բոլոր այն մարդակերպ հրէշներու գլխին, որոնք Մեծ Եղեռնը գործեցին ու իրենց ձեռքերը Հայուն անմեղ արիւնովը ներկեցին: Թո՛ղ այդ օրը բոլոր քարոզիչները, բոլոր ճառախօսները, բոլոր ուսուցիչները և բոլոր թերթերը վերյիշատակեն ահռելի ոճիրը և անոր հեղինակները անարգութեան սինին քամեն: Թո՛ղ ամբողջ Հայութիւնը այդ օրը սուգ առնէ ու լայ իր նահատակները»: Սակայն Օտյանը չի սահմանափակվում միայն սգալու առաջարկով: Նա շարունակում է. «Ու այսպէս ամէն տարի, Հայը թո՛ղ յիշէ իր գոյութեան տրուած այս մեծագոյն հարածը, ու միեւնոյն ժամանակ վար պահէ այն սրբազան հուրը, որով ան ապրեցաւ դարերու ընթացքին, որովհետև ազգ մը իր յիշատակներով ու իր աւանդութիւններով կ'ապրի, ըլլան անոնք դիցազնութիւններու յիշատակներ կամ տառապանքներու և մարտիրոսութեան յիշատակներ»: Այսինքն՝ *կոռսրի այս հիշողությունը պէտք է օգնի՝ վատ պահելու հայության ոչ միայն տառապանքները, այլև ընդհանրապէս հայոց պատմության տարաբնույթ էջերը՝ ներառյալ հաղթանակները*: Որպէս համանման պատմական փորձառություն՝ հեղինակը հիշատակում է հրեաներին. «Հրեաները հազարաւոր տարիներէ ի վեր իրենց սուգերուն՝ Եգիպտոսի չարչարանքներուն, Բաբելոնի գերութեան, Երուսաղէմի տաճարին կործանման դժբախտութիւններուն մէջ գտած են իրենց կենսականութեան ուժը, ինչպէս քրիստոնէութիւնը զօրացած է նախկին դարերու նահատակներուն արիւնովը»: Իր գրությունն Օտյանն ավարտում է ապագային ուղղված, սակայն իր հիմքում «ահռելի ու սարսափելի կոտորածի» հիշողությունն ունեցող կառուցողական մաղթանքով. «Հայ ազգն ալ ահա՛ թող այս ահռելի ու սարսափելի կոտորածին մէջ գտնէ իր ապագայ կենսականութիւնը եւ ապրելու զօրութիւնը»:

Պոլսահայության վիճակը համեմատաբար ավելի է թեթևանում, երբ քաղաք են մտնում Անտանտի ուժերը՝ անգլիացիները, ֆրանսիացիները (1918 թ. դեկտեմբեր) և իտալացիները (1919 թ. փետրվար): 1919 թ. փետրվարի 13-ին մի խումբ մտավորականներ կազմակերպում են ժողով՝ 1915 թ. աքսորի ու մահվան մատնված *մլրաւորականության* ոգեկոչումը կազմակերպելու համար: Ժողովին մասնակցելու համար հրավիրվում են տասնյոթ հոգի (ներառյալ՝ Յեղասպանությունը վերապրողներ), սակայն մասնակցում են տասնմեկը¹¹: Ընտրվում է կազմակերպական մարմին՝ «Ապ-

11 Մանրամասն տե՛ս *Մլրաւորականներու յիշարակին*, «Ճակատամարտ» օրաթերթ (Կ.Պոլիս), 1919, 9 մարտի, նոր շրջան, թիւ 101/1922: *Հայկական կեանք. Սգահանդէս մեր նահապարկուած մլրաւորականներու յիշարակին*, «Ճակատամարտ», 1919, 11 ապրիլի, նոր շրջան, թիւ 127/1948: Հարցի հանգամանալի քննարկումը տե՛ս նաև Մատթէոսեան Վարդան, *Պոլսոյ Մեծ Եղեռնի յուշարձանը. տառապանք լթէ՞ իրականութիւն* - <https://hairenikweekly.com/2017/05/17/32036>, 17 մայիսի 2017 թ. (դիտվել

րիլ տասնըմեկի սգահանդեսի յանձնախումբը»¹² Թուրքիայի հայոց պատրիարք Զավեն արքեպիսկոպոս Տեր Եղիայանի նախագահությամբ: Հետագայում հանձնախումբն իր ձեռնարկումը հիմնավորում էր հետևյալ կերպ. «Այսօր կը լրանայ չորրորդ տարին այն զարհուրելի գիշերին ետք ուր հայ մտաւորականութեան ընտրելագոյն ներկայացուցիչները ձերբակալուեցան չքացուելու համար արքայի ճամբաներուն վրայ: Ահաւոր Աղէտէն վերապրող խումբ մը մտաւորականներ այս առթիւ պարտականութիւն զգացին իրենց դժբախտ եղբայրներուն յիշատակին յարգանքի եւ սուգի արտայայտութիւն մը ընել»¹³: Բազմաթիվ հավաքներից հետո հանձնախումբը կազմում է ծրագիր¹⁴, համաձայն որի՝ ապրիլի 25-ին (հին տոմարով՝ 12-ին)՝ ուրբաթ օրը՝ վաղ առավոտյան, պետք է մատուցվեր հոգեհանգստյան պատարագ Բերայի Հայ Ավետարանական Սուրբ Երրորդություն եկեղեցում Զավեն պատրիարքի նախագահությամբ, իսկ ժամը 2-ին սկսվող «սգահանդես ապրիլ տասնըմեկի» հայտագիրը հետևյալն էր. Շոպենի «Մահաբայերգը» (նվագախմբի կատարմամբ), «Ապրիլ տասնըմեկի յանձնախումբի» անունից Շահան Պերպերեանի բանախոսությունը, «Տեր կեցո՛ղու զՀայս» ստեղծագործության կատարումը Նոր թաղի դպրաց դասի կողմից (դաշնկ. Կոմիտաս վարդապետ¹⁵), «Յարգանքի արտահայտութիւն» (թերևս՝ ելույթներ) քաղաքական կուսակցությունների կողմից¹⁶, «Տեր ողորմյա» ստեղծագործության կատարումը (դաշնկ.՝ Կոմիտաս վարդապետ և Մարի Պարոնյան), Դանիել Վարուժանի «Լուսը» ստեղծագործության արտասանությունը (օրիորդ Մարի Պարոնյան), «Յարգանքի արտահայտութիւն» բժշկական և ուսուցչական մարմինների կող-

է՝ 23.12.2018): Հրավիրվածների մեջ էր նաև Երվանդ Օտյանը, սակայն նա հանձնախմբի անդամ չի դառնում:

12 Հանձնախմբի անդամներն էին. «Եսիմէ Աւետիսեան, Զարուհի Գալմբեարեան, Պերճուհի Պարսամեան, Մարի Սթամպուլեան եւ Օր. Արփիար: Պարոններ. Տիգրան Զաւէն, Մերութան Պարսամեան, Յ. Ճ. Սիրունի, Գեորգ Մեարոյ, Շահան Պերպերեան, Յովհ. Պողոսեան, Թագուր Սուքիասեան եւ Տօթթ. Բարսեղ Տինանեան»: Տե՛ս Թէոդիկ, *Յուշարձան Ապրիլի 11-ի* (խմբ.՝ Դորա Սաքայեան), Belge International Publishing, 2010, էջ 255:

13 Տե՛ս Թէոդիկ, նշվ. աշխ., էջ 255:

14 Տե՛ս Վաղուան սուգի օրը, «Ճակատամարտ», 1919, 24 ապրիլի, նոր շրջան, թիվ 137/ 1958: Սգահանդեսի նկարագրությունը տե՛ս Շախարգել (Մերութան Պարսամեան), *Ապրիլ տասնըմեկի սգահանդեսը*, «Շանթ. պատկերազարդ շաբաթաթերթ ազգային գրական-գեղարուեստական գիտական» (Կ.Պոլիս), 1919, 3 մայիսի, նոր շրջան, թիվ 27, էջ 316:

15 Այսիքն, Կոմիտասի կողմից դաշնամուրային կատարման համար մշակված: Բանն այն է, որ Կոմիտասը 1919 թ. մարտի 27-ին արդեն մեկնել էր Մարսել՝ այնտեղից բուժման նպատակով Փարիզ ուղևորվելու համար: Տե՛ս Խոսրովեան Գարեգին, *Յուզիչ ողջերթ մը. Կոմիտաս վարդապետը Եվրոպա գնաց*, «Ճակատամարտ», 1919, 28 մարտի, նոր շրջան, թիվ 115/1936:

16 Հնչակյան կուսակցության կողմից ելույթ էր ունեցել Վահան Զեյթունցեանը, ուսմավարների անունից՝ Յովհաննէ Յակոբեանը: Տե՛ս *Երէկուան սգահանդեսը*, «Ճակատամարտ», 1919, 26 ապրիլի, նոր շրջան, թիվ 139/1960: Հղվում է ըստ Մատթեոսեան Վարդան, նշվ. աշխ.: «Ճակատամարտ» օրաթերթի ապրիլի 29-ի համարում նշվում է, որ «գոհուած հայ մտավորականներու յիշատակին» կազմակերպված սգահանդեսին Հ.Յ.Դաշնակցություն կուսակցությունը չէր մասնակցել «անոր համար որ պաշտօնական ազգային վերին մարմինները անիմաստ մտավախութիւնով մը պատճառ եղած են հանդէսին ճղճիմ եւ սահմանափակ երեւոյթ մը առնելուն»: Տե՛ս *Ապրիլի 11ի սգահանդեսը եւ Հ.Յ. Դաշնակցութիւնը*, «Ճակատամարտ», 1919, 29 ապրիլի, նոր շրջան, թիվ 141/ 1962:

մից¹⁷, «Հանգստյան շարական» (Նոր թաղի դպրաց դաս և Մաննիկ Պերպերեան), Սիամանթոյի «Մոր մը երազը» բանաստեղծության արտասանությունը (Շահան Սարեան) և Բեթհովենի «Մահաքայլերգը»¹⁸ (նվագախմբի կատարմամբ):

Այդ օրը կատարվում է Թեոդիկի և մի քանի գրողների մասնակցությամբ կազմված «Յուշարձան Ապրիլ Տասնըմէկի» հուշահատորի շնորհանդեսը: Գրքում «Պոլսէն աքսորուած եւ նահատակուած մտաւորականներէն ու գործիչներէն զատ», տեղ էր տրված «նաեւ գաւառի այն մտաւորականներուն եւ հանրային գործիչներուն որոնք միեւնոյն ռճրապարտ նպատակին համար զոհուեցան»¹⁹, ընդհանուր առմամբ ներկայացված էին 761 մտավորական զոհերի մասին կենսագրական տեղեկություններ ու լուսանկարներ²⁰: Այդ օրը հրապարակ պիտի հանվէին նաև նահատակների հիշատակին պատրաստված խորհրդանշական բացիկներ, որոնց վաճառքից գոյացած հասույթը պետք է հատկացվեր նահատակների կարիքավոր ընտանիքներին²¹:

«Ապրիլ տասնըմէկի սգահանդէսի յանձնախումբը» գտնում էր, որ առկա պայմաններում իրենց ձեռնարկածը «լիակատար եւ անթերի գործ» լինելու հավակնություն չունի, այն «նախափորձ մըն է ... առաջիկային աւելի ճոխացած եւ լիակատար ձեւի մը տակ ներկայացնելու համար այս Յուշարձանը...»²²:

Սգահանդեսը Կ.Պոլսի մամուլում արժանացավ քննադատության: Այսպէս՝ «Ճակատամարտ» օրաթերթը «Հայկական կեանք» խորագրի ներքո տպագրված «Վաղուան սուգի օրը»²³ ներածականում քննադատում էր «ազգային մարմիններու անիմաստ մտավախութիւնը», որ թույլ չէր տվել, «որ աւելի փառաւոր տօնուի յիշատակը գացողներուն, ու սարքուի այնպիսի սուգի օր մը որ համապատասխան ըլլար անոնց գործին ու արժէքին»: Անհատական ճիգերով կազմակերպուած սգահանդեսը թերթի դիտարկմամբ «չէ այն սուգի արտայայտութիւնը զոր ժողովուրդ մը պարտաւոր էր ընել իր հսկաներու յիշատակին»: Ներածականում հայտնվում էր այն ակնկալությունը, որ բոլոր հայ վաճառատներն ու դպրոցները փակված մնային իբրև սուգի նշան, և արարողություններ ու հանդեսներ կատարվէին քաղաքի բոլոր թաղամասերում, մինչդեռ «մեր Պատրիարքարանը տարօրինակ մտավախութիւնը ունեցած

17 Ելույթ ունեցողներն էին համապատասխանաբար դոկտոր Խանճեանը և Գեորգ Մեսրոպը: Տե՛ս *Երեկուան սգահանդէսը*, «Ճակատամարտ», 1919, 26 ապրիլի, նոր շրջան, թիվ 139/ 1960: Հղվում է ըստ Մատթէոսեան Վարդան, նշվ. աշխ.:

18 Այն համապատասխանում է Բեթհովենի երրորդ սիմֆոնիայի երկրորդ մասին:

19 Տե՛ս Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 255:

20 Գրքին նվիրված իր հրապարակումը «Ապրիլ 11» հանձնախմբի անդամ Մերութան Պարսամեանը վերնագրել է «Գիրքը մը, որ գերեզմանատունի կը նմանի»: Տե՛ս «Շանթ», 1919, 26 ապրիլի, նոր շրջան, թիվ 25-26, էջ 304:

21 Մատթէոսեան Վարդան, նշվ. աշխ.:

22 Տե՛ս Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 255:

23 «Ճակատամարտ» օրաթերթի ապրիլի 25-ի համարի հիմնական կարգախոսն էր. «1915 ապրիլ 11/24 – սուգի օրը անոնց որ գացին ու չեկան»: Տե՛ս «Ճակատամարտ», 1919, 25 ապրիլի, նոր շրջան, թիվ 138/1959:

է ամէն բան սահմանափակելու պարզ ձեւակերպական հանդէսի մը մէջ»²⁴: «Առաւօտ»-ը ցավում էր, որ «սգահանդէսը չէր կրցած ունենալ այն մեծաշուք հանդիսատեսութիւնը, որուն արժանի էր անիկա»: Խմբագրությունը գտնում էր, որ կարելի էր «համազգային հանգամանք մը տալ անոր» և որ կազմակերպիչները չէին կարողացել ապահովել «գէթ ազգային վարժարաններու և մտաւոր բոլոր շրջանակներուն մասնակցութիւնը»: Տեղեկացվում էր, որ ժամանակին կազմվել է ավելի պատշաճ ծրագիր, սակայն այն չի ընդունվել «անհասկանալի մտավախութեամբ»: Նշվում էր, որ «մեռելների յիշատակի առջեւ» «ազգային Մեծ Սուգը» պետք է գերծ մնա կուսակցական և այլ բնույթի անհամաձայնություններից: Թերթը եզրակացնում էր, որ «մեր մեռելներուն հոգիները անգամ մըն ալ տխրեցան, վերէն տեսնելով այն անբաղձալի ոգին որ այնքան նուիրական ձեռնարկի մը մէջ ի յայտ եկաւ դժբախտաբար»²⁵:

Եթե ընդհանրացնելու լինենք 1919 թ. ապրիլի 24/25-ի նշումը, ապա կարելի է նկատել մի քանի առանձնահատկություններ.

- ա) այն նվիրված էր միայն մտավորականների, այլ ոչ բոլոր գոհերի հիշատակին,
- բ) նշվում էր ոչ թե «հիշատակի օրն» ընդհանրապես, այլ աքսորի չորրորդ տարեկիցը²⁶,
- գ) այն ուներ բացառապես սուգին/սգատունին բնորոշ տարրեր (հոգեհանգստի արարողություն եկեղեցում, հոգևոր երաժշտություն, նահատակ գրողների ստեղծագործությունների կատարում, ելույթներ քաղաքական կուսակցությունների կողմից, նահատակ մտավորականներին նվիրված գրքի շնորհանդես, նահատակ մտավորականների կարոտյալ ընտանիքներին նյութական օժանդակության փորձ, հայկական հաստատությունների կողմից աշխատանքի դադարեցում),
- դ) այն համայնքային նեղ շրջանակների մէջ իրականացված միջոցառում էր, նպատակ չէր հետապնդում վերաճելու հանրային լայն ընդգրկում ունեցող իրադարձության, համենայն դեպս ուղղված չէր Օսմանյան կայսրության մյուս քաղաքացիներին և կամ համաշխարհային հանրությանը,
- ե) ազգային որոշ այլ կազմակերպություններ գիտակցում էին սգահանդէսի սահմանափակ լինելու և դրա՝ համազգային ընդգրկում ունենալու անհրաժեշտության հանգամանքը,
- զ) շեշտվում էր «ազգային մեծ սուգի» առջև քաղաքական և ոչ քաղաքական կազմակերպությունների միջև առկա անհամաձայնությունները մի կողմ դնելու անհրաժեշտությունը:

24 Տե՛ս «Հակատամարտ», 1919, 24 ապրիլի: Վարդան Մատթէոսեանի համոզմամբ պատճառներից մեկը թերևս այն էր, որ քաղաքում, «Հակառակ դաշնակից զօրքերու ներկայութեան, քաղաքական մթնոլորտը նպաստավոր չէր»: Մատթէոսեան Վարդան, նշվ. աշխ.:

25 Տե՛ս *Անցեալ ուրբաթի սգահանդէսը. Հինձ' կ'ալ խորրականութիւն*, «Առաւօտ. լրագիր ազգային եւ քաղաքական» (Կ.Պոլիս), 1919, 28 ապրիլի, Բ տարի, թիւ 1: Մատթէոսեան Վարդան, նշվ. աշխ.:

26 «Այս գիշեր կը լրանայ չորրորդ տարին այն չարաշուք օրուան՝ ուր անւերադարձ տարուեցան Հայ կեանքի մեծագոյն դէմքերը, - գործիչ ու մտաւորական, բժիշկ թէ ուսուցիչ, բանաստեղծ կամ հրապարակագիր, բոլորը՝ ինչ որ ունէր Պոլիսը՝ մեծ ու շքեղ»: *Հայկական կեանք. Վաղուան սուգի օրը*, «Հակատամարտ», 1919, 24 ապրիլի, նոր շրջան, թիւ 137/ 1958:

Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օրը նշելու հարցը Հայաստանի առաջին Հանրապետությունում

Ինչպե՞ս և ե՞րբ առաջարկվեց նշել ապրիլի 24-ը Հայաստանում, ե՞րբ այն հաստատվեց ու ի՞նչ ձևակերպումներով: 1920 թ. մարտի 25-ին գրող Վրթանես Փափագյանը (1866-1920) դիմում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցին, Հայաստանի Հանրապետության խորհրդարանին և հանրային կրթության ու արվեստի մինիստրին՝ ապրիլի 11-ը (սոր տոմարով՝ ապրիլի 24-ը) հայտարարելու «Համազգային սուգի օր», իբրև «Յիշատակ հարիրավոր հայ մտաւորական նահատակների, որոնք ընկան համաշխարհային մեծ պատերազմի օրերին՝ թիրքական վայրագ սրից»: Դիմումի տեքստում նա հիշեցնում է Վեհափառին ապրիլի 11/24-ի իրադարձությունների մասին, երբ «նախապես ծրագրուած դիւային մի մտածութիւնով, թիւրք կառավարութիւնը, հայ ազգի բնաջնջմանը իբր ազդարար, խմբովին ձերբակալեց հարիրատր հայ մտաւորականների, տանջեց նրանց բանտից-բանտ և աքսորների ճանապարհներին, յետոյ գազանօրէն մորթոտել տաւ և անյայտնութեան մատնեց նրանց գերեզմաններն անգամ»: Վ. Փափագյանը հիշեցնում է, որ «սպանեցին ու մորթոտեցին մօտ 760 մտաւորականների», որոնք նահատակներ էին, որ «ընկան մեր ազատութեան արիւնալից ուղիների վրայ՝ պատւանդան դառնալով մեր այժմեան փոքրիկ, վտիտ անկախութեան համար, որ պիտի մեծանայ անշուշտ և իր լաւ օրերի մէջ հիացումով պիտի յիշէ 760 լաւագոյն մտաւոր ոյժերին»: Փափագյանն այնուհետև առաջարկում է «1) Պատուէր ուղարկել բոլոր Հայ եկեղեցիներին՝ սգոյ տօն և օր հռչակելու ապրիլի 11-ի օրը, և հետևապէս հանդիսատր հոգեհանգիստներ կատարել ամէն տեղ: 2) Մտցնել մեր Տօնացոյցի մէջ իբր մշտական սգոյ տօնի օր՝ ապրիլ 11-ի օրը – «Յիշատակ 760 հայ նահատակ մտաւորականների, որոնք ընկան համաշխարհային մեծ պատերազմի օրերին՝ թրքական վայրագ սրից»: Հետգրոյթան մեջ Փափագյանը նկատում է. «Ապրիլի 11-ը այս տարի ընկնում է Զատկական օրը: Ինձ թւում է, որ յարմար կը լինէր տօնել 12-ին, որ արդէն «յիշատակ մեռելոց»-ի օրն է»:

Հայաստանի խորհրդարանին ուղղված գրության մեջ Փափագյանն առաջարկում է հնարավորություն գտնել «յիշեցնելու ամբողջ Հայաստանի ժողովրդին և ամէն տեղերի հայերին, թէ ինչպիսի կսկծալից սգոյ օրեր են Ապրիլ 11-ի, 12-ի և 13-ի օրերը և թէ ինչպէս այդ օրերից մէկ օրը գոնէ, անհրաժեշտ է, որ սգոյ օր դառնայ ամբողջ հայ ազգի համար այնպէս, ինչպէս դարերից ի վեր դարձել է Վարդանանց օրը»: Փափագյանը ներկայացնում է հետևյալ երկու առաջարկը. «1. Ապրիլ 12-ի կամ 13-ի օրը հռչակել Համազգային սուգի օր, կանգ առնել տալ ամեն հաստատութիւն իր գործունէութեան մէջ, փակել բոլոր խանութները և կազմակերպել տալ ամեն տեղ, մանաւանդ կրթական հաստատութիւնների մէջ՝ սգահանդէսներ, ուր մատաղ սերունդը լսի և իմանայ թէ ինչպիսի զոհերի գնով է, որ վայելում է այժմեան իր ազատութիւնը և ովքեր են այն նահատակները, որոնք իրենց վարդագոյն արիւնովը պսակեցին մեր անկախութիւնը»: Խորհրդարանին ուղղված առաջարկի երկրորդ կետը հիմնականում կրկնում էր Կաթողիկոսին ուղղված առաջարկի երկրորդ կետը:

Մրան հետևում է կաթողիկոսական դիվանի՝ 1920 թ. մարտի 26-ի շրջաբերականը, որով հրահանգվում է «առաջիկա Զատիկի երկուշաբթի մեղեդոցին, մարտի 30/ ապրիլի 12-ին՝ հանդիսավոր հոգեհանգիստ կատարեն ի յիշատակ 1915 թ. ապրիլի 11-ին Կ.Պոլիս և Հայաստանի բոլոր գաւառներում նահատակւած թիով մօտ 760 մտատրականների եւ հոգևորականների»²⁷: Եղեռնի զոհերի հիշատակի նշումը կայանում է, այդ առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Դ Սուրենյանցը Ս. Էջմիածնում կատարում է հոգեհանգիստ՝ հայ կաթողիկե և ավետարանական համայնքների ներկայացուցիչների ներկայությամբ և հայտարարում է ապրիլի 11/24-ը «Համաշխարհային Առաջին Պատերազմի զոհերու յիշատակման ազգային օր»²⁸: Եվ միայն մեկուկես տարի անց՝ 1921 թ. հոկտեմբերի 30-ին, ընդառաջելով Կ.Պոլսի հայոց պատրիարքի՝ 1921 թ. սեպտեմբերի 24-ով թվագրված նամակին՝²⁹ Գևորգ Ե Կաթողիկոսն արձակում է հայրապետական կոնդակ (թիվ 416)՝ հավերժացնելու համար հիշատակը հայոց բյուրավոր նահատակների, «սահմանելով առ այն յատուկ օր, այն է ի 11/24 ամսեանն ապրիլի»: Այդ օրը կոչվելու էր «Տօն Ազգային – յիշատակ բիրատոր նահատակաց մերոց համաշխարհային պատերազմին»: Այդ օրը Հայաստանի բոլոր եկեղեցիներում պետք է մատուցվի հանդիսավոր պատարագ, և կատարվի հոգեհանգիստ: Այս հիշատակի տոնը այդուհետ տեղ էր գտնելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ամենամյա օրացույցներում «ի մշտնջենական յիշատակ ապագայի»³⁰:

Եթե համեմատելու լինենք Օտյանի և Փափազյանի գրությունները, ապա կնկատենք ինչպես նմանություններ, նույնպես և տարբերություններ: Միանշանակ է, որ Վրթանես Փափազյանի նամակը կրում է Օտյանի հրապարակման ազդեցու-

27 Վրթ. Փափազյանի գրություններն ի մի են բերված հետևյալ ժողովածուում. *Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Ե*, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Առաջին հանրապետության տարիներին (1918-1920 թթ.), կազմեց՝ Սանդրո Բեհրոտյան, Երևան, 1999, փաստաթղթեր 270, 271, 274 (էջ 360-363, 365): Տե՛ս նաև Բեհրոտյան Սանդրո, *Բնչպե՛ս և ե՛րբ հասարակւեց ապրիլի 24-ը Մեծ եղեռնի նահապականց հիշարակի օր*, «Էջմիածին» հանդես, 2003, թիվ Գ-Դ, էջ 165-167:

28 Տե՛ս Աշըգեան Շողիկ, *Մեծ Եղեռնի առաջին ոգեկոչումները 1919-1920*, «Գանձասար. Պաշտօնաթերթ Բերիոյ թեմի ազգային առաջնորդարանի» (Հալեպ), 2003, ապրիլ (Դ), էջ 7: Տե՛ս նաև *Փափազեան Վրթանես*, Թեոդիկ, Ամէնուն տարեցոյցը, ԺԵ տարի, Կ.Պոլիս, 1921, էջ 178: Այստեղ Թեոդիկը նշում է, որ հոգեհանգիստը կազմակերպել է Վրթանես Փափազյանը: Մի քանի օր անց գրողը կնքում է իր մահկանացուն:

29 Կ.Պոլսի մամուլում դրանից առաջ հնչել էր քննադատություն, որ «Քանի մը անգամներ կատարուած սգահանդէսներն ալ տպաւորիչ բան մը չէին կրնար ըլլալ և չէղան ալ: Մենք իբր կրօնական ազգ, անպատճառ պարտինք Եկեղեցիի սրբազան հովանիին ներքեւ համախմբեր մեր սրբութիւնները: Կ'առաջարկեմ հետեւաբար որ մեր Եկեղեցին ընդունի միլիոն մը զոհուած Հայութեան արեան տօնը՝ իբր եկեղեցական ամենամեծ տօն մը և պահքով մըն ալ բարձրացնելով անոր կարեւորութիւնը, տարագրութեան սկիզբն եղող Ապրիլ ամսուն մէջ անպատճառ տօնախմբէ անոնց յիշատակը: Հայուն չարչարանքի և ազատագրութեան զոհերուն տօնը կատարելով, Հայ Եկեղեցին պիտի շարունակէ իր նուիրական պաշտօնը, որ է ներկայ և ապագայ սերունդներու հոգւոյն մէջ վատ պահել Աստուծոյ և Հայրենիքի հաւատքը»: Էլմատան Մ., *Բնչո՞ւ մեր միլիոն մը նահապականերուն յիշարակը մեր եկեղեցին դեռ չի փօներ*, «Ժողովուրդի ձայն» [«Ժամանակ»] (Կ.Պոլիս), 1921, 25 փետրուար/10 մարտի, թիւ 4030:

30 Տե՛ս Բեհրոտյան Սանդրո, նշվ. աշխ.:

թյունը: Այսպես՝ երկուսն էլ համեմատության համար հղում են կատարում Վարդանանց նահատակներին ու տոնին: Սակայն եթե Օտյանի համար Վարդանանց տոնը ազգային անկախության և խղճի ազատության ցուցիչ է, ապա Փափազյանի համար այն լոկ «սգոյ տօն» է: Օտյանի համար նահատակներ են մեկուկես միլիոն հայ մարդիկ, Փափազյանը շեշտադրում է անում միայն 760 հայ մտավորականներին: Համապատասխանաբար Օտյանն առաջարկում է «ազգային-կրօնական մեծ տօն[ը] ի յիշատակ մեր նոր ու գերագույն մարտիրոսութեան», մինչդեռ Փափազյանի առաջարկությամբ այն «մշտական սգոյ տօն» է՝ ի հիշատակ հարյուրավոր հայ մտավորականների: Թե՛ Օտյանը, թե՛ Փափազյանը, թերևս տուրք տալով ժամանակի մտայնություններին, կոտորված զոհերին և մտավորական նահատակներին դիտում են որպես զոհեր «յանուն ... ազգային ազատութեան» և «պատանդան... մեր այժմեան փոքրիկ, վտիտ անկախութեան համար»: Երկուսն էլ գտնում են, որ հիշատակի օրվա մասին որոշումը պետք է ընդունի Ամենայն Հայոց Կաթողիկոսը, երկուսն էլ շեշտում են դրա համահայկական լինելու անհրաժեշտությունը, մասնակցությամբ բոլոր եկեղեցիների, դպրոցների, ընդհանրապես ազգային հաստատությունների: Օտյանը չի սահմանափակվում միայն սգալու առաջարկով, այլ երևույթը դիտում է ավելի լայն հարթության՝ հիշողության մշակույթի մեջ՝ նկատելով, որ կորստի հիշողությունը պետք է օգնի վառ պահելու ոչ միայն տառապանքները, այլև ընդհանրապես հայոց պատմության տարաբնույթ էջերը՝ ներառյալ հաղթանակները: Աբսորի տառապանքներն իր վրա կրած ու հազարավոր մարդկանց տանջանքներն ու մահը տեսած Օտյանը գտնում է, որ կոտորածի հիշողության մեջ հայ ազգը կարող է գտնել «իր ապագայ կենսականությունը եւ ապրելու գործութիւնը»: Եթե Փափազյանը, նույնպես և Ամենայն Հայոց կաթողիկոսն իր պաշտոնական կոնդակով նահատակներին դիտում են «համաշխարհային պատերազմի» համատեքստում, ապա Օտյանը շեշտում է սգատոնի «հայկական մեծ նահատակութեան յիշատակ» լինելու անհրաժեշտությունը: Այս վերջին նկատառումը մեր կարծիքով էական է և ցուցում է Սփյուռքի հայկական համայնքներում ապրիլյան սգատոնի հետագա տասնամյակների (մինչև 1965 թ.) հիմնական ուղղվածությունը՝ որպես զուտ ազգային ողբերգության ընկալում և ներկայացում³¹:

**Խորհրդային-թուրքական պայմանագրերը,
ազգայնականության հարցը և հիշատակի օրը նշելու անհնարինությունը
ստալինյան ժամանակաշրջանում**

1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետությունում, 11-րդ կարմիր բանակի ակտիվ միջամտությամբ հաստատվում է խորհրդային իշխանություն: Այն հաջորդում է սեպտեմբերին սկսված հայ-թուրքական պատերազմին, որի ժամանակ թուրքական կողմի հաղթանակը մեծապես պայմանավորված էր Խորհրդային Ռուսաստանից ոսկու և զենք-զինամթերքի տեսքով ստացվող աջակցությամբ, ինչպես նաև բոլշևիկյան քայքայիչ քարոզչությամբ: 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում Թուրքիայի

31 Սա նախնական դիտարկում է և, թերևս, կարիք ունի ավելի հիմնավորման՝ ավելի շատ սկզբնաղբյուրների վերլուծության ճանապարհով:

Ազգային մեծ ժողովի և Խորհրդային Ռուսաստանի միջև կնքվում է «Բարեկամության և եղբայրության» պայմանագիր, որի առաջին և երրորդ հոդվածների համաձայն՝ Թուրքիային էին անցնում Հայաստանի Հանրապետության մաս կազմող Կարսի մարզը և Սուրմալուի գավառը, իսկ Նախիջևանի մարզը՝ որպես ինքնավար տարածք, հանձնվում էր Խորհրդային Ադրբեջանի խնամակալությանը, պայմանով, որ Ադրբեջանն այն չգիջի մի երրորդ պետության (այն է՝ Հայաստանին)։ Ութերորդ հոդվածով պայմանավորվող կողմերը պարտավորվում էին իրենց տարածքներում արգելել այնպիսի կազմակերպությունների և խմբերի առաջացումն ու գոյությունը, որոնք ունեն մյուս երկրի կամ նրա տարածքի մի մասի կառավարության դերն ստանձնելու հավակնություն, ինչպես նաև պարտավորվում էին իրենց տարածքում արգելել այնպիսի խմբերի գոյությունը, որոնց նպատակն է պայքարը մյուս երկրի դեմ։ Ռուսաստանն ու Թուրքիան փոխադարձության պայմանով ստանձնում էին նույնպիսի պարտավորություն նաև Կովկասի խորհրդային հանրապետությունների վերաբերյալ։

1921 թ. հոկտեմբերի 13-ին Ռուսաստանի ճնշման ներքո (ինչը համապատասխանում էր Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածին) Կարսում նմանատիպ «բարեկամության» պայմանագիր է կնքվում մի կողմից՝ Խորհրդային Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի, մյուս կողմից՝ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության միջև։ Հայաստանը համաձայնում է Մոսկվայի պայմանագրում ամրագրված տարածքային զիջումներին, իսկ Կարսի պայմանագրի 10-րդ հոդվածը նույնությամբ կրկնում է ռուս-թուրքական պայմանագրի ութերորդ հոդվածը։

Մոսկվայի պայմանագրի 8-րդ և Կարսի պայմանագրի 10-րդ հոդվածների դրույթների գործադրությանը լիովին «համապատասխանում» էին Արևելյան Հայաստանում ապաստանած արևմտահայ 300-400 հազ. գաղթականների, ապա և նախկին արևմտահայ հայրենադարձներից շատ-շատերի գործունեության և պահվածքի տարաբնույթ «դրսևորումները»։ Եվ բնական է, որ դա իր արտահայտությունը ստացավ խորհրդային իշխանության հաստատմանը հաջորդող բռնություններում, որոնց զագաթնակետը 1936-38 և 1949 թթ. ստալինյան զանգվածային բռնություններն էին՝ գնդակահարությունները, աքսորները, բանտարկությունները, քաղաքացիական իրավունքներից զրկումը և այլն։ Այս բռնությունների համար որպես հիմնավորում հաճախադեպ նշվող մեղադրանքը հակախորհրդային, դաշնակցական, հակահեղափոխական և նացիոնալիստական գործունեությունն էր։ Հարցին մի շարք հրապարակումներով հանգամանալից անդրադարձած ազգագրագետ Հրանուշ Խառատյանի մի դիտարկմամբ, «ինչ ասեք կարող էր մատուցվել որպես «նացիոնալիստական»՝ Հայոց ցեղասպանության մասին հիշողություններից (հակաթուրքական է, ուրեմն նացիոնալիստական է) մինչև «Վարդան Մամիկոնյանին մեծարելը», որով մարդն ընդգծում է իր «ազգային հպարտությունը», ուրեմն «նացիոնալիստ է»։ ... Հայաստանում հատկապես խիստ «նացիոնալիստական» էր համարվում... Հայոց ցեղասպանության և Արևմտյան Հայաստանի մասին հիշողությունը»³²։ Խառատյանը փոր-

32 Տե՛ս Խառատյան Հրանուշ, ««Նացիոնալիզմի» դիսկուրսը և ցեղասպանության հիշողության թիրախավորումը քաղաքական բռնություններում»։ - Հրանուշ Խառատյան, Գայանե Շագոյան,

ծուլ է մանրամասնել. «Հայաստանի գրական միջավայրում «նացիոնալիզմի թեման» քննարկվում և «նացիոնալիզմը» քննադատվում էր առնվազն 1933-34 թթ.-ից: Քննարկումներում հասկանալի չէր, թե ինչու՞մ է արտահայտվել նացիոնալիզմի մեջ մեղադրված գրողների նացիոնալիզմը և ինչպե՞ս էր առհասարակ ընկալվում նացիոնալիզմը հայկական քաղաքական և մտավորական շրջանակներում»³³: Համենայն դեպս, փաստացի արգելված թեմաներն էին Հայոց ցեղասպանության և Արևմտյան Հայաստանի մասին ցանկացած հիշատակում կամ քննարկում, լինել դա կորուսյալ հայրենիքի կարոտը³⁴ կամ այնտեղ վերադառնալու թաքուն հույսերը, անցյալի մասին գովեստով արտահայտվելը, թուրքերի կողմից հայերին ջարդելու կամ թուրքերի դեմ կռվելու, ընդհանրապես ինքնապաշտպանության մասին հիշողությունները և դրա շուրջ հյուսված երգերը և այլն³⁵: 1936-37 թթ. ձերբակալված բոլոր հայ գրողները մեղադրվում էին «նացիոնալիստ» լինելու մեջ: Ուշագրավ է, որ նրանց բացարձակ մեծամասնությունը Արևմտյան Հայաստանից էին և ցեղասպանությունը վերապրած փախստականներ էին կամ Արևելյան Հայաստանի այն հատվածներից էին, որոնք բոլշևիկները 1921 թ. հանձնեցին Թուրքիային³⁶:

Ահա այս համապատկերն էր առկա 1920-53 թթ. Խորհրդային Հայաստանում, ինչն իր ծանրակշիռ ազդեցությունն էր թողնում ցեղասպանության հիշողության ընդհանուր վիճակի և մասնավոր դրսևորումների վրա:

Հարություն Մարության, Լևոն Աբրահամյան, *Սյրալինյան բռնաճնշումները Հայաստանում. պատմություն, հիշողություն, առօրյա*, Երևան, «Գիտություն» հրատ., 2015 (Հիշողության ազգագրություն, 5), էջ 45:

33 Նույն տեղում, էջ 58:

34 Հայաստանում բնակվող արևմտահայ գաղթականներից մշեցիները և սասունցիները գտել էին իրենց պապենական բնակավայրը հավերժացնելու յուրահատուկ եղանակ: Դա հետևյալն էր. մահացողների տապանաքարերին նշվում էր հանգուցյալի ծննդավայրի, այն է՝ արևմտահայկական բնակավայրի անվանումը, որտեղից որ նա գաղթել էր Արևելյան Հայաստան: Եվ Թալինի շրջանի (ներկայումս՝ Արագածոտնի մարզի) Ցամաքասար, Սուսեր, Կաթնաղբյուր գյուղերի գերեզմանոցը դառնում է Արևմտյան Հայաստանի մի յուրահատուկ մանրակերտ՝ Մուշի ու Սասունի տարբեր գավառների ու գյուղերի անվանումներով՝ Մանազկերտ, Մշո Ցրոնք, Առինջ, Աներ, Սինամերկ, Փեթակ, Վարդով գավառակի Գունդեմիր, Խնուսի Արոս, Դատվանի/Մոտկանի Արփի, Սասունի/Մուշի Գյարմավ և այլն: Այդ «անմեղ», բայց յուրահատուկ մարտահրավերի, բողոքի երանգներ կրող ավանդույթը բարեհաջող շարունակվեց նաև Ստալինի մահվանից հետո: Մյուս տարածված ձևը արևմտահայկական տեղանունը կամ դրա մաս պարունակող անունը որպես նորածին երեխայի անուն դնելն էր, ինչպես օրինակ՝ Սասուն, Մուշեղ, Տարոն, Վասպուր և այլն, նաև ազգային-ազատագրական պայքարի հերոսների անուններ դնելը, որոնց շարքում ամենատարածվածը Անդրանիկ անունն էր, ի պատիվ հայ ազգային-ազատագրական կռիվների հերոս գեներալ Անդրանիկ Օզանյանի:

35 Մանրամասն տե՛ս Խառատյան Հրանուշ, նշվ. աշխ., էջ 61, 91, 120, 123, 125, 136, 138 և այլն: Հեղինակի համոզմամբ՝ «Բոլշևիկյան ընկալմամբ հայկական նացիոնալիզմը կարելի է ձևակերպել նաև որպես «թուրքական վտանգի գիտակցություն»»: Նույն տեղում, էջ 134: Հեղինակն ընդհանրապես գտնում է, որ ԽՍՀՄ ստալինյան բռնաճնշումների հայկական և հայաստանյան առանձնահատկությունը մեծ չափով պայմանավորված է Մոսկվայի պայմանագրի 8-րդ և Կարսի պայմանագրի 10-րդ հոդվածների դրույթներով: Նույն տեղում, էջ 99: Այս գաղափարը, սակայն, մենք չենք կիսում:

36 Նույն տեղում, էջ 68-69:

Մեծ եղեռնի հիշողության հարցը ստալինյան ժամանակաշրջանում և «ճնհալի» տարիներին

Ինչպես արդեն նշվեց, Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Եղեռնի մասին խոսակցություններն աստիճանաբար լռեցին: Հայոց ցեղասպանության 20-րդ, 30-րդ, 40-րդ տարելիցները բացարձակապես լռության, մոռացության էին մատնված: Նշանավոր արձակագիր, հրապարակախոս և հասարակական գործիչ Վարդգես Պետրոսյանի դիպուկ բնորոշմամբ. «Քառասունհինգ տարի, 1920-ից մինչև 1965 թվականը, ամեն ապրիլի 24-ը մենք նույնիսկ զրկված էինք... տխրելու իրավունքից»³⁷: Խորհրդային իշխանության առաջին տասնամյակներին առհասարակ, բուն ազգային ամեն ինչ հետզհետե մերժելի ու բացասական երանգներ էր ստանում: Սակայն աստիճանաբար հեղափոխական շինարարության աղմուկի, ոգևորության ու պաթոսի մթնոլորտում սկսեցին հնչել «մոռացված» անցյալի ձայները: Ազգային ողբերգության պատկերման առաջին փուլը Խորհրդային Հայաստանի գրականության մեջ սկսվեց մանկության հուշերի գեղարվեստական արտացոլման ճանապարհով. Եղեռնը վերապրած, հայրենիքը կորցրած գրողները՝ Վահան Թոթովենցը, Զապել Շալայանը, Գուրգեն Մահարին, հիշում էին իրենց մանկությունը, հայրենի վայրերը՝ առանց բուն եղեռնը հատկապես պատկերելու ցանկության: Մասնագետների գնահատմամբ 1920-30-ական թվականներն ազգային ողբերգության և պատմության գեղարվեստական արտացոլման համար կարելի է համարել հիշողությունների փուլ: Սակայն անցյալի անմիջական վերապրումների հենքի վրա ստեղծված գրականությունը վերջիվերջո իր տեղը պետք է զիջեր այլ մոտեցումների, ինչն էլ դրսևորվեց մասնավորապես Ալսեղ Բակունցի և Եղիշե Զարենցի մի շարք ստեղծագործություններում: Քանի որ բաց և ազատ Եղեռնի մասին գրել արդեն հնարավոր չէր, գտնվում էին այլ լուծումներ: Այսպես, ասպարեզ էին գալիս հերոսներ, որոնք, ուղղակիորեն չվերհիշելով ցեղասպանության սարսափները, իրենց իսկ գոյությամբ հիշեցնում էին այդ մասին³⁸: Եվ կամ հայրենասիրական հզոր ներուժ և սերունդներին ուղղված պատգամ պարունակող գաղափարները շարադրվում էին գաղտնագրերի նման, որոնցից էր 1933 թ. ծնված և մինչ օրս կենսունակ Զարենցի մեզոստիքոսը՝ «Ո՛վ հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է», որը չորս տարի անց բացահայտվելուց հետո որակվեց որպես նացիոնալիստական: Ավելորդ չէ նշել, որ հիշատակված գրողները, ինչպես նաև նրանց բազմաթիվ գործընկերներ, 1937 թ. բռնադատվեցին ու գնդակահարվեցին:

Հայրենական մեծ պատերազմը ինչ-ինչ ճեղքվածքներ բացեց այն պատի մեջ, որը ստալինյան ռեժիմը դրել էր ժողովրդի պատմական հիշողության առջև: Մասնավորապես Դերենիկ Դեմիրճյանն և Ստեփան Զորյանը 4-5-րդ դարերի իրադարձություններին նվիրված պատմավեպերում անդրադառնում են կորսված երկրի ու կորս-

37 Պետրոսյան Վարդգես, «Հոգեքանական փշալարի» փաթեթը կողմերում. – Վարդգես Պետրոսյան, Մեր ժողովուրդը իմն է՝ ինչպես... իմ վիշտը: Հրապարակախոսական հոդվածների ժողովածու (խմբ.՝ Լևոն Անանյան), Երևան, «Հայաստան», 2003, էջ 132:

38 Հարցի շուրջ մանրամասն տե՛ս Եղիազարյան Ազատ, «Եղեռնի արտացոլումը խորհրդահայ գրականության մեջ», ԼՀԳ, 1990, թիվ 4, էջ 36-41:

ված պետության ճակատագրին, անուղղակիորեն հիշեցնում, որ հայոց պատմության բոլոր էջերն արյունոտ են³⁹: 1945 թ. կոտորածների մասին պատմող դրվագներով «Պրավդայում» լույս է տեսնում Հրաչյա Քոչարի «Գեներալի քույրը» պատմվածքը, իսկ Երևանում տպագրվում է Եղեռնը պատկերող նոր ժամանակների առաջին և ցնցող գրքերից մեկը՝ Գառնիկ Ստեփանյանի «Մղձավանջային օրեր»-ը:

Պատերազմից հետո ազգային ողբերգության հիշողությունը երբեմն կարծես անհետանում էր, բայց առաջին իսկ հարմար պահին կրկին ասպարեզ էր գալիս ամենատարբեր ձևերով: Խորհրդային Հայաստանի գեղարվեստական գրականության մեջ Մեծ եղեռնի մասին առաջին անգամ ուղղակիորեն խոսվում է Քրիստափոր Թափալցյանի՝ 1946 թ. լույս տեսած «Պատերազմ» վեպի առաջին հատորում, որի հերոսներից մեկը պատմում է իր «Հայկական ջարդը Համաշխարհային առաջին պատերազմի օրերին» նկարի, այդ ողբերգությունը գեղարվեստորեն պատկերելու անհրաժեշտության մասին: 1946 թ. սկսված հայրենադարձությունը Հայաստան բերեց Եղեռնից փրկված մարդկանց, նրանց զավակների մի մասին ու նրանց հիշողությունը: Եվ այն, ինչ չէր կարելի ասել գրավոր, Եղեռնի հետ առնչություն չունեցող բազմաթիվ մարդկանց հայտնի դարձավ ներգաղթածների ու նրանց ծնողների, ազգականների, բարեկամների ու ծանոթների ճակատագրերի պատմությունների միջոցով: 1950 թվականին լույս է տեսնում Իսաչիկ Դաշտենցի «Խողեղան» վեպը, որտեղ առաջին անգամ ոչ միայն խոսվում էր կորսված հայրենիքի մասին, այլև պատկերվում էին նրա բնակիչների առօրյա կյանքը և այն մեծ ողբերգությունը, որ ապրում է գլխավոր հերոսը՝ կորցնելով հայրենիքն ու իր մերձավորներին: Բայց նույն այդ հերոսն իր մեջ ուժ է գտնում և կորով՝ նորից սկսելու իր կյանքը Խորհրդային Հայաստանում⁴⁰:

1953 թ. Ստալինի մահով ԽՍՀՄ-ում սկսվում է «ձնհալի» ժամանակաշրջանը: Աստիճանաբար սկսեցին ժողովրդին վերադարձվել ստալինյան բռնությունների զոհ հայ գրողների (Զարենց, Բակունց, Մահարի, Թոթովենց և ուրիշներ) ստեղծագործությունները, հրատարակվել տասնամյակներ առաջ ազգայնական և թշնամի հռչակված հայ դասական գրողների (Բաֆֆի), նաև արևմտահայ հեղինակների (Դանիել Վարուժան, Միսաք Մեծարենց, Սիամանյոն, Հակոբ Պարոնյան, Գրիգոր Զոհրապ) երկերը: Հայ գրողների վերահրատարակություններում և նոր ստեղծագործություններում սկիզբ է դրվում մի նոր թեմայի՝ կորսված հայրենիքի, նրա տեղահան եղած ու, մասամբ, միայն փրկված ժողովրդի կյանքի ու ճակատագրի, կորույսյալ հայրենիքի նկատմամբ սիրո, կորստի, նվիրումի, Ակսել Բակունցի խոսքերով ասած՝ «վերադարձի ու վերջին հույսի» գրականության: Խորհրդային հայ գրականության մեջ սկսվում է մի «հարուստ ու փառահեղ» տասնամյակ, որն էլ փաստորեն ձևավորում է 1960-ականների ազգային գիտակցությունը և նախապատրաստում 1965 թվականի ապրիլի 24-ի նշումը⁴¹:

39 Տե՛ս Իսախանյան Յուրի, *Հրաշալի փամփայակ*, «Ազգ օրաթերթ-Մշակույթ», 2006, 2 սեպտեմբերի:

40 Մանրամասն տե՛ս նույն տեղում:

41 Նույն տեղում:

1956 թ. Մոսկվայում ընթացող հայ արվեստի և գրականության տասնօրյակի շրջանակներում բացվում է հայ նկարչության ցուցահանդես, որտեղ, ի թիվս այլևայլ գործերի, ցուցադրվում է երիտասարդ գեղանկարիչ Սարգիս Մուրադյանի «Վերջին գիշերը, Կոմիտաս: 1915» մեծադիր յուղաներկ կտավը՝ այդ կերպ պատմելով հայ ժողովրդի ապրած անպատմելի ողբերգության մասին⁴²: Կարելի է ասել, որ 1956 թ.-ից է Հայաստանում առանձնակի ուշադրություն և վերաբերմունք արթնանում Կոմիտասի կյանքի ու գործի հանդեպ: Լույս է տեսնում Լյուսի Թարգյուլի «Կոմիտաս» վեպը, տպագրվում է «Կոմիտասը ժամանակակիցների հուշերում» գիրքը, դասագրքերում տպագրվում է Գեղամ Սարյանի «Դեպի կառավիսարան» բալլադը՝ գրված 1943 թ. և նվիրված Կոմիտասի հիշատակին: Սակայն Կոմիտասի կերպարը՝ իբրև հայ ժողովրդի առավել հավաքական կերպար ու նկարագիր, ստեղծվում է Պարույր Սևակի գրչի ուժով. 1959 թ. լույս է տեսնում նրա «Անլուելի զանգակատուն» պոեմը, որը հայ ժողովրդի վերջին հարյուրամյակի բանաստեղծական պատմությունն է՝ հյուսված Կոմիտասի անձի ու գործի, կյանքի ու ճակատագրի ողբերգական հենքի վրա: Գիրքն ունեցավ հսկայական հաջողություն. պոեմն ասմունքում էին ամեն տեղ և ամենուր՝ դպրոցներում, դահլիճներում և համերգասրահներում, հանդիսավոր պետական արարողությունների ժամանակ և ընտանեկան հավաքույթներում: Նոր ժամանակներում ոչ մի գիրք, ոչ մի ստեղծագործություն Հայոց ցեղասպանության հիշողության արթնացման գործում այն նշանակությունը չի ունեցել, որչափ «Անլուելի զանգակատունը»: 1955-ից ի վեր գրական ասպարեզում առավել իշխող է դառնում գրական նոր սերնդի բանաստեղծների շունչը: Դրանց թվում էին Հովհաննես Ծիրազը, Գևորգ Էմինը, Սիլվա Կապուտիկյանը, Հրաչյա Հովհաննիսյանը, Համո Սահյանը, Վահագն Դավթյանը, Պարույր Սևակը և ուրիշներ, որոնց ստեղծագործությունները զգալի չափով ուղղված էին հայ ժողովրդի պատմական ճակատագրի և ազգային նկարագրի պատկերմանը, նրա պատմության ամենաողբերգական շրջադարձերից մեկի իմաստավորմանը, ժողովրդի ազգային գիտակցության ձևավորմանն ու դրսևորման ձևերին⁴³:

Գրականության կողքին հայ ազգային գիտակցության ձևավորման գործում «ձնհալի» տարիներին վիթխարի դեր են խաղացել հայկական թատրոնը՝ իր փառահեղ վարպետներով ու մեծապես ազգային խաղացանկով, հայկական երաժշտությունը և ճարտարապետությունը, հայ մարզիկները: Այսինքն՝ ներքաղաքական իրավիճակի փոփոխության, նաև գրականության ու արվեստի շնորհիվ Հայոց ցեղասպանության թեմայի շուրջ տեղ գտած որոշակի ազատախոհության հետևանքով էր թերևս, որ 1965 թ. ապրիլին՝ ցեղասպանության 50-ամյակը նշելու ժամանակ, Երևանում տեղի ունեցան զանգվածային ելույթներ, որոնք այդ ժամանակների Խորհրդային Միությունում բավականին անսովոր երևույթ էին: Այդ ելույթները, ինչպես և դրանց նախորդող ու հաջորդող՝ գրականության ու արվեստի մեջ ցեղասպանության

42 Կոմիտասին նվիրված կտավների վերլուծությունը տե՛ս Խաչատրյան Յուրի, *Գեղանկարիչ Սարգիս Մուրադյանի «Կոմիտասը»*, «Ազգ օրաթերթ-Մշակույթ», 2006, 5 օգոստոսի:

43 Մանրամասն տե՛ս Եղիազարյան Ազատ, նշվ. աշխ., էջ 42-44: Խաչատրյան Յուրի, նշվ. աշխ.:

թեմայի նկատմամբ հետաքրքրության կտրուկ աճը վկայում են, որ ցեղասպանության հիշողությունը, չնայած այն լուրջ մատնելու պաշտոնական քաղաքականությանը, շարունակում էր ապրել մարդկանց հոգիներում և գիտակցության մեջ: Սակայն այդ հիշողության մեջ հայերը բացառապես ներկայացվում էին որպես անմեղ զոհ, որը կորցրել է իր պատմական հայրենիքի մեծ մասը և կարիք է զգում կարեկցանքի: Չնայած գրողների հայացքը դուրս էր գալիս մանկական հուշերի, եղեռնի և զինված պայքարի առանձին դրվագների նկարագրության սահմաններից՝ ընդգրկելով քաղաքական ավելի լայն համապատկեր, պատճառների ու հետևանքների ավելի մեծ շրջակայացություն, այնուամենայնիվ ազգային-ազատագրական պայքարի, ֆիդայական կռիվների հերոսների, ինչպես նաև անկախ պետականության թեմայի՝ առանց կապանքների, ազատ արձարծումը գաղափարախոսական առումով շարունակում էր մնալ չհայտարարված արգելանք⁴⁴:

Այդ ժամանակաշրջանի Եղեռնի թեման շոշափող գործերի հիմնական բովանդակությունը կարելի է ձևակերպել Սիլվա Կապուտիկյանի «Մտորումներ ճանապարհի կեսին» պոեմի «խաղաղ վրեժի» պատգամով՝ «Դու պիտի վրեժ առնես ապրելով» կոչով, որը փաստորեն նաև ցեղասպանության հիշողության բնագավառում տարվող պետական գաղափարախոսության քաղաքականության գեղարվեստական ձևակերպումն էր⁴⁵:

Հայ եկեղեցին և Մեծ եղեռնի գոհերի հիշատակը նշելու խնդիրը 1920-60-ական թվականներին

Հայաստանում իր հաստատման առաջին իսկ շաբաթներից սկսած՝ խորհրդային իշխանությունն անհաշտ պայքար էր մղում եկեղեցու դեմ. բռնագրավվեցին եկեղեցապատկան հողերը, պետականացվեցին եկեղեցուն պատկանող դպրոցները, թանգարանները, գրադարանները, տպարանները, ընդունվեց հրամանագիր (դեկրետ) Էջմիածնի վանքի արժեքներն առգրավելու մասին և այլն: Ման քաղաքականության նպատակը եկեղեցու քայքայումն էր, այնպիսի վիճակի մեջ դնելը, որ չկարողանա ազդեցություն ունենալ հայ բնակչության վրա ինչպես երկրում, այնպես էլ, որքան հնարավոր է, Սփյուռքում⁴⁶: Հայաստանում խորհրդային կարգեր հաստատ-

44 Մարության Հարություն, *Հայ ինքնության պարկերագրությունը: Հայտը 1. Ցեղասպանության հիշողությունը և Ղադաքաղյան շարժումը*, Երևան, «Գիտություն», 2009, էջ 70:

45 Տե՛ս Կապուտիկյան Սիլվա, *Մտորումներ ճանապարհի կեսին*, Երևան, 1961, էջ 112: Պոեմում հեղինակը կոտորածների թեմայի վրա գրեթե չի ծանրանում. Եղեռնը նրա խորհրդածությունների ելակետն է, բայց ոչ անմիջական առարկան: Նրան ավելի շատ հետաքրքրում է ազգի անցնելիք ուղու խնդիրը, մասնավորապես, թե ինչպես պետք է ժողովուրդը վերաբերվի իր պատմության մութ էջերին: Այս պատգամի քննարկման շուրջ տե՛ս Եղիազարյան Ա. Կ., նշվ. աշխ., էջ 43, 44: Տեր-Մինասյան Ա. Ա., «Սիլվա Կապուտիկյանի մտորումները ճանապարհի կեսին և հետո», *ԼՀԳ*, 2001, թիվ 1, էջ 180-185:

46 Մանրամասն տե՛ս Ղազախեցյան Վլադիմիր, «Կոմունիստական մենափորձության հաստատումը. Քաղաքականությունը կրոնի և եկեղեցու նկատմամբ». – *Հայոց պարմություն, հ. IV, գիրք առաջին. Նորագույն ժամանակաշրջան (1918-1945 թթ.)*, հատորի պատ. խմբ. Վ. Ղազախեցյան, Երևան, «Հանգակ-97» հրատ., 2010, էջ 446-451:

վելուց հետո իշխանություններն առհասարակ չէին անդրադառնում Մեծ եղեռնի թեմային և դրա հիշատակմանը: Եղեռնի զոհերի հիշատակին Էջմիածնի գանգերը վերջին անգամ դողանջեցին 1926 թ. ապրիլի 24-ին. ՀԿ(Բ)Կ ԿԿ-ի 1926 թ. օգոստոսի 31-ի որոշմամբ եկեղեցու հետ հարաբերություններում իր ներկայացուցիչ Արամայիս Երզնկյանին հանձնարարվեց «բանակցություններ վարել կաթողիկոսության հետ համաշխարհային պատերազմի (24 ապրիլի) զոհերի հիշատակի օրը նշելը վերացնելու անհրաժեշտության մասին»⁴⁷: Էջմիածնի հրատարակած օրացույցներում ապրիլի 24-ի մասին հիշատակումը 1926 թ. հետո բացակայում էր, ընդհուպ 1964 թ.:

Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օրվա նշումը սփյուռքի հայկական համայնքներում 1920-60-ական թվականներին

1920-50-ական թթ. Կ.Պոլսի և նոր ձևավորված Սփյուռքի գաղթօջախներում ապրիլի 24-ի հիշատակումը⁴⁸ հիմնականում սգահանդեսների տեսք ուներ: Սակայն ժամանակի ընթացքում փոխվում է դրանց բովանդակությունը, փոխվում են դրանց ընթացքում հնչող ելույթների շեշտադրումները: Այսպես՝ 1921 թ. Կ.Պոլսում կայացած սգահանդեսի կազմակերպիչները հայ քաղաքական կուսակցություններն էին, գանազան միություններ, ներկա էին հայ-կաթոլիկ և հայ-բողոքական եկեղեցու, նաև Հունաց պատրիարքարանի ներկայացուցիչներ, օտար սպաներ, մեծաքանակ ժողովուրդ: Սգահանդեսը բացվում է Շոպենի մահերգով, որին անմիջապես հաջորդում են քաղաքական ելույթները: ՀՅԴ ներկայացուցիչն (Արսեն Միքայելյան) իր խոսքում հայերի զանգվածային ջարդերի պատճառների վերլուծությունից հետո նշում է. «...մեր մեծ վրէժը պիտի ըլլայ ազատ ու անկախ Հայաստանի ստեղծումը, որ պիտի ըլլայ նաեւ ամենամեծ յարգանքը՝ մեր նահատակներու յիշատակին»: Հաջորդ ելույթում խոսելով վշտի և սգի մասին, բայց և նկատելով, որ «մեր սուգը մեր զրահն է»՝ բանախոսը (Հրաչ Երուսնդ) միևնույն ժամանակ շեշտում է հայերի կենսունակությունը, ապրելու և ստեղծագործելու ուժն ու կորովը, որը նաև զոհերի պատգամն է վերապրողներին⁴⁹: Նա մասնավորապես նկատում է. «...մենք հոս չենք եկած մեռնողները սգալու, այդ անմահները վերյիշելու: Անոնք մեզի սորվեցուցին, թե ի՞նչ-

47 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 6, թ. 72: Հղվում է ըստ Վիրաբյան Ամատունի, «Մեծ Եղեռնի հուշահամալիրի ողիսականը. Ազգային հուշարձան և խորհրդային իրականություն», *Բանբեր Հայաստանի արխիվների*, 2008, թիվ 1, էջ 292: Հարությունյան Ավագ, *Հայոց ցեղասպանության 50-րդ տարեկիցը և Երկրորդ Հանրապետությունը*, Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2015, էջ 15:

48 Հարցը շատ տարրդունակ է, մինչդեռ մեր աղբյուրների մեծագույն մասը լոկ մամուլում տեղ գտած հիշատակումներն են:

49 Նմանատիպ մտքեր էին քարոզվում նաև «Առաւօտի» խմբագրականում: Նշվում էր, որ վեց տարի առաջ այս օրը ««մարդիկ» դժոխքն երկիր փոխադրեցին, անոր մէջ նետեցին այս ցեղը և ... կեցան դիտելու համար, թէ ինչպէս կը գալարուի ու կը չարչարուի, ու ինչպէ՛ս պիտի մոխրանայ Ան...»: Սակայն հայ ժողովուրդը «վեր է մեղցնող բոլոր ուժերէն և կը ծիծաղի դժոխքի բոցերուն վրայ: ... Ականջ տուէք և պիտի լսէք մուրճին երգը. հայ աշխատատու բազուկը սկսած է արդէն շինել ու կերտել: ... Ու ասոր համար է որ երէկուան տարեկիցը իր լացնող վերջիշումներուն մէջ չկրնար խեղդել յաղթութեան ուրախութիւնը որ այս ցեղին կուրծքին մէջ կայ այս վայրկեաններուն»: Ատրուշան Հ., *Խաչկերտեան ճամբուն վրայ*, «Առաւօտ. օրկան ազատական կուսակցութեան», 1921, 25 ապրիլի:

պէս պետք ենք ապրիլ: ... Այս ազգը չմեռնիր, որովհետև այդ արեան ճամբէն նոր մկրտուած դուրս եկան Ուրֆան, Հաճընը և Այնթապը: Անոնք ցոյց տուին թէ պատրաստ են իրենց գոյութեան պայքարը մղելու»⁵⁰: Սգահանդեսն ուղեկցվում էր նահատակված գրողների ստեղծագործությունների արտասանություններով ու երգասացությամբ, որոնք մեծ հուզմունք էին պատճառում ներկաներին: Նույն կառուցվածքն ունեցող սգահանդես է կայանում քաղաքի մեկ այլ թաղամասում ևս⁵¹:

1922 թ. հիշատակի օրը Կ.Պոլսում նշվում է քաղաքի Շիշլի թաղամասի ազգային գերեզմանատանը՝ ծաղկազարդ մի դամբարանի մոտ, որը խորհրդանշում էր գերեզման չունեցող նահատակներին: Դամբարանի շուրջը շուրջը կանգնած էին որբեր ու որբուհիներ, շատերը լաց էին լինում: Հոգեհանգստի արարողությանը հաջորդում են բանախոսություններ: Վահան Թոթովենցն իր խոսքում նշում է, որ «...այսօր եկած ենք խոնարհելու «մեր մեծ մեռելներու յիշատակին առջեւ. մենք կ'ոգեկոչենք զանոնք իրենցմով ներշնչուելու համար: Թշնամին կը կարծէր գլխատել հայ ժողովուրդը, մեռցնելու համար անոր ընդունակութիւնները: Բայց ազգերը իրենք ալ հիդրաներ են եւ կտրուած գլուխներուն տեղ նորերը կը ծնին»: ՀՅԴ ներկայացուցիչը (Յակոբ Ամատունի) նշելով, որ հայ ժողովուրդը «տուաւ անհամար զոհեր», միևնույն ժամանակ նկատում է, որ «պայքարը դեռ կը շարունակուի եւ հայ ժողովուրդը կը հաւատայ միշտ, թէ յաղթանակը իրը պիտի ըլլայ»: Գերեզմանատանը կատարվում է հանգանակություն տեղում կառուցվելիք «վերջին քառորդ դարու ընթացքին նահատակուած բոլոր Հայերու յիշատակին ի յարգանս գեղարուեստական յուշարձան մը կանգնելու համար», որը կոչվելու էր «Հայ անձանոթ նահատակին»: Այդ օրը քաղաքի բոլոր եկեղեցիներում կատարվում են հանդիսավոր պատարագ և հոգեհանգիստ, փակ էին բոլոր դպրոցները և ազգային հաստատությունները⁵²:

1923 թ. շատ փոքր հաղորդագրություն կա միայն ապրիլի 24-ի «տոնի առթիւ». նշվում է, որ փակ էին ազգային հաստատությունները և վարժարանները, և որ թաղային եկեղեցիներում պատարագ և հոգեհանգիստ տեղի ունեցան ժողովրդի ու դպրոցականների ներկայությամբ⁵³: 1924 թ. ապրիլի 24-ի տոնի (մեռելոցի) առթիվ Կ.Պոլսի եկեղեցիներում կատարվում են արարողություններ, սակայն պակաս հանդիսավորությամբ⁵⁴: Մինչդեռ «Ճակատամարտի» առաջնորդողն աչքի է ընկնում յուրահատուկ կառուցողականությամբ, համապատասխան երկրի փոփոխված քաղաքական իրավիճակին և գաղութի/համայնքի շահերի պաշտպանության անհրաժեշ-

50 *Ազգային լուրեր. Երեկի սուգը*, «Վերջին լուր. ամենօրեայ քաղաքական անկախ հայաթերթ» (Կ.Պոլիս), 1921, 25 ապրիլի, թիւ 2160:

51 Մանրամասն տե՛ս *Ապրիլի փասնըմէկի սգահանդէսը*. «Մեր մեծ վրէժը պիտի ըլլայ անկախ Հայաստանի սրեղծութիւնը», «Ճակատամարտ», 1921, 26 ապրիլի, նոր շրջան, թիւ 741/ 2562: Հմմտ. *Երեկուան սգահանդէսը*, «Առաւօտ», 1921, 25 ապրիլի:

52 Մանրամասն տե՛ս *Անհամար բազմութեան մը յուզիչ յարգանքը Ապրիլ 11-24ի սուգին առթիւ*, «Ճակատամարտ», 1922, 25 ապրիլի, նոր շրջան, թիւ 1046: *Ազգային շարժում. Ազգային փօսը Շիշլիի մէջ*, «Երկիր. երեկոյեան քաղաքական օրաթերթ» (Կ.Պոլիս), 1922, 25 ապրիլի, թիւ 749:

53 *Ապրիլ 11(24)ի փօսը*, «Ճակատամարտ», 1923, 25 ապրիլի, նոր շրջան, թիւ 1356:

54 *Հայկական կէանք. Ապրիլ 24ի փօսը*, «Ճակատամարտ», 1924, 25 ապրիլի, նոր շրջան, թիւ 1663:

տության գիտակցումով: Նշվում է, որ «Տարեդարձերը թուականներ են, պահ մը կանգ առնելու, անցեալը վերլուծելու եւ վաղուան համար մտածելու»: Փաստորեն իրավիճակին համակերպվելու կոչ էր պարունակում առաջնորդողը. «Մեզի համար ուրիշ ելք չկայ այսօր, եթէ ոչ *ինքնամիտման եւ աշխատանք*: Մեր ձեռքն է բարելաւել կամ անելի մթագնել մեր ճակատագիրը: ... Մեռելներու յիշատակը յարգելու համար, անօգուտ է թուլնալ հառաչանքներով, կամ ջղագրգռով մեղադրանքներով: Աշխատինք փրկել անոնց թողած աւանդները: Որբերու եւ այրիներու բազմութիւն մը ունինք, և հազարեակներ՝ անճար մնացորդներու: Մեր ճիտին պարտքն է խորհիլ, տքնիլ, որպէս զի անոնք չստիպուին անիծել իրենց օրերը: ... Ինչու՞, սուգի այս թուականը առիթ մը չըլլայ որ ուխտենք, օրինակ, ամէն տարի տասը դպրոց կամ արհեստանոց բանալ, Հայաստանի կամ գաղութներուն մէջ, իբրեւ սրբազան հաղորդութիւն մը մեռելներուն եւ ողջերուն միջեւ: Մեր պատմութեան ամէնէն մեծ մեռելոցը՝ պէտք է ըլլայ ոչ թե լացի, այլ ստեղծագործ աշխատանքի խորհրդանշանը»⁵⁵:

1925 թ. ապրիլի 24-ը որպէս սգահանդես նշվում է նաև Փարիզում. անվանի հայ մտավորականների (Լևոն Բաշալյան, Արշակ Չոպանյան) ելույթներին հաջորդում են երգերի ու երաժշտության կատարումներ, արտասանություն⁵⁶: Տասը տարի անց կատարված սգահանդեսում բանախոսում են ճանաչված մտավորականներ Հրաչ Երուանդը և Շահան Նաթալին⁵⁷: Նույն օրը սգատոնով նշվում է մեկ այլ ֆրանսիական քաղաքում՝ Լիոնում: Սրա մասին ծանուցող հոդվածագիրը ցավով նշում է, որ «կուսակցական կրքերն ու սնամէջ վէճերը» մուտք են գործում նաև ապրիլյան սգատոնի նշման մեջ⁵⁸: Նման խնդիրներ է մատնացույց անում նաև Եգիպտոսում լույս տեսնող «Արաքս» օրաթերթը 1952-1955 թթ. «Մահուան արհավիրքները միատեղ ճանչցած եղբայրներ այսօր անհաշտ թշնամիներ են դարձել կուսակցական սին հաշիւներու պատճառաւ, ու մեր անմահներու յիշատակին ոգեկոչումն անգամ չեն զիջանիր միասնաբար կատարել...»⁵⁹:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին լիբանանյան սփյուռքի հայկական կուսակցությունների մամուլը, անդրադառնալով ապրիլի 24-ի խորհրդին, հիշում է զոհերին, գրում Եղեռնի դրվագների մասին, բայց և հույս է հայտնում արդարության հաղթանակի մասին, նշում է հայ ժողովրդի վերապրելու կամքը, նաև Հայ դատի՝ արևմտահայկական հողերի ազատագրման հարցը: Այսինքն, սգալի ուղեկցվում է պայքարի կոչով⁶⁰: Այսպես, 1947 թ. Բեյրութում անցկացված սգահանդեսին,

55 *Մեր խօսքը. Մեռելոց*, «Ճակատամարտ», 1924, 25 ապրիլի, նոր, շրջան թիւ 1663:

56 *Հայ նահապտակներու տարեդարձը*, «Ապագայ. Քաղաքական եւ հասարակական շաքարաթերթ» (Բարիզ), 1925, 25 ապրիլի, թիւ 24:

57 «Ապագայ», 1935, 24 ապրիլի, թիւ 129:

58 Վիշապազուն, *Ապրիլեան երկրորդ սգատոնը Լիոնի մէջ*, «Ապագայ», 1935, 26 ապրիլի, թիւ 131:

59 Արամորդի, *Մեծ սգատոնը*, «Արաքս» (Ալեքսանդրիա), 1955, 23 ապրիլի, թիւ 14/1425:

60 Տե՛ս, օրինակ *Ապրիլ 24*, «Ազդակ» (Պէյրութ), 1945, 25 ապրիլի, թիւ 35/4186: Կիլեան Գրիգոր, *Ապրիլ 24*, «Զարթօնք» (Պէյրութ), 1946, 25 ապրիլի, թիւ 2781: *Խմբագրական. Միլիոնատր նահապտակներու յիշատակը*, «Զարթօնք» (Պէյրութ), 1947, 5 ապրիլի, թիւ 147/3027: «Արարատ» օրաթերթ ազգային-քաղաքական-գրական, 1952, 24 ապրիլի, թիւ 3360:

որին ներկա էին Անթիլիասի կաթողիկոսության Վեհափառը, պետական այրեր, նաև խորհրդային դեսպանության աշխատակիցներ, ելույթ է ունենում գրող Վահե Վահյանը: Իր խոսքում, կարևորելով ապրիլի 24-ի տոնելը իբրև կորստյան օր, բանախոսը նաև շեշտում է. «Պիտի տօնենք ապրիլ 24ը նաև մեր ապագայ սերունդներուն համար, որոնք պիտի ներշնչուին նահատակներու յիշատակով, բարձր գիտակցութեամբ աշխատելու և հայրենիք կերտելու համար: Մինչեւ երէկ անմխիթարելի վիշտի տօն մըն էր այս: Այսուհետեւ անոր կը միացնենք յաղթանակի զգացումը: Վաղը, մեր յաջորդները զայն պիտի վերածեն լրի յաղթանակի տօնին: Որովհետեւ ծրագրուած էր մեր արմատական բնաջնջումը... բայց մենք յաջողեցանք վերապրիլ»: Գրողը նշում է հայոց փրկության գործում Խորհրդային Ռուսաստանի դերը հետևյալ ձևակերպումներով. «1920ին սակայն ոճիրը հասած էր ամբողջական գործադրութեան կէտին: Այդ պահուն հասաւ ահա հիւսիսէն՝ ազատարար ձեռքը: Շնորհիւ այդ ձեռքին և մանաւանդ շնորհիւ մեր ներքին հանճարին, հաւատքին, կերտող ու ստեղծագործող եռանդին, ձախողեցան ջարդարարները, և մենք այսօր ունինք հայրենիք ու ստեղծագործող կեանք: Աւերակներու տեղ կերտած ենք պալատներ: Երէկի որբերը դարձած են ազատ հայրենիքի ազատ ժողովուրդ: Այնքան ուժեղ եղաւ մեր վերականգնումը, որ կրցանք քառորդ միլիոն մարտիկներ⁶¹ դրկել մեծ պայքարին՝ ընդդէմ քաղաքակրթութեան թշնամիներուն»: Գրողը խոսքն ավարտում է ցանկությամբ. «արդարութեան և խաղաղութեան ճամբով հատուցուին մեր իրաւունքները: ... Ուխտենք միլիոնատր նահատակներու յիշատակին առջեւ՝ միակամօրեն հետապնդել մեր դատը»⁶²:

Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օրվա սգահանդեսներ/ սգատոներ. եզրակացություններ և գնահատականներ

Այսպիսով, սգահանդեսները կամ սգատոները Մեծ եղեռնի զոհերի հիշատակի իրականացման առաջին ձևերն էին և Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից ի վեր տեղ էին գտնում ինչպես դարեր շարունակ գոյություն ունեցող համայնքներում, այնպես էլ հայկական Սփյուռքի նոր ձևավորվող գաղթօջախներում: Դրանց նպատակն էր նախ և առաջ Եղեռնի զոհերի հիշատակը հարգելը սգի ձևով. մարդիկ պարզապես լաց էին լինում. «...հորաքանչիւր վերապրող ունէր մէկէ շատ ատելի կորսուածներ ու չէր կրնար աչքերէն հեղեղի պէս հոսող արցունքներուն կաթիլները դադրեցնել զովանալու համար վայրկեան մը գէթ»⁶³: Սակայն սգահանդեսներում մարդիկ ոչ միայն անհատապես, այլև *կոլեկտիվ* էին սգում իրենց հարազատների ու բարեկամների, հարյուր հազարավոր անծանոթ զոհերի կորուստը. կոլեկտիվ, համատեղ սուգը հոգեբանորեն թերևս որոշ չափով թեթևացնում էր կորստի ծանրությունը: Սրան զուգահեռ շեշտվում էր ոչ թե լացի, այլ ստեղծագործ աշխատանքի և այդ կերպ Եղեռնի ուղղակի հետևանք որբերի, այրի կանանց, ընդհանրապես կարոտյալնե-

61 Հեղինակը նկատի ունի հայոց մասնակցությունը Երկրորդ համաշխարհային պատերազմին:

62 *Նահապուակաց յիշարակի հանդէսը*, «Զարթօնք», 1947, 27 ապրիլի, թիւ 148/3028:

63 Նաճարեան Միհրան, նշվ. աշխ., էջ 18:

րին գորավիզ կանգնելու անհրաժեշտությունը: Այդպիսով, սգահանդեսները նաև յուրահատուկ էթնոմիավորիչ գործոնի դեր էին կատարում և օտարներին էլ ցուցում էին հայոց միասնականությունը՝ թեկուզև համատեղ սգալու ձևով արտահայտված⁶⁴: Միասնականության ցուցադրմանն էին ուղղված նաև հիշատակի օրը հայկական դպրոցների, ազգային հաստատությունների աշխատանքների դադարեցումը, վաճառատների փակումը:

Սգահանդեսների կառուցվածքն աչքի էր ընկնում որոշակի ընդհանրություններով. գլխավոր դերակատարությունը պատկանում էր հոգևոր հայրերին (հոգեհանգստի կարգ եկեղեցում, երբեմն՝ այցելություն գերեզմանատուն, հոգևոր բնույթի դասական և հայկական երաժշտություն, հոգևոր երգեր): Որպես կանոն, դրանց հրավիրված էին լինում այլ քրիստոնեական եկեղեցիների ներկայացուցիչներ նույնպես. այս կերպ (նաև այլ ձևերով) շեշտվում էր զոհերի քրիստոնյա լինելու հանգամանքը՝ որպես զանգվածային ջարդերի պատճառներից մեկը:

Սգահանդեսների մյուս մասը ելույթներն էին՝ նահատակ գրողների ստեղծագործությունների արտասանություն, կազմակերպությունների և քաղաքական կուսակցությունների անունից հնչող խոսք: Մտավորականների, համայնքային և քաղաքական կուսակցությունների գործիչների ելույթներն էին, որ վստահություն ու հավատ էին ներշնչում սգահանդեսների մասնակիցներին հայոց ապագայի հանդեպ: Բոլոր բանախոսները, որպես կանոն, նախ բացատրում էին, թե ինչու է անհրաժեշտ հիշել և մասնավորապես *համապրեղ* հիշել նահատակներին: Ունկնդիրներին մատուցվում էր այն գաղափարախոսությունը, թե առկա է կապ զոհերի և նրանց կյանքի գնով ստեղծված Հայաստանի նորաստեղծ Հանրապետության գոյության փաստի միջև: Եղեռն իրականացնողներին պախարակելուց զատ նշվում էր, որ վրեժը պետք է լինի Հայաստանի հզորացումը, իսկ հայերի հաղթանակի դրսևորումներից՝ ժողովրդի վերապրելու կամքը, ինքնին վերապրելու փաստը: Անկախ ելույթ ունեցողների կուսակցական պատկանելությունից՝ նպատակ էր հռչակվում նաև շարունակել Հայ դատի հետապնդումը, այն է՝ Արևմտյան Հայաստանի հողերի վերադարձը հայ ժողովրդին: Հայերի՝ պայքարող լինելու հանգամանքը երբեմն դրսևորվում էր նաև սգո երթերում հայ զինվորականների, ինքնապաշտպանական մարտերի հերոսների շեշտված մասնակցությամբ:

Սգահանդեսներին, որպես կանոն, հրավիրված էին լինում օտարազգի հյուրեր՝ եկեղեցական գործիչներ, բարձրաստիճան զինվորականներ, դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ: Այս կերպ համեստ փորձ էր արվում դուրս գալու Եղեռնի զոհերի հիշատակի սգահանդեսներին բնութագրական նեղ, լոկ ներհամայն-

64 Հմմտ. Միհրան Նաջարյանի դիտարկումը ՀԲԸՄ հիմնադիր, Փարիզի խաղաղության կոնֆերանսում արևմտահայ պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար Փաշայի մահվան կապակցությամբ (1930 թ.) Բեյրութում անցկացված սգահանդեսի առիթով. «...համազգային այս մեծ սգահանդեսը պիտի մնայ մեր պատմության մեջ բացառիկ և աննախընթաց երեւոյթ մը, որովհետև անգուգական մեծ բարերարին մահովը կարծեցեալ անմիաբան հայ ժողովուրդը անգամ մը ևս իրարու մօտ կու գար, անգամ մը ևս իրարու հետ ձեռք ձեռքի անկեղծ սեղմումներ կ'ունենար, և անգամ մը ևս մէկ սիրտ մէկ հոգի միասնականօրէն և միահամուռ կերպով կը ներկայանար իր ժողովուրդին»: Նաճարեան Միհրան, *նշվ. աշխ.*, էջ 79:

քային միջոցառում լինելու կերպարից, հանրայնացնելու այն և մատուցելու այդ իրողությունը քո բնակության երկրի քաղաքացիական հասարակությանը: Ժամանակ անց՝ 1965 թ.-ից հետո, երբ Մեծ եղեռնի միջազգային ճանաչման ու դատապարտման հարցը դարձավ քաղաքական գործոն, նման մասնակցություններին արդեն տրվում էր ավելի մեծ նշանակություն:

FORMATION, DEVELOPMENT AND CURRENT STATE OF THE ARMENIAN GENOCIDE VICTIMS REMEMBRANCE DAY (PART 1)

Harutyun Marutyan

SUMMARY

The 24th of April is not merely a Memorial Day of the Armenian Genocide victims. It is one of the most important and unique elements of the Armenian identity that unifies all Armenians through invisible links. The Memorial Day has been shaped in the course of many political twists and turns and even a century later the shades of its meaning are still discussed in wide social and professional circles. Observation of the Memorial Day, remembrance of the victims, reminiscences of the Genocide during one day's event embodies and reflects the current state of the society, i.e. it is the summary of the reality, concepts, policy and propaganda actual at the given moment.

The first forms of observation of the memory of the Genocide victims after WW1 both in the Armenian communities existing for centuries and in the newly established ones in Diaspora were the ceremonies of mourning the memory of the Genocide victims. They were organized first of all for remembering the Genocide victims in the form of mourning.

However during such ceremonies people bemoaned their dearest not in private but *collectively* mourned the loss of hundreds of thousands. Psychologically collective mourning ceremonies to some extent relieved the feeling of loss. Alongside, they emphasized the necessity of supporting the orphans, widows and generally those in need as a direct consequence of the Genocide by means of creative work, and not weeping. Thus, the mourning ceremony played the role of a specific factor of ethnic consolidation that demonstrated the unity of Armenians even if it was just mourning. Unity was demonstrated also through the shutdown of Armenian schools, institutions and shops on Memory Day.

There were certain commonalities in the structure of the mourning ceremonies: the main actors were the clergy (service for the dead at the church, sometimes a procession to the cemetery, classic and Armenian spiritual music and chants). As a rule, the representatives of other Christian Churches were also invited thus stressing the Christian origin of the victims as one of the reasons of mass slaughter.

The next part of these ceremonies consisted of reciting the works of victimized writers, speeches of the representatives of various organizations, parties or intellectuals,

which inspired the audience with confidence and trust in the future of the Armenians. As a rule all speakers would first explain why it was necessary to remember and, particularly, the necessity of *collective* remembrance of the victims. The audience was indoctrinated by the ideology to establish the connection between the victims and the fact of the existence of the newly established Republic of Armenia at the cost of their lives. In parallel with defaming the perpetrators of the Genocide, the strengthening of the Republic of Armenia was pointed as a revenge and the Armenian victory should manifest in its will to revive, in survival itself. The fact that Armenians were fighters was sometimes demonstrated through emphasized participation of the Armenian servicemen and heroes of self-defense in the mourning processions.

As a rule the representatives of foreign Churches, high rank foreign servicemen and members of the diplomatic missions were invited to the mourning ceremonies. It was a modest attempt to make the narrow, merely community event of the Genocide victims remembrance publicly known and make the citizens of the countries of their residence acknowledge that reality.

Key words: Armenian Genocide, Armenian Genocide Victims Remembrance Day, mourning, mourning ceremony.

ФОРМИРОВАНИЕ И ТРАНСФОРМАЦИЯ ДНЯ ПАМЯТИ ЖЕРТВ ГЕНОЦИДА АРМЯН (ЧАСТЬ 1)

Արտյուն Մարտյան

РЕЗЮМЕ

24 апреля – не только день памяти Геноцида армян. Этот день является одним из тех важнейших и единичных элементов армянской идентичности, который невидимыми нитями объединяет всех армян. Формирование дня памяти проходило через многочисленные политические перипетии. День памяти – это воплощение уровня наличия памяти о геноциде в однодневном событии, т.е. итог реалий и представлений проводимой политики и пропаганды, существующих на этот день.

Траурные мероприятия – это первые формы организации памятных поминовений, которые после окончания Первой мировой войны проводились как в общинах, существующих столетиями, так и в формирующихся колониях армянской диаспоры. Их целью было в первую очередь выразить скорбь и почтить память жертв геноцида. В этих траурных мероприятиях люди скорбели о смерти своих близких и родных, а также о сотнях тысяч незнакомых жертв не только персонально, но *коллективно*, что определенным образом облегчало тяжесть потерь. Параллельно этому подчеркивалась необходимость поддержки сирот, вдов, и вообще нуждающихся в помощи не путем скорби, а путем созидательного труда. Таким образом, траурные

памятные мероприятия играли своего рода этнообъединительную роль, иностранному же окружению они демонстрировали объединение армян, хотя и выраженное в совместной скорби. Проявлением объединенности в день памяти были также отмена занятий в армянских школах, прекращение работ национальных учреждений, магазинов и т.п.

Структура памятных мероприятий выделялась определенной общностью: главная роль принадлежала духовным отцам, как правило, приглашались также представители других христианских церквей, т.е. подчеркивалась христианская принадлежность жертв как одна из причин массовой резни.

Другая часть памятных мероприятий – чтение стихов погибших поэтов, речи от имени различного рода организаций и политических партий. Именно выступления представителей интеллигенции, деятелей общин и партий придавали участникам памятных мероприятий веру в будущее армянства. Все докладчики, как правило, вначале объясняли, зачем нужно вспоминать и, в частности, *совместно* вспоминать о жертвах массовой резни. Присутствующим представлялась концепция существования связи между жертвами и фактом наличия созданной ценою их жизни Армянской республики. Помимо жесткой критики тех, кто осуществил резню, акцентировалось, что мстью должно быть усиление Армении, а проявлением победы армян – воля народа к выживанию, сам факт выживания. Участие в скорбных шествиях армянских военных деятелей, участников боев самообороны было обусловлено желанием представить армян как борющийся народ.

На траурные шествия, как правило, приглашались представители широких кругов общественности страны проживания – церковные деятели, высокопоставленные военные, представители дипломатического корпуса. Этим делалась также скромная попытка выйти за узкие, внутриобщинные рамки этих мероприятий.

Ключевые слова: Геноцид армян, день памяти жертв геноцида, скорбь, памятные мероприятия.

**ՍԵՌԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ. ԲՈՆԻ ԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՈՐՊԵՍ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Լեդիպա Գոդյան

Պատմության ընթացքում զինված բախումները մշտապես ուղեկցվել են սեռական բռնություններով: Սակայն, չնայած լայնամասշտաբ կիրառմանը, սեռական բռնությունները միայն վերջերս են համապատասխան ուշադրության արժանացել միջազգային քրեական իրավունքի կողմից և ճանաչվել որպես պատերազմի գործիք:

1990-ականներին միջազգային քրեական դատարանների ստեղծումը մեծապես նպաստեց սեռական բռնությունների քրեականացմանը մարդկության դեմ ուղղված հանցագործությունների, պատերազմական հանցագործությունների և ցեղասպանությունների համատեքստում: Անդրադառնալով սեռական բռնությունների քրեականացման պատմությանը՝ այս հոդվածը ներկայացնում է բռնի ամուսնություններ հասկացությունը՝ որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն, որը միջազգային քրեական իրավունքի թատերաբեմում հայտնվեց Սիեռա Լեոնեի քաղաքացիական պատերազմից հետո, չնայած դրա վերաբերյալ բազմաթիվ վկայություններ կան նաև Հայոց ցեղասպանության տարիներին:

Բանալի բառեր. սեռական բռնություններ, բռնի ամուսնություններ, միջազգային քրեական իրավունք, միջազգային քրեական դատարաններ, մարդկության դեմ ուղղված հանցագործություններ, պատերազմական հանցագործություններ, ցեղասպանություն, Նյուրնբերգի և Տոկիոյի դատարանները, նախկին Հարավսլավիայի գործով միջազգային քրեական դատարան, Ռուանդայի գործով միջազգային դատարան, Սիեռա Լեոնեի գործով հատուկ դատարան:

Ներածություն

Սեռական բռնությունները մշտապես եղել և մնում են ռազմական գործողությունների անբաժան մաս: Սակայն չնայած տարածվածությանը՝ սեռական բռնությունները միայն վերջերս են միջազգային իրավունքի կողմից արժանացել համապատասխան ուշադրության:

Պատմության ընթացքում կանանց հանդեպ սեռական բռնությունները երկար ժամանակ դիտարկվել են որպես ռազմական քաղաքականության մաս, իսկ կանայք դիտվել են որպես հաղթողի պարգևավճար կամ խթան կոմիտե տղամարդկանց համար¹: Չնայած սեռական բռնության հանցագործություններն իրականացվում էին հիմնականում կանանց հանդեպ², սակայն դրանք համարվում էին ուղղված տղամարդկանց դեմ՝ ընդգծելով այն հանգամանքը, որ կանայք համարվում էին տղամարդկանց սեփականությունը:

Սեռական բռնությունների հանդեպ վերաբերմունքը փոխվեց 1990-ական թթ., երբ փոխվեցին դրանց կիրառության ձևերը՝ ռազմական հակամարտությունների ժամա-

1 Eboe-Osui Ch., *International Law and Sexual Violence in Armed Conflict*, Leiden: Martinus Nijhoff Publishers, 2012, p. 221.

2 Միջազգային քրեական իրավունքը ճանաչում է, որ տղամարդիկ նույնպես սեռական բռնությունների գոհ կարող են դառնալ, սակայն կանայք անհամեմատ ավելի հաճախ են թիրախավորվում:

նակ ստանալով ինստիտուցիոնալ բնույթ, մասնավորապես՝ սեռական բռնությունները սկսեցին օգտագործվել որպես պատերազմի գործիք, թշնամուն հաղթելու ռազմավարություն, ինչը տեղի ունեցավ 1990-ականներին Ռ-ուանդայում³:

Հասկանալու համար կանանց դեմ ուղղված սեռական բռնությունների կիրառման փոփոխության համատեքստը՝ պետք է կարևորել այն դերը, որ կինն ունի հասարակության մեջ: Բացի կին, մայր և ընտանիքի համար հոգացող լինելուց, կինը համարվում է նաև տվյալ «խմբի» սովորույթների և ավանդույթների պահպանման պատասխանատուն և ամենակարևորը՝ «խմբի» շարունակականության ապահովողը: Փաստորեն, բացի խմբի կենսունակության ֆիզիկական ապահովումից, կնոջ դերը կարևորվում է նաև խմբի հոգևոր կենսունակության պահպանման գործում, ինչի արդյունքում կնոջ սեռականությունը (gender) քաղաքական կարևորություն է ստանում ռազմական հակամարտությունների ժամանակ⁴:

Միաժամանակ՝ սեռական բռնությունների միջոցով կանանց թիրախավորումն ունենում է նաև շարունակական երկարատև ազդեցություն անգամ ռազմական հակամարտություններից հետո: «Ամոթի» զգացողությունը երկար ժամանակ ուղեկցում է ոչ միայն սեռական բռնությունների ենթարկված զոհին, այլ նաև նրա ընտանիքին և մտերիմներին, ինչը կարող է հանգեցնել հասարակությունից վերջիններիս մեկուսացման, սահմանափակել կամ բացառել զոհի հետագա ամուսնության, երեխա ունենալու հնարավորությունները և այլն: Արդյունքում, ինչպես զոհի, այնպես էլ ռճրագործի համար պատերազմը չի ավարտվում ռազմական գործողությունների ավարտով:

Սեռական բռնությունների քրեականացման պատմությունից

Աննա Մարի դը Բրաուերն առանձնացնում է սեռական բռնությունների միջազգային քրեականացման չորս փուլ. 1) հնագույն ժամանակներից մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը, 2) Երկրորդ համաշխարհային պատերազմից մինչև Նյուրնբերգի և Տոկիոյի դատարանները 3) նախկին Հարավսլավիայի և Ռ-ուանդայի գործով միջազգային քրեական դատարանների ստեղծումը 1990-ականներին և 4) 1998 թ. Միջազգային քրեական դատարանի ստեղծումը⁵:

Չանդրադառնալով մինչև Առաջին համաշխարհային պատերազմը տեղի ունեցած զարգացումներին, որոնք, ըստ էության, էական չէին⁶, կանգ առնենք Առաջին համաշխարհային պատերազմից հետո տեղի ունեցած զարգացումների վրա: Առաջին համաշխարհային պատերազմից հետո սկսվեց շարժում՝ պատերազմի ընթացքում կատարված վայրագությունների քննության պահանջով: Դաշնակից տերությունները

3 *Prosecutor v. Akayesu*, ICTR-96-4-T, Trial Chamber Judgment, 2 September 1998, para. 10.3.1.

4 Jurasz O., “About justice that is yet to come: a few remarks about the International pursuit of post-conflict gender justice,” *Journal of Gender Studies*, 24 (1) (2015), pp. 56-69.

5 Anne-Marie de Brouwer, *Supranational Criminal Prosecution of Sexual Violence: The ICC and the Practice of the ICTY and the ICTR*, Antwerp – Oxford: Intersentia, 2015, p. 4.

6 Նույն տեղում:

ստեղծեցին Պատերազմի հեղինակների պատասխանատվության և պատժի իրականացման հանձնաժողով (Commission on the Responsibility of the Authors of the War and on Enforcement of Penalties)⁷ պատերազմի օրենքների խախտումները քննելու նպատակով: Այն հանցագործությունները, որոնք քննվելու էին հանձնաժողովի կողմից, ընդգրկում էին նաև բռնաբարությունները (rape) և բռնի մարմնավաճառության նպատակով կանանց և աղջիկների առևանգումը (abduction of women and girls for the purpose of enforced prostitution)⁷: Սակայն հետպատերազմական բարդ իրավիճակում և պետությունների միջև ծագած հետագա անհամաձայնությունների հետևանքով պատերազմական հանցագործությունների հետագա քննություն տեղի չի ունենում: Որոշակի զարգացումներ եղան նաև Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Օսմանյան կայսրության կողմից հայ բնակչության հանդեպ իրականացված ոճրագործությունները մատնանշելու և պատասխանատվություն միջազգային պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ, որոնք, սակայն, նույնպես մնում են թղթի վրա: Առաջին անգամ միջազգային քրեական իրավունքի պատմության մեջ շրջանառվում է «մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված հանցագործություններ» եզրույթը և խոսվում Օսմանյան կայսրության կառավարության անդամներին միջազգային պատասխանատվության ենթարկելու մասին⁸, ինչպես նաև Սևրի պայմանագրի 230-րդ հոդվածով նախատեսվում է ստեղծել միջազգային դատարան՝ պատերազմի ընթացքում զանգվածային սպանությունների հեղինակներին պատասխանատվության ենթարկելու նպատակով⁹: Ենթադրվում էր, որ ստեղծվելու դեպքում միջազգային դատարանը քննելու էր նաև վերոնշյալ Հանձնաժողովի կողմից մատնանշված սեռական բռնությունները, որոնք իրականացվել էին նաև հայերի հանդեպ¹⁰:

Հատկանշական է, որ հայերի հանդեպ սեռական հանցագործությունների, մասնավորապես բռնաբարությունների և բռնի ամուսնությունների վերաբերյալ լսումներ եղան նաև Ստամբուլի դատավարությունների ժամանակ¹¹:

Մերօրյա միջազգային քրեական իրավունքն անսխալաբան զարգացում ապրեց Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Նյուրնբերգի և Տոկիոյի դատարանների միջոցով: Չնայած սեռական բնույթի հանցագործությունները բավական

7 “Commission on the Responsibility of the Authors of the War and on Enforcement of Penalties,” *The American Journal of International Law* 14 (1/2) (1920), pp. 95-154.

8 McCormack T., “Selective reaction to atrocity: war crimes and the development of international criminal law,” *Albany Law School* 60 (3) (1997), p. 52.

9 The Treaty of Peace Between The Allied And Associated Powers And Turkey Signed At Sèvres August 10, 1920 - <http://www.hri.org/docs/sevres/part7.html> (դիտվել է՝ 28.10.2017):

10 Derderian K., “Common Fate, Different Experience: Gender-Specific Aspects of the Armenian Genocide, 1915-1917,” *Holocaust and Genocide Studies* 19(1) (2005), pp. 1-25.

11 Մանրամասն տե՛ս Dadrian V. and Akçam T., *Judgment at Istanbul: The Armenian Genocide Trials*, New York-Oxford: Berghahn, 2011, նաև՝ Անույան Մ., *Երիտթուրքերի 1919-1921 թթ. դատավարությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի*, Երևան, Էդիթ Պրինտ, 2011: Անույան Մ., *Ճանաչում և դատապարտում. երիտթուրքերի դատավարությունները (1919-1921 թթ. և 1926 թ.)*, Երևան, Կոլլաժ, 2013:

տարածված էին Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, երկու դատարանների կանոնադրությունները որևէ հոդված չէին պարունակում նմանատիպ հանցագործությունների վերաբերյալ:

Միջազգային մարդասիրական իրավունքն ընդհանուր (նախատեսված բոլոր քաղաքացիական անձանց համար) և առանձնահատուկ (նախատեսված միայն կանանց համար՝ ելնելով այն հանգամանքից, որ ռազմական գործողությունները յուրահատուկ ազդեցություն ունեն կանանց վրա) պաշտպանություն է տրամադրում կանանց ռազմական հակամարտությունների ժամանակ:

1949 թ. Ժնևի IV կոնվենցիայում պատմության մեջ առաջին անգամ հատուկ կետ է մտցվում կանանց վերաբերյալ. «Կանայք պետք է առանձնահատուկ պաշտպանված լինեն իրենց համբավի դեմ ուղղված հարձակումներից, հատկապես բռնաբարությունից, բռնի մարմնավաճառությունից կամ անբարո գործողություններից»¹²: Ժնևի IV կոնվենցիայի այս հոդվածը մեծ ազդեցություն ունեցավ սեռական բնույթի հանցագործությունների քրեականացման վրա, քանի որ հետագայում նախկին Հարավսլավիայի գործով միջազգային քրեական դատարանը (ՀՄԲԴ) և Ռուսնդայի գործով միջազգային դատարանը (ՌՄԲԴ) մեծապես հիմնվեցին այս հոդվածի վրա՝ սեռական բռնությունների քրեականացման համար¹³:

Դատարանները մատնանշում էին, որ սեռական բռնությունները նաև Ժնևի կոնվենցիաների կոպիտ խախտում են¹⁴:

Միաժամանակ փոխվեցին նաև որոշ մոտեցումներ. եթե Ժնևի կոնվենցիան սեռական բռնությունները դիտում էր անձի արժանապատվության դեմ իրականացված ոճիր, ապա հետագայում այս մոտեցումը փոխվում է, և այսօր սեռական բռնությունները համարվում են պատժելի, քանի որ ոտնահարում են անձի սեռական անկախությունը/ինքնիշխանությունը (sexual autonomy).

Թեև Ցեղասպանության կանխարգելման և պատժի մասին կոնվենցիան սեռական բռնությունների վերաբերյալ որևէ հոդված չի պարունակում, սակայն միջազգային քրեական իրավունքի զարգացումը նախադեպային իրավունքի միջոցով արդեն իսկ լայնացրել է ցեղասպանական համարվող գործողությունների շարքը՝ ներառելով, օրինակ, բռնաբարությունները, եթե ուղղված են ռասայական, էթնիկ, ազգային կամ կրոնական խմբի մասնակի կամ ամբողջական ոչնչացմանը¹⁵:

12 1949 թ. Ժնևի IV կոնվենցիա, հոդված 27:

13 Security Council Resolution 955, Establishment of the International Criminal Tribunal for Rwanda (ICTR) and adoption of the Statute of the Tribunal, UN Doc. S/RES/955, 8 November 1994, article 4 and Secretary-General Report, Statute of the International Tribunal for the Prosecution of Persons Responsible for Serious Violations of International Humanitarian Law Committed in the Territory of the Former Yugoslavia since 1991, UN Doc. S/25704, annex, 1993, article 2.

14 Cole A., "International Criminal Law and Sexual Violence: An Overview," In *Rethinking Rape Law: International and Comparative Perspectives*, edited by C. McGlynn and V. E. Munro, New York: Routledge, 2010, pp. 47-60.

15 *Prosecutor v. Akayesu*, ICTR-96-4-T, Trial Chamber Judgment, 2 September 1998: Մանրամասների համար տե՛ս Reid-Cunningham, A. R., "Rape as a Weapon of Genocide," *Genocide Studies and Prevention: An International Journal* 3 (3) (2008), pp. 279-296.

1990-ականներին ստեղծված միջազգային քրեական դատարանները կարևոր քայլեր իրականացրին սեռական բռնությունների սահմանման և հանցագործների պատժելու ուղղությամբ: Սեռական բռնությունների քրեականացման ուղղությամբ հատկապես կարևոր ներդրում ունեցան Նախկին Հարավսլավիայի և Ռուանդայի գործով միջազգային քրեական դատարանները: ՌՄՔԴ կանոնադրությամբ դատարանի իրավասության մեջ էր մտնում նաև բռնաբարությունների և սեռական բռնությունների քննությունը¹⁶, իսկ ՀՄՔԴ կանոնադրությամբ բռնաբարությունը մարդկության դեմ ուղղված հանցագործության հոդվածի ենթակետ էր¹⁷:

Նախկին Հարավսլավիայի գործով միջազգային քրեական դատարանը (ՀՄՔԴ) առաջինն էր, որ որոշակի կապ ընդգծեց ցեղասպանության և սեռական բռնությունների միջև: Միջազգային դատարանը ցույց տվեց, որ սեռական բռնությունները շատ տարածված են ռազմական գործողությունների ժամանակ, և որ դրանք պետք է դառնան միջազգային հանցագործությունների տարր: ՀՄՔԴ ճանաչեց բռնաբարությունը որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն՝ բռնաբարությունն ու սեռական բռնությունները դիտարկելով այլ հանցագործությունների համատեքստում, այդ թվում նաև՝ կտտանքների (torture)¹⁸, ստրկացման (enslavement)¹⁹ և հալածանքների (persecution)²⁰:

Միջազգային քրեական իրավունքում սեռական հանցագործությունների քրեականացման հետագա զարգացումը կապված է Ռուանդայի գործով դատարանի հետ, որը մի շարք հեղափոխական որոշումներ ընդունեց ցեղասպանական սեռական բռնությունների վերաբերյալ: ՌՄՔԴ-ն նպաստեց բռնաբարության սահմանման հետագա զարգացմանը՝ հանելով ուժի կամ ուժի սպառնալիքի պահանջը և ընդգծելով ստիպողականության հանգամանքը²¹: Սակայն Դատարանն ավելի խորը գնաց և ճանաչեց բռնաբարությունը՝ որպես ցեղասպանական գործողություն Ռուանդայում «խմբի անդամներին լուրջ մարմնական կամ մտավոր վնաս հասցնելու» ենթակետի տակ²²: Այսպիսով, սեռական բռնությունները կարող են կիրառվել խմբի ոչնչացման համար, և չնայած ցեղասպանությունը հանցագործություն է՝ ուղղված հավաքականության դեմ, իսկ սեռական բռնությունները՝ անհատի, սակայն նման գործողություն-

16 ՌՄՔԴ կանոնադրություն - http://unictr.unmict.org/sites/unictr.org/files/legal-library/941108_res955_en.pdf (դիտվել է՝ 28.10.2017)

17 ՀՄՔԴ կանոնադրություն - http://www.icty.org/x/file/Legal%20Library/Statute/statute_sept09_en.pdf (դիտվել է՝ 29.10.2017)

18 Բռնաբարությունը՝ որպես անձի արժանապատվության հանդեպ բռնություն:

19 Կանանց՝ տներում պահելը և պարբերաբար բռնաբարելը՝ ստիպելով նաև կատարել տնային գործեր: Ստրկացման հիմնական տարրը սեփականության իրավունքն էր կանանց հանդեպ:

20 Հետապնդումները ենթադրում են խտրականության հիմքի վրա իրավունքների մերժում, ներառյալ մարդկության դեմ ուղղված հանցագործությունների խտրական իրականացում, ինչպիսին են սեռական բռնությունները: *Prosecutor v. Kvočka et. al*, IT-98-30/1-T, Trial Chamber Decision, 2 November, 2001, para 186.

21 *Prosecutor v. Jean Paul Akayesu*, 1998, para. 598, 688.

22 Նույն տեղում, para. 688.

ները դատարանի կողմից ճանաչվեցին խմբի ոչնչացման միջոց՝ կանանց թիրախավորելու և այդ կերպ տվյալ խումբը ոչնչացնելու միտումով²³:

Սեռական բռնությունների վերաբերյալ ՀՄ-ԲԴ և ՌՄ-ԲԴ նախադեպային իրավունքը հաստատում է, որ սեռական բռնությունները չեն սահմանափակվում միայն ֆիզիկական կապ ենթադրող գործողություններով: Ստիպողական մերկությունը ճանաչվել է սեռական բռնության հանցագործություն, քանի որ պարունակում է «սեռական բնույթի ոտնձգություն՝ ուղղված անհատի ֆիզիկական և բարոյական միասնությանը՝ ստիպողականության, ուժի սպառնալիքի կամ վախեցնելու միջոցով, ինչը նվաստացնում կամ ստորացնում է անհատի արժանապատվությունը»²⁴: Այս սահմանման համաձայն՝ դեհումանիզացման այլ ձևերը ևս, ինչպիսիք են բանավոր վիրավորանքը և սպառնալիքները, ինչպես նաև ընտանիքի անդամների կամ ընկերոջ հանդեպ սեռական բռնությանն ակնատես լինելու պարտադրանքը նույնպես կարող են որակվել որպես սեռական բռնության ձև: ՌՄ-ԲԴ-ն մարդկության դեմ ուղղված հանցագործություն է որակել նաև կանանց բռնի մերկացումը և հասարակության մեջ ստիպողաբար քայլելը²⁵, ինչպես նաև վարժություններ կատարելը²⁶:

Հետևելով Ակայեսուի գործով Ռուանդայի դատարանի որոշմանը՝ 1998 թ. հիմնված Միջազգային քրեական դատարանն իր Կանոնադրության հանցագործությունների տարրերի մեջ ավելացրեց հղում, որով «լուրջ ֆիզիկական կամ մտավոր վնաս» կարող են լինել նաև կտտանքները, բռնաբարությունը, սեռական բռնությունը, ոչ մարդկային կամ ստորացնող, նվաստացնող վերաբերմունքը²⁷: Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունն ակնհայտ թվարկում է նաև սեռական բռնությունների որոշ տեսակներ՝ բռնաբարություն, սեռական ստրկություն, ստիպողական մարմնավաճառություն, ստիպողական հղիացում և ստիպողական ստերջացում²⁸: Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը դատարանին ակնհայտ իրավասություն է տալիս սեռական բնույթի գործողությունների հանդեպ՝ մարդկության դեմ ուղղված (բռնաբարություն, սեռական ստրկացում, հարկադրված մարմնավաճառություն, ստիպողական հղիացում, ստիպողական ստերջացում, կամ համապատասխան լրջության այլ սեռական բնույթի հանցագործություններ)²⁹ և պատերազմական հանցագործությունների շրջանակներում (բռնաբարություն, սեռական ստրկացում, հարկադրված մարմնավաճառություն, հղիացում, բռնի ստերջացում կամ սեռական բնույթի այլ հանցագործություններ, որոնք Ժնևի կոնվենցիաների լրջագույն խախտում են)³⁰:

23 Նույն տեղում, para. 731.

24 *Prosecutor vs. Furundža*, ICTY, 1997, para. 186.

25 *Prosecutor vs. Akayesu* (ITCT-96-4-T), Judgment, Trial Chamber, 2 September 1998, para. 697.

26 Նույն տեղում:

27 Միացյալ ազգերի կազմակերպություն, Միջազգային քրեական դատարանի կանոնադրություն, հոդված 6(b)-1, հղում 3:

28 Միջազգային քրեական դատարանի կանոնադրություն:

29 Նույն տեղում, հոդված 7(1)(g):

30 Նույն տեղում, հոդված 8(2)(b)(xxii) և 8(2)(e)(vi):

Այսպիսով, այս զարգացումները ոչ միայն փոխեցին այն կարծիքը, որ սեռական բռնությունները պատերազմի անխուսափելի արգասիք են, այլև հաստատեցին հակառակ պնդումը, որ սեռական բռնությունները կարող են որակվել նաև որպես գեղասպանություն՝ խմբին ոչնչացնելու մտադրությամբ:

Բռնի ամուսնությունները միջազգային քրեական իրավունքում. Սիեռա Լեոնեի օրինակը

Սիեռա Լեոնեի քաղաքացիական պատերազմից հետո (1991-2002) միջազգային քրեական իրավունքում սկսեց շրջանառվել մի երևույթ, որը նոր էր իրավունքի, բայց ոչ պատմության համար: Այդ երևույթը պայմանավորված էր ապստամբ զինվորականների հետ կանանց բռնի/ստիպողական ամուսնություններով³¹: Սիեռա Լեոնեի քաղաքացիական պատերազմի ընթացքում հազարավոր կանայք և աղջիկներ առևանգվում են ռազմական ուժերի ներկայացուցիչների կողմից և բռնությամբ ամուսնացնում ապստամբների հետ, որոնք շատ հաճախ բավական վտանգավոր էին, իսկ առևանգված աղջիկների տարիքը հասնում էր տասի: Նրանք, ովքեր փորձում էին կանխել կանանց և աղջիկների առևանգումը, սպանվում էին³²: Աղջիկներին և կանանց տանելուց հետո ապստամբները հայտարարում էին, որ առևանգվածն իր կինն է, որից հետո վերջինս ստիպված էր ապրել նրա հետ՝ ենթարկվելով տնային և սեռական ստրկության³³: Փաստորեն առևանգվածները դե ֆակտո ամուսնական հարաբերությունների մեջ էին: Կանայք ենթարկվում էին մշտական բռնաբարությունների, սեռական և այլ բռնությունների, ստիպված էին լինում մասնակցել ռազմական գործողությունների, հղիանում էին և ստիպված էին լինում լույս աշխարհ բերել կամ սպանել դեռևս չծնված իրենց երեխաներին³⁴: Միաժամանակ կանայք ապրում էին վախի, հոգեբանական ճնշումների, սպանվելու մշտական վտանգի մեջ, քանի որ շատ հաճախ ապստամբները փոխարինում էին իրենց կանանց նորերով: Քանի որ բռնի ամուսնությունների պրակտիկան շատ տարածված էր Սիեռա Լեոնեի քաղաքացիական պատերազմի ժամանակ, փախուստի դեպքում կանայք ամենայն հավանականությամբ կարող էին դառնալ այլ ապստամբների սեփականությունը: Հետևաբար՝ որևէ մեկի հետ մնալն, ամենաանվտանգ տարբերակն էր համարվում, քանի որ որոշակի պաշտպանություն էր ապահովում կանանց և աղջիկների համար³⁵:

31 Toy-Cronin Bridgette A., “What is Forced Marriage? Towards a Definition of Forced Marriage as a Crime Against Humanity”, *Columbia Journal of Gender and Law* 19 (2) (2010), p. 557.

32 “We’ll Kill You If You Cry: Sexual Violence in the Sierra Leone Conflict”, *Human Rights Watch* 15 (1) (2003), pp. 75.

33 Նույն տեղում, էջ 42:

34 Coulter Ch., *Bush Wives and Girl Soldiers. Women’s Lives through War and Peace in Sierra Leone*, 1st edition, London: Cornell University Press, 2009, p. 289.

35 Մանրամասների համար տե՛ս “We’ll Kill You If You Cry: Sexual Violence in the Sierra Leone Conflict.”

Քաղաքացիական պատերազմից հետո Սիեռա Լեոնեի գործով ստեղծված հատուկ դատարանը³⁶ (Special Court on Sierra Leone) պատմության մեջ առաջին անգամ անդրադարձավ բռնի ամուսնությանը՝ այն որակելով որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն:

Ամուսնության վավերականացման համար համաձայնության սկզբունքն արտահայտված է մարդու իրավունքների վերաբերյալ մի շարք փաստաթղթերում³⁷: Սակայն ակնհայտ է, որ այն, ինչ տեղի է ունենում բռնի ամուսնությունների դեպքում, հեռու է որևէ համաձայնության սկզբունքից: Միաժամանակ բռնի ամուսնությունների համատեքստում «ամուսինը» դիտվում է որպես ոճրագործ, իսկ նրա կատարած գործողությունը կամ նպատակ է հետապնդում ամբողջությամբ, կամ մասնակիորեն ոչնչացնելու կրոնական, ռասայական, էթնիկ կամ ազգային որևէ խմբի (ցեղասպանություն), կամ տվյալ գործողությունը լայնամասշտաբ կամ համակարգված հարձակման մաս է (մարդկության դեմ ուղղված հանցագործություն), կամ որևէ կապ կա տվյալ գործողության և ռազմական գործողության միջև (պատերազմական հանցագործություններ):

Սիեռա-Լեոնեի գործով հատուկ Վերաքննիչ դատարանը պատմական նախադեպային որոշում կայացրեց Չինված ուժերի հեղափոխական խորհրդի գործով՝ ճանաչելով բռնի ամուսնությունները որպես մարդկության դեմ ուղղված հանցագործությունների առանձին կատեգորիա³⁸՝ բեկանելով առաջին ատյանի դատարանի որոշումը, որով վերջինս հրաժարվել էր բռնի ամուսնությունները դիտել որպես առանձին հանցագործություն և դրանք համարել էր որպես սեռական ստրկության ձև:

Սակայն նախ անդրադառնանք առաջին ատյանի դատարանի քննությանը: Այս գործով առաջին ատյանի դատարանն առաջին անգամ քննարկում և ճանաչում է բռնի ամուսնության հանցագործությունը միջազգային մակարդակի վրա³⁹: Հենվելով սեռական ստրկացման հանցագործության տարրերի վրա՝ առաջին ատյանի դատարանը որոշում է, որ բռնի ամուսնությունը սեռական ստրկացման ձև է, քանի որ.

ա) ոճրագործը մեկ կամ մի քանի անձանց նկատմամբ ունի որոշակի կամ ամբողջական սեփականության իրավունք, ինչպիսիք են գնելու, վաճառելու, վարձակալելու կամ փոխանակելու այդ անձին կամ անձանց, կամ սահմանափակում է նրանց ազատությունը,

36 Սիեռա Լեոնեի գործով հատուկ դատարանը կամ Սիեռա Լեոնեի տրիբունալը ստեղծվել է 2002 թ. Միացյալ ազգերի կազմակերպության և Սիեռա Լեոնեի կառավարության կողմից՝ դատական կարգով քննության ենթարկելու համար այն անձանց, ովքեր մեծ պատասխանատվություն էին կրում Սիեռա Լեոնեում 1996 թ. հետո և Սիեռա Լեոնեի քաղաքացիական պատերազմի ընթացքում միջազգային հումանիտար իրավունքի և Սիեռա Լեոնեի օրենսդրության լրջագույն խախտումների համար:

37 Օրինակ, տե՛ս International Covenant on Civil and Political Rights (ICCPR) Article 16, կամ Convention on the Elimination of all Forms of Discrimination against Women (CEDAW) Article 23.

38 *Prosecutor vs. Brima, Kamara, and Kanu* (SCSL-04-16-T), Judgment, Appeals Chamber, 22 February 2008 (hereinafter AFRC Appeals Judgment).

39 Jain N., "Forced Marriage as a Crime against Humanity Problems of Definition and Prosecution," *Journal of International Criminal Justice* 6 (2008), pp. 1013-1032.

բ) ոճրագործն այդ անձի կամ անձանց հանդեպ իրականացնում է սեռական բնույթի մեկ կամ մի քանի գործողություն,

գ) ոճրագործը նշված գործողություններն իրականացնում է սեռական ստրկացման նպատակով կամ հիմնավոր տեղեկություն (reasonable knowledge) ունի, որ իր գործողությունները կհանգեցնեն սեռական ստրկացման:

Ըստ դատարանի՝ ապստամբների և նրանց այսպես կոչված կանանց միջև առկա են սեփականության հարաբերություններ, և քանի որ ապստամբները վերահսկողություն ունեն իրենց այսպես կոչված կանանց սեռականության, տեղաշարժման և աշխատանքի վրա, այդպիսով սահմանափակում են նրանց ազատությունը⁴⁰: Իսկ «կին» բառի կիրառումը որևէ ամուսնական հարաբերություն չի ենթադրում փոխադարձ կապերով և պարտավորություններով, այլ բնորոշվում է միայն գոհի հանդեպ ոճրագործի սեփականության իրավունքը, որը թեև սովորաբար բացառիկ էր, բայց ոճրագործի ցանկությամբ կարող էր փոխանցվել մեկ այլ անձի⁴¹: Կանայք ևս իրենց ամուսնացած չէին համարում և հակամարտության դադարից հետո սովորաբար լքում էին իրենց «ամուսիններին»⁴²:

Դատավոր Սեբոթինդեն իր կարծիքում (Separate Concurring Opinion) առավել խորը վերլուծության է ենթարկում բռնի ամուսնության երևույթը, չնայած համաձայն էր առաջին ատյանի դատարանի որոշման հետ, որ բռնի ամուսնությունը սեռական ստրկության ձև է: Նա մասնավորապես մատնանշում է, որ կանայք և աղջիկները բռնի առևանգվում էին և իրենց կամքին հակառակ պահվում իրենց «ամուսինների տանը»՝ ստիպված լինելով մատուցել սեռական ծառայություններ, իրականացնել ամուսնական այլ պարտականություններ (եփել, մաքրել, լվանալ և այլն)՝ առանց որևէ պաշտպանության, հենվելով ապստամբների գթասրտության վրա: «Կանայք» կարող էին ամեն պահի լքվել և ապրում էին սպանվելու մշտական սպառնալիքի տակ⁴³: «Կին» պիտակը կիրառվում էր գոհերին հոգեբանորեն ճնշման ենթարկելու նպատակով, քանի որ «կնոջ» կարգավիճակում նրանք չէին կարող մերժել իրենց «ամուսիններին» ցանկությունները, ինչպես նաև պարտավոր էին սեր և հավատարմություն ցուցաբերել նրանց նկատմամբ: «Կին» պիտակն ընդգծում էր ապստամբների սեփականության իրավունքը կանանց նկատմամբ, ներառյալ նրանց սեռականությունը⁴⁴:

Դատավոր Դոհերտին իր մասնակի դեմ (Partly Dissenting Opinion) կարծիքում անդրադառնում է սեռական ստրկության և բռնի ամուսնությունների միջև առկա տարբերություններին: Նա մասնավորապես ընդգծում է, որ բռնի ամուսնությունների դեպքում ամուսնական հարաբերությունների հաստատումը տեղի է ունե-

40 *AFRC Trial Judgment*, para. 711.

41 Նույն տեղում:

42 Նույն տեղում, para. 712.

43 Նույն տեղում:

44 Նույն տեղում, para 13, 14.

նում ուժի սպառնալիքով կամ ուժով՝ առանց կնոջ համաձայնության: Միաժամանակ բռնությամբ ամուսնական հարաբերությունների պարտավորեցումը ներառում է հարկադիր աշխատանք (տնային, դաշտային և այլն), ստրկական կարգավիճակ և փախուստի անհնարինություն: Դատավորն իր կարծիքի մեջ խոսում է նաև բռնի ամուսնությունների մեկ այլ առանձնահատկության և հետևանքի՝ հասարակության կողմից այս կանանց և աղջիկների հանդեպ խտրականության և վերախնսեցրվելու դժվարությունների մասին⁴⁵:

Բռնի ամուսնությունները, ըստ Դոհերտիի, պատճառում են հոգեկան և բարոյական վնաս. «կին» պիտակը հոգեբանական տառապանքներ է պատճառում կնոջը, ինչը որոշ դեպքերում կարող է հասցնել ընտանիքի և հասարակության կողմից պիտակավորման և մերժման⁴⁶: Միաժամանակ երկարատև հոգեբանական տառապանքները կարող են բացասաբար անդրադառնալ գոհի՝ հասարակության մեջ վերախնսեցրվելու կարողության վրա⁴⁷: Հետևաբար՝ բռնի ամուսնությունները գոհին հասցնում են մեծ տառապանքներ, լուրջ ֆիզիկական կամ մտավոր վնասներ, դրանք այնքան լուրջ են (grave), որ կարող են որակվել որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություններ: Այս կարծիքն իր պաշտպանությունն է գտնում վերաքննիչ դատարանում: Դատարանը հստակ տարբերակում է բռնի ամուսնությունը և սեռական ստրկությունը՝ ընդունելով, որ բռնի ամուսնությունը պարունակում է սեռական ստրկությունը որոշ տարրեր, ինչպիսիք են առանց համաձայնության սեռական հարաբերությունները և ազատության սահմանափակումը: Միևնույն ժամանակ դատարանն առանձնացնում է բռնի ամուսնության հետևյալ տարբերությունները. բռնի ամուսնական միություն, որը հանգեցնում է ուժեղ ֆիզիկական և հոգեկան տանջանքների, «զույգերի» միջև բացառիկության հարաբերություններ և ամուսնական կապի պայմանավորվածությունը խախտելու համար հնարավոր կարգապահական հետևանքներ⁴⁸: Սա ենթադրում է, որ, ի տարբերություն սեռական ստրկության, բռնի ամուսնությունները հիմնականում սեռական հանցագործություններ չեն⁴⁹:

Դատարանը որպես եզրակացություն նշում է. «Միեռա Լեոնեի հակամարտության համատեքստում բռնի ամուսնությունը նկարագրվում է որպես մի իրավիճակ, երբ ոճրագործն իր խոսքերով կամ վարքով, կամ նրանցից մեկի միջոցով, ում գործողությունների համար ինքը պատասխանատու է, ստիպում է մարդուն ուժով, ուժի սպառնալիքով կամ հարկադրանքով հանդես գալու որպես ամուսնական զուգընկեր, ինչը վերջինիս համար առաջացնում է ծանր տառապանքներ կամ ֆիզիկական, մտավոր կամ հոգեբանական վնաս»⁵⁰: Դատարանն այն կարծիքին է, որ բռնի ամուսնու-

45 *AFRC Trial Judgment*, Partly Dissenting Opinion of Justice Doherty, para. 16.

46 Նույն տեղում, para 52-53.

47 Նույն տեղում, para. 48, 51.

48 *AFRC Appeals Judgment*, para. 195.

49 Նույն տեղում:

50 Նույն տեղում, para. 196: St'u uulu' Gekker E., "Rape, Sexual Slavery, and Forced Marriage at the

թյունները ծանր ֆիզիկական վնաս են հասցնում զոհին և հանգեցնում երկարատև բարոյական և հոգեբանական տանջանքների, հետևաբար՝ բռնի ամուսնություններն այնքան ծանր են, որքան մարդկության դեմ ուղղված հանցագործությունները (բռնի ամուսնությունները նաև ներառում են դրանցից ոմանք), ինչպիսիք են ստրկացումը, բռնաբարությունը և կտտանքները⁵¹: Այսպիսով, դատարանն առանձնացրեց բռնի ամուսնության հանցագործության հետևյալ տարրերը (elements of crime)՝ ուժով, ուժի սպառնալիքով կամ բռնությամբ ստիպելը, ամուսնական կապը, զոհի մեծ տառապանքները կամ մտավոր և հոգեբանական վնասը:

Հատկանշական է, սակայն, որ միջազգային քրեական դատարանը *Կատանգայի* գործով իր որոշման մեջ չհետևեց Սիեռա Լեոնեի գործով հատուկ դատարանի վճռին և բռնի ամուսնությունները դիտարկեց որպես սեռական ստրկացման յուրահատուկ ձև⁵²:

Չնայած միջազգային քրեական իրավունքում բռնի ամուսնությունների նախադեպերի սակավությանը բռնի ամուսնությունների լայն տարածման մասին տեղեկություններ կան ինչպես հին ժամանակներում, ինչի վառ օրինակը Հայոց ցեղասպանության ժամանակ երևույթի աննախադեպ տարածվածությունն ու նախակազմակերպվածությունն էր, այնպես էլ մեր օրերում՝ Ռուանդայում⁵³, Ուգանդայում⁵⁴, Իրաքում⁵⁵ և այլուր:

International Criminal Court: How *Katanga* Utilizes a Ten-Year-Old Rule but Overlooks New Jurisprudence,” *Hastings Women’s Law Journal* 25 (1) (2013), pp. 105-134.

51 *AFRC Appeals Judgment* para. 196, 200-201.

52 *Prosecutor v. Germain Katanga and Mathieu Ngudjolo Chui*, ICC-01/04-01/07, Decision on Confirmation of Charges, 30 September 2008, para. 430.

53 Amnesty International, “Rwanda: ‘Marked for Death’, Rape Survivors Living with HIV/AIDS in Rwanda,” AI-Index AFR 47/007/2004, 6 April 2004; Human Rights Watch, “Shattered Lives: Sexual Violence During the Rwandan Genocide and its Aftermath,” HRW Index 2084, 1 September 1996.

54 Amnesty International, “Breaking God’s Commands’: The Destruction of Childhood by the Lord’s Resistance Army,” AI-Index AFR 59/001/1997, 18 September 1997.

55 “In Iraq: Forced marriage, Conversion for Yezidis” - <https://www.hrw.org/news/2014/10/11/iraq-forced-marriage-conversion-yezidis> (դիտվել է՝ 24.12.2017); The Guardian, *Boko Haram abductees tell of forced marriage, rape, torture and abuse*, 27/10 2014 (10/3 2015) -<http://www.theguardian.com/world/2014/oct/27/boko-haram-forced-marriage-rape-torture-abuse-hrwreport> (դիտվել է՝ 25.12.2017); *Iraq: ISIS Escapees Describe Systematic Rape*, Human Rights Watch, 15/4 2015 (15/4 2015) - <http://www.hrw.org/news/2015/04/14/iraq-isis-escapees-describe-systematic-rape> (դիտվել է՝ 24.12.2017):

SEXUAL VIOLENCE IN INTERNATIONAL CRIMINAL LAW: FORCED MARRIAGES AS CRIMES AGAINST HUMANITY

Edita Gzoyan

SUMMARY

Sexual violence has always been an integral part of armed conflicts throughout the history. However, despite its widespread usage only recently sexual violence has gained necessary attention in international law and was recognized as a tool of war and not a necessary byproduct of armed conflicts.

The establishment of international criminal tribunals in 1990s and the International Criminal Court greatly contributed to the criminalization of sexual violence during crimes against humanity, war crimes and genocides. While discussing the development of international law on sexual violence, this article concentrated on the concept of forced marriages as a crime against humanity that emerged after the conflict in Sierra Leone, although its origins can be traced back to 1915 Armenian Genocide.

Key Words: sexual violence, forced marriages, international criminal law, international criminal tribunals, crimes against humanity, war crimes, genocide, Nurnberg and Tokyo Tribunals, International Criminal Tribunal for Rwanda, International Criminal Tribunal for the former Yugoslavia, Special Court for Sierra Leone, International Criminal Court.

СЕКСУАЛЬНОЕ НАСИЛИЕ В МЕЖДУНАРОДНОМ КРИМИНАЛЬНОМ ПРАВЕ: НАСИЛЬСТВЕННЫЕ БРАКИ КАК ПРЕСТУПЛЕНИЯ ПРОТИВ ЧЕЛОВЕЧЕСТВА

Эдита Гзоян

РЕЗЮМЕ

На протяжении всей истории человечества сексуальное насилие всегда было неотъемлемой частью вооружённых конфликтов. Однако, несмотря на распространённое применение, только недавно сексуальное насилие вошло в сферу международного права и было признано инструментом войны, а не неизбежным продуктом вооружённых конфликтов.

Учреждение международных криминальных трибуналов в 90-е годы 20-го века и Международного уголовного суда во многом способствовали криминализации сексуального насилия во время преступлений против человечества, военных преступлений и геноцидов. Рассматривая историю криминализации сексуального насилия, в статье анализируется понятие насильственного брака как преступления против человечества,

которое возникло после конфликта в Сьерра-Леоне, хотя его истоки проявляются со времени Геноцида армян 1915 года.

Ключевые слова: сексуальное насилие, насильственные браки, международное уголовное право, международные уголовные суды, преступления против человечества, военные преступления, геноцид, суды Нюрнберга и Токио, Международный уголовный трибунал по бывшей Югославии, Международный уголовный трибунал по Руанде, Специальный суд по Сьерра-Леоне, Международный уголовный трибунал.

**Գրախոսություն. Երուանդ Քասունի, «Այաշի բանտը.
Տոքթ. Աւետիս Նազգաշեան եւ մահապարտ արքայազները»,
Պէյրուօ, 2018 թ., 400 էջ**

Արևիկ Ավետիսյան

Երվանդ Քասունիի¹ «Այաշի բանտը. Տոքթ. Աւետիս Նազգաշեան եւ մահապարտ արքայազները» մենագրությունը կարևոր սկզբնաղբյուրային աշխատանք է Հայոց ցեղասպանության ուսումնասիրության բնագավառում²: 400 էջից բաղկացած աշխատանքը ներառում է առաջաբան, ներածական, արևմտահայ բժիշկ, Հայոց ցեղասպանությունը վերապրող Ավետիս Նազգաշյանի «Այաշի բանտը» հուշագրությունը, որն ըստ էության կազմում է հատորի հիմնաքարը, ծավալուն ծանոթագրություններ, Ավետիս Նազգաշյանի կյանքի ու ստեղծագործական գործունեության ընդհանուր տեղեկություններ, հավելվածներ, ամփոփումներ, մատենագիտություն, անձնանունների ու տեղանունների ցանկ, ինչպես նաև հեղինակի՝ Երվանդ Քասունու կենսագրական մանրամասներ: Գրքում օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկն ինքնին արժեքավոր ուղեցույց է ուսումնասիրողների համար: Այն նախատեսված է ինչպես ոլորտի մասնագետների, այնպես էլ ընթերցող լայն շրջանակների համար:

Գրքի «Ներածականի փոխան» ընդարձակ հատվածում Հայկական հարցի պատմության մասին արված բազմակողմանի անդրադարձը ոլորտի ցանկացած ուսումնասիրողի հնարավորություն կտա ունենալու խնդրի ամբողջական պատկեր:

Հատորի առանցքն Այաշ արքայազնի բժիշկ Ավետիս Նազգաշյանի հուշագրության անճշտություններից խմբագրված, լրամշակված, ծանոթագրությունների միջոցով ամբողջացված տարբերակի վերահրատարակումն է: Ավետիս Նազգաշյանի «Այաշի բանտը» առաջին անգամ հրատարակվել է 1925 թ. Բոստոնում «Հայրենիք» տպագրատանը³: Հետագայում այն մի քանի անգամ վերահրատարակվել է⁴, սակայն հուշագրության նախնական տարբերակում առկա են որոշ

1 Երվանդ Քասունի (ծնվ. 1937 թ. Հալեպ) – ժամանակակից հեղինակ, մանկավարժ, խմբագիր: Կենսագործունեության մանրամասները տե՛ս Քասունի Ե. Հ., *Այաշի բանտը. Տոքթ. Աւետիս Նազգաշեան եւ մահապարտ արքայազները*, Մ.Ա.Հ.Ա.Ե. Միություն հրատարակչական գրասենյակ, Պէյրուօ, 2018, էջ 391-395:

2 Այս հատորը Հայոց ցեղասպանության բնագավառում հեղինակի միակ հրատարակությունը չէ: Տե՛ս Քասունի Ե., *1915 և կոլորադոները Տիարակերի մէջ*, 1915-1965 Յուշամատենա Մեծ եղեռնի, «Զարթոնք» օրաթերթի հրատարակություն, Պէյրուօ, 1965, էջ 397-421: Նույնի, *Քանական ակնարկ*, «Միջրների Հերդերի» 1915-1918 թթ. *հայ ժողովուրդի ցեղասպանութեան և վերածնունդի մասին արձանագրութեան վկայագրութիւններուն*, Պէյրուօ, 2012, 608 էջ: Նույնի, *Կանխորոշուած ցեղասպանութիւն, հեղափոխութիւն Գեորգ Մեարոյի «Թրքահայերն ու թուրքերը» փաստաթուղթերու ցուցակներով*, Պէյրուօ, 2015, 360 էջ: Յակոբ Ս. Տէր Կարապետեան, *Բանտի բանտ*, խմբագիր՝ Քասունի Ե., Պէյրուօ, 2015, 200 էջ և այլն:

3 Աւետիս Տոքթ. Նազգաշեան, *Այաշի բանտը: 1915, ապրիլ 24-ին, Կ.Պոլսէն ձերբակալուելով Այաշ բանտարկուած եւ նահապարկուած ընկերներու անմահ յիշատակին կը ձօնեմ այս գրքոյկը* (Նիւ Եորք), տպագր. «Հայրենիք»-ի, Պոսթըն, 1925, 63 էջ:

4 Աւետիս Տոքթ. Նազգաշեան, *Հայ մարտիրոսականներու ձերբակալութիւնը եւ Այաշի բանտը*, հրատ. Կ. Տօնիկեան եւ որդիք, Պէյրուօ, 1969, 144 էջ: Նույնի, *Այաշի բանտը: 1915, ապրիլ 24-ին, Կ.Պոլսէն*

թյուրըմբռնումներ, որոնք չեն խմբագրվել: Օրինակ, Նազգաշյանն իր հուշերում, խոսելով Թալեթի⁵ ու Զոհրապի⁶ հարաբերությունների մասին, նշում է. «Այս բոլոր ոճիրներու հեղինակն ու հրամայողը՝ Թալեթ, ինք իր կեանքը կը պարտէր Զոհրապի»⁷: Իսկ Քասունին պարզաբանում է. «Նազգաշեան շփոթի մէջ է, եթէ ակնարկութիւնը 31 Մարտի, 1909 թ. Յեղափոխութեան օրուան մէջ արձանագրուած դէպքերու մասին է, ապա՝ Զոհրապի տունը ապաստանողը Խալիլ պէյն է, իսկ Թալաաթ ապաստանած է Ակնունիի բնակարանը»⁸:

Երվանդ Քասունիի խմբագրությամբ այս հատորը Հայոց ցեղասպանությունը վերապրողի արժեքավոր հուշագրություն է, իսկ Քասունու կողմից կազմված ծանոթագրություններն ամբողջացնում են պատմական իրադարձությունները, հնարավորություն են տալիս շատ պատկերավոր տեղեկություն ստանալու ինչպես Այաշի բանտարկյալների ու նրանց շուրջը կատարվող, այնպես էլ դրա պատերից դուրս տեղի ունեցող դէպքերի մասին: Քանի որ հուշագրությունը հարուստ է անձնանուններով, գանազան տեղեկություններով, ուստի առանց հավելյալ գրականության դրանց մեծ մասն ընթերցողի կամ ուսումնասիրողի համար խրթին կլինի ընկալել, ըմբռնել Հայոց ցեղասպանության պատմության այս առանցքային իրադարձության՝ մտավորականների ձերբակալության խնդրի կարևորությունն ու նրբությունները, հետահայաց նետել հայ ժողովրդի պատմության դրամատիկ էջերի վրա, կատարել ճիշտ հարցադրումներ, վերլուծել այդ ամենն ու տալ գնահատական ապագայի համար: Քասունին այս արդիական խնդրին մոտեցել է նրբորեն, տվել է հմուտ մանկավարժի լուծում: Նա հուշագրությանը կից դրել է ծանոթագրություն, որը հրաշալի շաղկապում է հուշագրության մեջ հիշատակվող մարդկանց, տեղանունները, իրադարձությունները և ընթերցողին հնարավորություն է տալիս մտնելու իրադրության մեջ, վերլուծելու խորքից, ըմբռնելու իրավիճակը, անելու անհրաժեշտ եզրակացություններ: Ծանոթագրությունների աղբյուրները բազմազան են՝ տարբեր լեզուներով սկզբնաղբյուրներ, մենագրություններ, հոդվածներ, մամուլի էջեր, հուշամատյաններ:

Ավետիս Նազգաշյանը՝ որպես ականատես-վերապրող, ներկայացնում է հայ մտավորականների արքայական կյանքի մանրամասները, տալիս տեղեկություններ ձերբակալությունների, տեղահանության, բանտի կյանքի ու սպանությունների մասին. «Ես գտնուեմ էի էսկիյրիի կողմերը եւ լսած էի որ զուտ տաճիկ ժողովուրդէ,

ձերբակալուելով Այաշ բանտարկուած եւ նահապտակուած ընկերներուս անմահ յիշատակին կը ձօնեմ այս գրքոյկը (Նիւ Եորք), Բ Տպագրութիւն, Պէյրոյթ, 1978, էջ 121-165: Նույնի, Այաշի բանտը, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, 192 էջ:

5 Մեհմեդ Թալեթ Փաշա (1847-1921 թթ.), Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար, «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի նախագահ, Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներից:

6 Գրիգոր Զոհրապը (1861-1915 թթ.) մեծ գրող էր, հրապարակախոս, ժամանակի լավագույն իրավաբաններից մեկը, հասարակական-քաղաքական գործիչ, Ազգային ժողովի և Օսմանյան խորհրդարանի պատգամավոր, Հայոց ցեղասպանության զոհ:

7 Քասունի Ե. Հ., *Այաշի բանտը*, էջ 62:

8 Նույն տեղում:

բաղկացած գաւառակի մը կեդրոնն էր, Անկորայէն տասներկու ժամ հեռու, վայրենի տեղ մը», – գրում է Նազգաշանը⁹:

Բանտային կյանքի կարևոր մանրամասներ պարունակող նկարագրությունները հնարավորություն են ընձեռում առարկայական պատկերացում կազմելու բանտարկվածների առօրյա խնդիրների մասին: Մշակվում է ներքին կանոնադրություն սննդի հայթայթման, տեղացի թուրքերից «անկողնու» վարձակալություն և այլ հարցերի շուրջ. «Մեր առաջին մտահոգութիւնը կամ ջանքը եղաւ մաքրել գովուշը. սակայն ի՛նչ փոշի, ի՛նչ կեղտոտութիւն: Այսպիսի տեղ մը ո՛չ թէ պառկիլ, այլ ոտք կոխել անգամ մենէ՛ ոեւէ մէկուն մոքէն չէր անցներ: Այսուհանդերձ պէտք էր համակերպիլ, պէտք էր ապրիլ: Գոնէ մաքրութեան միջոցին կարելի ըլլար բազմութիւնը դուրս հանել, նորէն բարիք մը պիտի սեպէինք, բայց հրաման չկար. պատուհանները երկաթէ եւ փայտէ ձողերով գոցուած էին, իսկ զինուորները դուրսը կը շրջապատէին ամէն կողմ»¹⁰:

Բանտարկյալներին արգելված էր որևէ թղթակցություն ունենալ հարազատների հետ: Չունեին տեղեկություն երկրում տեղի ունեցող իրադարձությունների մասին, կատարյալ մեկուսացում էր: «Ինչու՞ բերին մեզ, և ի՞նչպէս պիտի վարուէին մեզի հետ»¹¹՝ բոլոր բանտարկյալներին, թերևս, տանջում էր այս հարցը, որին ի պատասխան իրավաբան, հրապարակագիր, ազգային-հասարակական գործիչ Հարություն Շահրիկյանն արձագանքում էր. «Անիմաստի մէջէն իմաստ կը փնտռէք»¹²: Եվ իսկապէս, բոլոր խոսակցություններն ու դատողությունները հանգում էին Շահրիկյանի «անիմաստին»:

Այաշի բանտի ողջ թշվառության ու հուսահատության մթնոլորտում կային նաև մտավորականի ստեղծագործ միտքն ու սուր հումորը: Բժիշկ Նազգաշանն իր գործընկեր բժիշկ Տաղավարյանին հիշատակում է որպէս գրաբարի մեծ սիրահար և հավելում. «գիշերները ան գրաբար կը խոսար՝ զոր չէի հասկնար»¹³: Զավեշտ ու զրկանք:

Թուրքական իշխանությունների կողմից հայ մտավորականության թիրախավորված մեկուսացման ու ոչնչացման քաղաքականության իրագործման վայրերից էր Այաշի բանտը, որտեղից ազատվում էին թյուրիմացաբար¹⁴ ձերբակալված մսավաճառները, մանր առևտրականները և այլն:

Բանտարկված հայ մտավորականները որոշում են հեռագիր ուղարկել Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար Թալեաթ Մեհմեդին և հայտնել իրենց անտեղի ձերբակալության մասին և ազատություն խնդրել: Երկար ու թեժ քննար-

9 Նույն տեղում, էջ 41:

10 Նույն տեղում, էջ 42:

11 Նույն տեղում, էջ 46:

12 Նույն տեղում:

13 Նույն տեղում, էջ 48:

14 Թուրքական ժանդարմը ձերբակալությունների ժամանակ հաճախ էր շփոթում նույն ազգանունն ունեցողներին և առանց տատանվելու ձերբակալում էր: Այսպէս էր Այաշի բանտում հայտնվել օրինակ ազգային գործիչ Հայկ Թիրեաքեանի փոխարեն ձերբակալված Բերայի նպարավաճառ մեկ այլ Հայկ Թիրեաքեան:

կումներից հետո որպես «անլեղափոխական» հեռագիրը ստորագրում է բժիշկ Նազգաշյանը: «Արդեն համոզում գոյացուցեր էի, որ խնդիրը կուսակցականի կամ յեղափոխականի վրայ չէր դառնար, այլ՝ Հայութեան: Արդ, ես ալ իբրեւ հայ դատապարտուած էի: Հեռագիր մը ստորագրե՞մ թէ ոչ: Ըստ իս, բոլոր այս ճիգերը որեւէ օգուտ պիտի չբերէին, եւ հեռագիրը, որուն ամէն մէկ բառին համար վիճաբանութիւն եւ խորհրդակցութիւն տեղի կ'ունենար, կանխապէս դատապարտուած էր մէկ կողմ նետուելու: Եւ այսպէս ալ եղաւ: Մեր հեռագիրը մնաց անհետեւանք», - հիշատակում է Նազգաշյանը¹⁵:

Հետագայում թուրքական իշխանություններն սկսում են խմբերով կամ առանձին-առանձին բանտից դուրս բերել ձերբակալվածներին՝ դատարան տեղափոխելու պատրվակով, սակայն նրանք տանջամահ էին արվում, կախաղան բարձրացվում: «Ի՛նչ սին յոյսեր, մարդասպանէն արդարութիւն սպասել...: Գիտէիք թէ մեծ աղէտի մը առջեւ կը գտնուէիք, բայց թէ ամբողջ ազգ մը պիտի սպաննուէր, չկրցանք այդ չափն ըմբռնել», - կսկիծով նշում է Նազգաշյանը¹⁶:

Բժիշկ Նազգաշյանին հաջողվում է ստանալ ազատության թուղթ¹⁷: Շատ մեծ դժվարությամբ է կարողանում բաժանվել բանտի ընկերներից. «Կը սիրէի զանոնք այնպէս՝ ինչպէս տառապանքի ընկերներ կը սիրեն զիրար»¹⁸:

Ավետիս Նազգաշյանի հուշագրությունը ոչ միայն հարգանքի տուրք է բանտում նահատակված հայ մտավորականների հիշատակին՝ «Յարգա՛նք, բիր յարգա՛նք անոնց յիշատակին»¹⁹, այլ նաև կարևոր սկզբնաղբյուր ուսումնասիրողների համար:

Հատորում առանձնակի նշանակություն ունեն Երվանդ Քասունու կազմած ծանոթագրությունները (230 էջ): Մեծաքանակ ծանոթագրությունները կարևոր են ինչպես երիտասարդ ուսումնասիրողների, այնպես էլ արդեն կայացած մասնագետների համար, որոնք մեկ հատորի միջոցով հնարավորություն կունենան հնարավորինս բազմաբնույթ տեղեկություններ ստանալու: Քասունին հուշագրությունում շոշափվող յուրաքանչյուր անձնանվան ու իրադարձության, տեղանվան ու կազմակերպության համար տալիս է ամբողջական ու մանրամասն ծանոթագրություններ, ինչպես օրինակ՝ արևմտահայ գրող, հասարակական գործիչ Գարեգին Խաժակի (Գարեգին

15 Քասունի Ե. Հ., *Այաշի բանտը*, էջ 56:

16 Նույն տեղում, էջ 59:

17 Ավետիս Նազգաշյանին բանտից ազատելու և անխուսափելի մահից փրկելու հարցում առանձնակի դեր է կատարել նրա կինը՝ միսիոներուհի Աիդա Մելիքբեկին: 1895 թ. Սասունի կոտորածներից հետո բազմաթիվ գաղթականներ հասնում են Եղեռնի, որտեղ գտնվող Նազգաշյանն իր ապագա կնոջ՝ միս Աիդայի, ինչպես նաև մեկ այլ ամերիկացի միսիոներուհի Քորինա Շաթլքի հետ ձեռնամուխ է լինում նրանց ապաստանելու ու բժշկելու գործին՝ «աղէտալները քաղաքէն դուրս, բնական քարայրներու մէջ կը պահէն ու կը դարմանեն»: 1915 թ. բանտարկության ժամանակ Աիդայի ջանքերով ու 1913-1916 թթ. Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուի միջնորդությամբ է ստացվում «Թալեաթի հրամանը»՝ ազատ արձակել Նազգաշյանին:

18 Քասունի Ե. Հ., *Այաշի բանտը*, էջ 65:

19 Նույն տեղում, էջ 68:

Չագալեան)²⁰, իրավաբան, ազգային գործիչ Հարություն Շահրիկյանի²¹, հնչակյան գործիչների մահապատժի կամ պատմության մեջ հայտնի «Քսան կախաղանների» մասին²² և այլն:

Երվանդ Քասունին առանձին գլխով ներկայացնում է Հայոց ցեղասպանության ականատես և վերապրող, բժիշկ Նազգաշյանի կյանքն ու գործունեությունը. «Բժշկական ասպարեզին զուգահեռ, եղած է ազգային - հասարակական գործիչ, ինքնատիպ երգիծագիր եւ յանդուգն հրապարակախօս»²³:

Ծնունդով այնթապցի բժիշկը հիմնականում բնակվում ու աշխատում էր Ադանայում²⁴, սակայն նրա բժշկական գործունեությունը հաճախ դուրս էր գալիս քաղաքի ու նահանգի սահմաններից. «շարժուն հիւանդանոց մըն էր կարծես, ամէն այցելած տեղը քանի մը օրուան ընթացքին նախնական հիւանդանոց մը կը կազմակերպէր»²⁵:

1915 թ.՝ Այաշի բանտից ազատվելուց հետո, Նազգաշյանին կանչում են Պատեւրազմական նախարարություն՝ զորակոչելով բանակ հարյուրապետի աստիճանով:

Նազգաշյանը նաև իր լեզվական գիտելիքների ու բազմակողմանի կրթության շնորհիվ թղթակցել ու որպես խմբագրի օգնական է աշխատել Կ.Պոլսի և Սփյուռքի պարբերականներում:

1922 թ. ֆրանսիացիների կողմից Ադանայի նահանգը թուրքերին հանձնելուց հետո Նազգաշյանը որոշ ժամանակ քաղաքից քաղաք տեղափոխվելուց հետո խորը կսկիծով վերջնականապես հեռանում է իր պատմական հայրենիքից՝ սկզբում Եգիպտոս, ապա ԱՄՆ: Այստեղ հիմնում է կլինիկա, շարունակում է թղթակցել մամուլին, արդեն ամերիկա-հայկական՝ «Հայաստանի կոչնակ», «Հայրենիք», «Պայքար»:

Ավետիս Նազգաշյանը հայտնի էր որպես երգիծագիր ու զվարճախոս, սակայն. «Այո՛, իրաւ է թէ զուարճալի շատ մը բաներ գրած էր, սակայն այդ մակերեսային զուարճախօսութեան տակ Նազգաշեան չափազանց տխուր մարդ մըն էր»²⁶:

Երվանդ Քասունու այս հատորում կարևոր տեղ են զբաղեցնում Ավետիս Նազգաշյանի հոդվածները, նամակները, որոնց միջոցով հեղինակը հնարավորություն է տալիս տեսնելու Նազգաշյանին մեկ այլ՝ պայքարող և նախանձախնդիր ազգային գործչի դիտակետից: Ավետիս Նազգաշյանի ջանքերով է հետապնդվում ու Ռազմական արտակարգ ատյանում²⁷ դատապարտվում Ներքին գործերի նախարարության

20 Նույն տեղում, էջ 175:

21 Նույն տեղում, էջ 86:

22 Նույն տեղում, էջ 233:

23 Նույն տեղում, էջ 295:

24 Ավետիս Նազգաշյանը մեծ կարողություն ուներ Ադանայում՝ երկու տուն, ութ խանութ, որոնք 1909 թ. Ադանայի աղետի ժամանակ այրվել ու հողակույտի են վերածվել: Տե՛ս Տոքթ. Ա. Նազգաշեան, *Յիշատակներ. դրուագներ կենսաբնական պատմություններ*, Նիւ Եորք, 1931, էջ 56-78:

25 Քասունի Ե. Հ., *Այաշի բանտը*, էջ 304:

26 Պարչեման, Տոքթ. Անդրիս Նազգաշեան, «Հայաստանի կոչնակ» (Նիւ Եորք), 1943, 1 մայիսի, թիվ 18, էջ 421:

27 Անույան Մ., *Ճանաչում ու դատապարտում երիտթուրքերի դատապարտությունները (1919-1921 թթ. և 1926 թ.)*, Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2013, էջ 73:

աշիրերների ու գաղթականների տեղավորման և վերաբնակեցման տնօրինության Հալեպի ընդհանուր տեսուչի տեղակալ Աբդուլ Ահադ Նուրին²⁸ Հալեպի շրջակայքի ու սիրիական անապատներում տեղի ունեցած հայերի արքայի ու զանգվածային կոտորածների գլխավոր պատասխանատուն:

Հատորում որպես հավելված ներկայացված են Հայ ավետարանչական ընկերակցության 100-ամյակին նվիրված հրապարակումներ, Օսմանյան կայսրության գահաժառանգ Աբդուլ Մեջիդ իշխանի և հայ բժիշկների բարեկամության մասին տեղեկություններ և այլն, որոնք առավել համակողմանի և ընդգրկուն են դարձնում ներկայացվող իրադարձությունները:

Ուշագրավ են Վատիկանի հետ առնչվող տեղեկությունները, հայկական կոտորածների հանդեպ Հռոմի պապի արձագանքն ու այս ամենում Նազգաշյանի անսկստ, բայց շատ գործուն մասնակցությունը:

Քասունին գիրքն ամփոփում է «Մտորումներ վերջին ընթերցումն ենք» հեղինակային վերջաբանով. «Հայ ժողովուրդի դեմ Թուրքիի գործադրած Ցեղասպանությունը անելի քան հարիւր տարի է կը շարունակէ մնալ պատմագիտական և իրաւագիտական քննարկումներու առարկայ, փոյթ չէ թէ հարիւր նոր քննարկում և ուսումնասիրութիւն ոչինչ պիտի փոխեն արձանագրուած ճշմարտութենէն: Բայց գլխաւորի տողերու արանքին կան յայտնաբերումներ, որոնք թէկուզ ծանօթ-անծանօթներ են, բայց անհնար է անծանօթի պէս անտեսել զանոնք»²⁹:

Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրության մեջ առանցքային նշանակություն ունեն հուշագրությունները, և այս շարքում իր պատմագիտական կարևորությամբ առանձնանում է Ավետիս Նազգաշյանի «Այաշի բանտը», այն հարուստ է ինչպես անձնանուններով, այնպես էլ տարբեր կազմակերպությունների, պատմական իրադարձությունների մասին տեղեկություններով: Իսկ Երվանդ Քասունուն հաջողվել է այդ անձնանուններին ու իրադարձություններին տալ երկրորդ կյանք՝ կազմելով դրանց մանրակրկիտ ծանոթագրությունը:

Բարձր գնահատելով կատարված հսկայածավալ աշխատանքի դրական կողմերը՝ անհրաժեշտ է նշել աշխատանքում առկա որոշ բացթողումների և զուտ կառուցվածքային խնդիրների մասին: Օրինակ, հատորի մատենագիտության մեջ բացակայում են Ավետիս Նազգաշյանի «Այաշի բանտը» հուշագրության՝ 1925 թ. «Հայրենիք» տպագրատան կողմից հրատարակված առաջին հատորի մասին տեղեկություններ, կամ հեղինակային խորագրերում շարադրանքում օգտագործված մեջբերումների հղումների բացակայությունը, ինչն ընթերցողին հնարավորություն չի տալիս հստակ իմանալու տվյալ մեջբերման աղբյուրը: Այս և նման մանր բացթողումները կամ շարադրանքի զուտ հեղինակային մոտեցումը, իհարկե, չի նվազեցնում հատորի կարևորությունն ու ակադեմիական որակը:

28 Մինասեան Մ., *Ռաս իւլ Այնի կոլորաժները (1915-1916 թթ.)*, Գանձասար, Բերիոյ Հայոց թեմի ազգային առաջնորդարանի պաշտօնաթերթ, Յաւելուած, Ապրիլ Գ, 2017:

29 Քասունի Ե. Հ., *Այաշի բանտը*, էջ 373:

Այսպիսով, Երվանդ Քասունու կողմից այս հուշագրության ակադեմիական վերատպման և նման մանրամասն կատարված խմբագրական աշխատանքի շնորհիվ այսօր ունենք հայ ժամանակակից պատմագիտության զարգացման համար դրված հստակ ուղենիշ՝ քննության առնել Հայոց ցեղասպանությանն առնչվող հուշագրությունները, խմբագրել և ծանոթագրություններով ամբողջացնել դրանք:

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ОБ АВТОРАХ
ABOUT THE AUTHORS

Շուշան Խաչատրյան, պատմ. գիտ. թեկն., աստվածաբան, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Համեմատական ցեղասպանագիտության բաժնի գիտաշխատող: Ուսումնասիրությունների ոլորտները՝ ցեղասպանության աստվածաբանական և կրոնագիտական առումները, կրոնների բախումը ցեղասպանությունների ընթացքում, Հոլոքոստի փիլիսոփայություն, թեոդիցեա, քրիստոնյաների հալածանքները XX-XXI դդ. և այլն:

Էլ. հասցե՝ khachatryan.shushan@genocide-museum.am

Shushan Khachatryan, PhD in History, theologian, researcher at the Comparative Genocide Studies Department, Armenian Genocide Museum-Institute Foundation. Research fields – Theological and Religious Studies of genocides, religious clashes during the genocides, philosophy of Holocaust, theodicy, persecutions of Christians in XX-XXI centuries, etc.

E-mail: khachatryan.shushan@genocide-museum.am

Шушан Хачатрян, канд. ист. наук, теолог, научный сотрудник Отдела сравнительного геноцидоведения в Фонде «Музей-Институт Геноцида армян». Область исследований – теологический и религиозный аспект геноцидов, столкновение религий во время геноцидов, философия Холокоста, теодицея, гонения христиан в XX-XXI веках и т.д.

Электронная почта: khachatryan.shushan@genocide-museum.am

Ռոբերտ Սուրիասյան, ցեղասպանագետ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի ասպիրանտ: Ուսումնասիրությունների ոլորտները՝ հայոց ցեղասպանության ժամանակ տեղահանությունների պատմություն:

Էլ. հասցե՝ robertsukiasyan@yahoo.com

Robert Sukiasyan, MA in Genocide Studies, PhD student at the Armenian Genocide Museum Institute Foundation. Research fields – deportation history of the Armenian Genocide.

E-mail: robertsukiasyan@yahoo.com

Роберт Сукиасян, геноцидовед, аспирант Фонда «Музей-Институт Геноцида армян». Область исследований – история депортаций во время Геноцида армян.

Электронная почта: robertsukiasyan@yahoo.com

Միհրան Մինասեան, բանասեր, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի գիտաշխատող, Հայոց ցեղասպանության հուշագրությունների, վավերագրերի և մամուլի բաժնի վարիչ: Ուսումնասիրության ոլորտները՝ Հայոց ցեղասպանության աղբյուրագիտական հիմքերը, հայ գրքի և ձեռագրերի պատմություն, հալեպահայ գաղթօջախի պատմություն և այլն:

Էլ. հասցե՝ minassian.mihran@genocide-museum.am

Mihran Minassian, Philologist, Head of the Department of the Armenian Genocide Memoires, Documents and Press, Armenian Genocide Museum-Institute Foundation. Research fields – sources of the Armenian Genocide studies, history of the Armenian book and manuscripts, history of Aleppo-Armenian colonies.

E-mail: minassian.mihran@genocide-museum.am

Мигран Минасян, филолог, научный сотрудник, заведующий отделом Фонда «Музей-Институт Геноцида армян». Область исследований – источниковедение Геноцида армян, история армянской книги и рукописей, история армянской общины Алеппо и т. д.

Электронная почта: minassian.mihran@genocide-museum.am

Սեդա Պարսամյան, պատմաբան, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի հայցորդ, Հայոց ցեղասպանության զոհերի փաստագրման և տվյալների հավաքագրման բաժնի վարիչ: Ուսումնասիրությունների ոլորտները՝ մշակութային ցեղասպանություն, հայկական պատմամշակութային ժառանգության ռևիզացումը Օսմանյան կայսրությունում և Թուրքիայում:

Էլ. հասցե՝ parsamyan.seda@genocide-museum.am

Seda Parsamyan, historian, PhD student at the Armenian Genocide Museum Institute Foundation, Head of the Documentation of the Armenian Genocide Victims and Data Collection Department at the Armenian Genocide Museum-Institute Foundation. Research fields – Cultural Genocide, Destruction of the Armenian Cultural and Historical Heritage in the Ottoman Empire and Turkey.

E-mail: parsamyan.seda@genocide-museum.am

Седя Парсамян, историк, соискатель Фонда «Музей-Институт Геноцида армян», заведующий отделом Документации жертв Геноцида армян Фонда «Музей-Институт Геноцида армян». Область исследований – культурный геноцид, уничтожение армянского историко-культурного наследия в Османской империи и Турции.

Электронная почта: parsamyan.seda@genocide-museum.am

Հարություն Մարության, պատմ. գիտ. դոկտոր, ազգագրագետ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի տնօրեն, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող: Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության հիշողություն, ազգային ինքնություն, կոլեկտիվ և պատմական հիշողություն, Ղարաբաղյան շարժում, պատկերագրություն, հայոց ենթաէթնիկ խմբեր, հայ ավանդական մշակույթ:

Էլ. հասցե՝ harutyun.marutyan@genocide-museum.am

Harutyun Marutyan, Doctor of Sciences (History), social/cultural anthropologist, Director of the Armenian Genocide Museum-Institute Foundation, Head researcher at the Institute of Archaeology and Ethnography of National Academy of Sciences of Armenia. Research fields – Armenian Genocide memory, national identity, collective and historical memory, Karabakh movement, iconography, sub-ethnic groups of Armenians, Armenian traditional culture.

E-mail: harutyun.marutyan@genocide-museum.am

Арутюн Марутян, доктор ист. наук, этнограф, директор Фонда «Музей-Институт Геноцида армян», главный научный сотрудник Института археологии и этнографии Национальной Академии наук Армении. Область исследований – память и национальная идентичность, коллективная и историческая память, Карабахское движение, иконография, субэтнические группы армян, армянская традиционная культура.

Электронная почта: harutyun.marutyan@genocide-museum.am

Էդիտա Գզոյան, պատմ. գիտ. թեկն., իրավունքի մագիստրանտ, միջազգայնագետ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի գիտության գծով փոխտնօրեն: Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության պատմական, իրավական, սեռային (գենդերային) և այլ հիմնահարցեր, գիտաչափություն:

Էլ. հասցե՝ gzyan.edita@genocide-museum.am

Edita Gzyan, PhD in History, MA in Law, International Relations Specialist, Deputy Director of the Armenian Genocide Museum-Institute Foundation. Research fields – historical, legal, gender and other issues of the Armenian Genocide, scientometrics.

E-mail: gzyan.edita@genocide-museum.am

Эдита Гзоян, канд. ист. наук, магистр права, специалист по международным отношениям, заместитель директора Фонда «Музей-Институт Геноцида армян» по науке. Область исследований – исторические, правовые, гендерные и другие вопросы Геноцида армян, науковедение.

Электронная почта: gzyan.edita@genocide-museum.am

Արևիկ Ավետիսյան, թուրքագետ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ: Ուսումնասիրությունների ոլորտները՝ Կ.Պոլսի գավառահայության տեղահանության ու կոտորածների հիմնահարցեր, Հայոց ցեղասպանության ժխտողականության պատմություն, արևմտահայ մամուլի պատմություն, արևմտահայ պատմագիտական գրականություն, 20-րդ դարասկզբի արևմտահայ մտավորականություն և այլն:

Էլ. հասցե՝ arevik.avetisyan@genocide-museum.am

Arevik Avetisyan, turkologist, Head of the Department of External Relations and Media at the “Armenian Genocide Museum-Institute” Foundation. Research fields: issues of the deportation and massacres of the Armenian population in Constantinople, history of the Armenian Genocide denial, the history of Western Armenian media, historical literature of Western Armenian life, Western Armenian intellectuals of the beginning of the 20th century etc.

Email: arevik.avetisyan@genocide-museum.am

Аревик Аветисян, тюрколог, заведующий отделом внешних связей и СМИ Фонда «Музей-институт Геноцида армян». Область исследований – вопросы депортации и массовых убийств константинопольских армян, история отрицания Геноцида армян, отражение Геноцида армян в прессе, западноармянская историографическая литература, западноармянская интеллигенция начала 20 века и т.д.

Электронная почта: arevik.avetisyan@genocide-museum.am

Տպագրությունը՝ օֆսեր, թուղթը՝ օֆսեր,
տպաքանակը՝ 150:

Տպագրվել է